

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

X
2007

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Գ յ ու մ ք ի 2007

ԴՏՀ 008+902 / 904+800
ԳՄԴ 71+63. 4+80
Գ 602

**Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:**

Խմբագրական խորհուրդ

Արամ Բալանթարյան, Աշոտ Մելքոնյան, Խաչիկ Բաղդիկյան, Արամ Բոսյան,
Սարգիս Հարությունյան, Սարգիս Պետրոսյան, Լարիսա Եզանյան,
Համագասպ Խաչատրյան, Արմեն Հայրապետյան, Կարինե Բազեյան,
Կարինե Սահակյան, Հասմիկ Հարությունյան

**Խմբագրությամբ բան. գիտ. դոկտոր
պրոֆեսոր Մերգո Հայրապետյանի**

Գ - 602 Գիտական աշխատություններ, 10
Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,
2007, 202 էջ:

Գ $\frac{4400000000}{703(02) - 2007}$ 2007

ԳՄԴ 71+ 63,4+80

ISBN 5- 8080 - 0504 - 3

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2008

*Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований*

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК

X

EDITION

RESEARCH PAPERS

*Shirak Centre of Armenian Studies
National Academy of Sciences
Republic of Armenia*

Издательство "Гитутюн" НАН РА "Gitutyun" Publishers NAS RA

ГЮМРИ 2007 GYUMRI

Публикуется по решению Ученого совета
Ширакского центра арменоведческих исследований НАН РА.

Редакционная коллегия:

Саргис Арутюнян, Арам Калантарян, Ашот Мелконян, Хачик Бадилян, Арам
Косян, Саргис Петросян, Лариса Еганян, Амазасп Хачатрян, Армен Айрапетян,
Карине Базеян, Карине Саакян, Асмик Арутюнян

Под редакцией доктора фил. наук,
профессора Серго Айрапетяна

Published by arrangement of the Scientific Council
of Shirak's Research Centre NAS RA.

Editing stuff:

Sargis Harutunyan, Aram Qalantaryan, Ashot Melkonyan, Khachik Badikyan,
Aram Qosyan, Sargis Petrosyan, Larisa Eganyan, Hamazasp Khachatryan, Armen
Hairapetyan, Karine Bazeyan, Karine Sahakyan, Asmik Harutunyan

Edited by Doctor of Philology, professor Sergo Hairapetyan

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
1997 - 2007

Ռադիկ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս)

Հայաստանի գիտությունը միշտ էլ հպարտացել է Գյումրու զավակների՝ գիտության մեջ ունեցած մեծ ավանդով: Ես կհիշեի ակադեմիկոսներ Շահինյանին, Համբարձումյանին, Սահակյանին, Թալալյանին, տարբեր գիտությունների ասպարեզում հեղինակավոր շատ դեմքերի, էլ չեմ խոսում մեր գրականության ու արվեստի հսկաների՝ Շերամի, Իսահակյանի, Շիրազի և այլոց մասին: Այսօր Գյումրիում ակադեմիական երեք հիմնարկությունների, բազմաթիվ բուհերի առկայությունը վկայում է, որ քաղաքն աղետից հետո սկսում է ապրել նաև գիտական կյանքի զարթոնք: Դրանում, անկասկած, իր տեղն ու օրավուր անող դերակատարումն ունի Շիրակի հայագիտական կենտրոնը:

Իհարկե, 10 տարին գիտահետազոտական հիմնարկի համար մեծ ժամանակ չէ: Մակայն այդ տարիների ընթացքում մեր Ակադեմիայի այս կենտրոնում հասցրել են բավական գործ կատարել Շիրակի տարածաշրջանի հնագիտական, ազգագրական և հայագիտական այլ բնույթի հետազոտությունների ոլորտներում: Հայագիտության՝ որպես մեր նորանկախ երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող գործունի ըստ ամենայնի խթանումը մենք համարում ենք Գիտությունների ազգային ակադեմիայի առաջնահերթ հիմնախնդիրներից ամենակարևորը: Խոշոր համալիր ծրագրեր են մշակվում՝ ապահովելու համար երկրում հայագիտության զարգացման բարձր մակարդակ և լավագույն հնարավորություններ: Դեռ իրենց գիտական արժևորմանն են սպասում մեր ժողովրդի հոգևոր և նյութական բազմաթիվ զանձեր ու անսպառ հարստություններ: Հիմա այս կարևոր գործին է լծվել նաև մեր Ակադեմիայի ամենաերիտասարդ հայագիտական ստորաբաժանումը: Մենք գոհ ենք նրա աշխատանքի արդյունքներից: Եղել են Շիրակի կենտրոնում, զրուցել նրա աշխատակիցների հետ, ի մոտո ծանոթացել են նրանց աշխատանքին: Մեծ հաջողություններ են ցանկանում նրա երիտասարդ ու ստեղծագործ գիտական անձնակազմին: Կասկած չունեմ, որ շենքային պայմանների մոտալուտ արմատական բարելավումը կենտրոնի համար կբացի գործունեության նոր ոլորտներ, որոնց մասին ինձ պատմել են: Ուզում եմ նաև ավելացնել, որ կենտրոնի ստեղծումով հասունացել է ակադեմիական երեք կառույցների հիմքի վրա Գյումրիում ԳԱԱ մասնաճյուղ բացելու դեռ կես դար առաջ պլանավորված, բայց չիրականացած ծրագիրը, մասնավորապես որ ներկայումս քաղաքն արդեն ունի Ակադեմիայի իր տեղական թղթակից անդամները, որոնք աշխատում են Գյումրիում: Սա կարևոր է մասնաճյուղ ունենալու համար: Հույս ունենք, որ առաջիկայում այստեղից Ակադեմիայի անդամներ էլի կունենանք, կավարտվի շենքի կառուցումը, և ԳԱ մասնաճյուղը ձեռնամուխ կլինի մասնաճյուղի ձևավորմանը:

Վլադիմիր ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

(ԳԱԱ ակադեմիկոս)

Հայաստանի Հանրապետությունում գիտական հաստատությունները տեղավորված են գերազանցապես Երևանում: Երկար տարիներ, տասնամյակներ անընդհատ խնդիր էր դրվում, հատկապես ԳԱԱ նշանավոր պրեզիդենտ ակադեմիկոս Վ.Համբարձումյանի կողմից, որպեսզի դրանք բաշխվեն նաև Հայաստանի մյուս մարզերում: Մինչև այժմ տարվող այդ ջանքերից հաջողվել է միայն հայագիտական և հասարակական գիտությունների բնագավառում Գյումրիում ունենալ մի Կենտրոն: Որևէ այլ մարզում հասարակական գիտությունների գծով ակադեմիական հաստատություն չունենք: Գյումրիում 10 տարի առաջ ստեղծված հայագիտական պատմամշակութային այս կենտրոնը այդ տարիների ընթացքում լայն գործունեություն ծավալեց: Այն ստեղծվեց Գյումրիում, որովհետև Գյումրին ազգագրական, բանահյուսական, պատմագիտական առումներով մեր ամենահարուստ շրջաններից մեկն է՝ ավանդույթները լավ պահպանած: Եվ պետք է ասել, որ 10 տարվա ընթացքում կենտրոնը՝ ոչ մեծ կազմով, մասնավորապես նյութական ծանր վիճակում, բավական մեծ աշխատանք կատարեց:

Կենտրոնը ղեկավարում է մեր լավ գիտնականներից մեկը՝ Ս. Հայրապետյանը, որը կարևոր գործ արեց, և բավական է ասել, որ հրատարակչական մեծ դժվարությունների պայմաններում 9 հատոր գիտական աշխատություններ հրատարակեց: Եվ այդ 9 հատորները գավառական որակով արված աշխատանքներ չեն, այլ՝ գիտական բարձր մակարդակով և՛ պատմական, և՛ ազգագրական, և՛ հնագիտական, և՛ երաժշտագիտական լուրջ ուսումնասիրություններ: Ամեն տարի գիտական լուրջ նստաշրջաններ են կազմակերպվում, և դրանց ամենագործուն մասնակցություն են ունենում Ակադեմիայի մեր հասարակագիտական բոլոր օջախները՝ Հնագիտության և ազգագրության, Արևելագիտության, Պատմության, Արվեստի, Լեզվի, Գրականության, Փիլիսոփայության և սոցիոլոգիայի ինստիտուտները: Մենք մեծ նշանակություն ենք տալիս այդ կենտրոնին, որն սկզբում փոքր էր և գտնվում էր Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմում՝ որպես մասնաճյուղ, իսկ այժմ մեր Ակադեմիայի հայագիտական և հասարակական գիտությունների բաժանմունքի կարևոր ստորաբաժանումներից մեկն է: Ձանում ենք կենտրոնին օգտակար լինել, որպեսզի այստեղ ավելի մեծ ծավալի աշխատանքներ կատարվեն: Փոքրաքանակ, բայց շատ լավ կադրերի և սուղ ֆինանսական միջոցների պայմաններում կենտրոնը կատարում է շատ մեծ, կարևոր գործ, արժեքավոր աշխատանք Շիրակի հայագիտական ուսումնասիրության բնագավառում:

Կենտրոնը բոլորեց իր հոբելյանը՝ առաջին 10-ամյակը: Հոբելյանը նաև նրա համար է, որ անցյալն ամփոփեն և ապագան նախատեսեն: Կարծում եմ՝ ԳԱԱ-ն ավելի կընդլայնի իր օժանդակությունը թե՛ ֆինանսատնտեսական, թե՛ հրատարակչական առումով, որպեսզի կենտրոնը հնարավորություն ունենա ընդլայնելու իր գործունեությունը Շիրակին մվիրված նոր ուսումնասիրությունների իրականացման, գիտական նոր կադրերի պատրաստման ուղղությամբ, ավելի խորացնի ու ծավալի իր կապերը ներսում և դրսի գիտական աշխարհի հետ և իրավամբ դառնա նաև հանրապետությունից դուրս ճանաչված հայագիտական օջախ:

Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ

(ԳԱԱ թղթակից անդամ, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր)

1991թ. անկախության ձեռք բերումից հետո, անկասկած, Ազգային գիտությունների ակադեմիայի տեղն ու դերը մեր հասարակության մեջ խիստ բարձրացավ, չնայած գտնվեցին նաև մարդիկ, որոնք ձեռնոց նետեցին Ակադեմիային և գտնում էին, որ մեր նոր ժամանակներում այսպիսի հզոր գիտական կառույց մեր փոքրիկ հանրապետությանը պետք չէ: Բայց, բարեբախտաբար, այդ ժամանակներն անցան, և իրողություններն ու արժեքները իրատեսորեն գնահատելու կարողությունը մեզանում հաղթեց: Եվ ոչ միայն մնան մոտեցումը հաղթանակեց, այլև մեր գյումրեցի գործընկերները կարողացան ապացուցել, որ Գյումրիի երկրաշարժից հետո եթե իսկպաես լիարժեքորեն պիտի վերականգնվի և գտնի իր ազգային նախնին նկարագիրը, նա պետք է ունենա ազգային ակադեմիայի Շիրակի մասնաճյուղ: Երբ Հայագիտական հետազոտությունների կենտրոնը 10 տարի առաջ ստեղծվեց, շատ շատերիս մեջ, պետք է ասեմ, նաև իմ մեջ լուրջ կասկածներ կային: Դրված էր Երևանում ԳԱԱ-ի վերացման խնդիրը, ես սա ասում եմ ամենայն լրջությամբ: Բնականաբար, թող ներվի ինձ այս բառի համար, «զավառ» համարվող Գյումրիում, ըստ երևույթին, շոայություն էր դիտվում մնան կենտրոն ստեղծելը: Բայց բարեբախտաբար հաղթեց ողջախոհությունը: Կենտրոնը ստեղծվեց և 10 տարիների ընթացքում ապացուցեց, որ ինքը ոչ միայն ապրելու իրավունք ունի, այլ նաև ԳԱԱ հայագիտական բաժանմունքի համակարգում իր շատ լուրջ տեղն ունի: Շատ ուրախսալի է, որ այն դիմացավ բոլոր փորձություններին և ունեցավ նաև իր դիմագիծը՝ սկզբում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հենքի վրա, իսկ հետո, հաջողությունների այս բովով անցնելով, նա նաև նվաճեց ինքնուրույն լինելու իրավունքը: Մինչև վերջերս էլ ոմանք դեռևս թերահավատ էին. արդյոք նպատակահարմա՞ր էր Գյումրիում մնան կենտրոնի ստեղծումը, զուգահեռներ էին անցկացնում հանրապետության այլ մարզերի հետ՝ առաջարկելով նույն տրամաբանությամբ մնան կենտրոններ ստեղծել նաև Սյունիքում, Լոռիում: Նույնիսկ փորձեր եղան, բայց ոչինչ չստացվեց: Մինչդեռ գյումրեցի մեր գործընկերները հաջողությամբ պսակեցին իրենց նպատակը: Նախ, որ դա նրանց տարիների երազանքն էր, երկրորդ, որ

հանրապետության երկրորդ քաղաքն իր տեղական լուրջ գիտական ներուժն ունենալով միշտ էլ սնել է մայրաքաղաքին: Եվ վերջապես, մեր իրականության մեջ, Շիրակը, մասնավորապես Գյումրին ազգային նյութական ու հոգևոր ինքնատիպ ու մեծարժեք մշակույթի կրող է, և շատ ուրախալի է, որ նման կենտրոնի ստեղծումով Գյումրու նկարագիրն ազգային իմաստով շատ ավելի հստակ դարձավ: Այն ժողովածուները, մենագրությունները, որոնք պատրաստվեցին կենտրոնում, այն գիտական արտադրանքը, որ տրվեց այստեղ տասը տարիների ընթացքում, մեկ անգամ ևս ապացուցում են, որ այս կենտրոնն իսկապես հայագիտական հետազոտություններ կատարող մեր հիմնարկների շարքում իր ուրույն տեղն ու նկարագիրն ունի:

Սևադա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(ԳԱԱ թղթակից անդամ, գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)

Այսօր 10-ամյա հեռավորությունից արդեն կարելի է փաստել, որ Շիրակի Հայագիտական հետազոտությունների կենտրոնի գոյության առաջին տասնամյակը եղել է նրա կազմակերպման, ձևավորման, ինքնահաստատման, արդյունավետ գործունեության, համընդհանուր ճանաչման և ընդլայնման անմախաղեպ տարիներ:

1997թ.-ի աշնանը հիմնադրված Շիրակի հայագիտականը փաստորեն ԳԱԱ Երկրագիտության և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտից և ՀԿԲ-ի բազայի վրա ստեղծված հատուկ փորձակոնստրուկտորական տեխնոլոգիական ինստիտուտից հետո դարձավ երրորդ ակադեմիական օջախը Գյումրիում: Կարծում եմ՝ սա արդեն լուրջ փաստարկ է Գյումրիում Գիտությունների ազգային ակադեմիայի Հյուսիսային բաժանմունք ունենալու անհրաժեշտության օգտին:

Երիտասարդ հայագետների մի սովոր խումբ, չնայած ընդհանուր առմամբ գիտությանը զբաղվելու համար անչափ անբարենպաստ պայմաններին, լրջորեն և մեծ արդյունավետությամբ է այստեղ զբաղվում հնագիտության, պատմության, ազգագրության, ժողովրդական երաժշտության, էթնոսոցիոլոգիայի ու բանահյուսության ոլորտներում Շիրակի հարուստ պատմամշակութային ժառանգության ուսումնասիրմամբ: Մաղթում եմ Հայագիտականին նոր հաջողություններ:

Խաչիկ ԲԱԴԻԿՅԱՆ

(բանասիրության դոկտոր, պրոֆեսոր)

Շնորհավորում եմ Շիրակում այս գիտական օջախի հիմնադրման 10-ամյակը: Հրաշալի գործ կատարեց մեր ազգային ակադեմիան՝ այս տարածքում հիմնելով գիտական մի կենտրոն, որը մեծ դերակատարում ունեցավ և, վստահ եմ, հետագայում էլ կունենա Շիրակի պատմամշակութային ժառանգության, ազգային ավանդույթների, բանահյուսության, արվեստի ու բազմազան արհեստների ուսումնասիրության ասպարեզում: Քանիցս առնչվել եմ կենտրոնի գիտնականների հետ և զարմացած եմ այդ շնորհալի մարդկանց դժվարություններից չերկնչելու, կամքի, ջանասիրության ու գյումրեցիական պատվախնդրությամբ աշխատելու պատրաստակամության վրա:

Սերգեյ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

(երկրագիտության դոկտոր, պրոֆեսոր)

Գիտական կենտրոնի կայացման համար 10 տարին մեծ ժամանակաշրջան չէ, որովհետև այդ ընթացքում պետք է իրականացնել մի շարք կազմակերպչական, որոնողական աշխատանքներ, մասնավորապես, լուծել մասնագետների խնդիրը, ընտրել հետազոտական առաջնահերթ ուղղությունները, նորմալ աշխատանքային պայմաններ ստեղծել, կապեր հաստատել այլ, նաև միջազգային գիտական կառույցների հետ և այլն: Ի պատիվ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի՝ պետք է ասենք, որ այդ կարճ ժամանակամիջոցում նրանց հաջողվել է իրականացնել թվարկածս աշխատանքները, ստեղծել մնայուն արժեք ներկայացնող գործեր, հրատարակել «Գիտական աշխատություններ»-ի մեկ տասնյակ հատորներ, կազմակերպել գիտաժողովներ, կապեր հաստատել տարբեր, նաև միջազգային գիտական հեղինակավոր կենտրոնների հետ: Կենտրոնն ունի բարձրակարգ պատմաբաններ, ազգագրագետներ,

հնագետներ, երաժշտագետներ, ընդ որում գիտաշխատողների 80 տոկոսից ավելին ունի տարբեր գիտական աստիճաններ, իսկ սա շատ կարևոր ձեռքբերում է:

Այս բոլորը խոսում են այն մասին, որ կա լավ կազմակերպություն, լավ գիտական օջախ, հիանալի բազա է ստեղծվել հետազա հետազոտությունների համար: Ընդհանրապես են առաջին հերթին աշխատակիցներին, երկրորդը՝ մեր մարզի ազգաբնակչությանը, բոլորիս՝ կենտրոնի ստեղծման 10-ամյակի կապակցությամբ: Մենք մարզում իսկապես խիստ կարիք ունեինք այսպիսի մշակութային, գիտական օջախի: Ի վերջո, մարզի, երկրի դեմքը ցույց տվողը մշակույթն ու գիտությունն են:

Վարդևան ԳՐԻԳՈՐՅԱՆ

(մանկավարժության դոկտոր, պրոֆեսոր)

Հիմնադրման առաջին իսկ օրերից ԵՀՀ կենտրոնը լծվել է հայագիտական հետազոտությունների շնորհակալ գործին՝ զարգացնելով այս բնագավառի լավագույն ավանդույթները, ստեղծելով նորերը: Այսօր այլևս անառարկելի է նրա դերը Այրարատ աշխարհի Շիրակի պատմական գավառի հարուստ ազգագրության ու բանահյուսության, հնագիտության ու վիճակագրության ուսումնասիրման բնագավառում: Դրանց արդյունքները մենք տեսնում ենք կենտրոնի կողմից հրատարակված ժողովածուներում: Հատկապես կարևորում ենք այն սերտագույն համագործակցությունը, որ ստեղծվել է կենտրոնի ու Գյումրու ամենահին ու հեղինակավոր բուհի՝ մանկավարժականի հայագիտական ամբիոնների միջև:

Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ

(բանասիրության դոկտոր, պրոֆեսոր)

Դուք՝ շիրակցիներդ, այս տեսակետից հրաշալի օրինակ եք ծառայում մեր հայրենիքի բոլոր տարածաշրջանների համար: Դուք արդյունավետ եք օգտագործում ձեր խոշոր գիտական ներուժը և մանրազնին ուսումնասիրում ու դրանով իսկ արժևորում եք ձեր անզուգական բնաշխարհի հնագիտական, ազգագրական, մշակութային հուշարձանները, սովորույթներն ու կենցաղը, որոնք հայ ժողովրդի կյանքում ունեն իրենց ուրույն տեղը: Դեռևս Բագրատունյաց հզոր տոհմի իշխանության ժամանակներից սկսած և դրանից էլ շատ առաջ Շիրակն ունեցել է ազգագրության, բանահյուսության և մշակութային հարուստ ավանդներ, որոնք առ այսօր ներկա սերունդը, ի դեմս ձեզ, պահում-պահպանում է արժանապատվորեն:

Արդեն 10 տարի է՝ ձեր Հայագիտական հետազոտությունների կենտրոնն իր գործուն ու արգասավոր մասնակցությունն է բերում մեր հանրապետության գիտական մտքի առաջընթացին: Ասածիս խոսուն վկաները կենտրոնում իրականացվող գիտական տարբեր ծրագրերն են, նաև ձեր կողմից պարբերաբար հրատարակվող «Գիտական աշխատություններն» են, որոնցում հրատարակվելը պատիվ է գիտության ուղին բռնած ամեն մի ստավորականի համար:

Մամսոն ԴԱՎՈՅԱՆ

(տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր)

Տարիներ առաջ, երբ երկիրը նոր էր անկախացել, և Գյումրին էլ դեռ խորությամբ կրում էր աղետի հետքերը, նման կենտրոն ունենալու գաղափարը թվում էր անիրագործելի: Սակայն մեծ ձգտումները ծնում են մեծ գործեր: Այդ ձգտումը կար, և այսօր Գյումրիում այդ ակադեմիական կենտրոնը հաջողությամբ գործում է, օր օրի մեր մարզի ու հանրապետության գիտական կյանքում նրա դերը դառնում է ավելի զգալի:

Արարատ ԱՂԱՍՅԱՆ

(արվեստագիտության դոկտոր)

Դժվար է գնահատել Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի դերն ու նշանակությունը Շիրակի մշակութային մասունքների գիտական ուսումնասիրության գործում, որը վերջին տասնամյակում մեծ թափ է առել:

Մենք բարձր ենք գնահատում սերտ կապերն ու ստեղծագործական շփումները, որոնք հաստատվել են Շիրակի հայագիտական կենտրոնի և Արվեստի ինստիտուտի միջև, որոնք իրականացվում են ի շահ հայ արվեստի վաղվա օրվա, ի նպաստ նրա հետագա առաջընթացի: Մեր ինստիտուտի գիտնականներից շատերն ակտիվորեն մասնակցում են կենտրոնի կողմից Գյումրիում պարբերաբար անցկացվող՝ Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հանրապետական խոշորամասշտաբ գիտական նստաշրջանների աշխատանքին, Ձեր արվեստաբաններն իրենց գիտական առենախտությունները հաջողությամբ պաշտպանել ու պաշտպանելու են Արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդում: Եվ վերջապես, կենտրոնի գիտական աշխատությունների հրատարակված ամենամյա ժողովածուներում Դուք սիրահոժար էջեր եք տրամադրում նաև Արվեստի ինստիտուտի գիտնականներին: Մենք ուրախ ենք ձեր ձեռքբերումներով:

Ջենմա ԲԱՌՆԱՍՅԱՆ

(քանասիրության թեկնածու, դոցենտ)

Շնորհավորում եմ Շիրակի հայագիտականի 10-ամյակը: Իսկապես կայացած կառույց է, որը 10 տարի շարունակ գիտական հասարակության ուշադրությունը բևեռել է Գյումրու տարածաշրջանի ավանդույթների, ճարտարապետության, հնագիտության, բարբառների (սա հատկապես եմ նշում, քանի որ ինքս զբաղվում եմ դրանցով և երկու տարին մեկ պարբերաբար այստեղ գումարվող գիտաժողովների ժամանակ ներկայանում եմ Գյումրու տարածաշրջանի բարբառների ուսումնասիրությամբ): Ահա իմ գյումրեցի գործընկերների այդպիսի ակտիվ գործունեությունը ցույց է տալիս, որ կառույցը ոչ միայն կայացել է, այլև կարծես իր ձեռքն է վերցրել նախաձեռնությունը և արժանապատվորեն մրցում է հանրապետության մայրաքաղաքի շատ ու շատ գիտական հիմնարկների հետ: Միանգամայն արդարացված էր Գյումրիում Հայագիտական կենտրոն ստեղծելու Գիտությունների ազգային ակադեմիայի նախաձեռնությունը: Այդ կենտրոնը, կարելի է ասել, ոչ միայն դարձել է հանրապետության լավագույն գիտական հիմնարկներից մեկը, այլև ունի փայլուն ապագա: Դրանում չեմ կասկածում:

Հայկ ՀԱՐՈՅԱՆ

(փիլիսոփայության թեկնածու, դոցենտ)

Հիրավի, 10 տարի առաջ՝ 1997-ին, Գյումրիում նման գիտական կենտրոնի ստեղծումը նշանակալից իրադարձություն էր ոչ միայն Շիրակի մարզի, այլև հանրապետության մտավոր կյանքում, քանզի անցած տասը տարիների իր գիտական գործունեությամբ կենտրոնը որոշակիորեն նպաստեց տարածաշրջանում գիտական մտքի աշխուժացմանը, մտավոր ներուժի պահպանմանն ու զարգացմանը: Եվ իր հիմնական առաքելությունն իրականացնելիս, այն է՝ Շիրակ աշխարհի նյութական ու հոգևոր արժեքների հետազոտության ոլորտում գիտական լուրջ պրպտումներով նոր շունչ և թարմություն բերեց հայագիտության մեջ: Թող որ հետագա տասնամյակները կենտրոնի համար լինեն նորանոր ձեռքբերումների, նաև միջազգային ճանաչման ու գնահատման արգասավոր տասնամյակներ:

Մերզո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԵՐԹ

Շիրակի հայազիտական ուսումնասիրության պատմության վերջին ժամանակների փոքր հատվածը՝ ընդամենը տասը տարին, անխզելիորեն կապված է նաև Գյումրիում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոնի գործունեության հետ:

Հանրապետության երկրորդ քաղաքում Գիտությունների ակադեմիայի արդեն գոյություն ունեցող Գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի կողքին նաև հումանիտար ակադեմիական կառույցի ստեղծումը հասունացած խնդիր էր արդեն անցյալ դարի 70-80-ական թվականներին: Քաղաքային իշխանությունները գիտության այդ երկու քեղերի առկայության մեջ իրավացիորեն տեսնում էին Լեռնականում Գիտությունների ակադեմիայի Հյուսիսային մասնաճյուղի հիմնադրման ամենաիրական հնարավորությունը: Ավելին, խնդիրն արդեն գործնականորեն քննարկվում էր Ակադեմիայի նախագահությունում, ընթացք էին ստացել Բաժանմունքի շենքի որոշման, նրա ղեկավարության ընտրության ու այլ հարցեր, այդ մասին սկսել էին խոսել նաև իշխանության ամենավերին օղակներում: Սակայն շուտով՝ 80-ական թթ. կեսերից հարցը միանգամից զոցվեց, իսկ այդ մասին խոսակցությունները իսպառ դադարեցին: Այս մեր երկիրն հայտնվեց Աղետի հորձանուտում, նրա հյուսիսը՝ արհավիրքի էպիկենտրոնում՝ բյուրավոր անմեղ զոհերով, ավերակված բնակավայրերով, հարյուր հազարավոր անօթևաններով: Դժոխակ և միաժամանակ հերոսական ժամանակներ եկան, ծանրագույն քաղաքական որոշումների, տնտեսական կատակիզմների, բարդ ու մինչ այդ չտեսնված հասարակական խնդրումների ժամանակներ, սպա պարտադրված պատերազմ եղավ՝ Արցախյան հերոսամարտը մեր ինքնության ու մեր տեսակի պահպանման և գոյատևման համար: Դժվար է իրարից զատել այդ օրերի ողբերգականն ու հերոսականը, նահանջի տագնապն ու հաղթանակի բերկրանքը: Այդպես ապրեցինք, ինչպես սովորել ենք ապրել դարեր անընդհատ՝ կով չգնալով ոչ՝ բնության անսանձ տարերքին և ոչ՝ էլ օտարի կամքին:

Որքան էլ տարօրինակ էր, սակայն կիսավերակ Գյումրիում այդ օրերին նաև հայազիտությունից սկսեցին խոսել և ամենևին ոչ պատահաբար: Ուղղակի Երկրագիտական թանգարանի մի փոքր խումբ երիտասարդ գիտնականներ 1994-ի աշնանը, ի հեճուկս բոլոր դժվարությունների, մթի ու ցրտի, արհամարհելով բարդություններն ու ամեն տեսակի անհարմարությունները, Գյումրի հրավիրեցին հանրապետության մի քանի տասնյակ հայտի հայազետների՝ քննարկելու Շիրակի պատմաշակութային ժառանգության գիտական ուսումնասիրության վիճակը: Ի մեծագույն պատիվ ու հարգանք հայրենական գիտության մեթոդա մշակների՝ շեշտեմ, որ հանրապետական հայազիտական միտքը կարոտով ու ջերմորեն արձագանքեց դրան: Գիտաժողովի հաջողությունն աներկբա էր, Գյումրին էլ առաջին հերթին ինքն իրեն ու սպա նաև բոլորին ապացուցեց, որ չի մարել այստեղ ոչ՝ գիտության լույսը, ոչ՝ վաղվա օրվա հավատը: 1996-ին գումարված երկրորդ գիտաժողովն ավելի ներկայացուցչական էր. գիտական գնահատանքի ներկայացվեցին առաջին գիտաժողովից հետո հանրապետությունում Շիրակի նյութական ու հոգևոր մասունքների ուսումնասիրության ուղղությամբ նոր ձեռքբերումները: Պակաս կարևոր չէր նաև այն, որ բացահայտելով մարզում հայազիտական հետազոտությունների մակարդակը, տեղի գիտական մեծ ներուժի իրական հնարավորությունները՝ այս գիտաժողովները էապես նպաստեցին Գյումրիում Ակադեմիայի հումանիտար կառույց ունենալու հարցի վերանայմանը: Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունն ըմբռնումով ընդառաջ գնաց հանրապետության մի շարք անվանի գիտնականների (Վ. Բարխուդարյան, Ս. Համբարձումյան, Ա.Բալանթարյան, Լ.Հախվերդյան, Ս.Հարությունյան, Գ.Ջահուկյան, Ա.Մելքոնյան և ուրիշներ) խնդրանքին՝ Կառավարության քննարկմանը ներկայացնելով Գյումրիում Ակադեմիայի հայազիտական հետազոտությունների կենտրոն հիմնելու առաջարկը: Հատկանշական է, որ այն իրականություն դարձավ 1997-ի աշնանը, երբ իշխանությունների կարճամիտ ու այսրոպեական քաղաքականությունը լրջորեն

վտանգել էր Հայոց գիտությունների ակադեմիայի վաղվա օրը՝ կասկածի տակ առնելով նրա հետագա գոյության նպատակահարմարությունը: Այնուամենայնիվ, Ակադեմիան դիմագրավեց այդ քամիներին ու կորուստներով հանդերձ պահպանվեց՝ ստեղծելով նաև առաջին տարիներին Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնաճյուղ հանդիսացող, իսկ 2002-ից ինքնուրույն Շիրակի Հայագիտականը, որ մեր երկրում առաջօր միակ ակադեմիական հումանիտար կառույցն է մայրաքաղաքից դուրս: Ավելի ուշ մեկ-երկու մարզում նմանատիպ գիտական կառույց ստեղծելու փորձերը հաջողություն չունեցան:

Շիրակի Հայագիտականի գոյության տասը տարիները, իրոք, եղան ինքնահաստատման ու ձեռքբերումների տարիներ: Նախ հստակեցվեցին պատմական գավառի հնագիտության, ճարտարապետության, հին ու նոր պատմության, ազգագրության և բանահյուսության գիտական հետազոտման մեջ կենտրոնի առաջնահերթությունները, նրա գիտական ներուժի իրատեսական հնարավորությունները, պատվի գործ համարվեց հետազոտական աշխատանքի բարձր որակի ապահովումը պետական ֆինանսավորմամբ իրականացվող թեմատիկ ծրագրերում, որոնք այս տարիների ընթացքում հասան տասներեքի և կատարվում են ամենայն բարեխղճությամբ ու պատասխանատվությամբ: Դրանք արժեքավոր հետազոտություններ են՝ նվիրված Բենիամինի անտիկ դամբարանադաշտի ու բնակավայրի, Հայկաձորի և Մեծ Մեպասարի հնագիտական հուշարձանների ուսումնասիրություններին, գիտականորեն հիմնավորված համարձակ հարցադրումներ են մ. թ. ա. առաջին հազարամյակում Ախուրյանի ավազանի հնագույն բնակչության էթնիկ խմբերի, նրանց պաշտամունքի, առասպելական պատկերացումների, հավատալիքների, հնդեվրոպական հոգևոր ժառանգության, ցեղային երկրների տեղադրման խնդիրների շուրջ, նաև հանգամանալից ուսումնասիրություն Ալեքսանդրապոլի գավառի նորագույն շրջանի՝ XIX դ. պատմաժողովրդական դրության մասին: Դրանք ուշագրավ ու մանրակրկիտ ուսումնաքննություններ են Շիրակի ավանդական բանահյուսության, ծիսատոնական համակարգի ու դրանց նորոյա փոխակերպումների վերաբերյալ, աղետի հոգեբանության արդիական խնդիրների, աղետոյալ ազգաբնակչության հոգեկարգավորման գործընթացի մեխանիզմների մշակման շուրջ, XIX-XX դդ. Շիրակի տնայնագործության, արհեստների, տնտեսական զբաղմունքների ու տնտեսության օժանդակ ձևերի մասին, Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրու պատմագագրական ուսումնասիրության ծիրում ազգագրական հարուստ նյութ ունեցող քաղաքի էթնիկ կազմի, կենցաղի, կենսաապահովման, վերջին երկու հարյուրամյակի ընթացքում էթնոժողովրդագրական ու մշակութային զարգացումների մասին, Շիրակի ժողովրդական ու մասնագիտացված երաժշտարվեստի պատմության, նրա ժանրային, լեզվական ու տաղաչափական հիմնախնդիրների, ժողովրդական երգի քաղաքային ավանդույթների ու զարգացման արդի միտումների վերաբերյալ և այլն:

Կենտրոնում սկզբից ևեթ կարևորվեց սեփական տպագիր խոսք ունենալու անհրաժեշտությունը: Որոշվեց տարին մեկ անգամ հրատարակել կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուն՝ 14 հրատարակչական մամուլ ծավալով, բարձր որակով ու գիտական պատշաճ մակարդակով: Այսօր հրապարակի վրա են հանրապետության գիտական շրջանակներում արդեն բարի համբավ վայելող և սպասված այդ հանդեսի ինը հատորներ՝ հարյուր քառասուն հրատարակչական մամուլ ընդհանուր ծավալով: Իհարկե, կենտրոնն այլ հրապարակումներ ևս ունի: Դրանք ամենատարբեր գիտաժողովների, գիտական սեմինարների ու միջոցառումների նյութերն են, թեմատիկ հաշվետվությունները: Թեև դեռևս դանդաղ տեմպերով, սակայն սկիզբ է առել այս տարիների ընթացքում ավարտված հիմնարար ուսումնասիրությունների հրատարակումը:

1998-ից մինչ օրս Շիրակի Հայագիտականը նաև Գյումրիում ավանդաբար գումարվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական խոշորամասշտաբ և հեղինակավոր գիտական նստաշրջանների կազմակերպիչն ու պատասխանատուն է, գիտաժողովներ, որոնք ակնառու երևույթ են ոչ միայն Գյումրու, այլև հանրապետության գիտական ու մշակութային կյանքում:

Կենտրոնի հիմնադրման առաջին օրերից ամենալուրջ ուշադրություն դարձվեց կադրերի խնդրին, և ընդամենը գիտության երեք թեկնածուների դիմաց այսօր կենտրոնի տասնվեց գիտաշխատողներից գիտթեկնածուներ են ինը, գիտության դոկտորներ՝

երկուսը, իսկ մոտ ապագայում պաշտպանության են պատրաստվում ևս երեք թեկնածուական ատենախոսություններ: Ասպիրանտների պատրաստումը կենտրոնում տարվում է գերազանցապես Գյումրու բուհերի, մասնավորաբար Մանկավարժականի լավագույն շրջանավարտների ներգրավմամբ:


Այս տարիներն արդյունավետ եղան մասնաճյուղի հանրապետության ու արտասահմանյան բազմաթիվ գիտական ու մշակութային կազմակերպությունների հետ գիտական կապերի խորացման ու ընդլայնման, միջազգային համագործակցության ակտիվացման առումով: Արդյունավետ աշխատանք տարվեց մասնաճյուղի կազմակերպության վերազինման ուղղությամբ՝ ապահովելով արդիական համակարգչային տեխնիկայով ու սարքավորումներով, կապի ժամանակակից միջոցներով կենտրոնը զինելու կարևոր խնդրի իրականացումը:

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը թևակոխում է գոյության երկրորդ տասնամյակը՝ իմաստնացած իր այս տարիների փորձով, ձեռքբերումների ու կորուստների, արածի ու չարածի հանրագումարով, գիտական ու մշակութային այլ կազմակերպությունների հետ մեկտեղ Շիրակի նյութական ու հոգևոր ծովածավալ հարստության ուսումնասիրությունը շարունակելու իր երթին հավատարիմ:

Ձեկուցում՝ արված ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադրման 10-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում, Գյումրի, 19 հոկտեմբերի, 2007թ.:

ԱՆՈՒՐՅԱՆԻ ԿԻՐՃԻ ՋՐԱԶՈՐ - ԱՆԻ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԱՆՁԱՎՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԱՆՁԱՎԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ

Քարանձավները մարդու համար բնակարան են ծառայել դեռևս նախնադարում: Լեռնային գետերի կիրճերն ավելի քան հարմար էին բնակության համար, և բազալտի ու տուֆի շերտերի մեջ բացված բնական քարանձավները լավագույն պատրաստարան էին: Բնական պաշտպանվածությունը, շատ դեպքերում նաև դժվարամատչելի լինելը, ինչպես նաև ջրի մերձակայությունը նպաստավոր պայմաններ էին մարդու բնակության համար: Պատմական զարգացման ընթացքում մարդը ոչ միայն իր կարիքներին հարմարեցրեց բնական քարանձավները, այլ նաև ստեղծեց վիմափոր, բնակելի նոր համալիրներ՝ անհրաժեշտ բոլոր կառույցներով՝ տուն, եկեղեցի, գերեզմանոց: Բնական փոքր քարանձավների մի մասն իր նախնական կիրառական նշանակությունը պահպանեց նաև հետագա դարերում՝ անհրաժեշտության դեպքում ծառայելով և՛ որպես կացարան, և՛ որպես ապաստարան:



Ախուրյան գետը Բանդիվան-Ամասիա-Ջրածոր-Արեգնադեմ-Մարմաշեն, ավելի հարավ՝ Տայլար-Հոռոմոսի վանք-Անի հատվածներում անցնում է անդնդախոր կիրճով, որի խորությունը տեղ-տեղ հասնում է 30 մետրի: Կիրճի երկրաբանական կազմը բազալտ է և հրաբխային տուֆ:¹ Բազալտը հաստ և ամուր շերտով ներքևում է, մոտա-

¹ Տարածքն ընկած է Արագածի գեոմորֆոլոգիական շրջանի յոթ ենթաշրջաններից մեկի՝ հարավային և հարավարևմտյան տարածքում: Երկրաբանների կարծիքով այդ հատվածի ժամանակակից մակերևույթը ձևավորվել է Կայնոզոյան դարաշրջանի տարբեր ժամանակահատվածներում: Պլիոցենի դարաշրջանում՝ մեզանից 14 մլն տարի առաջ Ախուրյան գետի ստորին հոսանքում երկրակեղևի բեկորների տեկտոնական շարժումների հետևանքով ձևավորվում է Ախուրյանի միջլեռնային զոգավորությունը: Գոգավորությունն անջատող լեռները միջին բարձրության են եղել: Պլիոցեն-Չոբրոքդականում (2 միլիոն տարի առաջ) դիտվում է ինտենսիվ հրաբխականություն և ձևավորվում է օրսիդիանով ուղեկցվող տուֆի շերտը: Ժամանակի ընթացքում Ախուրյան գետի հովտի ստորին հատվածում ուղղորդ քարաբեկորները պոկվել են ու ցած

վորապես Ախուրյանի ջրի մակարդակին: Սրա վրա նստած է երկու հաստ շերտ՝ դեղին, փափուկ հրաբխային տուֆ և սև բազալտ: Երեք շերտերն իրարից բաժանված են հարթակներով և յուրաքանչյուր վերին շերտ հետ է ընկած՝ ներքևին եզրից ակնհայտ հեռավորությամբ:

Միջին՝ տուֆի պլաստն ունի հստակ տարբերվող երեք որակի և քանակի շերտեր. վերինը համեմատաբար բարակ, միջինը՝ ամենահաստը, փափուկ, սևամոխրագույն և տակինը՝ կարծր և սև: Երեք շերտերն էլ ճեղքվում են հորիզոնական և ուղղահայաց հարթություններով՝ ստեղծելով կարծես հղկված մակերևույթ: Ախուրյանի կիրճում քարանձավները և բազալտի, և տուֆի շերտերում են: Կան և՛ բնական, և՛ արհեստական քարանձավներ: Առաջինները հիմնականում տուֆի շերտի տակ են՝ ավազաքարային նստվածքներում: Այս շերտը շատ դյուրին է փորել, ուստի և բնական քարանձավները շատ հաճախ են ընդարձակվել: Իսկ բազալտի շերտերի բնական բացվածքները հիմնականում օգտագործվել են՝ պահպանելով իրենց նախնական տեսքն ու չափերը:

Ախուրյանի կիրճում քարանձավային համալիրներ ու քարայր-կացարաններ կան Բանդիվան-Ամասիա-Ջրածոր-Արեգնադեմ-Մարմաշեն, ապա՝ Հայկաձոր-Անիավան-Խարկով, այնուհետև Անի-Մաղասաբերդ-Բազարան-Մրեն հատվածներում: Այդ քարանձավային բնակավայրերից ուսումնասիրված են Անին,² նրա հյուսիսային արվարձան Հայկաձորը³ և Երեբունյքը:⁴ Հնագիտական հետախույզություն է կատարվել Մարմաշենում⁵ և Ջրածորում:⁶ Անիից հարավ՝ Ախուրյանի ստորին հոսանքում են Բազարանի և Մրենի քարանձավները, որոնց մասին Թորամանյանը գրում է. «Ուսումնասիրության ահագին նյութ կմատակարարե Բազարանեն դեպի Մրեն գնալու ճանապարհին վրա անմատչելի քարաժայռերու վրա և ծերպերու նման փորված քարայրերը ... ցածեն հայտնի է միայն նույն քարայրին բերանը, և ձեռագործ փորված ճանապարհը ուղղահայաց կերպով կտրված ահավոր քարաժայռի կտրծքին վրա...»:⁷ Ախուրյան գետի արևմտյան ափին, Անի մայրաքաղաքից 4կմ հարավ գտնվում է Մաղասաբերդը, վերջինիցս մոտավորապես նույն հեռավորության վրա էր Բազարանը:

Ախուրյանի վերին հոսանքում քարանձավներ կան Բանդիվան-Ամասիա-Ջրածոր-Արեգնադեմ հատվածում: Բանդիվանի քարանձավները գյուղից արևմուտք, Ախուրյանի աջ ափին և ձորի մեջ են: Ջրածոր գյուղից ներքև՝ Ախուրյան գետի ձախ ափին՝ կիրճում Հ.Պետրոսյանի կողմից ուսումնասիրվել է հինգ քարանձավ: Մուտքերը պատերով շարված երկու քարանձավներից ծածկված մուտքով քարանձավում, ուր մարդու միջամտության հետք չի նկատվել, բացված 2x3մ մակերեսով պեղամասից

թափվել՝ կուտակվելով ստորոտում: Տեկտոնական խոշոր ճեղքերից ժայթքել է լավան, որը Մետտիսի (մեկ միլիոն տարի առաջ) ժամանակ ունեցել է անդեզիտային կազմ և ուղեկցվել է բեկորատված այլ նյութերով: Բազալտի շերտը ծածկվել է տուֆով՝ այսինքն տուֆորենկաներով և տուֆոկոնցլոմերատներով: Կարճատև դադարից հետո տեղի է ունենում տեկտոնական նոր բարձրացում: Մետտիս Պոնտոսյան դարաշրջանում (մեկ միլիոն տարի առաջ) նորից սկսվում է հրաբխականություն, որն ուղեկցվում է տուֆերի կուտակմամբ (Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Եր., 1971, էջ 359):

² Д. К и п ш и д з е, Пещеры Ани, Ер., 1972.

³ Հայկաձորի պեղումները սկսվել են 2003թ. և պարբերաբար շարունակվում են մինչ օրս (դեկ.՝ Հ. Խաչատրյան, Լ. Եզանյան):

⁴ Ф. Т е р - М а р т и р о с о в, Малоизученный памятник Еребуника, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 236-237:

⁵ Հնագիտական հետախույզությունն իրականացվել է Մարմաշենի արշավախմբի կողմից (դեկ.՝ Ս. Հարությունյան): Նյութերը հրատարակված չեն, պահվում են Շիրակի երկրագիտական թանգարանում:

⁶ Հ. Հ ա կ ո բ յ ա ն, Ռ. Վ ա ռ դ ա ն յ ա ն, Վ. Ջ հ ն ջ ի յ ա ն, Ախուրյան գետի վերին հոսանքում կատարված հնագիտական պեղումների նախնական արդյունքները (Ջրածոր և Հողմիկ գյուղերի տարածք), Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, (1986-1987թթ. պեղումների արդյունքները), Եր., 1992, էջ 107:

⁷ Թ. Թ ո թ ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության (աշխատությունների երկրորդ ժողովածու), Եր., 1948, էջ 195:

գտնվել են զարգացած միջնադարին պատկանող կճուճների, քասերի, անոթների կափարիչների բեկորներ:⁸

Կամխուտ (նախկին՝ Չախմախ) գյուղը գտնվում է Ամասիայից 7կմ հարավ-արևմուտք՝ Ախուրյանի վերին հոսանքի Ամասիա-Ջրածոր հատվածում, կիրճից ոչ հեռու: Այստեղ ափամերձ տուֆի շերտերում ևս կա քարանձավային բնակավայր: Գյուղի արևելյան մասում տուֆի հաստ շերտը դեպի հյուսիս ձգվում է մինչև փոքրիկ ձորակը, արևելքում ավարտվում է անցյալ դարի 50-ական թվականներին շահագործված և լքված հանքի թափոնների կուտակումներով, արևմուտքում՝ շերտը մասամբ մնացել է տների տակ, իսկ տնամերձերի ու արտերի հողի մակերեսն հագեցած է անտիկ և միջնադարյան խեցեղենի բեկորներով: Հյուսիսում և արևելքում լքված հանքի շերտը բաց է, և երևում են քարանձավային բնակավայրից պահպանված կացարաններ: Շատ հաճախ կացարանների երեք պատերը փորված են քարի շերտի մեջ, իսկ չորրորդը՝ քարաշար է: Ծածկի նույն սկզբունքն է կիրառվել նաև այստեղ: Բնակարանը կառուցվել է՝ օգտագործելով ժայռի մեջ փորված երեք պատերը, որոնց վերին հատվածում պահպանվել են ծածկի գերանների համար արված փորվածքները: Քարանձավներից մի քանիսը լցված են և փակված, միայն մուտքեր են երևում: Փոքր ձորակից հյուսիս՝ մյուս ափին, մերկացած ժայռեղեն մակերեսի վրա ընդգծվում են շրջանաձև փորվածքներ, որոնք կարող էին ծառայել քարեղեն կացարանների լուսավորության համար կամ, անհրաժեշտության դեպքում՝ որպես պահեստային ելք: Քարանձավներից մեկի պատից անջատված ժայռաբեկորի երկու կողմերին պահպանված են ուղղանկյուն և շրջանաձև փորվածքներ, որ նույն նպատակին են ծառայել:⁹ Վերգետնյա նյութերի մեջ հիմնականը անտիկ և միջնադարյան խեցեղենի ու ծածկի կղմինդրների բեկորներն են:

Ախուրյանի կիրճի բարձրադիր հատվածում նույնպես բազալտի շերտի մեջ փորված և բավականին անմատչելի, ուղղանկյուն, քիչ կլորացված անկյուններով, կրունկների մեջ պտտվող քարե դռներով փոքր քարանձավներ կան Գյուլիբուլազ (ներկայիս՝ Արեգմաղեն) գյուղի մերձակայքում: Անցյալ դարի 90-ական թվականներին տարածքը քարհանքի վերածվելուց հետո քարանձավներից մի քանիսի մուտքերը փակվել են արտադրական թափոններով: Ախուրյանի ձախ ափին՝ Մարմաշենի վանքի դիմաց, բազալտի շերտի մեջ, կիրճի բարձրադիր հատվածում գտնվող մի քարանձավ հետախուզվել է 1972թ: Գտածոները 10-12-րդ դարերի խեցեղենի բեկորներ են:

Ախուրյանը Մարմաշենից հարավ մինչև Անիի նախադուռը՝ Հայկաձոր հոսում է հարթավայրով: 2000թ. Հայկաձոր գյուղի վարչական տարածքում, Հոռոմոսի վանքի դիմաց ընկած հրվանդանի հնագիտական հետախուզության արդյունքում դեպի գետն իջնող դարավանդի միջին հատվածում՝ տուֆի շերտի մեջ հայտնաբերվեց քարանձավային բնակավայր՝ իրար հետ հաղորդակցվող, ձեռակերտ և բնական բազմաթիվ քարանձավներով:¹⁰ Այստեղ՝ Ախուրյանի գառիթափի ափամերձ հատվածում, դեղնավուն տուֆի շերտի մեջ պահպանվել են մի գծով, իրար կողք-կողքի փորված քարանձավներ, որոնք հասնում են մինչև հրվանդանի ծայրը: Հրվանդանի վերին հատվածն ազատ է փորվածքներից, թեքությամբ մոտ 4-5մ ցած է իջնում: Այստեղ վերին և ստորին բազալտային շերտերում քարանձավներ չկան: Վերին հարթակից թեքությամբ իջնող երկրորդ՝ տուֆի շերտի մեջ քարանձավներն են, որոնք կիրճի մակարդակից նույն բարձրության վրա են՝ 15-20մ, սակայն հավանաբար ներքին հարթակները նախապես ջրի մակարդակին են եղել:

Հայկաձորի քարանձավային նորահայտ բնակավայրը գտնվում է Անիից 3կմ հյուսիս՝ մայրաքաղաքի և նրա հյուսիսային դարպասի՝ Հաղթականարի միջև, ուղիղ Հոռոմոսի վանքի դիմաց, Ախուրյանի աջ ափին:¹¹ Այն, որ հայտնաբերվածը Անիի ար-

⁸ Հ. Հ ա կ ո բ յ ա ն, Ռ. Վ ա ր դ ա ն յ ա ն, Վ. Ջ ի ն ջ ի ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 107:

⁹ Ըստ գյուղագիտների, քարանձավային այս բնակավայրի վերջին բնակիչները եղել են եղեռնից մազապարծ, քսաներկու անձից բաղկացած մի ընտանիք:

¹⁰ Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե գ ա ն յ ա ն, Անիի նորահայտ արվարձանի 2003թ. պեղումները, ՀՀ ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», VI, Գյումրի, 2003, էջ 134:

¹¹ Անիի նորահայտ արվարձանի պեղումները սկսվեցին 2003թ. և շարունակվում են ցայսօր: Աշխատանքներն իրականացնում է Շիրակի երկրագիտական թանգարանի և ԳԱԱ Շիրակի

վարձանն է, անվիճելի է: Նիկողայոս Մառը, որ քաջատեղյակ էր Անիի տեղադրությանը, նրա հյուսիսային արվարձանի մասին գրում է. «Փաղաքամերձ մասը հասնում էր մինչև երկու, հեռվից զանգակատների նմանվող սյուները, Անիի միջնաբերդից չորս վերստ հեռավորությամբ»:¹² Նույն կարծիքին է նաև Թ. Թորամանյանը, և ըստ նրա, Անիի արվարձանները հասնում էին մինչև Հռոմոսի վանք,- «Անպայման Հռոմոսի վանքը, Բագնայր, Ալաջա և նրանց նման 4-10կմ հեռավորության վրա այժմ ավերակ գյուղերը Անիի արվարձաններն էին և անմիջական կապ ունեին քաղաքի ներքին վարչական ու տնտեսական գործերի մեջ...այժմյան մեր տեսած պարիսպներից դուրս էր բուն Անի քաղաքը, և պարիսպը քաղաքի ամրոցն էր»:¹³ Լեոն ևս կիսում է այս տեսակետը,- «...մի քաղաքի սահմանները նրա տները չեն որոշում, մանավանդ մի այնպիսի քաղաքի, որի բնակիչների մի մասը հողագործությամբ և անասնապահությամբ էր պարսպապստ»:¹⁴ Անիի արվարձանները հասնում էին մինչև Հռոմոսի վանք, իսկ Հաղթականաբլուրը կառուցված էր քաղաքի և վանքի սահմանագրին և «... այն հավանորեն ծառայել է նաև որպես քաղաքի սահմանում գտնվող դիտակետ»:¹⁵

Բագրատունիների ժամանակ հիմնված Հռոմոսի վանքն Անի մայրաքաղաքի հեռավոր դարպասների նշանակություն էր ստացել: Այստեղով էին անցնում Անին Հայաստանի մյուս շրջանների հետ կապող տարբեր ճանապարհները, իսկ դրանցից գլխավորն անցնում էր Ախուրյանի վրա ձգված քարե կամուրջով, որի մասին Ալիշանը գրում է., «...ի հնումն, այլ և ի յետին դարս սպաւենք էին կարաւանաց՝ ի Պարսս երթևեկաց, և առ վանիքն անցանէին ընդ կամուրջ քարաշէն՝ այժմ կործանեալ...»:¹⁶ Կամուրջի հենասյուների հիմքերը գտնվեցին Ախուրյանի ափին, Հայկաձորի քարանձավային բնակավայրի 2004թ. պեղումների ժամանակ:

Նորահայտ արվարձանի քարանձավները ևս մեկ կամ երկու հարկանի են: Միա-հարկ քարանձավները փորված են տուֆի շերտի մեջ: Երկհարկ քարանձավների առաջին հարկերը տուֆի տակ գտնվող ավազաքարային շերտում են, իսկ երկրորդ հարկերը՝ դուրբին մշակվող, չհատունացած տուֆի մեջ: Բացառությամբ է ստորին բազալտային շերտի մեջ փորված, գլանաձև անցքով հաղորդակցվող երկու հարկերով քարանձավը նորահայտ բնակավայրից քիչ հյուսիս՝ Հայկաձորի մեկ այլ՝ «Տերտերի բուստան» տեղանքում:

Ուժեղ հողմահարման պատճառով տուֆի շերտի մեջ փորված քարանձավները ենթարկվել են խիստ քայքայման և ավերման: Մուտքերի նախական ձևը չի պահպանվել: Փուխր ապարը ոչ միայն քայքայվածության, այլ նաև փլվածքների հետևանքով փոխել է քարանձավների նախնական տեսքը, և շատ հաճախ մուտքերը փակված են հսկա ժայռաբեկորներով: Եվ այսօր մուտքերը հազվադեպ են մարդու հասակից բարձր և շատ դեպքերում հարթակների մշակութային շերտի բարձրացման հետևանքով փակված են: Փլուզումներին նպաստել են ուժեղ երկրաշարժները, որոնցից մեկը 14-րդ դարի սկզբին (1319) համարվում է Անիի բազմաթիվ հրաշալի կառույցների, նաև Մայր տաճարի գմբեթի փլուզման պատճառ:

Ինչպես ցույց են տալիս Հայկաձորի պեղումները, յուրաքանչյուր փլուզումից և ավերումից հետո քարանձավային բնակավայրը վերակառուցվել ու վերաշինվել է: Քարանձավները հիմնականում ուղղանկյուն հատակագիծ ունեն, պատերն ու առաստաղը հարթ են, անկյուններն՝ ուղիղ: Կան նաև սենյակներ, որոնք կլորավուն՝ կիսասփերիկ փորվածք ունեն: Պատերի և առաստաղի վրա հստակ է հատող կամ փորող գործիքի շերտի լայնությունն ու ակոսի խորությունը: Տաշվածքը մեծ մասամբ արված է 30 սս-

հայագիտական հետազոտությունների կենտրոնի միացյալ արշավախումբը (Լ.Եզանյան, Հ. Խաչատրյան):

¹² Н. М а р р. Ани столица древней Армении (историко-археологический набросок). „ Братская помощь пострадавшим в Турции армянам“, М., 1998, стр. 221.

¹³ Թ. Թ ո ռ ա մ յ ա ն և, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության աշխատությունների ժողովածու, Եր., 1942, էջ 299, 328:

¹⁴ Լ ե ո, Անի, Եր., 1946, էջ 132-133:

¹⁵ Կ. Մ ա թ և ո ս յ ա ն, Հռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, Պատմա-բանասիրական հանդես, 1, 1982, էջ 144:

¹⁶ Ա լ ի շ ա ն, Շիրակ, Տեղագրություն պատկերացոյց, Վենետիկ, Ս. Ղազար, 1881, էջ 20:

տիճան թեքության կանոնավոր թեք գծերով: Կան կից սենյակներ, որոնք երբեմն իրարից բաժանված են սյուներով և կամարներով՝ ստեղծելով գմբեթասրահի տպավորություն: Նորահայտ արվարձանում նախնական տեսքը պահպանված մուտքերը կամարած և բացվածք ունեն՝ կողերին դռների կրունկներով, հատակին՝ քարից շեմով: Լույսը քարանձավ է թափանցել պատերի վրա բացված, Հռոմոսին նայող պատուհաններից, որոնք բարձր են, դրսից՝ նեղ, ներսից՝ աստիճանաբար լայնացող: Պատուհանների ծավալային և դիրքային այսօրինակ լուծումն ապահովել է դրսից բավականին բարձր տեղադրություն և անմատչելի դիրք, իսկ ներսում՝ բավարար լուսավորություն: Պատուհանները ծառայել են նաև ծխահեռացման համար: Քարանձավների պատերին փորված են մեծ ու փոքր խորշեր, որոնք տարբեր բարձրությունների վրա են, կտրավուն են կամ՝ տաշտած: Հատակին տնտեսական նպատակների համար արված ուղղանկյուն և զլանած կոսեր են փորված, նաև թոնիրներ են թաղված: Ամեն քարտուն ունեցել է նաև օջախ, երբեմն մույնիսկ մի քանիսը:¹⁷ Արվարձանում կան ինչպես տուֆի շերտի մեջ փորված կտրավուն և ուղղանկյուն փոս-օջախներ, այնպես էլ հատակի վրա քարերով շարվածներ: Մի քանի օջախի և երկու կամ ավելի թոնիրների առկայությունը մեկ տան մեջ և դիմացի հարթակներին, ենթադրում է ընտանիքի մեծության մասին, իսկ չափերի տարբերությունը՝ փոքր թոնիրների և օջախների ամենօրյա օգտագործում: Քարանձավներում կան նաև ժայռի մեջ փորված բուխարիներ, իսկ դիմացի հարթակներում դրանք քարով են շարված:

Բնակելի են եղել և՛ առաջին, և՛ երկրորդ հարկերը՝ թոնիրներով, հատակի մեջ փորված փոքր ամբարներով և օջախներով: Երկհարկ քարանձավների հարկերն իրար հետ հաղորդակցվել են երկրորդ հարկի հատակին՝ հենց մուտքի առջև, փորված զլանած անցքերով, որ բացվել են առաջին հարկի առաստաղին:

Այսպես, հյուսիսային արվարձանի երկհարկ քարանձավներից մեկի առաջին և երկրորդ հարկերն իրար հոդորդակցող զլանած անցքն արված է երկրորդ հարկում՝ ամմիջապես մուտքից ներս: 90սմ տրամագծով զլանն իջնում է 1մ ուղիղ, ապա թեքվելով սահում է դեպի առաջին հարկ: Առաջին հարկի քարանձավը դյուրությամբ մշակվող ավազաքարային շերտի մեջ ընդարձակ բնական բացվածք է: Գլանի հատակը բացվում է առաջին հարկի քարանձավի առաստաղին: Ինչ նպատակով է հաղորդակից անցքը փորվել շեմի մոտ: Եթե անցքն արվեր առաջին հարկից տաքության՝ վեր բարձրանալու նպատակով, բնականաբար երկրորդ հարկում չէին տեղադրի ևս երկու թոնիր: Հնարավոր է անցքն առաջին հերթին արվել է պաշտպանական նպատակով: Թշնամու հարձակման ժամանակ բնակիչները շատ արագ կարող էին իջնել առաջին հարկ և այստեղից իրար հաղորդակից քարանձավներով հեռանալ: Կարևոր է նաև մեկ այլ հանգամանք. թշնամին մինչև կկոտրեր կամ կբացեր քարե դուռը (քարե դռների մասին են վկայում մուտքի մոտ պահպանված կրունկները) և կփորձեր ներխուժել քարանձավ, ապա առաջին իսկ քայլից կհայտնվեր հենց շեմի մոտ փորված փոսում: Անիի քարանձավների մասին Թ. Թորամանյանը գրում է. «...երբ ի նկատի ունենաք, որ թշնամիներու հարձակման ժամանակ քարայրերը ամենեւն ապահով ապաստարաններն էին, այն ստեղծ պիտի հանդգնեք, որ աղքատներն զատ, հարուստներն ալ իրենց կյանքն ու գույքը պաշտպանելու համար քարափոր բնակարաններ ունենալու ձգտումը պիտի ունենային»:¹⁸ Արվարձանի մինչ այժմ պեղված մի քանի այլ քարանձավներում պահպանվել են առաջին հարկի առաստաղներին արված մնան բացվածքներ, սակայն երկրորդ հարկերն անավարտ են: Արվարձանի թիվ 4 քարանձավի առաստաղին արված փորվածքը բացվում է երկրորդ հարկի փոքր և նեղ միջանցքի հատակին՝ զբաղեցնելով ողջ մակերեսը: Առաստաղը ցածր է (բարձրությունը՝ 1,5մ), հետին պատը, կորությամբ իջնելով, միանում է հատակին: Հյուսիսային պատի վրա՝ հատակից 1մ բարձրության վրա, փոքր խորշ է, որ սովորաբար արվում էր ճրագ դնելու համար: Հաղորդակից անցքի տակ՝ առաջին հարկի քարանձավի հատակի մեջ, բացվեց թոնիր, որի վրա ավելի ուշ դրվել է օջախ: Պետք է ենթադրել, որ առաստաղին արված բացվածքը ծխատար է

¹⁷ Д. К и п ш и д з е, նշվ. աշխ., էջ 77:

¹⁸ Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության (աշխատությունների ժողովածու), Եր., 1942, էջ 327:

առաջին հարկի համար: Կարծում ենք՝ նախատեսված է եղել փորել երկրորդ հարկ, սակայն գործն անավարտ է մնացել: Նախ, երկրորդ հարկում մուտքը մույն ձևն ու չափերն ունի, ինչ մյուս քարանձավներում է: Բացի այդ, միայն ծուխը հեռացնելու համար անհրաժեշտություն չկար մնան ծավալի աշխատանք կատարել կամ պատին խորշ փորել: Քարանձավը լինելու էր երկհարկ, և հարկերը հաղորդակցվելու էին զլանածն քացվածքով: Իսկ քացվածքը հատակի ողջ մակերեսով անելն անշուշտ պիտի խանգարեր, քանի որ աշխատելու և քարանձավն ընդարձակելու համար ուղքերի տակ հենման մակերես չի մնում: Ուրեմն, երբ երկրորդ հարկը մնացել է անավարտ, քացել են հաղորդակից անցքը (քացառված չէ նաև, որ այն կարող էր նախապես փոքր արվել, հետո՝ ընդարձակվել), որն արդեն ծառայել է միայն որպես ծխատար: Մեկ այլ քարանձավում (թիվ 2) մնան քացվածքն արվել է առաջին հարկի քարանձավի (տուֆի շերտի մեջ է) առաստաղին և չի ավարտվել: Այս փորվածքն արված է մոտ 1,30մ խորությամբ, և անցքի սկզբից (տրամ. 70սմ) դեպի շրջանի եզրերը աստիճանաբար լայնանալով, ստացվել է փոքր հարթակ (տրամ. 1,30մ): Այսպես՝ լայնանալով պիտի փորվեր նաև երկրորդ հարկը: Այսպես են հաղորդակցվել նաև Հայկաձորի մեկ այլ՝ «Տերտերի բուստան» տեղանքի քարանձավները: Կիրճի ստորին՝ բազալտային պլաստի մեջ առաջին հարկի բնական քարանձավից երկրորդ՝ ձեռակերտ քարանձավ բարձրացել են մույնաման զլանածն փորվածքով:


Անշուշտ այս փորվածքները օգտագործվել են նաև առաջին հարկից տաքության՝ վերև բարձրանալու համար, թեև թոնիրներ ու օջախներ կան նաև երկրորդ հարկերում: Դրանք, ըստ հայտնաբերված գտածոների, համաժամանակյա են և վերաբերում են IX-X դարերին: Քարանձավների բազմաթիվ վերակառուցումների ժամանակ թոնիրներն ու օջախների փոսերը քացվել և լցվել են, երբեմն՝ ամբողջությամբ: Փակվել են նաև անցուղիներն ու որոշ քարանձավներ: Այսպիսի մի քարանձավ քացվեց 2005թ.: Նախորդ տարիներին պեղված համալիրներից հյուսիս, մատուռի դիմացի հարթակը մաքրելիս, պարզվեց, որ վերջինս ավագաքարային շերտում ձեռակերտ մի քարանձավի վրա է նստած: Առաջին հարկի քարանձավի պեղումներով քացվեց շեղանկյուններով զարդարված առաստաղ, դռան կամարակապ քացվածք, հատակին շեմի քար և պատերին դռան կրունկների փոսեր ունեցող մի քարանձավ՝ վերաշինման և վերակառուցման տարածամանակյա հետքերով: Քարանձավի մեջ տեղադրված թոնիրներից, օջախներից, հատակին տնտեսական նպատակներով տարբեր չափերի փոսերից քացի քացվեց նաև մեծ հոր և երկու ակով մի զլանածն փորվածք: Քարանձավի պատերի ստորին հատվածներում փորված են փոքր խորշեր, որ գործիքներ կամ արտադրանքի փոքր ձևեր տեղավորելու համար կարող էին լինել: Որ այստեղ արհեստանոց է եղել, վկայում են պատերի տակ դրված հում կավի տարբեր չափերի զանգվածները: Իսկ տեղական արտադրության առկայության մասին են վկայում նաև պեղավայրում ապակու, մետաղի և խտան խեցեղենի բազմաթիվ գտածոները:

Դարերի ընթացքում երկրաշարժերի բազմաթիվ ավերումները վերակառուցման անհրաժեշտություն են առաջացրել: Հսկա ժայռաբեկորներ են ընկել քարանձավների արևելյան պատը կազմող ժայռերից: Փլվածքները փակվել են նոր՝ այս դեպքում արդեն քարաշար պատով: Այսպես սկսել են կառուցապատել նաև քարանձավների դիմացի հարթակները: Փուլումների ժամանակ ընկած առեղի ժայռաբեկորները չկարողանալով հեռացնել, հաճախ դրանք ներառել են այս կամ այն կառույցի մեջ: Ժայռեղեն հարթակի վրա կառուցվել է լրացուցիչ բնակարան՝ գոմով և տնտեսական մասով՝ տուֆի շերտի մեջ փորված ամբարներով և մույն շերտի մեջ տեղադրված թոնիրներով: Քարանձավի արևելյան պատի ուղղահայաց կտրվածքի վրա պահպանված, միաշար փոքր անցքերի մեջ նստել են քարանձավից դուրս՝ դիմացի հարթակների վրա կառուցված կացարանների ծածկի գերանները: Քարանձավային բնակավայրում քացվեց նաև մի փոքր, ձեռակերտ մատուռ քարանձավ (տրամ. 2,5մ):¹⁹

Անի մայրաքաղաքի և նրա հյուսիսային արվարձանի միջև ընկած հատվածում Անի ավանն է (նախկին Անի-Պեմզա): Այստեղ, քարայր-կացարանային համալիր կա

¹⁹ Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե զ ա ն յ ա ն, *Անիի նորահայտ արվարձանի 2003թ. պեղումները, ԳՄԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», VI, Գյումրի, 2003, էջ 138:*

ինչպես Ախուրյանի կիրճում, այնպես էլ Երեբույքի տաճարի մոտ:²⁰ Տաճարից մի քանի տասնյակ մետր հեռու՝ դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք, տարածքը թեքությամբ կտրուկ իջնում է դեպի քարանձավների մուտքերը: Չեռակերտ այս քարանձավների մի քանիսի մուտքերը փակված են փլված հսկա ժայռաքեղոքներով: Հարթակի արևմտյան մասի կտրատված եզրերը ծածկված են հողի հաստ շերտով և, ելնելով տեղանքի ընդհանուր տեսքից, կարելի է ենթադրել, որ հավանաբար այս հատվածում ևս եղել են քարանձավներ: Երեբույքում պահպանված քարանձավային համալիրները մի հարկանի են, կազմված են հաղորդակից երկու-երեք սենյակներից: Ուղղանկյուն սենյակների պատերի և առաստաղի անցումներն արված են անխնամ, հատակները փլվածքների հետևանքով բարձրացել են: Փլված են նաև սենյակները բաժանող միջնապատերը: Սենյակների երկարությամբ կան մեղ ելուստ-մատարաններ: Քարանձավները լուսավորվել են անկյունում լրացուցիչ խորշի ողջ մակերեսով փորված շրջանաձև բացվածքներից: Գլանաձև այս փորվածքները բացվում են արտաքին մակերեսին: Աստիճանաձև իջվածքով այս փորվածքներն անշուշտ եղել են լուսավորության համար, սակայն դատելով դիրքից և չափերից, անհրաժեշտության դեպքում կարող էին օգտագործվել նաև ելումուտի համար: Տեղանքի ժայռեղեն մակերեսը հարթ է, ուր բացվող անցքերը



հավանաբար անձրևի կամ ձյան ժամանակ կալվել են, ինչպես երդիկները: Տեղ-տեղ տեղանքի հարթ մակերեսին նկատելի են հողով լցված, 80-100սմ տրամագծով շրջանաձև բացվածքների եզրագծերը: Մակերեսին կան նաև ուղղանկյուն փորվածքներ, որոնք ավելի շատ սարկոֆագներ են հիշեցնում:²¹

²⁰ Երեբույքի չափագրությունն ըստ Փ. Եր-Մարտիրոսով, նշվ. աշխ., էջ 236-237:

²¹ Ժայռեղեն մակերեսին սարկոֆագներ հայտնի են Հայաստանի տարածամասնակյա տարրեր հնավայրերից: Տե՛ս Լ.Եզանյան, Օիրակի անտիկ թաղման ձևերը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի, «Գիտական աշխատություններ», III, Գյումրի, 2000, էջ 55: Ա. Բալանթարյան, Հ. Մելքոնյան, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003թթ., Եր., 2005, էջ 49, նկ. 30:

Երեւույթից մինչև Անի մայրաքաղաք հասնելը ավամերձ տուֆի շերտի մեջ միջնադարյան (IX-XIV դդ.) բնակելի քարանձավներ կան նաև Խարկովում: Մի մեծ, ձեռակերտ քարանձավ մինչև վերջերս կար Խարկովից քիչ ներքև, ուղիղ Անի մայրաքաղաքի դիմաց:²²

Ախուրյանի կիրճի միջին՝ տուֆի շերտում են Անիի բնակելի քարանձավները: Ախուրյանը Անի քաղաքը եզերում է հարավ-արևելյան կողմից, ուր քարանձավներ փորված են միայն աջ ափին՝ կիրճի կտրտված լանջերին:²³ Անին առանձնապես է բնական և արհեստական քարանձավների քանակով, դրանց զբաղեցրած տարածքով, կառույցների բազմաձևությամբ և ճարտարապետական յուրահատուկ լուծումներով: Քարանձավների մեծ մասին կարելի է մոտենալ կիրճից բարձրացող թեթղիր նեղ արահետներով: Երբ քարանձավները բնակելի էին, հավանաբար աստիճաններով և արահետներով են մոտեցել մուտքերին:

XX դարի սկզբին Անի քաղաքը համակողմանի ուսումնասիրվեց Ն. Մառի արշավախմբի կողմից: Առանձին ուսումնասիրության առարկա դարձավ նաև քարանձավային Անին:²⁴ Շերտը, որի մեջ փորված են քարանձավները «քար ըսելե ավելի եփած հողի նման է՝ հրաբխային լավայի ջերմության մեջ ավազով և խճով ձուլված և թրծված: Ոչ ամառային արեգակյան կիզիչ ջերմությունը կարող էր թափանցել այդ քարափոր բնականներու մեջ և ոչ ձմեռվան ցուրտն ու խոնավությունը», գրում է Թ. Թորամանյանը:²⁵ Ուժեղ հողմնահարման և երկրաշարժերի հետևանքով Անիի քարանձավների մեծ մասը ավերվել է և թաղվել փլվածքների տակ: Հետագուով է միայն մի մասը՝ մոտ 500 կիսավեր, մարդկանց կողմից վաղուց լքված համալիրներ, սակայն քարանձավների հիմնական հետազոտող Կիպչիձեն համոզված էր, որ նման կացարաններ ժամանակին եղել են 1000-ից ոչ պակաս:²⁶ Ըստ Թ. Թորամանյանի «Հագարավոր քարանձավներ խտացած են Ծաղկոցաձորի, Գլիձորի և Ախուրյանի ձորերու մեջ»:²⁷ Վերին շերտի կարծրության պատճառով Անիի քարանձավները քիչ են (մոտ 30-40, մեծ մասը՝ Գայլաձորում), այն էլ շատ կոպիտ աշխատանք են. պատերը փորել են սրածայր երկաթյա գործիքով, ամուր տեղերում՝ երբեմն էլ՝ քլունգով:²⁸ Չնայած Անիի քարանձավները տարածված էին տարբեր տեղերում և երեք կողմերից շրջապատում էին Անին, հետազոտողները պայմանականորեն քաղաքի այս հատվածը կոչել են «Քարանձավային Անի», որը բաղկացած է մշտական բնակիչներ ունեցող քաղամասերից: Դա քարանձավային քաղաք էր՝ նման Ուպլիս-Ցիխեին և Վարձիային:²⁹ Քարանձավային Անիի «քարե տներին» մեծ մասը կազմում են բնակելիները: Անիում մեզ հասած նման բնակելի տների թիվը 400 է:³⁰ Հյուսիսային արվարձանում դրանք ավելի քիչ են:³¹ Անիում առավել հետաքրքիր են մեծ բնակելի համալիրները՝ սովորաբար բաղկացած 3-5 սենյակներից՝ իրարից բաժանված կամարաձև մուտքերով, պարզ սյուներով: Մակայն այսպիսի

²² 21-րդ դարի սկզբին մերձակա քարհանքում իրականացված պայթեցումների հետևանքով քարանձավը փլվեց:

²³ Իսկ Ծաղկոցաձորում, որ քաղաքի բնական սահմանն է արևմտյան կողմում, Բագնայրում, որ արևմտյան կողմից թափվում է Ծաղկոցաձորի մեջ, Բագնայրում և Գայլաձորում, որոնք քաղաքի հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան կողմից շրջապատում են քաղաքը, քարանձավները փորված են և՛ աջ, և՛ ձախ ափերին:

²⁴ Անիի քարանձավների ուսումնասիրությունը իրականացվեց 1911, 1912, 1915 և 1916 թթ. արշավախմբերով: 1915թ. արշավախմբի աշխատանքներից գլխավորը Անիի քարանձավային բնակավայրերի նկարագրությունն էր, որը հանձնարարվեց Գ. Կիպչիձեին: Իսկ հաջորդ՝ 1916թ. աշխատանքներին միացել է նաև Ն. Տոկարսկին: Գ. ԿИПЧИՅЕ, նշվ. աշխ., էջ 8:

²⁵ Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության (Աշխատությունների ժողովածու), Եր., 1942, էջ 326:

²⁶ Գ. ԿИПЧИՅЕ, նշվ. աշխ., էջ 100:

²⁷ Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 325:

²⁸ Գ. ԿИПЧИՅЕ, նշվ. աշխ., էջ 16:


²⁹ Նույն տեղում, էջ 22:

³⁰ Չափագրությունն ըստ Գ. ԿИПЧИՅЕ, նշվ. աշխ. :

³¹ Հայկաձորից քիչ հյուսիս, հաջորդ հրվանդանի վրա՝ Հաղթականարի տակ ձգվող տուֆի շերտի մեջ, շարունակվում են այն քարանձավները, որոնք այսօր օտար տարածքում են:

բնակարանները քիչ են՝ մեծ մասը մեկ «սենյակից» բաղկացած: Բացի կացարաններից, քարանձավային Անիում կային եկեղեցիներ (շուրջ 30), խանութներ, ջրաղացներ, ձիթհանքեր, դամբարաններ, այսինքն՝ այն մի ամբողջ քաղաք էր:³²

Թեև «Քարանձավային Անին» մարդաշատ էր և ուներ քաղաքին բնորոշ բազմաթիվ գործառույթներ և նույնիսկ իր որոշ մասերով մտնում էր հենց քաղաքի մեջ, բայց հայ պատմիչները նրա մասին չեն բողել որևէ վկայություն: Միակ վկայությունը պահպանվել է վրացական Թամարա թագուհու ժամանակակից, անանուն ժամանակագրի մոտ՝ կապված 1209 կամ 1211թ. Անիի վրա Արդաբիլի էմիրի հարձակման հետ: Նկարագրելով եկեղեցուն 12000 աղոթողների կոտորածը, ժամանակագիրն ավելացնում է. «... որը փախչում էր պալատ, և ամրացավ այնտեղ, որը փախչեց քարանձավներ, որ կոչվում էին քարտուն և եթե նա փրկվեց, մտավ և մնաց կամ ամրոցում կամ քարտունում»:³³ Վրացի պատմիչի բերած տեղեկության մեջ հատկապես հետաքրքիր է քարտունը՝ քարանձավի իմաստով:³⁴ Նկարագրությունից հետևում է, որ քարտունը քարանձավային թաղամաս էր, և մշտական բնակարան էր Անիի բնակչության մի մասի համար, թեև վրացի պատմիչի մոտ ոչ մի տվյալ չկա դրանց բնույթի կամ նշանակության մասին: Փաստը, որ բնակիչները փախչում են քարանձավներ, դուրս իսկ չի հիմնավորում դրանց միայն թաքստոց լինելու ենթադրությունը: Այսպես կոչված՝ «վերգետնյա Անիի» բնակիչները կարող էին ժամանակավոր ապաստան գտնել «ստորգետնյա Անիի» բնակիչների մոտ:



Քարանձավային բնակավայրերի հպանցիկ հիշատակում կա 13-րդ դարի հեղինակ Հովհաննես վանակյանի մոտ: Ըստ նշված աղբյուրի վկայության՝ մոնղոլները արշավանքի ժամանակ «1236թ. Կայան կոչվող անառիկ ամրոցը և Լոռի քաղաքը և հայկական մայրաքաղաք Անին և մյուս ամրոցներն ու քարանձավները, նույն տարում գրավեցին»:³⁵ Ամրոցներն ու քարանձավները նույն շարքում դնելն ենթադրում է վերջիններիս մաս. պաշտպանական դեր ունենալը:

³² Դ. Կ ի թ ի ճ ջ Ե, նշվ. աշխ., էջ 17:

³³ Նույն տեղում, էջ 23:

³⁴ Տե՛ս Դ. Կ ի թ ի ճ ջ Ե, Пещеры Ани горькй վերջում Ն. Տոկարսկու ծանոթագրությունը. «Քարտուն» չի հանդիպում հայերեն գրավոր և բանավոր խոսքում, սակայն ըստ ամենայնի 13-րդ դարում գործածական է եղել և պահպանվել է վրացերենում:

³⁵ Թ. Ա կ ո թ յ Ն, Ани столица средневековой Армении, Ер., 1985, стр.76.

Անիի քարանձավների բնակեցման վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Մշտապես, ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբն օգտագործման մեջ եղած քարանձավների ժամանակագրական ստույգ սանդղակը տալիս անհնար է: Երբ քարանձավային կացարանները քիչ էին ուսումնասիրված, կարծիք կար, որ դրանք պատկանել են քաղաքի ոչ ունևոր բնակչությանը, քանի որ նման բնակարանները շատ էժան էին և այստեղ կարելի էր ապրել առանց վառելիքի: Ըստ Կիպչիճեի, աղքատ բնակչությունն այստեղ ապրել է մշտապես, իսկ ունևորները պատասպարվել են պաշարման ժամանակ:³⁶ Հետագայում այս կարծիքը ժխտվել է:³⁷ Քարանձավային բնակարաններն իրենց ընդհանուր արժեքով ոչ մի բանով չեն զիջում սովորական տներին ոչ միայն նրա համար, որ քարանձավների մեջ կան մի քանի սենյակներով բավականին հարուստ բնակարաններ իրենց հարմարություններով, այլև դրանց կերտումն անհամեմատ մեծ ծախսերի հետ է կապված, հաճախ շատ ավելի, քան անհրաժեշտ էր քարաշատ սարահարթում տուն կառուցելու համար: «...բոլորովին աղքատ մարդիկ չէին անոնք, որովհետև որևէ մեծությամբ քարայր մը փորելու համար գրեթե նույն չափ ծախս և աշխատություն էր հարկավոր նույնչափով հասարակ բնակարան մը հողեն դուրս շինելու համար», - գրում է Թ. Թորամանյանը:³⁸

Քարանձավների թվագրման համար պիտի նկատի ունենալ երկու հանգամանք. ոչ բոլոր քարանձավներն են համաժամանակյա, և տվյալ համալիրում ոչ բոլոր քարանձավային բնակարաններն են միաժամանակյա աշխատանքի արդյունք: Այն, որ քարանձավներն ավելի վաղ են բնակեցված եղել, վկայում է 1904թ. Ծաղկոցաձորի աջ ափի քարանձավային դամբարանից գտնված բրոնզիդարյան մատանին:³⁹ Հայկաձորի նորահայտ արվարձանի Ախուրյանի ափամերձ դարավանդից՝ քարանձավների հարթակների մակերեսից գտնվեց պալեոլիթյան մի հատիչ, սակայն այն կարող էր ցած սահած լինեն նաև վերին պլաստից:

Նորահայտ արվարձանի պեղումները թույլ են տալիս փաստել, որ Անիի քարանձավային համալիրները ստեղծվել են բավականին երկար ժամանակահատվածում և իրենց վերջնական ձևավորումը ստացել են Բագրատունիների ժամանակ՝ 9-10-րդ դարերում և ծաղկում են ապրել հատկապես այդ ժամանակաշրջանում: Հետագայում՝ 13-րդ դարում, Քարանձավային Անին լրացվել է եկեղեցական, բնակարանային, առևտրային համալիրներով և գերեզմանոցներով: Պեղումների նյութերը փաստում են նաև, որ քարանձավային բնակավայրը զոյատևեց Անիի քաղաքական անկումից հետո էլ, և կյանքն այստեղ շարունակվել է ընդհուպ մինչև 20-րդ դարը: Երերույքում ևս քարանձավները հավանաբար օգտագործվել են դեռևս նախնադարում, սակայն այստեղ ևս բնակեցման հնագույն հետքերը վերաբերում են վաղ քրիստոնեական շրջանին: Երերույքի քարանձավները բնակեցվել են առաջին քրիստոնյաներով՝ ծառայելով և՛ որպես աղոթատեղի, և՛ կացարան:⁴⁰ Թեև Կամխուտի քարանձավային բնակավայրի հնագիտական հետախուզությունը ցույց է տալիս, որ մինչև անցյալ դարի 20-ական թվականները քարանձավների բնակեցված լինելը խաթարել է նախնական վիճակի պատկերը, սակայն հավանաբար այստեղ VII դարի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցմանը նույնպես նախորդել է քարանձավների աղոթատեղի և միաժամանակ կացարան լինելը առաջին քրիստոնյաների համար:

Վերևում նշել ենք, որ Ախուրյանի կիրճի Բանդիվան-Արեգնադեմ-Մարմաշեն հատվածում կան մեկուսի, փոքր քարանձավներ: Հայտնի է, որ հատկապես միջնադարում այսօրինակ քարանձավները կացարան են ծառայել ճգնավորների համար: Հայաստանում քրիստոնեության մուտքի և քրիստոնյա սրբերի վարքաբանության մեջ որոշ հիշատակումներ կան նաև քարանձավներում նրանց բնակության մասին: Մովսես Խորենացին, բերելով Հռիփսիմյան կույսերի Հայաստան գալու պատմությունը, կույսերից մեկի՝ Մանեի մասին գրում է.- «Քանզի էր կին ոմն անուն Մանի, յընկերաց սրբոց

³⁶ Д. К и п ш и д з е, նշվ. աշխ., էջ 77:

³⁷ Նույնը:

³⁸ Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 325-326:

³⁹ Д. К и п ш и д з е, նշվ. աշխ., էջ 24:

⁴⁰ Ф. Тер - Мартиросов, նշվ. աշխ., էջ 236-237:

Հոփսահանանց... բնակեցաւ ի լերինս յայտսիկ. յայրս ինչ քարանց. վասն որոյ կոչեցաւ անուն լերինն Մանեայ այրք»:⁴¹ Այնուհետև ավելացնում է. «... յոր այրի յետոյ բնակեցաւ և սուրբն Գրիգոր»:⁴² Գրիգոր Լուսավորիչն իր կյանքի վերջին երեսուն տարին անցկացնում է այս քարանձավում և «...կեցեալ աներևութաբար ամս բազումս՝ փոխի մահուամբ ի կարգս հրեշտակաց: Եվ հովուաց գտեալ գնա վախճանեալ՝ ի նմին տեղոջ քաղեցին...»:⁴³ Թերևս բնական կարելի էր համարել Մանեի ապրելը քարանձավում, եթե նկատի ունենանք, որ նա բնականաբար տեղյակ էր նաև առաջին քրիստոնյաների նկատմամբ վերաբերմունքին: Իսկ Գրիգոր Լուսավորիչի պատմությունը մեզ բերում է այն համոզման, որ բոլորովին էլ պատահական չէր ո՛չ երեսուն տարի քարանձավում ապրելը, ո՛չ էլ՝ նրա՝ հովիվների կողմից նույն տեղում թաղվելը: Ինչպես հայտնի է, Քրիստոսի ծնունդը ևս քարանձավում էր. Երուսաղեմի «Քրիստոսի ծնունդ» եկեղեցին փոքր քարանձավ է: Ի դեպ, Քրիստոսը ոչ միայն ծնվեց, այլ նաև թաղվեց քարանձավում «...որսու զայն նոր գերեզմանին մէջ, զոր փորած էր ժայռին մեջ իրեն համար, յետոյ մեծ վեճ մը գլորեց իբր կափարիչ գերեզմանին»:⁴⁴

Միջնադարում հոգևորականների մեկուսանալու և հատկապես քարանձավներում ճգնելու փաստերը բազմաթիվ են: Անիում քարավոր դամբարաններ ևս կային: Թ. Թորամանյանի վկայությամբ Ծաղկոցածորի մեջ Չաքարե սպասալարի զորավար Տիգրան Հոնենցի նկարագրող մատուռի ավերակներով քարայր-դամբարանն է, ում անբավ հարստությունը կարելի էր չափել եկեղեցիներին նրա տված նվիրատվություններով. բացի ոսկյա և արծաթյա զարդերից և անշարժ գույքից, քանի՜ գյուղեր էր բաշխել այս կամ այն եկեղեցուն:⁴⁵ Իսկ ինչն էր ստիպում նրան տոհմական գերեզման ընտրել քարանձավը: Ըստ Թորամանյանի, «...անկասկած քարայրերը ավելի հաստատուն և տևական նկատված էին, քան դուրսը շինված դամբարաններն ու բնակարանները և ավելի ապահով՝ բնության ավերիչ արկածներու դեմ»:⁴⁶ Թեև իրոք, քարանձավները գերծ էին խոնավությունից, և դիակը կարող էր երկար պահպանվել (լավագույն օրինակը պեղումների ժամանակ Հոնենցի դամբարանի մեջ գտնված աղջնակի մումիա դարձած աճյունն է), սակայն արդյոք հավատարմոր քրիստոնյայի համար այն կարևոր էր: Սուրբ մատուռների վերարտադրությունը ենթադրում է ոչ միայն քարանձավում ապրել, այլ նաև՝ թաղվել: Այս համատեքստում պիտի տեսնել նաև Անի գետակի աջ ափի մի շարք ընդարձակ քարանձավների՝ հարուստ անեցիների վերջին հանգրվան լինելը, ինչպես Տիգրան Հոնենցի դամբարանն է:⁴⁷

Ինչպես տեսանք վերը, հայոց պատմիչների մոտ քարանձավներում բնակության մասին հիշատակումները վերաբերում են միայն քրիստոնեական շրջանին, սակայն քարանձավները ծիսապաշտամունքային դեր ունեին դեռևս պալեոլիթում: Բնության ստեղծած բացվածքները, նախամարդու առաջին կացարան լինելով, նույն մարդու կողմից բարձրացվել են պաշտամունքի աստիճանի: Վաղ բրոնզի դարաշրջանում հավատալիքը փաստված է հնագիտական նյութերով: Անձավային կամ կատակոմբային դամբարաններ հայտնի են Փոքր Ասիայից, Միջերկրական ծովի ափամերձ երկրներից:⁴⁸ Հայաստանում նման թաղումներ հայտնի են վաղբրոնզիդարյան (Հառիճ) և ուշբրոնզիդարյան (Արթիկ, Ոսկեհասկ, Սպանդարյան) հուշարձաններից:⁴⁹

Քարանձավը տարբեր ժողովուրդների դիցաբանություններում և առասպելաբանության մեջ տարատեսակ ըմբռնումների և հավատալիքների հետ է կապվում: Քանի որ քարանձավները հաճախ տեղայնացված են կամ բարձր լեռների մեջ, կամ խոր

⁴¹ Մ ը վ ս ե ս Խ ռ ռ ե ն ա ց ի, Հայոց պատմություն, Եր., 1981, Գիրք II, ՂԱ:

⁴² Նույնը

⁴³ Նույնը:

⁴⁴ Նոր կտակարան, Լիզպոն, 1994, Ավետարան ըստ Մատթեոսի, 60:

⁴⁵ Թ. Թ ռ ա մ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 326:

⁴⁶ Նույնը:

⁴⁷ Ի. Օ Ր Ե Լ Ի, նշվ. աշխ., էջ 123:

⁴⁸ Լ. Ք ե տ ռ օ ս յ ա ն, Раскопки Кети и Воскеаска Ер. 1989, стр. 71.

⁴⁹ Թ. Խ ա չ ա տ ռ յ ա ն, Артикский некрополь, Ер. 1979, стр. 11. Լ. Ք ե տ ռ օ ս յ ա ն, Раскопки Кети и Воскеаска, Ер., 1989, стр. 71.

իջվածքներում ու կիրճերում, դիցաբանական ընկալումներում դիտվում են ուղղված երկնքին կամ անդրաշխարհին: Քարանձավը դիտվել է նաև ինչպես երկիր-մոր և երկինք-հոր միացման տեղ, այնպես էլ դեպի ստորին աշխարհ տանող մուտք: Հունական առասպելաբանության մեջ քարանձավը ծիսական ապաստարան և թաքստոց է,⁵⁰ տիեզերքի խորհրդանիշ և սրբավայր:⁵¹ Քարանձավը բնական կացարան է խտունիկ (անդրաշխարհային) էակների համար: Ի տարբերության տան՝ քարանձավը աչքի համար անտեսանելի է, մարդուն հեշտությամբ չի թողնում ներս և առավել դժվարությամբ է դուրս թողնում: Անդրաշխարհային կերպարներն իրենց գոհին հետևում են քարանձավից՝ ինչպես այն աշխարհից կամ մահվան թագավորությունից: Երբեմն այդ պատուհանը համապատասխանում է միաչքանի դիցաբանական կերպարի հետ, ինչպիսին Պոսեյդոնի որդի կիկլոպ Պոլիփեմոսն էր:⁵² Անձավը տիեզերքի մայրն էր և որպես սրբավայր՝ նվիրված էր տիեզերքին: Քարանձավի մեջ կյանքի, մահվան և հարության գաղափարների համատեղմամբ են բացատրվում ոչ միայն պալեոլիթյան քարանձավների պատերի նկարազարդումները և քարանձավը որպես աղոթատեղի կամ սրբարան ծառայեցնելը, այլ նաև՝ միթրաիզմների և վաղ քրիստոնեական տաճարների քարանձավի ձև ունենալը: Քարանձավ-տաճարն իրենից ներկայացնում էր տիեզերքի մոդելը, և քարանձավը տիեզերքի մանություն ուներ, որ ստեղծել էր Միթրան, իսկ նրա ներսում եղած իրերը տիեզերական տարրերի խորհրդանիշներ էին:⁵³ Նույն խորհուրդն ունի նաև Ագռավաքարի քարանձավը, ուր ամեն տարի Համբարձման և Վարդավառի գիշերը երկինքն ու երկիրը համբուրվում են, բացվում են Վանա միջնաբերդից ոչ հեռու գտնվող Ագռավու քար քարանձավի դռները, և Միերը դուրս է գալիս քարանձավից:⁵⁴

Տիեզերքի և երկնքի խորհրդանիշ անձավային դամբարանները, ինչպես և թաղման կառույցի ցանկացած ձև նպատակամղված են մի նպատակի՝ հանգուցյալի վերածնունդին: Ինչպես տարբեր ժողովուրդների մշակույթներին բնորոշ անձավ-դամբարանները, այնպես էլ Տիգրան Հոնենցի դամբարանը, ընտանեկան էր, և քարանձավի մեջ թաղվելը գուցե ողջ տոհմի համատեղ վերածնության խորհուրդն ուներ: Աշխարհի և մարդկության վերածնության ու մաքրման խորհուրդն է կրում Քրիստոսի գերեզմանը: Պատահական չէ, որ սրբերի և ճգնավորների կյանքն ու մահը են կապված անձավ-դամբարանի հետ: Նրանք ապրում, մեռնում և թաղվում էին քարանձավում:

Հայաստանում բազմաթիվ են նաև վիմափոր եկեղեցիները և հայտնի են Անի-ից,⁵⁵ Մրենից, Սպիտակից,⁵⁶ Վանքասարից:⁵⁷ Ըստ ազգագրական աղբյուրների, Արևմտյան Հայաստանի «Խոզաթի շրջանի Տուժիկ գյուղից վերև՝ ժայռազագաթին էր գտնվում քառասուն սրբերին նվիրված քառասուն խորան ունեցող ս. Սարգիս վանք-եկեղեցին, որը քարափոր էր, և միայն գմբեթն էր ժայռերից դուրս... Խոզաթի շրջանի Քորնքա (Կորնգան) գյուղի արևելյան կողմի ժայռերի մեջ գտնվում էր մի քարափոր եկեղեցի ս.Նշան անունով»:⁵⁸ Արդյո՞ք պատահական է, որ քարանձավային համալիրների հարևանությամբ են կառուցված Երերույքի և Կամխուտի եկեղեցիները կամ Գեղարդի վանքային համալիրը, ուր քարանձավը ներառվել է կառույցի մեջ: Բոլոր դեպքերում էլ հավանաբար նպատակը եղել է նույնը՝ պահպանել քարանձավ-սուրբ կառույցը:

Այսպիսով, Ախուրյանի կիրճի քարանձավային բնակավայրերը և քարանձավ-կացարանները միավորվում են տեղանքի ընտրությամբ, համալիրների ձևով, վիմափոր կացարանների ճարտարապետական լուծումներով և կերտման աշխատատեղով: Բնա-

⁵⁰ *Мифы народов мира, том 2, М., 1992, стр. 311.*

⁵¹ *Մ. Մխիթարյան, Թաղման ծեսի մի քանի դրվագ ըստ Գր. Մազիստրոսի, Հին Հայաստանի մշակույթ, 3, Եր., 2003, էջ 146:*

⁵² *Ն. Կուրյան, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., 1956, էջ 529-530:*

⁵³ *Мифы народов мира, том 2, М., 1992, стр. 312.*

⁵⁴ *Ա. Ղազարյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 39-40:*

⁵⁵ *И. Орбели, Избранные труды, Ер., 1963, стр.123.*

⁵⁶ *А. Каландарян, Г. Саркисян, О работах Спитакской экспедиции, АО 1978, М., 1979, стр. 522-523:*

⁵⁷ *Հ. Միսնյան, Հ. Մանասյան, Վանքասարի հուշարձանները, Հուշարձան տարեգիրք Գ, Եր., 2005, էջ 159:*

⁵⁸ *Գ. Հալաջյան, Գերսիմի հայերի ազգագրությունը, ՀԱԲ, հ. 5, 1973, էջ 40:*

կելի քարանձավների մի մասը, որ վիմափոր և բնական համալիրներ են, ծառայել են որպես մշտական բնակարան, իսկ վտանգի ժամանակ ապաստարան են դարձել նաև այստեղ չբնակվողների համար: Մեկուսի, փոքր, բնական քարանձավներում ապրել են ճգնավորները՝ պահպանելով հավատարմությունը Քրիստոսին և նրա սուրբ մատուցների: Նույն գաղափարով են առաջնորդվել նաև քարանձավ-մատուցներ և վիմափոր եկեղեցիներ, ինչպես նաև քարանձավային բնակավայրերի վրա եկեղեցիներ կառուցելիս: Քրիստոնեական մատուցները վերարտադրելու և Քրիստոսին մերձենալու գաղափարն է առաջնորդել նաև քարանձավները որպես հանգստարան օգտագործելիս:

ПЕЩЕРЫ И ПЕЩЕРНЫЕ ЖИЛЫЕ КОМПЛЕКСЫ КАНЬОНА РЕКИ АХУРЯН НА ОТРЕЗКЕ ДЖРАДЗОР-АНИ

___ *Резюме* ___

___ *Л. Еганян* ___

Пещерные комплексы прослеживаются почти по всей протяженности каньона реки Ахурян. Это в основном хорошо известные пещерные сооружения и замечательные пещерные ансамбли Ани и его новонайденного северного пригорода Айкадзора на территории Республики Армения, а также пещеры Мармашена, Ереруйка, Бениамина, Джрапи и Камхута.

Большая часть жилых пещер Ани и его пригорода Айкадзор, расположенных в каньоне, имеют большие размеры и представляют собой в основном две и более комнаты с нишами, хозяйственными ямами, тонирами, очагами и т.д. В жилых пещерах преобладает прямоугольная форма помещений с плоским потолком. По материалам раскопок установлено, что интенсивное развитие жизни связано с эпохой царства Багратидов: X-XIII вв..

В каньоне реки Ахурян, в базальтовых слоях есть и пещеры малых размеров, которые часто служили кельями. Наряду с кельями существовали пещеры-святилища. Так как Христос родился и погребен в пещере, и храм Рождества Христова в Иерусалиме-небольшая пещера, то пещеры-святилища и пещеры-кельи воспринимались и в качестве святых ясел.

ՀԱՅԿԱԶՈՐԻ ՔԱՐԱՆՉԱՎԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

2007 թվականին Հայկազորի քարանձավային բնակավայրի պեղումները իրականացվեցին «Project Discovery» ամերիկյան հիմնադրամի հատկացրած միջոցներով: Հիմնական աշխատանքները ծավալվեցին թիվ 1 քարանձավային համալիրի դիմացի առաջին արհեստական հորիզոնական հարթակից ներքև՝ լանջի վրա: Լանջը ունի մոտ 73° բնական թեքություն: Նրա զգալի մասը ծածկված էր նախորդ տարիների ընթացքում քարանձավների պեղումների պատճառով դուրս հանված հողի հաստ շերտով: Պեղման համար ընտրվեց թիվ 1 քարանձավի առաջին հարկի սրահների դիմացի արհեստական, հորիզոնական հարթակի հանդիպակաց հատվածը, որն ուներ մոտ 10մ



Նկ. 1

լայնություն: Այս հատվածը պեղելու գլխավոր նպատակը գետից դեպի բարձրադիր քարանձավներ և մասնավորապես թիվ 1 քարանձավային համալիր տանող նախկին ճանապարհը հայտնաբերելն էր:

Ախուրյանի կիրճի երկրակազմությունը այս տարածքում ներկայանում է ամուր ավազաքարի հենքի վրա նստած 3 դարավանդներով, որոնցից առաջինը և երրորդը բազալտի շերտեր են, իսկ միջանկյալ երկրորդը՝ տուֆի: Նկատի ունենալով, որ թեքի լանջի վրա նախկին պեղումներից առաջացած հողի շերտի տակ բնական հողածածկույթը շերտագրություն ունենալ չի կարող, որովհետև այն հիմնականում վերին դարավանդից դարերով ներքև թափված հողն է, որոշվեց՝ հեռացնելով ամբողջ հողաշերտը մինչև ավազաքար, վերականգնել լանջի նախկին տեսքը (նկ. 1):




Նկ. 2

Քարանձավներին հարող առաջին արհեստական հարթակի եզրից դեպի ներքև ավազաքարի բացման աշխատանքներով հայտնաբերվեց երկրորդ հարթ հորիզոնական հարթակը, որի վրա կային տարբեր ժամանակների վերաբերող 2 տարբեր կառույցների մնացորդներ: Լանջի վրա՝ երկու արհեստական հարթակների միջանկյալ հատվածում հայտնաբերվեց ջրի կուտակման համակարգ՝ բաղկացած հատած կոնի ձև ունեցող տարբեր չափի հորերից, մաքրման կլոր ու կիսալուսնաձև ավազաններից, սանդղաջրվեժից: Ջրի կուտակման առաջին հորը գտնվում է երկրորդ սրահի ուղղությամբ, առաջին արհեստական հարթակից մոտ 5մ ներքև: Առաջին հարթակի և թիվ 1 ջրամբարի միջանկյալ հատվածում ավազաքարի մեջ փորված են կիսալուսնաձև, տարբեր չափերի երեք մաքրման ավազաններ: Դրանց տեղադրությունը ցույց է տալիս, որ առաջին հորը նախատեսված է եղել բնական տեղումների ջրերի հավաքման համար (չափագրություն 1):

Սանդղաջրվեժը սկսվում է թիվ 1 քարանձավի առաջին հարկի առաջին և երկրորդ սրահների բաժանարար ավազաքարի արտաքին բնական ելուստից: Այն առաջին հարթակի մակերևույթից մոտ 2մ բարձրությամբ և 1,1մ լայնությամբ ուղղանկյունաձև տաշված է և հորիզոնական շարունակվում է 4,8մ երկարությամբ:

Չափագրություն 1

ՀԱՅԿԱՃՈՐ, ՔԱՐԱՆՁԱՎԱԿԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ
ԹԻՎ 1 ՔԱՐԱՆՁԱՎԱԿԻ ԿՈՄՔԻ ԼՆՁ




Առաջին ուղղահայաց կտրվածքից 1,9մ հեռավորությամբ սանդղաջրվեժի մեջ փորված է մոտ 1մ տրամագծով և 0,5մ խորությամբ ջրի մաքրման փոս: Սանդղաջրվեժի առաջին աստիճանն ավարտվում է ավազաքարի 1,75մ բարձրությամբ ուղղահայաց կտրվածքով, այնուհետև, շարունակվելով ևս 5,5մ, ավարտվում է 1,85մ բարձրությամբ համանման կտրվածքով: Երրորդ աստիճանի երկարությունը 3,4մ է, և այստեղ փորված է ջրհավաք երկրորդ հորը՝ կոնաձև կտրված: Այն ունի 1,4մ լայնությամբ պահպանված բերան և 1,3մ խորություն (չափագրություն 2): Սկզբնական շրջանում այն անկասկած եղել է ավելի մեծ, ինչի մասին պնդելու հիմք են հանդիսանում հորի միջից գտնված միակտուր քարից 0,95մ տրամագծով օղակաձև շուրթը և 0,45մ տրամագծով քարե խուփը (նկ. 2): Հորից հետո հորիզոնական հարթությունը, շարունակվելով ևս 0,5մ, այնուհետև 2,6մ խորությամբ ուղղահայաց կտրվածքով իջնում է դեպի երկրորդ սալարկված հորիզոնական հարթակը: Ուղղահայաց կտրվածքից մոտ 3,6մ հեռավորությամբ, երկրորդ հարթակի մեջ փորված է 0,9մ տրամագծով և 1,3մ խորությամբ մեկ այլ ջրհավաք ավազան:

Երկրորդ հորիզոնական հարթակն ունի կրկնակի սալահատակ՝ եզրերի միջև մոտ 20սմ տարբերությամբ: Քարանձավների բնակեցմանը և ջրի կուտակման համա-

կարգի կառուցման սկզբնական շրջանում այստեղ եղել է ինչ-որ շինություն, որից երկրորդ հարթակի հյուսիսային կողմում պահպանվել են մեծ, լավ մշակված քարերով կառուցված պատի մնացորդները:

Չափագրություն 2

ՀԱՅԿԱՉՈՐ, ՔԱՐԱՆՉԱՎԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ
ԹԻՎ 1 ՔԱՐԱՆՉԱՎԱՅԻ ԴԻՄԱՅԻ ԼԱՆՁ
կարվածք



Մրանք իրենց հիմքի մակարդակով համապատասխանում են ստորին սալահատակին (նկ.3): Այս պատի տակից կատարվեց 2007 թվականի պեղումների ամենակարևոր գյուտերից մեկը՝

մետաղադրամների գանձը, որի բաղադրատուրը նախորդ տարիներին քարանձավների և դրանց հարող առաջին հորիզոնական հարթակի ստորին շերտից հայտնաբերված դրամների հետ թույլ տվեց վերականգնել քարանձավների բնակեցման, ջրի կուտակման համակարգի կառուցման և հետագա ավերումների ու վերակառուցումների ժամանակագրական պատկերը: 2007թ. պեղումների ընթացքում հայտնաբերվել են թվով 12պղնձյա դրամներ (տախտակ 1): Դրանցից 11-ը՝ ստորին շերտից 1-ը՝ սանդղաջրվեժի 2-րդ հորիզոնական աստիճանից (տախտակ 1, նկ.10), մեկը՝ ավազաքարի վրայից (տախտակ 1, նկ.11) և մեկը՝ վերին շերտից: Վերջինը 19-րդ դարի թուրքական արծաթյա դրամ է և հետաքրքրություն չի ներկայացնում: Նշված 12 դրամներից 9-ը օբսիդացել և իրար էին կպել՝ իրար վրա շարված վիճակում, ինչը հուշում է, որ դրանք գտնվել են բավականին նեղ քսակի մեջ (նկ. 4): 9-ից 8-ը 11-րդ դարի բյուզանդական անամուն ֆոլիաներ են (տախտակ 1, նկ. 1,3,4,5,6,7,8,9), մեկը՝

7-րդ դարի բյուզանդական պղնձեդրամ (տախտակ 1, նկ. 2), որը շատ երկար է եղել շրջանառության մեջ:¹ Պղնձեդրամներից մեկը դիմերեսին ունի արաբերեն մակադրոշմ՝ «իլլահ», որը պատկանում է 12-րդ դարի Հիսն Քայֆայի Արդուբյան տիրակալներից մեկին (տախտակ 1, նկ. 6):

Հարկ է նշել, որ նույն մակարդակով մեկ այլ բյուզանդական ֆոլիս էր հայտնաբերվել 2005 թվականին թիվ 1 ձեռակերտ քարանձավի մոտից: Այսպիսով, առաջին և երկրորդ հարթակների ստորին շերտից հայտնաբերված դրամների ժամանակագրական համապատասխանությունը ցույց է տալիս տեղանքի յուրացման և կառուցապատման նույնականություն, որը համապատասխանում է 10-12-րդ դարերին: Ամենայն հավանականությամբ՝ քարանձավների բնակեցումը սկսվում է 10-րդ դարի առաջին կեսին, երբ Աբաս Բագրատունու օրոք հիմնվում է Մր. Մինաս եկեղեցին: Այնու-

¹ Դրամների բնորոշումը կատարել է դրամագետ Արմինե Չոհրաբյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

հետև՝ 11-12-րդ դարերում, երբ հառնում են Հոռոմոսի վանքային համալիրի հիմնական կառույցները, և վանքը վեր է ածվում խոշոր հոգևոր, տնտեսական ու մշակութային կենտրոնի, ձևավորվում է Անիի այս արվարձանը:




Նկ. 4

Նախորդ տարիների ընթացքում քարանձավների և դրանց հարող հարթակի պեղումներով ի հայտ եկած խոշոր փլուզումների և դրանց հաջորդող վերակառուցումների պատկերները ցույց էին տվել, որ անկանոն բազալտե հսկա ժայռաբեկորները առաջին հարթակին, միևնույն մակարդակի վրա հայտնվել են միաժամանակ, կիրճի վերին դարավանդից: Նույն ժամանակին են վերաբերում նաև երկրորդ դարավանդի՝ տուֆի շերտի (ուր քարանձավներն են) ճակատային մասից պոկված հսկա վեճերը: Այս միաժամանակյա փլուզումները կարող էին տեղի

ունենալ ուժեղ երկրաշարժի հետևանքով, որը տեղի է ունեցել 12-րդ դարում:

Ավերածության նույն պատկերը բացահայտվեց նաև լանջի և երկրորդ արհեստական հարթակի 2007 թվականի պեղումներով: Մանդղաջրվեժի մեծ ջրամբարը շարքից ուրս է եկել ավազաքարի մեջ առաջացած խոշոր ճաքի հետևանքով:

Տախտակ 1




Վերին դարավանդից ընկած բազալտե ժայռաբեկորները, որոնք հայտնաբերվեցին երկրորդ հարթակի վրա, ավերել են ջրամբարի վերին հատվածը, և ջրամբարի միակտոր քարե շուրթը խուփի հետ միասին, կտրատված վիճակում, հայտնվել է

ջրամբարի մեջ: Այն հանգամանքը, որ հետագայում բնակիչները դրանք այդտեղից չեն հեռացրել և առաջին հարթակի մակարդակում սանդղաջրվեժի առաջին հորիզոնական ջրատարի վրա պատ են կառուցել (նկ.5), նույնպես խոսում է սանդղաջրվեժի այլևս չգործելու մասին: Երկրաշարժի հետևանքով երկրորդ հարթակի վաղ կառույցը ավերվել է, իսկ հարթակի վրա ընկած բազալտի մեծ, անկանոն ժայռաբեկորների վրա հետագայում անկանոն քարերով կառուցվել է մեկ այլ շինություն: Սանդղաջրվեժի երկրորդ ջրհավաք ավազանը վեր է ածվել աղբահորի (նկ. 6):



Հիդրոհամակարգի կառուցումը առաջադրում է մի շարք հարցեր, Դրանցից ամենաէականը Ախուրյան գետից ընդամենը մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա դրա ստեղծման նպատակահարմարությունն է կամ անհրաժեշտությունը: Ջրի կուտակման առաջին հորի մաքրման կիսալուսնաձև ավազանների տեղաբախշումը հուշում է այն մասին, որ այդտեղ պետք է կուտակվեին մթնոլորտային տեղումների՝ առաջին հարթակից և լանջից հոսող ջրերը: Մինչդեռ սանդղաջրվեժը, որ սկսվում է 1-ին և 2-րդ սրահների բաժանարար ավազաքարի արտաքին ելուստից,

կարող էր իմաստ ունենալ միայն վերևից ուղղորդված հոսանքով իջնող ջրի առկայության դեպքում: Կիրճի վերին դարավանդի մեկտրացիայի հետևանքով այն վեր է ածվել մշակովի հողատարածքի, սակայն տիեզերքից արված լուսանկարներում հստակ դիտվում են բազմաթիվ կառույցների պատերի ուրվագծեր: Այս հարցերը պատասխան կատանան միայն վերին դարավանդի եզրային հատվածների գոնե հետախուզական պեղումների դեպքում:



2007 թվականի պեղումների ընթացքում հայտնաբերվեցին քարից, երկաթից, բրոնզից, ոսկրից աշխատանքային գործիքներ, մեծ քանակությամբ խեցեղեն և այլ նյութեր, որոնք դեռևս գտնվում են կամերային մշակման ու վերականգնման փուլում: Քարե առարկաները ներկայացված են իլիկի գլուխներով, ծանրոցներով, տուֆե ճրագով և այլն: Հայտնաբերված քարե առարկաների մեջ առանձին խումբ են կազմում քարի դարին վերաբերող դացիտից, կայծքարից, վանակատից պատրաստված գործիքներն ու այլ արտեֆակտեր: Մետաղյա առարկաների մեջ կան երկաթյա տարբեր չափի դանակներ, գամեր, պայտեր, բրոնզյա մատնոց, սպարանջանի բեկոր: Խեցեղենը ներկայացված է ինչպես խոհանոցային, այնպես էլ կարմրափայլ բազմաախշ ջնարակված օրինակներով: Նախորդ տարիների նման՝ 2007-ի պեղումների ընթացքում ևս

հայտնաբերվեցին անիական դրոշմագարդ կարասների բեկորներ, որոնք վերաբերում են 11-12-րդ դդ. (տախտակ 2)²: Գտածոների մեջ առանձին խումբ են կազմում ապակյա անոթների բեկորները, տարբեր ձևի և գույնի ապարանջանները, ուլունքները: Ապակու արտադրությունը տեղում փաստվում է խոտան արտադրանքի նմուշներով՝ վատ քրծված ուլունքներ, ապարանջանների մասեր, ապակու կաթիլներ և տձև կտորներ:

Անիի քարանձավային արվարձանի 2007 թվականի պեղումներով հստակեցվեց, որ ժամանակագրորեն արվարձանն առաջացել և վերելք է ապրել Հռոմոսի վանքային համալիրի ստեղծմանն ու զարգացմանը զուգընթաց: Այժմ արդեն անվարան կարելի է նշել, որ քարանձավային բնակավայրը մոտավորապես 12-րդ դարի վերջերին ուժեղ երկրաշարժի հետևանքով ավերվել է: Այնուհետև կատարվել են վերակառուցումներ, և կյանքը այստեղ շարունակվել է Անիի և Հռոմոսի վանքի կենսագործունեության ընդհանուր համատեքստում:

РАСКОПКИ ПЕЩЕРНОГО ПРИГОРОДА АНИ 2007г.

___ Резюме ___

___ А. Хачатрян ___

Раскопки 2007 года производились на склоне каньона реки Ахурян, напротив искусственной террасы пещерного комплекса номер 1. В итоге раскопок ниже первой искусственной террасы около 7 метров, была обнаружена вторая искусственная терраса. Между ними была обнаружена уникальная гидросистема накопления воды, которая состоялась из искусственного каскада с двумя резервуарами и ямами для чистки и второго большого резервуара с тремя ямами, в форме полумесяца для очистки. На нижней террасе были обнаружены остатки какого-то строения из больших хорошо отесанных туфовых блоков. В последующем, гидросистема и строение были разрушены из-за мощного землетрясения. В результате раскопок был найден денежный клад из 9 медных византийских монет 11 начала 12 вв. и две такие же монеты из археологического слоя. В результате раскопок были найдены большое количество керамики, среди которых образцы штампованной керамики, орудия труда из камня, железа и бронзы, бракованные и качественные изделия из стекла.

В итогах раскопок уточнилась хронология освоения пещер, сооружения гидросистемы, их первое разрушение в результате большого землетрясения.

² Լ. Ե զ ա ն յ ա ն, Գրոշմագարդ կարասներ Շիրակից, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ, հ. VI, Գյումրի, 2003, էջ 92:

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԸ
«ԳԻԼ ԳԱՄԵՇ» ԴՅՈՒՑԱԶՆԱՎԵՊՈՒՄ

Միջազգետքի հնագույն ժողովուրդների՝ շումերների և աքադացիների, ինչպես նաև հին հրեաների, դրախտի մասին ունեցած առասպելաբանական պատկերացումների իրական հենքի Հայկական լեռնաշխարհում և հնդեվրոպական-հայկական միջավայրում ստեղծված լինելու վերաբերյալ վաղուց հայտնի տվյալներին վերջին տարիներին ավելացել են նորերը:¹ Դրանց մեջ իր կարևոր տեղն ունի լեզվաբանական նյութը՝ դրախտային չորս գետերի հնագույն անունների հնդեվրոպական-հայկական ստուգաբանություններով հանդերձ:² Ինչպես ժամանակին նշում էր հայտնի հնդեվրոպաբան Վ.Գետրոզիևը. «Տվյալ տարածքի հնագույն բնակչության լեզվական պատկանելության վերաբերյալ կարելի է արժեքավոր եզրակացությունների հանգել աշխարհագրական անվանումների ուսումնասիրության հիման վրա: Հատկապես կարևորվում են մեծ գետերի (ջրերի) և լեռների անունները:³ Շումերա-աքադական «Գիլգամեշ» դյուցազնավեպի հիշատակած դրախտային Մաշու լեռան և վիպական մի քանի կերպարների անունների ստուգաբանությունների, վերջիններիս էության բացահայտման միջոցով, սույն հոդվածը նպատակ ունի ավելացնելու դրախտի մասին հնագույն պատկերացումներում և «Գիլգամեշ» դյուցազնավեպում առկա հնդեվրոպական-հայկական բաղադրիչների կշիռը:

Աշխարհի հնագույն դյուցազնավեպի հերոս Գիլգամեշը մտացածին կերպար չէ: Առասպելաբանված այս հերոսն ունեցել է իր պատմական նախատիպը: Ըստ ավանդության, նա Շումերի Ուրուկ քաղաքի այն արքայատոհմից էր, որի հիմնադիրն համարվում էր Արևի աստծու Մեսկինգաշեր որդին:⁴ Վիպական տեքստերը նրան համարում են որդին Ուրուկի արքա Լուգալբանդայի և Նինսուն դիցուհու, որը Արևի աստծու սերունդներից էր:⁵ Իրականում Գիլգամեշը Ուրուկի I արքայատոհմի (մ.թ.ա. XXVIII-XXVI դդ.) հինգերորդ արքան էր՝ ապրած մ.թ.ա. XXVII-XXVI դդ. սահմանագլխին:⁶ Հայկական լեռնաշխարհի առնչությամբ հատկապես ուշագրավ է դյուցազնավեպի այն մասը, որը սկսվում է Գիլգամեշի որոշումով հասնելու իր անմահացած նախնի Ուտնապիշտիմին՝ նրանից անմահանալու գաղտնիքն իմանալու համար: Սա աստվածաշնչային Նոյ նահապետի շումերական նախատիպն է:⁷ Ընկերոջ՝ Էնկիդուի, մահվան պատճառով վշտահար Գիլգամեշը իր մասին ասում է. «Մահվան երկյուղը կզգամ հիմա և անոր համար տափաստանները կը թափառին: Ուտնապիշտիմին՝ Ուբար-Տուտուի զավակին քով կտողեն քայլերս»:⁸ Չզայցվում է, որ Գիլգամեշը հուսահատ և աննպատակ թափառումներին վերջ է տվել, երբ հիշել է իր անմահություն գտած նախնուն:

Ուտնապիշտիմին հասնելու համար Գիլգամեշը անասելի երկար ճանապարհ էր կտրելու՝ հասնելու էր աշխարհի ծայրը, այնտեղ, որտեղ Միջազգետքի երկու մեծ գետերի՝ Տիգրիսի և Եփրատի ակունքներն էին: Ավելի կարճ, բայց ավելի դժվարանցանելի էր Տիգրիսի ափերով Հայկական լեռնաշխարհ բերող ճանապարհը: Գիլգամեշը այս ճանապարհին էր ընտրել և մինչև Հայկական լեռնաշխարհ հասնելը ստիպված է

¹ Ա. Մ յ յ ի յ յ ա ն, Մորթական լեռնաշխարհը, Եր., 2004:

² Ա. Պ ե տ ռ ն ս յ ա ն, Դրախտի գետերի և Խավիլա, Քուշ երկրների տեղադրության շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 2006, թիվ 2, էջ 237-255:

³ В. Г е о р г и е в, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, стр. 253.

⁴ Գիլգամեշ. Հին Արևելքի դյուցազնավեպ, թարգմանությունը և ներածականը Նշան Մարտիրոսյանի (այսուհետև՝ Գիլգամեշ), Եր., 1963, էջ 9:

⁵ В. А ф а н а с ь е в а, Гильгамеш и Энкиду. Эпические образы в искусстве, М., 1979, стр. 33.

⁶ В. А ф а н а с ь е в а, Гилгамеш, "Мифологический словарь", М., 1991, стр. 154.

⁷ Գիլգամեշ, էջ 120, ծան. 4:

⁸ Նույն տեղում, էջ 73:

եղել հաղթահարելու «վարարած գետերի»⁹ հարուցած արգելքները: Այդ գետերը լինելու էին Տիգրիսի բազմաթիվ վտակները: Դրանց գետանցումից հետո Գիլգամեշը Լուսնի Մին աստծու և մյուս աստվածների հաղորդած զորությանը կարողացել էր ցրել «քարձրաբերձ լեռների կիրճերի» առյուծներին, ապա «լեռան մը մոտեցավ, որուն անունը Մաշու՝ ... Այդ երկու լեռներուն կատարին վրա կը հանգչի երկնականարը, անոնց վարի ներքնամասը մինչև դժոխքին խորքը կը հասնի»:¹⁰ Գիլգամեշն հասել էր Միջագետքի հնագույն բնակչության պատկերացրած բնակելի աշխարհի ծայրը՝ «Մաշու լեռը»:

Մաշուն առասպելաբանված լեռ է, ուստի կարող էր ունենալ ո՛չ մեկ իրական նախատիպ: Այդպիսի նախատիպեր նրա համար կարող էին ծառայել ոչ միայն *Մասիսը*՝ Միջագետքի հյուսիս-արևմուտքում, *Նեխ-Մասիքը*՝ հետագա Միփանը (Փավստոս Բուզանդի երկում¹¹ և ժողովրդական «Դէ յաման» երգում՝ *Մասիս*), *Ազատ Մասիսը* (Մեծ Մասիս, Մեծ Արարատ), այլև Հայկական Տավրոսը: Մրանց անունների **Մաս* բաղադրիչի համար կարելի է վերականգնել հ.ե. *men- «քարձրանալ, բարձունքվել» արմատից ծագած *mṇ-s- նախածնը (հմմտ. հ.ե. *men-s- «լուսին») > հայ. *ամիս*, որտեղ ևս հ.ե. -ns- > հայ. ս):¹² Ընդ որում, հ.ե. *men- «քարձրանալ, բարձունքվել» արմատից է նաև *mṇ-t- «լեռ», «բարձունք» նախածնը, որից են սերում ավեստ. mati «լեռնագագաթ», լատին. mōns (-tis) «լեռ», բրետ. menez «լեռ» և հնդեվրոպական ազգակից լեզուների այլ բառեր:¹³ Որ Mašu/Masu կարող էր կոչվել նաև Հայկական Տավրոսը, բխում է հենց «Գիլգամեշ» դյուցազնավեպի տվյալներից: Դրանցից պարզվում է, որ «լեռ» կոչված Մաշուն եղել է արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված բավականաչափ երկար մի լեռնաշղթա, որովհետև նրա պահապան կարիճ-մարդիկ «ամեն օր արևին ելքին ու մուտքին կը հսկեին»:¹⁴ Հարավից եկող Գիլգամեշը, բնականաբար, լեռնաշղթան պետք է հատեր հարավ-հյուսիս ուղղությամբ, հաստատելով նրա արևելքից արևմուտք ձգված լինելու իրողությունը: Եվ իսկապես, լեռան խավար անցուղին բռնած Գիլգամեշը «Երբ ինը երկժամեն ավելի խորացավ, զգաց հյուսիսային քամին»:¹⁵

Մաշու լեռան բարձունքներից «ամեն օր արևին ելքին ու մուտքին» հսկող կարիճ-մարդիկ նաև լեռնանցքի պահապաններն էին: Լեռանը մոտեցած Գիլգամեշը նկատում է, որ «Լեռան դուռը պահակ կեցած էին անհավոր կերպարանքով կարիճ-մարդիկ, որոնք լեռան ոտքեն մինչև գլուխը սարսափ և մահ կը սփռեին, ու կը հսկեին արևածագեն մինչև մայրամուտ: Երբ Գիլգամեշը զանոնք տեսավ, հայացքը մթազնեցավ անոնց ազդած անեղությունեն ու ճիվաղային սարսափեն»:¹⁶ Այսուհանդերձ, կարիճ-մարդկանցից տղամարդը նրան ասում է. «Լեռներու դուռը, ուր մենք պահապան կեցած ենք, թող բացվի առջևդ», «Գնա Գիլգամեշ, քեզ համար Մաշու լեռան մուտքը կը բանամ»:¹⁷ Նա նաև զգուշացնում է, որ «Չկա որևէ մահկանացու մը, որ այս լեռան մեջի ճամփան անցած ըլլա: Տասներկու կրկնակ ժամ ճամփա պետք է կտրել, անկե անցնելու համար: Մութը այնտեղ շատ թանձր է, լույսին նշույլ չկա»:¹⁸ Գիլգամեշը ճանապարհ է ընկնում և խավար ճանապարհի վերջնամասին տեսնում է, որ «Լույսը ծագեցավ: Գիլգամեշ հեռվեն նշմարեց աստվածներու պարտեզը և անոր քով փութաց»:¹⁹ Միջագետքի դյուցազնը ոտք էր դրել Հայոց դրախտավայր: Գիլգամեշի հաղթահարած խավարչտին ճանապարհի Տիգրիսի ակունքների (հին ըմբռնումով) շրջանում գտնված Կղեսուրք լեռնանցքների գոտին լինելու հիշողությունը Միջագետքի հին բնակչության արարած

⁹ Գիլգամեշ, էջ 75:

¹⁰ Նույն տեղում, էջ 74:

¹¹ Փաստոսի Բիզանդացոյ պատմութիւն Հայոց, Եր., 1987, Գ, ի:

¹² Հ. Ա ճ ա յ ա ն, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. I, Եր., 1971, էջ 157:

¹³ Г. Д ж а у к я н, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ер., 1967, стр. 93; Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. I-II, Тб., 1984, стр. 666.

¹⁴ Գիլգամեշ, էջ 74:

¹⁵ Նույն տեղում, էջ 78:

¹⁶ Նույն տեղում, էջ 74:

¹⁷ Նույն տեղում, էջ 76, 77:

¹⁸ Նույն տեղում, էջ 75-76:

¹⁹ Նույն տեղում, էջ 78:

սերունդների միջոցով քափանցել էր արարական մատենագրություն: Օրինակ, Յակուտ ալ-Համավիհն, ավելի վաղ ապրած Քասրավիհն հղելով, Տիգրիսի (արար. Դիջլա) մասին գրում է. «Բարդղադի գետն է, որի առաջին ակը գտնվում է մի վայրում, որը կոչվում է այն Դիջլաթ («Տիգրիսի ակն» -Ս.Պ.), Ամիդից երկու օրվա ճանապարհով հեռու: Այդ վայրը ծանոթ է Հալուրաս անվամբ և գտնվում է *մի մութ քարայրի մեջ*»:²⁰

Ինչպես տեսանք անդրոյախոր և խավար լեռնանցքը հաղթահարած Գիլգամեշը դուրս գալով լույս աշխարհ, իր առջև գտել էր «աստվածների պարտեզը» և փութացել էր այնտեղ: Ահա թե ինչեր էր տեսել նա այստեղ: «Սարդիոնե ծառը հոն իր պտուղը ուներ: Որթնատունկերը պատած էին գայն և խաղողի ողկույզները կախված էին անկե: Լաջվարդն ալ տերև և գեղեցիկ տեսքով պտուղներ ուներ: Դարավոր մայրիներուն և կասկենիներուն վրայեն կախված ազնիվ քարերը կշողոզային: Կանաչ զմրուխտը ծովասեզի մման ծառերուն ստորտող տարածված էր: Հնու քեսի և ուղտափուշի տեղ գույնզգույն ազնիվ քարեր կփայլեին: Պտուղին կուտը շափյուղա էր... Դիցուհի Սիդուրին ծովեզրի գահին վրա բազմած, աստվածներու պարտեզին կը հսկե»:²¹

Հետևենք Գիլգամեշի հաջորդ արկածին, որը կապված է Սիդուրի դիցուհու հետ: «Երբ դիցուհին անոր մոտենալը տեսավ, փակեց *դուռ* ու երդիկ, կողպեց *դուռը* ու փականը քաշեց: Բայց Գիլգամեշն անհապաղ բիրը առավ ու *դուռը* բախեց: Գիլգամեշ, Սիդուրիին դառնալով, ըսավ.- Դիցուհիդ, ի՞նչ տեսար, որ *դուռը* ու երդիկդ առջև զոցեցիր ու կողպեցիր: Եթե *դուռը* զոցես և փականքը քաշես, *դուռը* կջախջախես և փականքը ջարդ ու փշուր կընեն: Սիդուրին *դուռը* բացավ և *դռան* առջև քաջարի Գիլգամեշին ըսավ.- Օտարական, ո՞վ ես դուն և ու՞ր կերթաս այդպես արագաքայլ: Ըսե, թե ինչպե՞ս կրցար անցնիլ Մաշու լեռան *արևի դռներն* և ինչու՞ տապաքովդ *դուռս* ջախջախես կուզես»:²² Բերված հատվածում մեկ անգամ հիշատակված է «արևի դուռը» և ինն անգամ Սիդուրի դիցուհու դուռը: Սա մեզ հիմք է ծառայում Siduri<*Si-duri դիցանվան երկրորդ բաղադրիչն համարելու հնդեվրոպական ծագումով հայերեն *դուռ* բառը. հմմտ. նույնարմատ բառերից հին հնդկ. *dvār* «դուռ», *durāh* «դռներ», հուն. *θύρα* «դուռ», լատին. *foris* «դուռ» և այլն:²³ «Սիդուրիի դուռը» գտնվելու էր հարավից «աստվածների պարտեզ» բերող «Արևի դռան» հակառակ կողմում՝ հյուսիսում, ուստի կարող էր կրել այդ իրողությունն արտացոլող համապատասխան անուն: Այդ դռան անճնավորում Սիդուրի դիցուհու անունը իր առաջին՝ *si*- բաղադրիչով, կարող էր առնչվել Լուսնի պաշտամունքին: Այս դեպքում, *Si*-ն ներկայացնելու է «լուսին» նշանակող ինչ-որ բառի տված ձևը: Կարծում ենք, որ դա եղել է *h*-*te*. * *ker*- «եղջյուր» > «լուսնեղջյուր» արմատից սերած բառ: Հմմտ. *եղջիր* «լուսնի դուրս ցցված ծայրերը՝ նրա առաջին քառորդի ժամանակ» և նույն **ker*- արմատից ծագած փռոցակալան Մեն լուսնաստծու *Кароу* մականունը՝ բառացիորեն «եղջյուր», «լուսնեղջյուր»:²⁴ Այս արմատի ուղղակի ժառանգորդը հայերենում ունեցել է **սիր* ձևը՝ պահպանված *սիրամ* (<*սիր-ամ) «ճակատին սպիտակ նշանով եզ», «կես կարմիր՝ կես սև գույնով կով»²⁵ բառում: Հայերեն այս բառի արմատակիցներից իմաստով նրան մոտ են ազգակից լեզուների հետևյալ բառերը. հին հնդկ. *çā́rjgam* «եղջյուր», ավեստ. *srvā* «եղջյուր», լատին. *cornu* «եղջյուր», *cervus* «եղջերու», պրուս. *sirvis*, լատիշ. *sirma*, ռուս. *серна* «այծյամ, քարայծ», իսկ համեմատաբար հեռու՝ հայ. *սար* և նրա նման «լեռան գլուխ, բարձունք» նշանակող ազգակից լեզուների մյուս բառերը:²⁶ Որ Siduri դիցանվան մախաձևը կարող էր ունենալ **Sirduri* տեսքը, ցույց է տալիս Ուրարտուի Սարդուրի I արքայի (մ.թ.ա.

²⁰ Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Եր., 1965, էջ 63:

²¹ Գիլգամեշ, էջ 78-79:

²² Նույն տեղում, էջ 79-80:

²³ ՀԱԲ, հ. I, էջ 684-685:

²⁴ Մտ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. I, Եր., 1944, էջ 561: Գ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 114:

²⁵ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 219, ՀԲԲ, հ. IV, Եր., 1945, էջ 217:

²⁶ ՀԱԲ, հ. IV, էջ 182, М.Фасмер, Этимологический словарь русского языка, т. III, М., 1971, стр. 609.

840-ական-825թթ.) անվան ասորեստանյան Siduri/Seduri (սեպագր. Si-e-du-ri) ձևը:²⁷ Ըստ այսմ, Siduri դիցանվան նախնական իմաստը եղել է «լուսնեղջյուրի դուռ», իսկ դիցունիին ինքը եղել է «աստվածների պարտեզի» հյուսիսային այդ դռան անձնավորումն ու հսկիչը՝ հավանաբար լուսնաբնույթ դիցունի լինելու պատճառով:

Միդուրի դիցունիին Գիլգամեշին ասում էր. «Միայն արևաստված Շամաշը... կրնա այս ծովեն անցնիլ... Գիլգամեշ, ինչպե՞ս կուզես անցնիլ ծովեն: Հետո ինչ պիտի ընես, երբ մահվան ջուրերուն հասնիս... տե՛ս, Գիլգամեշ, ահավասիկ այնտեղ է Ուրշանաբին՝ Ուտնապիշտիմի նավավարը, այնտեղ, ուր տաշված քառակուսի քարերը կը գտնվին»:²⁸ Այս լսելուն պես, Գիլգամեշը «նետի պես սուրալով քարակերտ կամուրջին քով գնաց: Նավը ծովափը կեցած էր, բայց մեջը մարդ չկար: Նավավար Ուրշանաբին կը կանչե, բայց իզուր. որևէ մեկը երևան չելլեր: Եվ ցատումն [կամրջի] քարերը ջարդ ու փշուր ընել է հետո ետ կը դառնա»:²⁹ Բնականաբար, «տաշված քառակուսի քարերով» կառուցված կամրջի մասին պատկերացումը շումերական կամ աքադական միջավայրի ծնունդ լինել չի կարող, այն բնորոշ չէր միջագետքյան իրականությանն ու առասպելաբանական պատկերացումներին: Ծովի վրայով անցնող քարե կամրջի առկայությունն այս դրվագում կարող է ունենալ իր թե՛ իրականությունից, թե՛ հնդեվրոպական առասպելաբանությունից բխող բացատրությունները: «Տաշված քառակուսի քարերով» կառուցված կամուրջը չի համապատասխանում եղեգնյա և կավ-աղյուսե շինությունների երկիր հարավային Միջագետքին (Շումեր և Աքադ), բայց համապատասխանել կարող է քարե շինությունների երկիր Հայկական լեռնաշխարհին, որը նաև հնդեվրոպացիների նախահայրենիքն էր: Առաջին բացատրության կողքին կարելի է տալ նաև երկրորդը: Հնդեվրոպական առասպելաբանության մեջ գոյություն ունեն «քարե երկնքի» և «քարե երկնականարի» մասին պատկերացումը (հմմտ. «երկնականար»/«կամար»/«կամուրջ» առասպելաբանական գուգորդումը): Ինչպես Վ.Իվանովը ու Թ.Գամկրելիձեն են գրում «Հնդեվրոպականում ինքը «քար» բառը նշանակում է նաև «երկինք» ըմբռնված որպես «քարե կամար»:³⁰ Հմմտ. հին հնդկ. *asman*, ավեստ. *asman* «քար», «երկինք»:³¹ Ըստ երևույթին, սրանց արմատակիցն է դեռևս հավաստի ստուգաբանություն չունեցող հայերեն *ասուպ* (<հ.-ե. *ak-) բառը, որի *-ուպ* բաղադրիչը ծագում է, մեր կարծիքով, հ.-ե. *ub- «սեղմել, ճնշել» արմատից, որից են նաև հայ. *հուպ* «սեղմում, սեղմել», հին հնդկ. *ubjāite*, ավեստ. *ubjyāite* «ցած սեղմել» բառերը:³² Հիշյալ կովկասագետն ու հնդեվրոպաբանը «քարի» և «երկնականարի» գուգադրման հիմքը համարում են հնդեվրոպացիների նախահայրենիքում երկնամերձ լեռների առկայությունը, բայց այն կարող է ունենալ մեկ այլ բացատրություն. ասուպ-երկնաքարերը քարեր էին, բայց երկնքից էին ընկնում: «Քարե կամուրջն» ավերած Գիլգամեշը ծովով և նրա «մահվան խաղաղ ջուրերեն» անցնելու համար ստիպված է եղել իր նախնու մոտ տանող անհայտ և վտանգավոր ուղին բռնել «Ուտնապիշտիմի ծառա և նավավար»³³ Ուրշանաբիի նավով, որով էլ ի վերջո հասել էր իր նպատակակետին: Եթե դրախտավայր Հայաստանում տեղադրված «աստվածների պարտեզի» հսկիչ Միդուրի դիցունիին հնդեվրոպական-հայկական ծագմամբ անուն ուներ, ապա Հայկական լեռնաշխարհին առնչվող «Գիլգամեշ» դյուցազնավեպի այլ կերպարներ ևս կարող էին այդպիսի ծագմամբ անուններ կրել: Դրանցից մեկն է Ուրշանաբին: Կարծում ենք, որ Uršanabi դիցանունը պիտի տրոհել ոչ թե Ur-šanabi, այլ Urša-nabi բաղադրիչների և այն սեպագրային արտացոլումն համարել *Orsa -nau(i) նախաձևի (սեպագր. u//o, š//s, b//u):

Urša-nabi դիցանվան առաջին բաղադրիչի իմաստի պարզաբանման տեսանկյունից ուշագրավ է Տիգրիսով և Եփրատով նավարկող հին նավակների կառուցվածքի

²⁷ Ն. Ադամս, *Հայաստանի պատմություն*, Եր., 1972, էջ 89, 91; И. Дьяконов, *Ассиро-вавилонские источники по истории Урарту* ("Вестник древней истории", 1951, N 2-4), N 28, пр. 9; Б.Пиотровский, *Ванское царство (Урарту)*, М., 1959, стр. 58-59.

²⁸ Գիլգամեշ, էջ 82-83:

²⁹ Նույն տեղում, էջ 83:

³⁰ Т. ГамкRELИДзе, В. Иванов, *նշվ. աշխ.*, հ. II, էջ 667:

³¹ Նույնը:

³² ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 124:

³³ Գիլգամեշ, էջ 33:

մասին Հերոդոտոսի վկայությունը: Դրանից պարզվում է այդ նավակների ուռենիներից պատրաստված լինելու հանգամանքը: Նա գրում է. «Նավերը, որոնցով (ասորեստանցիները) նավում են գետնի վարձի Բաբելոն, կտր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են *ուռենի*, (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կաշվե ծածկով, նավի հատակի նման... Յուրաքանչյուր նավի մեջ կա մեկ կենդանի գրաստ, իսկ խոշորների մեջ մի քանիս»։ Նավերով Բաբելոն հասնելուց և բեռը վաճառելուց հետո, նրանք վաճառքի են հանում նաև նավի կմախքը և ամբողջ ծղոտը, իսկ կաշիները բարձում են գրաստների վրա և վերադառնում արմենների մոտ: Քանզի գետնի վեր ոչ մի կերպ հնարավոր չէ նավել՝ գետի արագության պատճառով: Այդ է պատճառը, որ նրանք նավերը պատրաստում են ոչ թե փայտից, այլ կաշվից: Նրանք գրաստները քշելով ետ են դառնում արմենների մոտ և նույն ձևով պատրաստում ուրիշ նավեր»:³⁴ Այդ նավակների ուռենիներից պատրաստված լինելու իրողությունը մեզ իրավունք է տալիս դիցանվան առաջին *Ursa-//*orsa-* բաղադրիչին վերագրելու հենց այդ իմաստը և նրա մեջ տեսնելու հայերեն ուռ (որից՝ *ուռի*, *ուռենի*) բառի նախաձևը: *Ուռ* նշանակում է «ճյուղ, ընձյուղ», «ուռի ծառը», «գեղձի ծառը», «խաղողի որթի ողկուզաբեր ճյուղը»:³⁵ Հ.Աճառյանը չի ընդունում *ուռ/ուռի* բառի և հունարեն *ἄρσικος/ἄρσιχος/ἄρριχος* «կողով» բառի հ.-ե. **ers-//*ors-* («փափուկ ճյուղն ճյուղերով հյուսել») արմատից բխեցնող տեսակետը,³⁶ չնայած դա հաստատվում է *ուռի* «մի տեսակ ծառ», «ուռու մման տերևներով մի թուփ»³⁷ զուգահեռ արմատակից բառի գոյությամբ: Հ.-ե. **ors-*ը հայերենում վերածվել կարող էր թե՛ *ուռ-*ի, թե՛ **ուռ-*ի, ինչը պարզվում է հայերենում միևնույն բառի *ռ-*ով և *րռ-*ով տարբերակների գոյությամբ: Հ.Աճառյանը այս առթիվ գրում է. «այսպիսի մի ձայնափոխություն էլ կար հայերենի մեջ (որոշ պայմանների տակ՝ փոխանակ *ռ-*ի), որի արդյունքն է հնիս. *tr̥s-* > հայ. *բառ* ձևի դեմ նաև **բարռ* ձևը. սրա վրա ավելանալով *-ամ* մասնիկը՝ կազմված է *բարռամ*, ինչպես որ հնիս. **tors-* > *բորռ* ձայնդարձից էլ կազմված է նույն ձևով՝ *բորռոն*»:³⁸ Այս տեսանկյունից հմմտ. միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում վկայված *բուռ/բուռ* «այտ» բառը («*Թուռ-բուռ*»)³⁹ *բուռ//*բուռ*>*բուռ*: Հմմտ. նաև նույն կամ մոտ իմաստներ արտահայտող հետևյալ բառերը. *գուռ//*գուռ* >*գուռ*, *մուռ//*մուռ* >*մուռ*: Այս օրինակները կարող են վկայել *ուռ//*ուռ*>*ուռ* (որից՝ *ուռի/ուռի* ծառանունը) հնչյունական համապատասխանության օգտին: Ուրեմն, *ուռ//*ուռ* <հ.-ե. **ors-*:

Հ.-ե. **ors-* նախաձևից ծագած *ուռ* բառի **ուռ* տարբերակն է, մեր կարծիքով, ընկած ուրարտական թագավորների ամենագործածական անուններից մեկի *Rusa // Ursa*-ի հիմքում: Չնայած ուրարտական արձանագրություններում այս անունն հանդես է գալիս միայն *Rusa* ձևով, բայց սա իր տեսակի մեջ բացառիկ երևույթ է նրանով, որ բառակազմի ունի *r* հնչյուն: Անվան այս տարբերակն Ի.Դյակոնովը համարում է նվազական-փաղաքշական ձև, իսկ անվան ուղիղ ձևը, ըստ նրա, ասորեստանյան արձանագրությունների *Ursa*-ն է՝ հնչյած *uršā* (կամ, հավանաբար, *uršā*):⁴⁰ Իհարկե այս դեպքում ի նկատի ենք առնելու *ուռ//*ուռ* արմատի մեկ ուրիշ նշանակությունը՝ «խաղողի որթի ողկուզաբեր ճյուղը»: Այս առթիվ հիշենք Ռուսա I-ի (մ.թ.ա.735-713թթ.) պապի՝ Արգիշտի I-ի, *Argišti* անունը: Սրա մեջ առանձնանում է *arg-* արմատը և *-ist* վերջածանցը: Սրա արմատը նույնական է *արգատ* (<**արգատ*) «որթատունկի հոտ, կտրված ավերորդ ճյուղերը» բառի արմատի հետ, իսկ վերջածանցի համար հմմտ.

³⁴ Herod., I, 194 (Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Միմոն Կրկյաշարյանի, Եր., 1986, էջ 79-80):

³⁵ ՀԱԲ, հ. III, էջ 607: ՀԲԲ, հ. III, Եր., 1944, էջ 605:

³⁶ ՀԱԲ, հ. III, էջ 607:

³⁷ Նույն տեղում, էջ 606:

³⁸ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 156:

³⁹ Բառգիրք հայոց, Բնական բնագիրք, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Ամայանի, Եր., 1975, էջ 123:

⁴⁰ И. Дьяконов, Хурритский и урартский языки, "Языки Азии и Африки", т. III, М., 1979, с.57, пр. 73.

հանգիստ, զովեստ, համեստ, պահեստ բառերի⁴¹ –իստ//–եստ հնդեվրոպական ծագումով վերջածանցները:⁴² Ուտոնապիշտիմի *Մավավար* Ուրշանաբիի *Մրժա-nabi* անվան երկրորդ -nabi բաղադրիչի հիմքում, ինչպես սավեց լինելու է *Մու* բառը, որը ծագում է հ.-ե. *nāu-ից: Մրանից են մաս հին հնդկ. nāu- «նավ, մակույկ», հին պարս. nāvīyā «նավատորմի», ավեստ. navāza- «նավավար», լատին. nāvis, հին իռլ. nau «նավ» և այլն:⁴³ «Գիլգամեշում» հիշված «Մահվան ջրերի» և *Մրժանabi-ի* նավի առնչությամբ ուշագրավ է հնդեվրոպական հնագույն պատկերացումը Այն աշխարհի նավով գնալու վերաբերյալ: Դրա հետևանքով է հ.-ե. մի շարք լեզուներում «նավ» նշանակող հիշյալ արմատը փոխաբերաբար «մահ» և այլն նշանակել: Հմմտ. գոթ. ga-nawis-trōn «թաղել» (<<նավով ուղարկել>>), naus «մեռյալ», «դիակ», հին ռուս. навъ «դիակ», հին չեխ. nav «զերեզման», «Այն աշխարհ», լատիշ. nāve «մահ»:⁴⁴ Այսպիսով, *Մրժանabi*/**Orsanau-* անունը եղել է Այս (ապրողների) աշխարհը Այն (մեռյալների) աշխարհից անջրպետող «մահվան ջրերի» մեջ նավարկող նավի անունը, որն էլ ընկած է նրա նավավարի *Մրժանabi*/**Orsanau* անվան հիմքում: Հմմտ. հունական առասպելաբանության Աքերոն (*Ἀχέρων*) գետը և նրանում նավարկող նավավարի *Քարոն* (*Χάρων*) անունը:⁴⁵

Դյուցազնավեպի Ուտոնապիշտիմի և ջրհեղեղի հետ կապված հատվածը ավելի հին շումերական գրանցում ևս ունի: Այնտեղ նշվում է, որ Ջիուսադրան («Երկար օրերի կյանք գտածը»), որը նույն Ուտոնապիշտիմն է, (աքադ. «Շունչ գտավ») ի վերջո բնակվում է երանավետ *Տիլմուն*/**Դիլմուն* կղզում:⁴⁶ Անկախ այս կղզու հետագա տեղադրման վայրերից, նրա անունը հստակ հնդեվրոպական-հայկական ծագում ունի: Նրանում առկա է հայերեն *տիղմ* բառի հետ նույնական *tilm- հիմքը և -mն վերջածանցի հետ նույնական -տ վերջնամասը. *Tilm-un*/**տիղմ-ուն*: Այսպես ենք կարծում, որովհետև հնագույն առասպելաբանական պատկերացումների համաձայն ի սկզբանե ցամաքը զոյություն չունեք, զոյություն ունեք միայն տիեզերական (համաշխարհային) օվկիանոսը: Կան նրա հատակից առաջին ջրով թռչունի համաձ, կան օվկիանոսի վրա լող տված տիղմը (ցեխը) պեղանալով է սկիզբ դրել ցամաքին:⁴⁷ *Տիղմ*-ը հայերենի հնդեվրոպական ծագումով բառերից է, հ.-ե. stēl- >* *ստիլ* > *տիլ*: Վերջին արմատական ձևը առկա է բազմաթիվ բարբառներում «տիղմ», «ջրալի ցեխ», անգամ «զինու և այլնի տակին նստած դիրտը» իմաստներով, իսկ *տիղմ*-ը կազմված է նրանից –մ մասնիկով:⁴⁸

Հայերեն բառին իմաստով և կազմությամբ ամենից մոտ է հունարեն *τέλμα* «աղբ, ճահիճ, ցեխ, շաղախ, տիղմ» բառը:⁴⁹ Հ.-ե. ծագում ունի հայերեն -mն վերջածանցը ևս. հմմտ. *արթուն, գիտուն, խոսուն* և այլն: Հ.-ե. -*no-/*-nā «ածանցը,- գրում է Գ.Ջահուկյանը,- հնդեվրոպականում կազմել է ածականներ ու բայանուններ և վաղընջահայերենում, ամենայն հավանականությամբ, պահպանել է իր գործածությունը. հին հայերենում այն ներկայացված է մի քանի կերպ»:⁵⁰ Թե ինչու *Tilmun* /**Տիլմուն*՝ տիղմի այդ կտորը, հետագայում դառնալու էր երանավետ վայր, հասկանալի է. դա է եղել տիեզերքում (աշխարհում) հետագա արարումների պատրաստի նախանյութը:

«Գիլգամեշ» դյուցազնավեպում հիշված հնդեվրոպական ծագմամբ անուններից բերենք ևս մեկը: Իր սերն հայցող Իշտար դիցուհուն Գիլգամեշը հանդիմանելով սիրեցյալների նկատմամբ ցուցաբերած դաժան վերաբերմունքի համար, իմիջիայլոց

⁴¹ Մ. Պեռնոյան, Հին հայոց խաղողագործ աստվածը, «Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան», ՀՀ ԳԱԱ ՊԻ հայագիտական գիտաժողովի (13-15 նոյեմբերի, 2003) զեկուցումներ, Եր., 2004, էջ 160-161:

⁴² ՀԱԲ, հ. IV, էջ 671-672:

⁴³ ՀԱԲ, հ. III, էջ 433:

⁴⁴ Т. Г а м к р е л и д з е, В. И в а н о в, նշվ. աշխ., հ. I, էջ 419, հ. II, էջ 825:

⁴⁵ А. Т а х о – Г о д и, Ахерон, «Мифологический словарь», стр. 75; Его же, Харон, там же, стр. 585.

⁴⁶ В. А ф а н а с ь е в а, Зиусудра, там же, стр. 222.

⁴⁷ В. Т о п о р о в, Космогонические мифы, «Мифы ...», т. II, М., 1988, стр. 8.

⁴⁸ ՀԱԲ, հ. IV, էջ 406-407:

⁴⁹ Նույն տեղում, էջ 407:

⁵⁰ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան (այսուհետև՝ ՀԼ ՊՆԺ), Եր., 1987, էջ 234:

ասում է նաև. «Միրեցիր կովի մեջ սարսափ ազդող և հաղթանակող ճմույզը, բայց մտրակը և խարազանը անոր համար իբրև պատիժ սահմանեցիր: Որոշեցիր, որ յոթ երկժամ վազե և պղտոր ջուր խմե: Նաև անոր մորը՝ Միլիլին լաց ու արցունք տվիր»:⁵¹ Ն.Սարտիրոսյանը վերջին անվան առթիվ գրում է. «Միլիլի - «մատակ ձի», «զամբիկ», «ճալիկ» կնշանակե քերևս և կամ մատակ ձիու անուն է»:⁵² Կարծում ենք, որ այս կերպարը ծագումնաբանական կապի մեջ է հունական դիցաբանության սիլենների (Σιληνοί) կերպարի հետ՝ իր անվամբ ևս առնչվելով նրանց. հմմտ. *sil-en և *sil -il-: Միլենները մարդակերպ, բայց ձիու պոչով և սմբակներով էակներ էին, էջ էին հեծնում և հաճախ շփոթվում Դիոնիսոս աստծու մյուս ուղեկիցների՝ սատիրների հետ:⁵³

Հարավային Միջագետքում ձին հայտնվել էր համեմատաբար ուշ՝ Միջագետքին հարևան լեռնային երկրից: Ըստ այդմ, շումերները «ձի» հասկացությունն արտահայտելու համար կիրառում էին «էշ» և «լեռ» նշանակող սեպախմբերի համադրումը. ANŠE. KUR. RA, այսինքն՝ «էշ լեռների», «լեռնային էշ»:⁵⁴ Լեռնային այդ երկիրը, Միջագետքի արևելյան հարևանը՝ Իրանական բարձրավանդակը, լինել չէր կարող, բայց կարող էր լինել նրա հյուսիսային հարևանը՝ Հայկական լեռնաշխարհը, որովհետև փոքրամարմին ձիերն էին, որ հաճախ չէին տարբերվում էշերից, իսկ ինչպես Քսենոփոնն է գրում, հայկական «ձիերը փոքր էին պարսկականներից, բայց ավելի աշխույժ էին»:⁵⁵ Այդ նույնի վկան է նաև հայերեն էշ բառը, որի հնդեվրոպական ազգակիցները «ձի» են նշանակում. հմմտ. ավեստ. aspa, հին հնդկ. ácva, լատին. equus, հին լիտվ. ešva և այլն:⁵⁶

Հայկական լեռնաշխարհը հնդեվրոպացիների մախահայրենիքը լինելու հանգամանքը մեզ իրավունք է տալիս գիլգամեշյան Silili-ի և հունական silen-ների անվան հիմքում տեսնելու հ.-ե. մախալեզվի *(s)kel- «ցատկել, ոստնել» արմատը: Սրանից են ծագում հրգ. scela «քուռակ», մրգ. schel- «ոստնող, ցատկոտող», schelch «եղջերու», հին հնդկ. úcchalati (<ut-salati) «ցատկոտում է», śālūra «գորտ», śalabha- «քիթեռնիկ», լիտվ. šuolys «վագք» և այլն:⁵⁷ Հայերենում հնդեվրոպական արմատի ուղղակի ժառանգորդն է բարբառային սրլ «խրտնող» բառը՝ սրլ ձի:⁵⁸ Ի նկատի առնելով հնդեվրոպական հնագույն առասպելաբանությանը բնորոշ «լեռնային գետ»/«ձի» զուգորդումը,⁵⁹ այս նույն արմատին կարելի է առնչել բարբառային սել/սէլ, սելավ/սէլավ/սէլափ «հեղեղ, ուղիս» նշանակող բառերը (սրանց -ավ, -ափ բաղադրիչների հիմքում հ.-ե. *ap-, *Har(h)- «գետ», «հոսանք» արմատն է):⁶⁰ Իսկ Silili-ի երկրորդ բաղադրիչի՝ -il-ի համար հմմտ. հնդեվրոպական տարբեր լեզուներում կենդանիների անուններ կերտող -il/-el- վերջածանցը. հմմտ. քոր-եղ, տառ-եղ-ն, մաթ-իլ, ոչ-իլ, ոուս. коз-ел, ор-ел, дят-ел:⁶¹

«Գիլգամեշ» դյուցազնավեպում հայկական իրականության հետ կապված առկա է մի հին քյուրիմացություն: Խոսքը կարիճ-մարդկանց մասին է: Միջագետքում կար այդպիսի առասպելական էակների պաշտամունք, իսկ Հայկական լեռնաշխարհում եթե անգամ կար, ապա, միևնույնն է, հակառակ «Գիլգամեշ» դյուցազնավեպի մեզ հասած օրինակի, հին հայերը Հայաստան բերող լեռնանցքների պահապանների դերը նրանց վստահել չէին կարող: Լեռնանցքների այդ պահապանների կարիճ-մարդիկ լինելու հանգամանքը պետք է բացատրել հետևյալ պատճառներով. ա) դրանք Մաշու

⁵¹ Գիլգամեշ, էջ 55:

⁵² Նույն տեղում, էջ 121:

⁵³ А.Т а х о - Г о д и, Силены, МНМ, т. II, стр. 434; Его же, Сатиры, там же, стр. 415.

⁵⁴ Т.Г а м к р е л и д з е, В. И в а н о в, նշվ. աշխ., հ. II, էջ 560, 564:

⁵⁵ Xen., Anabasis, IV, V, 36 (Քսենոփոն, Անարախիս, Թարգմանությունը Միլոն Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 98):

⁵⁶ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 117:

⁵⁷ Г.Д ж а у к я н, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, стр. 189; Т. Гамкрелидзе, В. Иванов, նշվ. աշխ., հ. I, էջ 109:

⁵⁸ ՀԱԲ, հ. IV, էջ 211:

⁵⁹ Т.Г а м к р е л и д з е, В. И в а н о в, նշվ. աշխ., հ. II, էջ 670, ծան. 1; Ս. Պետրոսյան, Ծ. Պետրոսյան, «Ամպ/ձի» և «գետ/ձի» առասպելաբանական կապի մի քանի դրսևորումներ, ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», I, Գյումրի, 1998, էջ 70-74:

⁶⁰ ՀԱԲ, հ. IV, էջ 210; Т. Гамкрелидзе, В. Иванов, նշվ. աշխ., հ. II, էջ 670:

⁶¹ ՀԱԲ, հ. I, էջ 472-473: Этимологический словарь РЯ, т. II, вып. 8, М., 1982, стр. 187.

«լեռան ոտքեն մինչև գլուխը սարսափ ու մահ կը սփռեն», բ) «կը հսկեին *արևածագեն մինչև արևմուտ*»:⁶² Ուրեմն, դրանք լինելու էին քևավոր և ցերեկային էակներ՝ հակառակ կարիճների, որոնք «Գիլգամեշին կենդանիներ են, ցերեկը թաքնվում են քարերի տակ, ճեղքերում»:⁶³ գ) Ընդ որում, Գիլգամեշին հանդիպած այդ էակները մահ սրատես են: Կարիճ-մարդը երբ նկատում է Գիլգամեշին, կնոջն ասում է. «Այն մարդը, որ դեպի մեզի կուգա, աստվածային մարմին ունի: Կարիճ-մարդու կինը պատասխանեց՝ երկու երրորդով աստված է, մեկ երրորդով մարդ է»:⁶⁴ Այդպիսի սրատեսությունը բնորոշ է կորակտուց գիշակեր թռչուններին. հմմտ. ժողովրդական «ուրուրի աչք» որակումը, որն ուղղակի «շատ սրատես աչք» է նշանակում:⁶⁵ Սեր կարծիքով, դրանք եղել են մարդու և կորակտուց գիշակեր թռչնի խառնածիններ ընկալված առասպելական էակներ: Հօգուտ դրա են խոսում ստորև բերվող և հայ իրականության տարբեր բնագավառներին վերաբերող տվյալները: Բայց ի՞նչը կարող էր լեռնանցքների այդ պահապաններին կարիճ-մարդիկ համարելու թյուրիմացության պատճառ դառնալ:

Հին հայերենում «կարիճ» նշանակությամբ կիրառվում էին *կարիճ* և *կոր* բառերը: Հ.Աճառյանը սրանցից առաջինն համարում է փոխառյալ փոքրասիական ինչ-որ լեզվից,⁶⁶ իսկ երկրորդը բխեցնում է *կոր* «ծուռ» բառից՝ այս կենդանու կոր/ծուռ պոչ ունենալու պատճառով («Քաբուով՝ խուսափելով տալ բուն անունը»):⁶⁷ «Կարիճ» նշանակությամբ *կոր* բառն ունեցել է իր *կորճ* տարբերակը, որը նույն այս նշանակությամբ և *գորչ* ձևով պահպանել էր Չարսանջակի հայոց բարբառը:⁶⁸ Նշված թյուրիմացության պատճառը լինելու էր *կոր* «կարիճ» բառի հենց *կորճ* «կարիճ» տարբերակը շփոթված նույնահունչ մեկ ուրիշ բառի հետ: Վերջինս լինելու էր *կորճ-ը*, որը նշանակում է «պասկում. ազգ կորակտուց եւ գիշակեր թռչնոյ՝ մման արծուոյ և անգեղ», *յրօփ, gryps, gryhus, պասկում*:⁶⁹ «Նոր հայկազեան բառարանի» հեղինակների կարծիքով թռչունին այդ անունը տրվել է «որպես թե կորունչ. կոր քիթ» ունենալու պատճառով:⁷⁰ Ուրեմն, մրանք *կորճ-ի* հիմքում տեսնում են *կոր* բառը: Այս բացատրությունն ընդունելով, Մ.Մուրադյանը ավելացնում է. «*Կորճ...* հմմտ. *կոր* «կեռ», *կորճ-այ* «ծոմոված լեզու», որոնցում առկա ճ-ն վերջածանց է»:⁷¹ Ըստ Հ.Մուրիսյանի, *կորճ* բառի ճ-ն աճական է. հմմտ. *կին-ճ, աղ-ճաս-ել, լի-ճ* և այլն:⁷² Է.Աղայանն ապացուցեց, որ *կոր-ը*, հայերեն մի ամբողջ շարք բառերի հետ միասին, ծագում է հ.-ե. *ger- (*gor-, *gr-) արմատից:⁷³ Իսկ, տեսանք, որ այս նույն արմատն է ընկած հիշյալ կենդանիների (միջատի և թռչնի) անունների հիմքում: Ընդ որում, *կորճ* ածանցյալ ձևը և արմատական *կոր-ը* միաժամանակ նշանակել են թե՛ «կոր, ծուռ», թե՛ «կարիճ», թե՛ «կորակտուց գիշակեր թռչուն» (վերջին դեպքում կեռ պոչի կամ կեռ կտուցի պատճառով): Ավելի ուշ շփոթությունից խուսափելու նպատակով դրանցից կենդանիներ նշող *կոր-ը* հատկացվել է միայն հիշյալ միջատին (բայց «գիշատիչ թռչուն») նշանակությամբ պահպանվել հայերենից փոխառյալ վրացերեն *կորի* «քազե» բառում),⁷⁴ իսկ *կորճ-ը* միայն հիշյալ թռչնին (բայց *գորչ* տեսքով և «կարիճ» իմաստով պահպանվել է Չարսանջակի բարբառում):⁷⁵

Կորճ և *կոր* բառերի մեծան լեզվաբանական և իմաստաբանական փոխադարձ կապեր են բացահայտում մահ *անճ* և *անճղ* բառերը՝ յուրաքանչյուրը իր գույգ նշանակություններով: Անճղ նշանակում է «թռչուն մեծ՝ գազանային՝ կորակտուց՝ շաղղա-

⁶² Գիլգամեշ, էջ 74:

⁶³ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Եր., 1979, էջ 322:

⁶⁴ Գիլգամեշ, էջ 74:

⁶⁵ ՀԱԲ, հ. III, էջ 618, ՀԲԲ, հ. III, Եր., 1944, էջ 613:

⁶⁶ ՀԱԲ, հ. II, էջ 551:

⁶⁷ ՀԱԲ, հ. II, 644, ՀԲԲ, հ. II, Եր., 1944, էջ 476:

⁶⁸ ՀԱԲ, հ. II, էջ 644:

⁶⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. I, Եր., 1979, էջ 1120:

⁷⁰ Նույն տեղում, ՀԲԲ, հ. II, 478:

⁷¹ Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Եր., 1975, էջ 78:

⁷² Հ.Մ. ք ի ա ս յ ա ն, Աճականը հայերենում, Եր., 1986, էջ 92:

⁷³ Է.Ա. դ ա յ ա ն, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 102:

⁷⁴ ՀԱԲ, հ. III, էջ 618:

⁷⁵ Նույն տեղում, հ. II, էջ 644:

կեր...», բայց նաև «ունկն կողովոյ»:⁷⁶ Ընդ որում, իր երկու նշանակություններով էլ *անգղ* բառն ունի իր արմատական *անգ* տարբերակը:⁷⁷ *Անգղ* թռչնանվան առթիվ Գ.Ջահուկյանը գրում է. «թռչունը կարող էր այդպես կոչվել ըստ կտուցի ձևի»:⁷⁸ Ըստ այդմ էլ, բառը նա բխեցնում է հ.-ե. *ang- արմատից, որից է նաև *անկիւն*/*անգիւն* բառը:⁷⁹ Ուրեմն, երկու նշանակությամբ էլ *անգղ* և *անգ* բառերի հիմքում առկա է նույն զաղափարը: Վերոհիշյալ գիշատիչ թռչունների առասպելաբանական նույնությունից է գալիս լեռնանցքների հետ դրանց առնչությունը:

Ուշագրավ է, որ Արևմտյան Տիգրիսի ավազանից Արածանիի ավազան տանող Կղեսուրք լեռնանցքի գոտին հարևան էր *Անգեղտուն* գավառին, որի կենտրոնական բնակավայրը կրում էր *Անգղ* անունը:⁸⁰ Հայոց հավատալիքներում անգղին վերագրվում էր անսովոր երկարակեցություն, իմաստություն, զանձերի պահապանի դեր:⁸¹ Նրանք համարվել են նաև սրբազան շինությունների պահապաններ: Մի ավանդության համաձայն, Աստվածածինը Թադեոս Առաքյալին պատվիրում է դևերի կողմից պարբերաբար ավերվող նորակառույց եկեղեցում օծյալ խաչ դնել: Թադեոս Առաքյալը կատարում է Աստվածածնի պատվերը, որից հետո տաճարի շինությունն ավարտվում է: Մրան միացված մեկ ուրիշ ավանդազրույցի համաձայն, տաճարի պատերը քանդող «դևերն էլ սև ագռավներ են դառնում: Առաքյալի հրամանով նույն պահին գալիս են անգղների երամները և կտուցով ագռավներին նետում են Սաչան գետը: Ասում են նաև, թե երբ դևերը քանդելու են գալիս տաճարի քարերը, նրանց ետևից հասնում են անգղ թռչունի կերպարանքով հրեշտակները, իսկ դևերը սև ագռավների կերպարանք առնելով և նրանց առջևից փախչելով գնում լցվում են ծովը (Վանա լիճը- Ս.Պ.)»:⁸² Անգղների վերակերպավորումը հրեշտակների, ցույց է տալիս, որ առասպելաբանված այս թռչունները պատկերացվել են նաև կես թռչուն-կես մարդ տեսքով: Իսկ սա հնարավորություն է տալիս ի դեմս նրանց տեսնելու ոչ միայն Գիլգամեշին սարսափի մատնած «կարհիմարդկանց», իսկ իրականում կործանարդկանց, այլև Կարմիր Բուրից պեղված ուրարտական զարդատուփի կափարիչին պատկերված էակներին: Վերջիններիս միջև կափարիչի կենտրոնին, պատկերված են Կեմաց ծառը (Գիլգամեշի տեսած «Սարդիոնե ծառը») և Արևի (նաև Արևաստծու) խորհրդանշանը, որոնց երկրպագում են նրանցից աջ և ձախ կանգնած հիշյալ անգղագույն ու թևավոր մարդամարմին էակները (նկ. 1):⁸³ Ջարդատուփը զանձարան է, իսկ անգղ/կործ// գրիֆոնները նաև զանձերի պահապաններ էին համարվում: Հունաստանում արխայիկ ժամանակաշրջանի հոնիացիներին ևս հայտնի էր նման խառնածին էակների պաշտամունքը: Դրանք գրիֆոններն էին, որոնք համարվում էին ոսկու պահապաններ՝ բնակված կամ հեռավոր Հնդկաստանի, կամ Եթովպիայի, կամ հյուսիսի բարձրաբերձ լեռներում:⁸⁴ Հունական դիցաբանության այս կերպարը տեղական ծագում չունի և ներմուծված է Սերձավոր Արևելքից:⁸⁵ Ինչպես հնագույն Արևելքում, այնպես էլ հունական աշխարհում նրանք համարվում էին Արևի և նրա անձնավորում աստվածների խորհրդանշանները:⁸⁶ Այս հանգամանքը մտածել է տալիս, որ կործ//գրիֆոնների գույգը նախապես խորհրդանշել է Արեգակի «ուղեկից» Արուսյակ/Վեներա մոլորակն իր երկու դրսևորումներով՝ լուսաբացին որպես Լուսաբեր և մայրամուտից հետո որպես Գիշերավար: Հայկական լեռնաշխարհում կործ//գրիֆոնների և կործ-մարդկանց պաշտամունքի բնիկ լինելու տեսանկյունից ուշադրության են արժանի գույգ արծվառյուծների խառնածին (և առասպելաբանական միևնույն հենքն

⁷⁶ ՆՀԲ, հ. I, էջ 127:

⁷⁷ ՀԱԲ, հ. I, էջ 184:

⁷⁸ ՀԼՊՆԺ, էջ 412:

⁷⁹ Նույնը:

⁸⁰ Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 35:

⁸¹ Ե. Լ. ալ ալ ա ն, Երկեր, հ. I, Եր., 1983, էջ 168:

⁸² Ա. Ղ. ա ն ա լ ա ն յ ա ն, Ավանդապատում, Եր., 1969, էջ 247-248:

⁸³ Б. П и о т р о в с к и й, Искусство Урарту. VIII-VI вв. до н.э., Л., 1962, с. 102, рис. 66.

⁸⁴ И. Пь я н к о в, Бактрийский гриф в античной литературе, "История и культура народов Средней Азии", М., 1976, стр. 19-20, 22.


⁸⁵ Նույն տեղում, էջ 21:

⁸⁶ Նույն տեղում, էջ 24:

ունեցող) կերպարները ևս՝ մանավանդ, երբ նրանք պատկերված են լինում արևի որևէ խորհրդանիշի շրջապատում, ինչպես է, օրինակ, Գյումրուց հայտնաբերված ուրարտական գոտու բեկորին (նկար 2):⁸⁷ Եվ դա բնական է, որովհետև հնագույն ժամանակներից Հայաստանը պատկերացվել է իբրև արևի բնակության վայր և հանգատարան:⁸⁸



նկ. 1



նկ. 2

Անգղների պաշտամունքի հետ կապի մեջ է նաև հին հայոց առասպելաբանության ուշագրավ կերպարներից մեկը՝ Տորքը, որը կրում էր *Անգեղեայ* մակդիրը: Ըստ Մովսես Խորենացու, Վաղարշակ արքան «լիթխարի հասակաւ եւ ուժով» աչքի ընկած Տորքին «հաստատեւ կուսակալ արեւմտից. եւ երեսացն անախտանութենե կոչէ զանուն ազգին *Անգեղ տուն*»: Բայց պատմահայրը ասում է նաև, որ Տորքը փորագրում էր «եղընգամբք իւրով *արծուիս եւ այլս այսպիսիս*»:⁸⁹ Եթե Հայկական Տավրոս լեռնաշղթայում, Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանում առասպելաբանված գիշատիչ թռչունի պաշտամունքի մասին խոսում են Տորքի *Անգեղեայ* մակդիրն ու նրա աշխարհագրական միջավայրի *Անգեղտուն* և *Անգղ* տեղանունները, ապա Արևելյան Տիգրիսի ակունքների շրջանում մույնպիսի պաշտամունքի երբեմնի գոյության մասին խոսում են Արծրունի տոհմի ծագման ավանդությունն ու նրա տիրության աշխարհագրական միջավայրը: Մեր պատմահայրը գրում է. «Եւ զԱրծրունիս զհետն ոչ Արծրունիս, այլ *արծուի* ունիս, որք արծուիս առաջի նորա (արքայի) կրէին: Թողում զառասպելացն բաջադանս, որ ի Հաղամակերտին պատմին. մանկան ճիբիելոյ անձրեւ եւ արեւ հակառակեալ, եւ հովանի *թռչնոյ* պատանոյն թալկացելոյ»:⁹⁰ Մ.Արեղյանը նշել է, որ խոսքը առասպելաբանական-հեքիաթային այն հերոսի մասին է, որ սպանելով արծվի (զմուռք հավքի) ձագերին պատուհասած վիշապ-օձին, նրանց մոր միջոցով Այն (Մութ) աշխարհից ելնում է Այս (Լույս) աշխարհ»:⁹¹ Այս առումով ուշագրավ է Արծրունիների ուստան Աղբակի հարավային հարևան Կորճայք մահանգի անունը: Անկասկած, հետագայում նահանգին անցած *Կորճայք* անունը նախապես եղել է նրա հնագույն բնակիչների անվանումը, որոնք այդպես կոչվել են իրենց տոտեն կորճի անունով. *Կորճայք* < **կորճ-այ-ք*: Այս առումով ուշագրավ է նաև Աղբակից արևելք գտնվող Դուշմանա լեռների (Վասպուրականի կամ Կոտուրի լեռնաշղթան) հսկա արծվամարդու մասին պատմված ավանդազրույցը:⁹² Իսկ այդ լեռների արևմտյան լանջերին էր նախկինում *Կրճունիք* կոչված գավառը: Այս գավառի անունը ևս տոտենական ծագում ունեցող նախկին տոհմանուն է. *Կրճունիք* < **Կուրճ-ունի-ք* (հմմտ. *Խոռխորունիք*, *Բզնունիք*, *Ռշտունիք* և այլն): Նույն տոհմական մեկ այլ տարբերակն է ընկած մինչև 20-րդ դարի սկզբները

⁸⁷ Т. Х а ч а т р я н, Древняя культура Ширака III-I тыс. до н.э., Ер., 1975, стр. 19, рис. 3 (մտավոր վերականգնումը Մ. Պետրոսյանի և Լ. Մինասյանի):

⁸⁸ Մ. Հ մ ա յ ա կ յ ա ն, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 46, Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 16-19:

⁸⁹ Մովսիսի Խորենացույ պատմութիւն Հայոց, Եր., 1981, Բ, ք:

⁹⁰ Նույն տեղում, Բ, է:

⁹¹ Մ. Ա բ ե ղ յ ա ն, Երկեր, հ. I, Եր., 1966, էջ 385:

⁹² Բ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1956, էջ 326:

այստեղ գոյատևած Կուրջան գյուղի անվան հիմքում:⁹³ *Կուրջան* < *կուրճ-ան (տեղանվան -ան բաղադրիչի համար հմնտ. *Գերջան, Երեսան, Մեսան* և այլն): Հայերենում *կորճ* բառի *կուրճ տարբերակի երբեմնի գոյությունը հաստատվում է հայերենից փոխառյալ վրացերեն *դ'ուրճի* «մի տեսակ թռչուն է, ցին»⁹⁴ բառի միջոցով:

Հին հայոց առասպելաբանական պատկերացումներում կորճ/անգղների և նրանց հետևորդ մարդամարմին առասպելական էակների ինչպես զանձների պահապաններ, այնպես էլ Հայոց դրախտավայր բերող տավրոսյան լեռնանցքների հսկիչներ ըմբռնվելու տեսանկյունից ուշագրավ է, որ Միջագետքի հնագույն բնակիչները Հայկական Տավրոսը և նրան հարող Կիլիկյան Տավրոսի հատվածը կոչում էին «Արծաթի լեռներ»:⁹⁵ Այսպիսով, հաստատված կարելի է համարել, որ «Գիլգամեշ» դյուցազնավեպի մեզ հասած օրինակում քյուրիմացաբար «կարիճ-մարդիկ» համարված էակները Հայկական լեռնաշխարհի՝ «Արևի երկրի», «Գրախտավայրի» պահապան կորճ-մարդիկ//անգղ-մարդիկ ըմբռնված առասպելական էակներն են եղել: Ինչպես Գիլգամեշի տեսած առյուծները ներքևից,⁹⁶ այնպես էլ նրանք վերևից՝ Հայկական Տավրոսի բարձունքներից, «ամեն օր արևին ելին ու մուտքին կը հսկեին», «կը հսկեին արևածագեն մինչև արևմուտ» և լեռնանցքներին մուտեցողների վրա «լեռան ոտքեն մինչև գլուխը սարսափ և մահ կը սփռեին»:⁹⁷

ИНДОЕВРОПЕЙСКО-АРМЯНСКИЙ КОМПОНЕНТ В ГЕРОИЧЕСКОМ ЭПОСЕ “ГИЛЬГАМЕШ”

___ Резюме ___

___ С. Петросян ___

Анализ месопотамского эпоса “Гильгамеш” показывает, что в нем наличествуют три разнородных компонента-шумерский, аккадский и индоевропейский. Об индоевропейском компоненте в “Гильгамеше” свидетельствует ряд фактов, наиболее яркими из которых являются следующие.

1. Географические названия Mašû//Masu и Tilmun//Dilmun индоевропейско-армянского происхождения. Masu ср. с первыми компонентами оронимов Մաշի, Մաշիք, Masius (<и.-е. *mṣ-s-//*mṣ-t- “гора” <*men- “возвышаться”). В топониме Tilmun наличествуют основа *Tilm- (ср. տիլմ “ил, тина” <и.-е. *stēl-) и суффикс -un//մն.

2. Индоевропейско-армянскую этимологию имеют также теонимы Siduri, Uršanabi, Silili. Теоним Siduri <*Sir-dur-, где *sir- < и.-е. *ǵer- “por” >” полумесяц” (ср. *սիրամ* “разношерстный вол, пестрая корова”), а *dur- ср. դրմ “дверь”. Теоним Uršanabi <*Orsa-nau-, т.к. клинописн. u//o, š//s, b//u. Здесь *Ors- является прототипом арм. ուր//ուրշ “ива” (ср. урартск. Rusa//Ursa//*Urša), а компонент *nau//նա “судно, корабль”. Теоним Silili <*Sil-il-, где корень *Sil- (<и.-е. *(s) ǵel- “скакать”, ср. սլլ ձի “вспугнутая лошадь”), а компонент -il- суффикс (ср. բորեղ, մաթիլ, քշիլ и т.д.).

3. Мифологические миксантропические образы полулюдей-полугрифов (а не полулюдей-полускорпионов) в эпосе “Гильгамеш” происходят из армянского фольклора. Прототипы их олицетворяли планету Венера (арм. Арусяк) в одном случае до восхода солнца (ср. арм. Лусабер), а в другом – после его захода (ср. арм. Гишеравар).

⁹³ Մ. Երեսան, *նշվ. աշխ.*, էջ 61:

⁹⁴ ՀԱԲ, հ. II, էջ 652:

⁹⁵ В. С т р у в е, *История Древнего Востока, Л., 1941, стр. 239; В. Авдиев, История Древнего Востока, М., 1953, стр. 66.*

⁹⁶ Մ. Պետրոսյան, *Անձամի տրարտական վահանի առյուծների գույգը, «Պատմա-բանասիրական հանդես», 2007, թիվ 1, էջ 263, 267-269: Հմնտ. կիլիկյան Լեռնաբերդի (Լեռնկլա) մուտքի բարձրաբանակի գույգ առյուծները՝ պատկերված Լեռն բազալտից ձախ և աջ:*

⁹⁷ Գիլգամեշ, էջ 73-74:

ԵՐՎԱՆԴՈՒՆՅԱՅ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ՀԱՅՈՑ ՎԵՐՁԻՆ ԶՐՄԱՊԵՏԸ

Արմավիրի հունարեն արձանագրությունից պարզվում է, որ մ.թ.ա. Սեդրի վերջին Արմավիր սրբավայր-քաղաքի գլխավոր քուրմը գլխավորել է նաև արմավիրցիների քաղաքային համայնքը: Իսկ դա, ըստ Գ.Մարգարյանի, խոսում է այն մասին, որ Արմավիրում գոյություն է ունեցել այնպիսի քաղաքային-տաճարային համայնք, ինչպիսիք կային նաև Փոքր Ասիայում, Բաբելոնում և Պաղեստինում:¹ Երբ նկատի ենք առնում, որ Արմավիրի գլխավոր քուրմը նաև Հայոց քրմապետն էր, ապա հասկանալի է դառնում այն կարևոր դերը, որ նա ունեցել է երկրի կյանքում, որովհետև հայոց քրմապետը ուներ նաև գլխավոր դատավորի, զորավարական, հավանաբար, նաև արտաքին հարաբերությունները կարգավորող գործառնություններ:² Բայց նա ոչ միայն այդ բնագավառների, այլև երկրի տնտեսության կարևոր դեմքերից մեկն էր, որովհետև նրա ենթակայության տակ էին երկրի բազմաթիվ տաճարները և տաճարային տնտեսությունները, իսկ դրանք ունեին հողային ընդարձակ տիրույթներ և դրանցում աշխատող բազմահազար ծառաներ:³

Եթե Հայոց քրմապետի իշխանությունը զաղափարախոսության բնագավառից բացի երկրում ուներ նաև իր իրավական, ռազմական և տնտեսական ամուր հենարանները, ապա հասկանալի է, թե ինչքան մեծ էր լինելու նրա կշիռը երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Մ.թ.ա. III դարի վերջին տասնամյակներին և II դարի առաջին տասնամյակին Հայոց քրմապետը արքաեղբայր Երվազն էր:⁴ Ըստ Մովսես Խորենացու, Երվազը Վերջին թագավորը (մ.թ.ա. 222-201թթ.), երկրի նոր մայրաքաղաք Երվանդաշատի շինությունն ավարտելով, «նրանից հյուսիս, մոտ քառասուն ասպարեզ հեռու, Ախուրյան գետի վրա, շինեց մի փոքր քաղաք նման իր քաղաքին և կոչեց Բագարան, այսինքն թե բազմներն այնտեղ են սարքավորված, և այնտեղ փոխադրեց Արմավիրում եղած բոլոր կոտորերը: Շինեց նաև մեծանուններ և իր Երվազ եղբորը քրմապետ նշանակեց»:⁵

Երկրի հասարակական-քաղաքական կյանքում Երվազ քրմապետի մեծ դեր ունենալու հետ ուղղակի կապի մեջ էր նրա կրած «թագավոր» տիտղոսը՝ հունարեն βασιλεύς: Իր Միթրաս (Միհր) գահանվամբ և *բասիլևս* տիտղոսով է նա ներկայանում Արմավիրի թիվ 4 արձանագրության մեջ: Այս արձանագրությունն ուսումնասիրած Ա.Ի. Բոլտունովան կարծում էր, որ այնտեղ հիշատակված Միթրասը Արտաշես 1-ինն է, իսկ նրա նամակի հասցեատեր Էրրոնտեսը ինչ-որ տեղական թագավոր:⁶ Ա. Բոկչյանինը ավելի առաջ է գնում և տեղական այդ թագավորին դարձնում է Կողքիսի (Կոլխիդա) թագավոր:⁷ Հ.Մանանդյանը ցույց տվեց, որ թագավոր Միթրասն Արմավիրում նստած քրմապետ Երվազն էր, իսկ Էրրոնտեսը՝ Հայոց թագավոր Երվանդը:⁸ Երվազ քրմապետը նստում էր Արմավիրում, որովհետև «Երվանդյանների թագավորության կրոնական կենտրոն մնում էր դարձյալ Արմավիրը»:⁹ Հայոց քրմապետի Միթրաս գահանունը ցույց է տալիս, որ քրմապետը թագավորի նման նաև աստվածացվում էր և նույնացվում այս

¹ Г. С а р к и с я н, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960, стр. 41.

² Մ. Կրկյաշյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Եր., 1970, էջ 154-155, 158:

³ Նույն տեղում, էջ 139-140:

⁴ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհարար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Եր., 1981, Բ, խ, Բ, խր:

⁵ Նույն տեղում, Բ, խ:

⁶ А. Б о л т у н о в а, Греческие надписи Армавира, Арմֆանի «Տեղեկագիր», 1942, թիվ 1-2, էջ 50-51:

⁷ А. Б о к ч я н и н, Парфия и Рим, М., 1960, стр. 224.

⁸ Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Եր., 1946, էջ 18-19, 29:

⁹ Նույն տեղում, էջ 15:

կամ այն, իսկ Երվազի դեպքում՝ Միթրա/Միիր աստծու հետ:¹⁰ Ս.Կրկյաշարյանը համաձայն լինելով Հ.Մանանդյանի հետ, զուգահեռ է անցկացնում Երվազի քրմապետական և Տրդատ քաղաքի արքայական գահանունների միջև: Նա գրում է. «Արմավիրի արձանագրության մեջ քրմապետ-քաղաքը կոչվում է ΜΙΘΡΑΣ, այն է արևի աստվածության անունով, իսկ Գառնիի արձանագրության մեջ Տրդատ քաղաքը, որը... միաժամանակ քուրմ էր, իրեն անվանում է ΗΛΙΟΣ ΤΙΡΙΑΤΗΣ: Մնում է ենթադրել, որ ΗΛΙΟΣ (հուն. «Արև»-Լ.Պ.) դա նրա տիտղոսն է կամ հավելյալ անունը իբրև քրմի, իսկ ΤΙΡΙΑΤΗΣ նրա անձնական քաղաքական անունը»:¹¹ Ուրեմն, Երվազ քրմապետը իր *Երուսազ* անունը կրում էր որպես Երվանդունի արքայատոհմի ներկայացուցիչ, որպես անձնական անուն, իսկ որպես Հայոց քրմապետ և կրոնական կենտրոն Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավար նա հայտնի էր Միթրաս գահանվամբ:

Երվանդ քաղաքի և Երվազ քրմապետի փոխհարաբերությունների ջերմ լինելու մասին է վկայում ինչպես քրմապետական նոր նստավայր Բագարանի կառուցման գործում քաղաքի խաղացած առաջնային դերը, այնպես էլ հետևյալ փաստը: Երվանդ-Արտաշես առճակատման առաջին փուլը ավարտվել էր քաղաքի օգտին՝ գահի հավակնորդ Արտաշեսի Մեծ Հայքից վտարումով:¹² Վերջինս ապաստան էր գտել սելևկյան արքունիքում: Թագավոր եղբոր հաջողությունից ոգևորված Երվազ-Միթրասը հիշյալ արձանագրությունն էր գրել տվել, որտեղ բարիքներ էր մաղթում Երվանդ-Էրբունես քաղաքին: Այդ արձանագրությունը Ա. Բոլտունովան համարում է հելլենիստական նամակի սովորական ձև:¹³ շատ նման հելլենիստական Արևելքում հայտնաբերվածներին:¹⁴

Նորակառույց Բագարանը, բնականաբար, Հայոց քրմապետի համար չէր կարող փոխարինել մայրաքաղաք-սրբավայր Արմավիրին, որի քաղաքացիական-տաճարային համայնքի գլուխ նա ինքն էր կանգնած: Բագարանը կարող էր նրան միայն ամառանոց-նստավայր ծառայել, քանի որ Արարատյան դաշտի ամառային տապը երբեմն դառնում էր անտանելի: Բագարանից հյուսիս՝ Շիրակում, Ախուրյան-Կարսաչայի և Ախուրյան-Արփաչայի գետախառնի շրջանում գտնվում էր Երազավորս բնակավայրը: Նրա անունն ուղղակի կապի մեջ է Երվազ քրմապետի անվան հետ: Ս. Երեմյանի կարծիքով, «*Երազավորս* անունը պիտի առաջ եկած լինի *Երուսազ* անունից, որը Երուանդունիների տոհմական անունն էր»:¹⁵ Ըստ այսմ, մինչև Բագարանի կառուցումը Երազավորսը կարող էր լինել Երվազ քրմապետի ամառանոց-նստավայրը:

Մովսես Խորենացին Երվանդ քաղաքի բանակում գտնված Վրաց Փարսման քաղաքի գործի ընդհարում-փախուստը նկարագրելուց հետո շարունակում է այսպես. «Այդտեղ Երվանդի զունը և Միջագետքի գործերը սարսափելի կոտորած կրեցին»:¹⁶ Սրան անմիջապես հաջորդում է հետևյալը. «Երկու ճակատներն իրար խառնվելիս Արտաշեսի դեմ են գալիս տավրոսի քաջ մարդիկ, որոնք մահն աչքերն առած՝ Երվանդին խոստացել էին, թե Արտաշեսին կսպանեն»:¹⁷ Հասկանալի է, որ «Երվանդի զունը» կամ նրա մի մասը նույն «տավրոսի քաջ մարդիկ էին»: Կարծում ենք, որ հիշատակված «վրաց» գործը ևս բարձր կարգավիճակ ունեցող զորամաս է եղել և

¹⁰ Նույն կերպ Աստիս աստծու անունն էր կրում մ.թ.ա. 2-րդ դարի առաջին կեսին ապրած Գալատիայի քրմապետը (նստավայրն էր Պեսիմունտ սրբավայր-քաղաքը՝ մայր դիցուհի Կյուբելեի պաշտամունքով): Տե՛ս Ս.Կրկյաշարյան, նշվ. աշխ., էջ 133, 158:

¹¹ Նույն տեղում, էջ 139:

¹² Խ ո ռ է ն ա գ ի, Բ, լ::

¹³ А. Б о л т у н о в а, նշվ. աշխ., էջ 50:

¹⁴ Ս. Կրկյաշարյան, նշվ. աշխ., էջ 134:

¹⁵ Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 74: Ս. Պետրոսյան, Լ. Պետրոսյան, Տիգրիս ամրոցի դերը համալիր շինությունների եռյակում, «ՇՊՄԺ հանրապետական 4-րդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ», Գյումրի, 2000, էջ 30-32:

¹⁶ Խ ո ռ է ն ա գ ի, Բ, խգ: Ս. Պետրոսյանի կարծիքով, «Վրաց Փարսման քաղաքը» այս դրվագում հանդես է եկել Երվազ քրմապետ-քաղաքի փոխարեն՝ թյուրիմացության հետևանքով (Ս. Պետրոսյան, Եռադասության մի դրսևորում Ուրարտուի զինված ուժերում, «ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու», նվիրվում է ՀՀ անկախության 15-ամյակին, Գյումրի, 2007, էջ 195-196):

¹⁷ Խ ո ռ է ն ա գ ի, Բ, խգ:

հրամանատար է ունեցել Երվազ քրմապետին (հմմտ. հետագայի մարդպետին և Մարդպետական հեծելազորը): Նրա հրամանատարը չէր կարող Մեծ Հայքի հարևան որևէ երկրի թագավոր լինել, որովհետև Մեծ Հայքի հարևանները կան Սելևկյան պետության ենթակա-դաշնակիցներն էին (Վիրք, Ատրպատական), կան վերածվել էին սելևկյան ստրատեգիաների (Փոքր Հայք, Օռփք, Կոմագենե): Նրանց գործառնաբերը կարող էին գտնվել ոչ թե Երվանդ Վերջինի բանակում, այլ նրա հակառակորդ և Անտիոքոս 3-րդի հովանավորյալ Արտաշեսի բանակում: Քանի որ Երվազը Արմավիրի հունարեն արձանագրության Միթրաս թագավորն էր, բնակամաքար, նրա գործը կազմած մարտիկները կարող էին լինել հայկական այն շրջանից, որը գտնվում էր Ախուրյանի ավազանում՝ Երվազի անունը կրող Երազավորսը և նրա նստավայր Բագարանը ներառյալ:

Երվանդավանի ճակատամարտում Երվանդի և Երվազի կրած պարտությունից հետո Երվազը չէր կարող վերադառնալ Արմավիր, մանավանդ որ մինչև Արտաշատի կառուցումը այնտեղ էր նստելու Արտաշեսը: Ըստ երևույթին, նա քաշվել էր Բագարան: Ինչպիսի՞ կարգավիճակ կարող էր ունենալ Երվազը իր Երվանդ եղբոր սպանությունից հետո: Բնականաբար, ոչ նախկինը: Նա գրկված էր լինելու Արմավիրի համայնքապետի պաշտոնից, բայց շարունակելու էր համարվել Հայոց քրմապետ: Ըստ երևույթին, Երվազը հույս ուներ, որ կերաշխավորվեր իր անձեռնմխելիությունը (այնպես, ինչպես Արգամիհը),¹⁸ մանավանդ որ Հայոց քրմապետը սուրբ մարդ էր համարվում: Երվազը ինչ-որ չափով կարող էր իրեն ապահով զգալ, երբ տեղեկացել էր, որ Արտաշեսը ի նկատի առնելով Երվանդի արքայական ծագումը և նրա հետ իր ունեցած ազգակցական կապը, հրամայել էր նրա դին «թաղել և մահարձան դնել»:¹⁹ Երվազն, ըստ երևույթին, քրմապետ էր մնացել նաև այն ժամանակ, երբ Արտաշեսը թագադրվել էր և դարձել թագավոր,²⁰ այսինքն՝ Երվանդի մահից 12 տարի անց նա դեռևս ողջ էր: Միայն թագադրվելուց հետո Արտաշեսը «հրամայում է Սմբատին գնալ Բագարան ամրոցը, որ Ախուրյան գետի վրա էր, Երվանդի քաղաքին մոտ, և սպանել Երվանդի եղբորը՝ Երվազին: Սմբատը նրան բռնելով, հրամայում է նրա շինքից մի երկամաքար կապել և նետել գետի մի պտույտի մեջ: Նրա տեղ բազմիցների վրա նշանակում է մի երազահան մոզի աշակերտի, որ մտերիմ էր Արտաշեսին, որին այդ պատճառով Մոզպաշտե էին ասում: Հետո ավար է առնում Երվազի գանձերը և հինգ հարյուր հոգի ծառաներ... Սմբատը Երվազի ծառաներին, որ գերել էր Բագարանից, տանում բնակեցնում է Մասիսի թիկունքում (իր) ձեռակերտում, որը միևնույն անունով կոչեց Բագարան»:²¹ Ուրեմն, Երվանդունի արքայատոհմի վերջին ներկայացուցիչ Հայոց քրմապետ Երվազը ևս բռնությամբ հեռացվեց քաղաքական ասպարեզից: Նրա փոխարեն Բագարանում Սմբատի նշանակած Մոզպաշտեն տեղական նշանակության հոգևոր առաջնորդ էր միայն: Հայոց քրմապետի պաշտոնը, ըստ երևույթին, ստանձնել էր թագավորն ինքը՝ Արտաշես I-ը: Դրա վկայությունը պետք է համարել պաշտամունքի բնագավառում նրա իրագործած բարեփոխումները և կրած պատվանունը՝ *Բարի* կամ *Բարեսպաշտ*:²²

Յուրօրինակ էր Երվազի սպանության ձևը: Սմբատ Բագարանունին նրա վզից երկանքի ծանր քար կապել տալով, նրան նետել էր տվել Ախուրյանի ջրապտույտներից մեկը: Երվազի մահապատժի այս ձևը ուղղակի կապ ուներ նրա քրմապետական պաշտոնի և *Միթրաս* գահանվան հետ: Քրմապետը սուրբ անձ էր համարվում, հետևաբար, նրա արյունը թափել չէր կարելի: Հայտնի է, որ նրա *Միթրաս* գահանունը հունականացած ձևն է *Միթրա*//*Միհր* դիցանվան: Վերջինս վկան է Երվազի աստվածացման և Արևի աստծու հետ նույնացված լինելու իրողության: Հնդեվրոպական ժողովուրդների հնագույն առասպելաբանական պատկերացումների համաձայն, արևը ծնվում էր ծովում, արևածագին ելնում էր ծովից և երկնականարով իր օրապտույտն ավարտելուց հետո գնում էր մայրամուտին հանգստանալու ծովում կամ առհասարակ ջրային տա-

¹⁸ *Ի տրեց ի, Բ, ծա:*

¹⁹ *Նույն տեղում, Բ, խզ:*

²⁰ *Նույն տեղում, Բ, խտ:*

²¹ *Նույն տեղում, Բ, խը:*

²² *Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳՄ հրատ., հ. I, Եր., 1971, էջ 670:*

րերքում:²³ Այս առասպելի հետքերն առկա են հայ բանահյուսության տարբեր ժանրերում՝ «Վահագնի երգ»-ից սկսած մինչև ժողովրդական հեքիաթներ:²⁴ Սմբատ Բագրատունին «Արև»-Երվազին՝ Միթրաս քրմապետին, ուղարկել էր, բայց անվերադարձ, իրեն ծնած տարեքրի գիրկը:

Հելլենիստական աշխարհի երկրներում քիչ չեն եղել այնպիսի դեպքերը, երբ իրենց դատարկված գանձարանները օգնելու մտադրությամբ, և տաճարների հարստությամբ զայթակրված, թագավորները բռնագրավումների են դիմել:²⁵ Ինչպես տեսանք, Երվազ քրմապետի 500 ծառաներին Սմբատ Բագրատունին որպես պարզ էր ստացել: Մակայն, Երվազն ուներ նաև գանձեր, որոնք ուղղակի կողոպուտի մատնվեցին: Ահա Մովսես Խորենացու համապատասխան հաղորդումը. Սմբատը «ավար է առնում Երվազի գանձերը և հինգ հարյուր հոգի ծառաներ, նաև մեծանների գանձերից ընտիրները և բերում է Արտաշեսին: Արտաշեսը Սմբատին է պարզում Երվազի ծառաները, իսկ գանձերը հրամայում է տանել Պարսից Դարեհ թագավորին (իրականում Մելիկյան Անտիոքոս 3-րդին- Լ. Պ.)՝ իր գանձերից էլ վրան ավելացնելով»:²⁶ Այս դեպքում Երվազի գանձերի կողոպուտը կարող էր տեղի ունեցած լինել ավելի վաղ, ուղեկցվել Երվազի տիրույթների բռնագրավումով, այսինքն՝ նախորդել նրա սպանությանը: Այդպես ենք մտածում հիմք ընդունելով Երվանդ Վերջինի՝ մյուս բարձր պաշտոնյայի նկատմամբ Արտաշեսի և նրա որդիների ցուցաբերած վերաբերմունքը: Խոսքը Արգամի մասին է: Ըստ Մովսես Խորենացու, Արգամի գույքի առաջին բռնագրավումից հետո Արտաշեսը «երկու տարի հետո (Արգամին) նորից հնազանդության բերելով՝ հրամայում է նրա գույքը վերադարձնել, բացի հարճից: Իսկ Արտավազը (Հայոց թագաժառանգը – Լ. Պ.) չբավականանալով նրանով, որ երկրորդության պատիվն առել էր նրանցից, խլում է նաև Նախճավանը և բոլոր գյուղերը Երասխից դեպի հյուսիս, և նրանց մեջ եղած ապարանքներն ու բերդերը իրեն ժառանգություն է դարձնում: Արգամի որդիներն այս բանին չհամբերելով՝ նրան դիմադրում են, բայց արքայորդին հաղթելով, կոտորում է Արգամի բոլոր զավակներն իրենց հոր հետ, ինչպես և բոլոր երևելի մարդկանց Մուրացյան ցեղից, և գրավում է նրանց գյուղերը և նրանց բոլոր իշխանությունը»:²⁷

Հին քրմության դեմ ուղղված Արտաշեսի գործողությունները շարունակել են նաև նրա հաջորդները: Արտաշեսի որդի Տիգրան Միջինի (պատմական Տիգրան Մեծի) վերաբերյալ Մովսես Խորենացին գրում է, որ նա «զայրանալով Վահունիների վրա, որոնք իրենց սեփական (գյուղում) համարձակվել էին կանգնեցնել իր հոր ուղարկած Հերակլեսի արձանը, գրկում է քրմության (պաշտոնից) և արքունիք է գրավում այն գյուղը, որտեղ արձանները դրվել էին»:²⁸ Երվազի Շիրակ-Արշարունիքի քրմապատկան տիրույթները, անկասկած, բռնագրավվել էին և վերածվել թագավորապատկան տիրույթների: Հայտնի է, որ Արշարունիք գավառը (այստեղ էր գտնվում Բագարանը) և Շիրակ գավառը (այստեղ էր գտնվում Երվազ քրմապետի անունը կրող Երագավառը) մինչև Տրդատ III-ի կողմից Կամսարական նախարարական տոհմին շնորհելը արքունի տիրույթներ էին:²⁹

Այսպիսով, Երվանդավանի ճակատամարտում Երվանդ Վերջինի ու Երվազ քրմապետի կրած պարտությունը և նրանց սպանությունը հանգեցրին Երվանդունի արքայատոհմի գահակալման ընդհատմանը և նրա փոխարինմանը մի նոր, առավել հզոր Արտաշիսյան արքայատոհմով: Երվանդի սպանությունը նախերգանքն էր Երվազի ու Արգամի վախճանի: Իսկ նրանց հետ միասին պատմության գիրկն անցան պետական այնպիսի բարձր պաշտոններ, ինչպիսիք էին Հայոց քրմապետ-«թագավորինը» և «երկրորդական գահի» տիրոջը:

²³ Օ. Г е р н и, Хетты, М., 1987, стр. 125; Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тб., 1984, стр. 896.

²⁴ Խ ո ռ ե ն ա ճ ի, Ա լ ա: Գ. Սրվանձաթյանց, Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 494: Ս. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 46:

²⁵ Ս. Կ Ր Կ Յ ա շ ա ը յ ա ն, նշվ. աշխ., էջ 143, ծան. 50:

²⁶ Խ ո ռ ե ն ա ճ ի, Բ, խոսք:

²⁷ Նույն տեղում, Բ, ծա:

²⁸ Նույն տեղում, Բ, ժո:

²⁹ Նույն տեղում, Բ, խոսք, Բ, դ:

ПОСЛЕДНИЙ ВЕРХОВНЫЙ ЖРЕЦ ЭПОХИ ЕРВАНДИДОВ

___ Резюме ___

___ Л. Петросян ___

По Мовсесу Хоренци, последний царь Ервандидской Армении Ерванд (222-201гг. до н.э.), на берегу реки Ахурян построил город Багаран и там назначил верховным жрецом Армении своего брата Ерваза. При помощи Селевкида Антиоха III, Арташес начал против Ерванда войну. Решающее сражение произошло в гаваре Ширак у Ервандавана, на расстоянии трехсот стадий (аспарез) к северу от столичного города Ервандашата.

Во время битвы (201г. до н.э.) многие из воинов армии Ерванда либо отошли в сторону, либо присоединились к противнику. Против врага мужественно сражались только “храбрые мужи-таврцы” и воины “месопотамцы” (Միջագետքացիներ). Первые из них составляли ядро “Ервандова полка”, предводителем которого был сам царь, а вторые, по нашему мнению, были представителями не общеизвестной Месопотамии (междуречье Тигра и Евфрата), а междуречья Ахуряна и Аракса. Значит, предводителем вторых был верховный жрец Ерваз. Армия Ерванда потерпела поражение. Ерванд бежал в Ервандашат, где и был убит. Ерваз остался в живых.

После воцарения (189г. до н.э.) Арташес велит своему полководцу Смбату отправиться в Багаран и предать смерти Ерваза. Так как он был верховным жрецом Армении, Смбат приказывает не проливать его крови, а привязать к его шее жернов и заживо бросить в водоворот Ахуряна.

Տ. Հովնան արեղա ՀԱԿՈՒՅԱՆ

ՄԻ ԲԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՐԱԽՎԼԵՑԻ

«ԹՈՆԴՐԱԿՅԱՆՆԵՐԻ» ԱՂԱՆԴԱՊԵՏԻ ԱՆՉԻ ՇՈՒՐՉ

«... յուսանք առ Աստուած, զի փրկեսցէ զմեզ հանդերձ մերով զարմիւ յայսպիսի դիւական եւ մոլեգնեալ հաղրից եւ խմորեալ զանգուածոյ Սաղուկեցոցն...»
Գրիգոր Մագիստրոս Պահլավունի, «Թղթեր»

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին իր 1700-ամյա պատմության ընթացքում ստիպված է եղել դիմակայել տնաբույս կամ էլ դրսից ներմուծված բազմաթիվ աղանդների ու «նորահայտ փրկիչների» հարձակումներին: Այսօր էլ բազմաթիվ կեղծ քարոզիչներ ու աղանդավորներ փորձում են շնագայլերի պես սողոսկել մեր եկեղեցու հոտը՝ հոշոտելու, զամբիացնելու և անդամ զանգված դարձնելու այն, ուստի կարևոր ենք համարում ոչ վաղ անցյալ դեպքերին անդրադարձը և աղանդապետի անձի հետ կապված առեղծվածի քննարկումը սույն հոդվածում:

Շիրակի Արախվի (այժմ՝ Փոքր Մանթաշ) գյուղում 1837թ. հայտնաբերվեց աղանդավորների մի խումբ, որն իրեն «թոնդրակյան» էր հորջորջում: Ս.Էջմիածնի նորաստեղծ Սինոդը Հայոց հայրապետի միջոտրոթյամբ դիմում է Կովկասի կառավարչապետ բարոն Ռոզենին՝ միջոցներ ձեռնարկելու սրանց նկատմամբ: Հետաքննությունը պարզում է, որ սույն աղանդավորները Արևելյան Հայաստան էին ներգաղթել Խնուսի գավառի Չևյուրմե (կամ Չևիրմե) գյուղից, որտեղ ժամանակին ակտիվ քարոզչությամբ էր զբաղվել հայտնի արկածախնդիր և ուրացող Հովհաննես երեց կոչեցյալը, որին համարում են «Բանալի ճշմարտության» «կատեխիզիսի» հեղինակ: Այս թղթումը հետաքրքրել է ոչ միայն հայ հետազոտողներին (Աղ. Երիցյանց,¹ Բ. Սարգիսյանց² Կ. Տեր-Սկրտչյան,³ Գ. Գյուլամիրյան⁴), այլև օտարներին՝ գերմանացի հայագետ Շայդվայլերին⁵ և անգլիացի Ֆ. Կոնիքերին:⁶ XXդ. թեմային անդրադարձել է նաև հայ անվանի պատմաբան Վ. Գրիգորյանը⁷ քննելով «կատեխիզիսի» հեղինակի անձի հարցը: Խնուսցի աղանդավորների և բողոքականության կապը մակերեսորեն, բայց հետաքրքիր քննության է առել սփյուռքահայ ժողովրդագիր-պատմաբան Ե. Մելիքյանը:⁸

Կարծիքները այս աղանդավորների խմբի և նրա աղանդապետի վերաբերյալ այնքան հակասական են ու իրարամերժ, որ ժամանակագրական առումով, օրինակ, տատանվում են սբ. Գրիգոր Լուսավորչից (Դ դար) (Կոնիքեր) մինչև ԺԸ դարերը (Աղ. Երիցյանց): Բողոքական զանազան խմբավորումներին չափազանց ոգևորել էր Հովհաննես չերեցի անձը, և սրանք փորձում էին ամեն կերպ լուսապսակ դնել հայտնի արկածախնդրի և ուրացողի գլխին, միևնույն ժամանակ ամեն կերպ «հնացնելով» թոնդրակեցիների հետ կապելով աղանդի գոյության արմատները: Նույնպիսի, բայց հակառակ մատերիալիստական աստվածամերժ դիրքերից էին հանդես գալիս խորհրդային հետազոտողները, որոնք «Բանալի ճշմարտության»-ը քննում էին որպես «սոցիալական ընդվզման» ձևերից մեկը ընդդեմ «հոգևոր ֆեոդալ ու ժողովրդական զանգված-

¹ Աղ. Երիցյանց, Թոնդրակեցի հայք մեր օրերում, «Փորձ», Թիֆլիս, 1890, N 10:

² Բ. Սարգիսյանց, Ուսումնասիրություն մանիքեա-պատիկեան թոնդրակեցիներու աղանդին եւ Գր. Նարեկացոյ թուղթը, Վենետիկ, 1893:

³ Կ. Տեր-Սկրտչյան, Պատիկեանց եւ Թոնդրակեցոց աղանդները արդի քննադատությամբ, «Արարատ», Էջմիածին, 1900, հուլիս:

⁴ Г. Гю л а м и р я н, Тондракцы (очерк из истории религиозных движений феодальной Армении), Л., 1936.

⁵ F. S c h e i d w e i l e r, Paulikianer probleme, Byzantinische Zeitschrift, Bt.43, Köln, 1950.

⁶ The key of Truth, a manual of the Paulician church of Armenia, Fred. C. Conybeare, Oxsford, 1898.

⁷ Վ. Գրիգորյան, Նոր տեղեկություններ «Բանալի ճշմարտության» երկի հեղինակ Հովհաննես երեցի մասին, Բանբեր Մատենադարանի, Եր., 1960, N 5:

⁸ Ե. Մելիքյան, Վիճակագիր Խնուս (Հարք) գաւառի և թոնդրակեցոց աղանդին և բողոքականութեան կապը ի Խնուս, Նիւ-Եօրք, 1943:

ներին կեղեքող հայոց եկեղեցու» (Գ.Գյուլամիրյան, Հ.Գաբրիելյան և այլք): Սակայն ճշմարտությունը շատ պարզ և անբռնագրոս հարթության վրա է գտնվում հարկավ: Աղանդն ու նրա աղանդապետը ոչ մի կապ չունենին դեռևս ԺՄ դարում Գրիգոր Մագիստրոս Պահլավունու կողմից արմատախիլ արված թոնդրակեցիների հետ, և միայն սրանց անունն էր օգտագործվում, որպեսզի ինչ որ կերպ պատմական անցյալի մշուշի մեջ պարուրեին նորոյս աղանդի իբր հնագույն արմատները:

Մրանցում, ինչպես նշեցինք վերը, աղանդները դիտվում էին որպես «սոցիալական շարժումների» դրսևորումներ, և ինչ որ տեղ նաև գովերգվում էին դրանց առաջնորդների ու համայնքի անդամների հավասարարական գաղափարները, նույնիսկ սրանց են վերագրում հարևան մահմեդական գյուղերի վրա զինված հարձակումներ գործելու և վրիժառու խմբեր ստեղծելու հանգամանքը, որի մասին մշուշոտ ակնարկում է Մխիթարյան Հայր Մեհերյանը: Մի խոսքով՝ «քաջ ու հերոս» մարդիկ, որոնք պայքարում էին «ընդդեմ սոցիալական և ազգային հարստահարության»:⁹ Բանն այն է, որ ցայժմ լրիվ ապացուցված չէ աղանդավորների և աղանդապետի մասնակցությունը վերը նշված հարձակումներին, կամ եթե այդպես է, ինչ տարբերություն կա զինված դաշակական ավազակախմբերի գործունեության մեջ, երբ նրանում կարող էին հայտնվել թե՛ հավատարացները, թե՛ կեսկեսները և թե՛ աղանդավորության խոտելի վարքագիծ որդեգրած հայերը: Մի խոսքով, ազգային-ազատագրական պայքարի զինված մարտիկներ փնտրելու ճանապարհին սույն հեղինակները անշուշտ մեղանշում են պատմական ճշմարտության դեմ:

ԺԸ դարի երկրորդ կեսը փորձությունների, պատմական վայրիվերումների շրջան էր հայ ժողովրդի և Մայր եկեղեցու համար: Չանազան քաղաքական կողմնորոշումների, գաղթօջախներում ծնունդ առած տարբեր ազատագրական ծրագրերի ու արևմտյան եկեղեցիների բացահայտ էքսպանսիայի պայմաններում, կարևոր էր պահպանել հայ ժողովրդի անդորրը Արևմտյան և Արևելյան Հայաստանում, որն իրականացնում էին Մայր Աթոռ Սբ.Էջմիածինն ու նվիրապետական մյուս աթոռները: Արևմտյան եկեղեցիների միսիոներներն ու նրանց հովանավորներն ամեն միջոց գործադրում էին իրենց հոգեբարության գերխնդիրն իրականություն դարձնելու համար: Իրադրությունը բարդանում էր նաև նրանով, որ արևմտյան զանազան միսիոներները բացահայտ աջակցություն էին ստանում օսմանյան կենտրոնական և տեղական իշխանությունների կողմից: Բողոքականությունից սերված և հիդրայի պես բազմացած տարբեր աղանդներ՝ ոգևորվելով կաթոլիկ միսիոներների «հաջողված» փորձից, իրենց շոշափուկները ձգեցին դեպի Արևմտյան Հայաստանի խորքերը և պարարտ հող գտան հատկապես այն գավառներում, որտեղ արդեն իրենց քայքայիչ գործունեությանը «աչքի էին ընկել» կաթոլիկ հոգեբարները: Վերջիններիս քարոզչության թիրախ դարձել էին Էրզրումի վիսպիթի Ալաշկերտի, Բաբերդի և Խնուսի գավառները (Էալեթները):¹⁰ Այստեղ ստեղծվել էին կաթոլիկ բազմամարդ համայնքներ, որոնցից հայտնի էին Քյուլի և Մոլլասուլեյման գյուղական համայնքները,¹¹ որոնցում հավաքվել էին Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից կաթոլիկ հայեր: Դեռևս Միմեոն Երևանցի հայրապետի գահակալության տարիներին հիշյալ գյուղերի առաքելական բնակչությունը, նեղվելով կաթոլիկների բացահայտ ճնշումից և աջակցություն չստանալով տեղական թուրք և քուրդ իշխանավորներից, ստիպված էր դիմել Կ.Պոլստ պատրիարքին, որի ջանքերը սպարդյուն էին անցել:¹² Հարցն այն էր, որ ֆրանկ միսիոներները, ստանալով ֆրանսիական պետության բացահայտ աջակցությունը, փողի, կաշառքի և այլ միջոցներով գնում էին տեղական բեկերի և փաշաների «բարյացկամությունը»: Բանը հասել էր նրան, որ այնպիսի մի աննշան գյուղաքաղաքում, ինչպես Ալաշկերտն էր, թուրքական կառավարության թույլտվությամբ ԺԸ դարում սկսեց գործել ֆրանսիական հյուպատոսություն,¹³ որը դարձել էր հոգեբարության իսկական շտաբկայան:

⁹ Հ. Գ. Գյուլամիրյան, Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1975 էջ 248:

¹⁰ Ավելի մանրամասն տե՛ս Ա. Մելքոնյան, Էրզրում, պատմա-ժողովրդագրական ուսումնասիրություն, Եր., 1997:

¹¹ Նույն տեղում, էջ 69:

¹² Մ. Ասնոյան, Մշո Ձոջ քարը, Եր., 1998, էջ 36:

¹³ Ա. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 70:

Բնական էր, որ բողոքական միսիոներները, որոնք դեռևս ԺԸ դարի սկզբներին ներթափանցել էին Կ. Պոլիս, պետք է օգտվեին կաթոլիկ հոգևորսների «փորձից» և դիմեին առավել «կատարյալ» միջոցների՝ այս անգամ ժխտելով թե՛ հայ առաքելական և թե՛ կաթոլիկ եկեղեցիների դավանաբանությունը, ծպտվելով հին աղանդների քողի տակ: Մեփական ներկայությունը հիմնավորելու համար բողոքական տարբեր հոսանքները պատմական հետահայացների էին դիմում՝ հիշատակելով մեկ է դարում Հայաստանում ծնունդ առած պավլիկյաններին, որոնց հետևորդ էին համարում իրենց, մեկ էլ ԺԱ դարի թոնդրակեցիներին՝ սրանց համարելով միմյանց շարունակություն:

Օսմանյան պետության հայաշատ վիլայեթներում տիրող խառնակ իրավիճակը, տեղական քոչվոր ցեղախմբերի անօրինություններն ու ասպատակությունները, խժոժությունները զսպելու կենտրոնական կառավարության անկարողությունը հայ ժողովրդի համար ստեղծել էին կյանքի դժվարին պայմաններ:¹⁴ Ստեղծված անիշխանության պայմաններում պարարտ հող կար պղտոր ջրում ձուկ որսացողների համար, և ժողովրդի մի փոքր հատված, ենթարկվելով արևմտյան միսիոներների կաշուն հորդորներին, փրկության հույսով հեռացավ Մայր եկեղեցու ծոցից՝ ընկնելով հոգևորսների ցանցը:¹⁵ Այս ու այլ տեսակի միսիոներների թիրախ դարձան առաջին հերթին ոչ հավասարակշիռ բնավորություն և «փրկչական», «մարգարեական» մարմաջ ունեցող հիվանդոտ երևակայությամբ անձինք, որոնք դարձան գործիք վերը հիշված «հոգեփրկիչների» ձեռքին: Սրանց մեջ հատկապես աչքի էին ընկնում եկեղեցուց վտարված կամ կարգալույծ արված հոգևորականները, որոնք փորձում էին ինքնահաստատվել ուրացության պիղծ ճանապարհով միայն:

Ահավասիկ, ո՞վ էր Հովհաննես երեցը, որին հետայսու կարճ կանվանենք չերեց կամ չիք քահանա: Մույն բախտախնդրի փոթորկալից կյանքը, նրա ծննդավայրը և մահը բազմաթիվ հարցականների տեղիք են տալիս: Ցայժմ հետազոտողներից ոչ ոք, չի կարող ստույգ նշել չերեցի ծննդյան տեղը և թվականը: Նրա մասին տեղեկությունները ոչ միայն կցկտուր են, այլև հակասական, քանի որ 1838-1839թթ. ձերբակալված աղանդավոր արախվացիները նույնիսկ իրարամերժ ցուցմունքներ են տվել ռուսական դատական մարմիններին:¹⁶ Հովհաննեսի ծագման մասին ստույգ եզրակացություն չենք կարող անել նաև Մաշտոցի անվան մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պարունակվող նյութերից, որոնք աղանդապետի մասին ուղղակի տեղեկություններ են պարունակում 1782թ. սկսած, սակայն Հայոց հայրապետի թղթակցությունից երևում է, որ չերեցը մինչ այդ բավական բուռն գործունեություն էր ծավալել Արևմտյան Հայաստանում և հայկական գաղթավայրերում: Հետաքրքիրն այն է, որ դեռևս XIX դ. հետազոտողները (Շայդվայլեր) և հատկապես՝ խորհրդային պատմաբան Գ.Գյուլամիրյանը, թյուրիմացության մեջ ընկնելով, կատեխիզիսի հեղինակ են համարել Հովհաննես Վահագնունուն, ինչը ճշմարտությանը մոտ չէ: Բանն այն է, որ, ինչպես ճիշտ նկատում է Վ.Գրիգորյանը. «Նոսքն այստեղ այն մասին է, որ Հովհաննես Վահագնունին և էլի ինչ-որ մարդիկ հեղինակից խնդրել են գրել այդ գիրքը: Կատարելով նրանց խնդրանքը՝ հեղինակն այդ մասին համապատասխան նշում է արել հիշատակարանում: Եվ միայն այդքանը: Այնպես որ ոչ մի հիմք չկա Հովհաննես Վահագնունուն համարելու «Բանալի ճշմարտութեան» հեղինակ և կամ արտագրող ...»:¹⁷ Ֆ. Կոնիբերն իր հրատարակած «Բանալի ճշմարտութեան»-ի քննական բնագրի «Յիշատակարանի» ծանոթագրության մեջ ուղղակի նշում է, որ «ձ. (իմա. ձեռագրում-Հովհանն արեղա) աստանօր թերթ մի կամ քանի մի անկեալ»:¹⁸ «Յիշատակարանի» պահպանված տեքստի սկզբնական մախադասության իմաստն իսկ ցույց է տալիս, որ Վահագնունի կոչեցյալն ամենայն հավանականությամբ պատվիրատու էր, քան թե հեղինակ. «...ամենապայծառ Յոհաննես Վահագնունուն. քանզի սոքա մեծալ ջերմեռանդութեամբ խնդրեցին՝ ի մէնջ (ընգծումը մերն է-Հովհանն արեղա): Իսկ վասն խնդրելոյն նոցին յաճախեաց» ի

¹⁴ Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ, հ. IV, Եր., 1972, էջ 285:

¹⁵ Նույնը:

¹⁶ Վ. Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 342:

¹⁷ Նույն տեղում, էջ 236:

¹⁸ Տե՛ս, *The key of Truth, a manual of the Paulician church of Armenia*, Fred. C. Conybeare, Oxford, 1898, «Բանալի ճշմարտութեան», Յիշատակարան, էջ 64:

սիրտ իմ սերն ճշմարտութեան: Վասն որոյ ո՛չ կարացի թագուցանել զշնորհ սուրբ հոգւոյն: Այլ սկսայ կարգաւ գրել գտորք խորհրդարան և զբանալի ճշմարտութեան վասն սիրոյն խնդրեցողաց և ընդունողաց»:¹⁹ Թե ո՞վ էր սույն Վահագնունին, ցայժմ հայագիտության մեջ պարզված չէ: Արդյո՞ք սա աղանդի պարագլուխներից մեկն էր, թե՞ որևէ երևելի մեծավոր, մեզինչ առաջ հետազոտողները չեն պարզել: Եթե հավատանք 1838թ. հարցաքննված արխիվայցի աղանդավորներին («Ի Խնուս գաւառի ի գիւղն Չաուրմայ, նախքան զայս 55ամ, ոմն ի հայոց քահանայից՝ Օհանես անկեալ ի սույն աղանդ, շարադրեալ է զիրք մի, զոր լուեալ աղանդապետութիւն սոյն իրիցու տէրութիւնն Օսմանեաց ստիպեաց զնա թողուլ զայն դաւանութիւն և նմա չհանդուրժեալ՝ ընկալեալ է զհաւատ Մահմեդի՝ հանդերձ ընտանեօք իւրովք»),²⁰ դուրս է գալիս, որ Հովհաննեսը իր քարոզչությունը Խնուսում սկսել է 1783թ-ին, արդեն հասցրել էր հավատքն ուրանալ, ամուսանցած էր և ուներ զավակներ: 1783թ. չերեցը պետք է լիներ մոտավորապես 30-40 տարեկան հասուն տղամարդ, և նրա ծննդյան թիվը կարելի է դնել 1740-ական թթ.: Սակայն մեկ այլ վկայություն, որը պատկանում է մխիթարյան միաբան Հայր Պողոս Մեհերյանին, հիմք է տալիս ավելի վաղ շրջանում տեսնել Հովհաննեսի գործունեության հետքերը Արևմտյան Հայաստանում և Կ.Պոլսում: Հայր Մեհերյանն իր ինքնակենսագրությունում պատմում է մի հետաքրքրական դեպքի մասին, որին ակնհայտ է եղել 1773թ. Բերայից Կարին գնալու ճանապարհին: Մխիթարյան հոր իջևանած քրդաբնակ գյուղում ապրելիս են եղել հավատուրաց հայեր. «...աղանդատուր էին իբրև զթոնդրակեցիս, կամ կէսկէս էին և կամ արևորդիք»:²¹ Սույն աղանդատուրները խմբեր կազմած հարձակվում էին ոչ հայկական գյուղերի վրա և թալանում դրանք, իսկ ամենահետաքրքիրն այն է, որ սրանց շրջանում պահպանվել էր «արյան վրեժի» սովորույթը, և յուրայինի թափած ամեն մի կաթիլ արյան դիմաց պատասխանում էին արյամբ: Սրանց առաջնորդ հավանաբար եղել է Հայր Մեհերյանի հիշատակած Հովհաննեսը, որը կեղծ եպիսկոպոս ձևանալով, Կարնո մերձակա Բռռճիմասուրի վանքում 14 քահանա է ձեռնադրում: Սակայն Կարնո առաջնորդը, տեղեկանալով կեղծ եպիսկոպոսի գործունեության մասին, միջոցներ է ձեռնարկում, և այս բախտախնդիր աղանդապետը փախչում է Մանազկերտ, սկսում է քարոզել նրա շրջակա հայաբնակ գյուղերում: 1774-1781թթ. Կ.Պոլսում հայտնվում է ոմն Հովհաննես երեց, որը պնդում էր, որ ինքը Մշո կողմերից է կամ Խնուսից: Օսմանյան դատարանը այս Հովհաննեսին դատապարտում է ութամսյա թիապարտության և տաժանակրոջան: Հայագետներից շատերի կարծիքով այս պատիժը Հովհաննեսին նշանակվել էր իր աղանդավորական գործունեության համար, բայց մեր կարծիքով դա այդպես չէ: Հավատալով հայր Մեհերյանի քուրդ գրուցակցի գունագարդ պատմությանը («Զանգի նոքա ոչ միայն զփողս մեր առնէին եւ զերիարս, այլեւ սպանէին զմեզ /իմա. քրդերին-Հովնան արեղա/, զի թշնամիք մեր են, բայց դու հայ լինելով ոչ ինչ առնէին կենաց քոց») որոշ հետազոտողներ ի դեմս սրանց տեսնում են «թույլերին և լկվածներին» պաշտպանող հերոսների: Սա մեղմ ասած մոլորություն է և ցանկալին իրական ներկայացնելու անհաջող ձգտում, քանզի աղանդավորական ավազակախմբերի հարձակումների թիրախ էին դառնում նաև հայկական գյուղերը: Ավազակությունը կամ ավելի ճիշտ դաչաղությունը յուրօրինակ արհեստ էր դարձել Օսմանյան տերության արևելյան վիլայեթներում, որտեղ պետության շունչն իսկ բացակայում էր, և դեռևս ԺԷ դարից, սկսած օգտվելով անիշխանությունից, այստեղ ծավալվել էր ջալալիների շարժումը: Այնպես, որ սույն աղանդավորներին ազատամարտիկների լուսապսակ հազցնելու բոլոր փորձերն անհիմն են: Պոլսի հայոց պատրիարքի միջնորդությունից հետո սույն Հովհաննեսն ազատվում է տաժանակրոջանից և ըստ անգլիացի Կոնիքերի փախչում է Խնուս, իսկ ըստ Հայր Մեհերյանի՝ ազատվելով, մեկնում է Վենետիկ՝ սբ.Ղազար, որտեղ դրսևորում է իր դիվային, դժոխային ողջ էությունը, և Մխիթարյան հայրերը շատ շուտով սրան վտարում են կղզուց, «...օրեն իբրև դիւանոլ և մոլորամիտ»:²² Վերադառնալով Կ.Պոլիս՝ սա ա-

¹⁹ «Բանալի ճշմարտութեան», Յիշատակարան, էջ 64:

²⁰ Աղ. Երիցեանց, նշվ. աշխ., էջ 108:

²¹ Բ. Սարգիսեանց, նշվ. աշխ., էջ 102:

²² Նույն տեղում, էջ 103:

մուսնանում է և անմիջապես դավանափոխ լինելով՝ ընդունում է մահմեդական Աբդուլլահ անունը: Հովհաննես չերեցի ողջ բախտախնդրությունը հատակ երևում է նրա հետագա քայլերում: Երեխայի ծնունդից հետո սույն բախտախնդիրը թողնում է կնոջը և մեկնում Կարին, որտեղ նրա «համբավը» հայտնի էր տեղի հայ բնակչությանը և հատկապես Կարնո առաջնորդին: Վերջինիս աչքից հեռու մնալու համար չերեցը շուտափույթ տեղափոխվում է Մուշ, այնուհետև նաև ավելի հեռու՝ Խնուս: Այստեղ չերեցի հետ կատարվում է հերթական մետամորֆոզը: Հանկարծ նա որոշում է վերադառնալ Մայր եկեղեցու գիրկը, մեղանչել և ապաշխարել: Մեզ անհայտ պատճառներով սրա խնդրանքը իրեն առաքելական եկեղեցու քահանա ձեռնադրելու մասին նույնիսկ հարգվում է տեղի հոգևոր առաջնորդների կողմից: Ահա թե ինչ է վկայում հայր Մեհերյանը այս արտառոց դեպքի մանրամասների մասին. «Եւ նա չոքաւ ի գիւղն Մարութս և ամուսնացաւ: Յետ ամուսնանալոյն չոգաւ առ դատաւորն գաւառի և ասէ ցնա.- Կամիմ քահանայ ձեռնադրուիլ, բայց ոչ ձեռնադրեն, թէ թուրքացեալ ես: Իսկ դատաւորս առաքեաց զսպասաւորս իւր ի Կոբայ վանս, որ է ի Բուլանուխ՝ կից ընդ Մանազկերտ գաւառին, ուր էր եպիսկոպոս մի, զոր բռնութեամբ բերին ի Խնուս ի գիւղն Մարութս և ետուն զուրացողն ձեռնադրեալ քահանայ»:²³ Ամենայն հավանականությամբ այստեղ խառն էր Խնուսի քուրդ բեկի մատը, որը, ինչպես կտեսնենք ստորև ամեն կերպ պաշտպանում և խրախուսում էր չերեցին: Վկայությունից պարզ է, որ ձեռնադրությունը կատարվել է ապօրինի և ստիպողաբար: Հետայսու սկսվում է չերեցի գործունեության ամենասկիզբի շրջանը, որը համընկնում է 1782-1791թթ. միջոցը: Օգտվելով տեղական իշխողների հովանավորությունից՝ նա իր աղանդի ցանցն է զգում Խնուսի մի շարք գյուղերի բնակչությանը: Առաջին անգամ տեղեկանալով Հովհաննեսի չարափառությունների մասին Հայոց հայրապետ Դուկաս Կարնեցին շտապում է նամակ հղել Կարին քաղաքի վեքի Հայրապետին, որից ամենայն հավանականությամբ ահազանգ էր ստացել: Հայրապետին ուղարկված նամակի հետ նա գրություն (փուսուլա) է ուղարկում Կարնո մեծավոր Մինաս պետին, որից ձգտում է մանրամասը տեղեկություն իմանալ. «...զմոլորեցուցիչ երիցեն, որ է յերկիրն Խնուսու»:²⁴ Դուկաս հայրապետի՝ անհանգստությունն արտահայտող հաջորդ նամակը՝ ուղղված Պոլստ պատրիարքին, փվագրվում է 1792թ. մայիսի 11-ով, որտեղ արդեն ուղղակի վկայության ենք հանդիպում Խնուսի բեկի կողմից չերեցին օժանդակելու և խրախուսելու մասին. «...ըստ բանի Յոհաննու սրբազան Առաքելոյն, թէ նեռինք բազում եկեալ են յաշխարհ եւ արդեն երեւին, յանցեալ ամսն Յովաննէս չերեց ոմն, որ քանիցս ոստեալ էր ի հաւատոյ և ի կրօնից սրբոյ եկեղեցոյս մերոյ և ապա բռնութեամբ Խնուսու բեկին քահանայ ձեռնադրեցեալ, ի Կարին եւ Խնուս յայտնեալ էր զաղանդս ոչ միայն ախտարմայութեան, այլ զմերձաւորս թոնդակեցոց...»:²⁵

Հարկ ենք համարում կանգ առնել մի կարևոր փաստի վրա, որը կամ վրիպել է մեզ մախորդած հետազոտողների (Աղ. Երիցյանց, Վ. Գրիգորյան և այլք) տեսադաշտից կամ էլ նրանք չեն նույնացրել Միմեոն Երևանցի հայոց հայրապետի հիշատակած աղանդավոր Հովհաննեսին մեր քննության առարկա դարձած չերեցի հետ: Բանն այն է, որ Միմեոն հայրապետը, խոսելով կաթողիկոսություն ընդունած հավատարացներին պատժելու ուղղությամբ իր ձեռնարկած քայլերի մասին, բացի Գևորգ Թոխատեցի կեղծ վարդապետից հիշատակում է այլ անձերի, որոնք ուղղակիորեն անվանվում են ոչ թե *Ֆռանկացած հայեր*, ինչպես հիշյալ կեղծ վարդապետը, այլ հենց *աղանդավորներ*: Ահա թե ինչ է գրում Միմեոն կաթողիկոսը. «Իսկ Ախալցխայի երկու հրամանը ուղարկում է (*խոսքը Օսմանյան սուլթան Մուսթաֆայի հրահանգների մասին է Էրզրումի և Ախալցխայի փաշաներին-Հովհանն արեղա*) հետևյալ սպառնական պատվիրանների հետ, այն է՝ Պողոս, Ստեփան և Հովհաննես սևագլուխները, որոնք *աղանդավորներ են՝ (ընդգծումը մերն է-Հովհանն արեղա)* բնակություն գտած Ախալցխայում, երկրին աղտեղություն հարուցողներ են, նաև Հակոբ ոչ-երեցը՝ ուղարկվեցին Էջմիածին...»:²⁶ Այնուհետև Միմեոն Երևանցին պատմում է, թե հիշյալ չոքս աղանդավորները ինչ

²³ Բ. Ս ա թ գ ի ս ե ա ն ց, նշվ. աշխ., էջ 103:

²⁴ Մատենադարանի Կաթողիկոսական դիվան, թղթ. 97, փավ. 133, էջ 5:

²⁵ Դիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Դուկաս Կարնեցի, հատոր Բ. 1786-1792, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Եր., 2003, էջ 708:

²⁶ Միմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, Եր., 2003, էջ 56-57:

ճակատագրի արժանացան հետագայում. «Մրանք մնացին սուրբ Աթոռում երեք տարի, շատ նեղություն կրեցին բանտում, կապանքի մեջ, ծեծի և այլ պատիժների ենթակա, մինչև որ երկու անգամ հայերեն հավատարմագիր տվեցին մեր դավանությանն անցնելու խնդրանքով և ներողության հայցումով, որ այլև չեն դառնալու նույն աղանդին»:²⁷ 1771թ. Կարսի զորահրամանատարի միջնորդությամբ այս աղանդավորները նախապես արդեն թուրքերեն մեղայագիր գրելուց հետո արձակվում են՝ պայմանով, որ այլև չեն զբաղվի աղանդավորական գործունեությամբ:²⁸ Սույն աղանդավորները Ախալցխա էին ներթափանցել հարևան Էրզրումի փաշայությունից, որտեղ գտնվում էին նրանց քարոզչության հիմնական կենտրոնները: Մակայն այստեղ մեզ հետաքրքրում է հիշյալ աղանդավորական քառյակի մեջ *Հովհաննես* կոչեցյալը: Սա չէ՞ արդյոք ապագա Հովհաննես Խնուսեցի չերեցը, որի ճակատագիրը կարծես կրկնվում է 1791թ., թե՞ Միմեոնի հիշատակած հավատորացը նույն անձը չէ: Մեր կռահման հիմքում կան մի շարք ոչ ուղղակի վկայություններ, որոնք խոսում են երկու *Հովհաննեսների* միևնույն անձը լինելու օգտին: Օրինակ. թե՛ առաջինը և թե՛ երկրորդը ի սկզբանե հոգևորականներ չէին՝ Միմեոն Երևանցին ուղղակիորեն ասում է «... որ հոգևոր կարգ չունեցող էին (բնագրում՝ *չկարգաւորք*-Հովան արեղա)»:²⁹ Երկուսն էլ առերես իրենց մորթը փրկելու համար հրաժարվում են աղանդավորական գործունեությունից: Հովհաննես չերեցը, գիտնալով, թե ինչ է սպասում իրեն Էջմիածնում, ամեն կերպ փորձում էր խուսափել մի անգամ արդեն իր գլխին եկածից: 1791թ. չերեցի ցուցաբերած վարքագծից պարզ է դառնում, որ նա արդեն անցել էր պատժի այս եղանակներով, և նրա փախուստը բանտից ամենևին էլ պատահական չէր: Երկու տասնամյակ հետո վերադառնալով նույն բանտը՝ նա արդեն ծանոթ էր դրա պայմաններին, կարգ ու կանոնին, ինչպես նաև հսկողության իրականացման եղանակներին և պատահական չէր, որ այսքան կտտանքներից հետո նրան հաջողվեց փախչել Էջմիածնից: Եվ վերջապես, առաջին և երկրորդ դեպքերում չերեցին հովանավորում են թուրքական բարձր պաշտոնյաները և միջնորդում են Միմեոն և Ղուկաս հայրապետների առջև՝ նրանց ազատ արձակելու:

Հովհաննեսի աղանդավորական գործունեությունն ընդգրկում էր հիմնականում Էրզրումի փաշայության տարածքը և մասնակիորեն Մանազկերտ քաղաքն ու նրա շրջակայքը: ԺԸ դարի վերջերին հիշյալ վիլայեթի մեջ էին մտնում պատմական Տարոնի և Բագրևանդի գավառների մի մասը՝ մասնավորի Մուշը, Ալաշկերտը և Խնուսը: Ինչպես նշել էինք վերը, այստեղ դեռևս հիշյալ դարի սկզբներին ակտիվ գործունեություն էին ծավալել ֆրանկ միսիոներները և բավական հաջողության հասել հատկապես կեսկեսների³⁰ շրջանում: Հովհաննես չերեցը ևս այստեղ պարարտ հող գտավ իր դիվային գաղափարների քարոզչության համար: Հարկ է նշել, որ թե՛ հունադավան, թե՛ հռոմեադավան և թե՛ այլևայլ բողոքական աղանդներ դավանող, Մայր եկեղեցուց հեռացած հայերի գերակշիռ մասը առաջին հերթին կորցրեց լեզուն և հետո նաև՝ ազգային պատկանելությունը: Թուրքացած կամ մահմեդականություն ընդունած հայերը հիշյալ դավանությանցներից էին: Այստեղ բացառություն չէր կարող կազմել նաև չերեցը, որի ուրացության և մահմեդական Աբդուլլահ անունն ընդունելու փաստը ապացուցման կարիքը չունի: Ինչն էր դրդել Հովհաննեսին՝ Վենետիկից վճարվելուց հետո գնալ հավատորացության և այնուհետև նաև աղանդավորական գործունեության: Նույնիսկ Վենետիկում զգացել էին, որ գործ ունեն հիվանդ երևակայությամբ և դիվային բնությամբ մարդու հետ, որն ընդհանրապես կապ չունի քրիստոնյայի կերպարի հետ և առավել հակված է մոլագար մտքի մթագնումների: Այս խնդրի վրա կարող է լույս սփռել չերեցի կյանքի Կ. Պոլսի փուլը: Օսմանյան մայրաքաղաքում ԺԸ դարի կեսերին վիստում էին զանազան միսիոներական կազմակերպություններ: Իր անհավասարակշիռ բնավորությամբ չերեցը լիովին համապատասխանում էր հոգեորանների չափորոշիչներին և ամենայն հավանականությամբ, Կ. Պոլսում հավաքագրվել էր բողոքական աղանդներից մե-

²⁷ Միմեոն կաթողիկոս Երևանցի, *Ջամբո, Եր.*, 2003, էջ 56-57:

²⁸ Նույնը:

²⁹ Նույնը:

³⁰ Կեսկեսները կիսամահմեդական հայերն են, որոնք, ի տարբերություն լրիվ իսլամացած հայերի, պահպանել էին հավատքի և ազգային սովորությունների որոշ տարրեր և անուններին ավելացնում էին օղի (որդի) թուրքերեն ձևը, օր. *Պետրոսօղի, Հովհաննես օղի և այլն*:

կի կողմից: Այս հանգամանքի մասին ոչ ուղղակիորեն ակնարկում է նաև հայր Մեհերյանն իր անտիպ ինքնակենսագրության մեջ:³¹ Այլ կերպ ինչպե՞ս կարելի է բացատրել, որ խղճուկ կրթություն ստացած սույն չերեցը իր թղթոնում չնայած էկլեկտիկ, բայց որոշակի պատկերացումներ ունի լյութերականության և կալվինականության որոշ դրույթների վերաբերյալ: Բողոքականության հիմնադիրների ուսմունքը հայալեզու հրատարակություններ ունեցավ միայն հաջորդ՝ XIX-ր., երբ Կ.Պոլսում հրատարակչական գործունեություն ծավալեցին «ամերիկածին» բողոքական աղանդները: Ուրեմն չերեցն ուներ «հայախոս ուսուցիչներ» Կ.Պոլսում, որոնց միջոցով էլ ծանոթացել էր բողոքական ուսմունքին: Առավել հետաքրքիր է դեպքերի հետագա ընթացքը, երբ լույս աշխարհ պետք է գար չերեցի «երախայրիքը»: Կ.Տեր-Սկրտչյանը գտնում է, որ ամենայն հավանականությամբ Հովհաննեսը ինչ-որ տեղից ձեռք էր գցել մի հին ձեռագիր, որում շարադրված էր թոնդրակեցիների ուսմունքը: Այս ձեռագրում իբր թե նա կատարել է որոշ լրացումներ և մոցրել իր ուսմունքի ինչ-ինչ տարրեր:³² Մեզ համեմայնդեպս այդպես չի թվում, քանի որ գոնե ցայժմ թոնդրակեցիների ուսմունքն արտահայտող որևէ փաստաթուղթ կամ նույնիսկ պատասիկ չի հայտնաբերվել, կամ էլ գոնե ժամանակակիցներին հայտնի չէ: Հայագիտության մեջ ապացուցման կարիք չունեցող փաստ է, որ թոնդրակեցիների և ի մասնավորի, նրանց աղանդապետ Սմբատ Չարեհավանցու ուսմունքի մասին ուղղակի և ոչ ուղղակի տեղեկություններ են հաղորդում պատմիչ Արիստակես Լաստիվերտցին³³ և հատկապես ԺԱ դարի նշանավոր պետական գործիչ և ակնավոր գիտնական Գրիգոր Մագիստրոսը, որն արմատախիլ արեց «ղիական եւ մոլեգնեալ» աղանդը:³⁴ Այստեղ խոսքը առավել շատ վերաբերում է թոնդրակեցիների անունը օգտագործելու պարագային, քան թե ԺԱ դարի աղանդավորական շարժման բուն ուսմունքի օգտագործման խնդրին: Այս պարագայում ևս կարծես պատմությունը կրկնվում էր: ԺԱ դարի բյուզանդական աղբյուրները, օրինակ, նույնացնում էին Սմբատ Չարեհավանցու հիմնած թոնդրակյան աղանդը պավլիկյանների հետ և սրանց համառորեն հորջորջում են պավլիկյաններ անվամբ: Ակադեմիկոս Հ.Բարթիկյանը, հերքում է այս թյուր կարծիքը, ցույց տալով երկու աղանդների զարգացման պարագայում մեջ առկա տարբերությունները:³⁵ Ավելի վաղ նույն պավլիկյաններին սբ. Հովհանն Օձնեցի հայոց հայրապետն անվանում էր մծղնեականներ:³⁶ Դուրս է գալիս, որ յուրաքանչյուր նորահայտ աղանդ հիշատակվում է իրեն նախորդածի անվամբ կամ նույնացվում է նրա հետ: Երիցս ճշմարիտ էր Աղ.Երիցյանը, որը գրում էր. «Աղանդները դադարիլ չունին և սովորաբար ամենակարճ միջոցում տեսակ-տեսակ փոփոխության են ենթարկվում...»:³⁷ Եթե վերանանք շատ մանրամասներից, հին ու նորելուկ բողոքական բազմաթիվ աղանդների ուսմունքներում կարող ենք պեղել արիոսականությունից ու մանիքեականությունից սկսած մինչև բողոմիլիների ու այրիզոյականների աղանդներին հատկանշական բազմաթիվ գծեր: Ուստի երբեք էլ պատահական չէ, որ հայագիտաբանները կարող էր թողարկվել թոնդրակեցիների անվան տակ:

Վերը արդեն նշեցինք, որ Հովհաննեսը իր քարոզչության համար պարարտ հող էր գտել Էրզրումի փաշայությունում և, ի մասնավորի, Խնուսի և Մանազկերտի գավառներում: Խնուսում չերեցի քարոզչության որջը դարձել էր հատկապես Չևիրմեն կամ Չևյուրմեն, որը Ղ.Ինճիճյանի վկայությամբ, ինչպես և Կարաչորանը, գավառի ամենաբազմամարդ գյուղերն էին:³⁸ Խնուսը և Ալաշկերտը վաղուց դարձել էին այլադավան որումի սերմանման փորձադաշտ: Տեղի հայ բնակչությունը հարձակումների էր ենթարկվում քրդական աշիրաթների և կովկասյան այլևայլ ցեղերի կողմից: Այս և ընդ-

³¹ Բ. Ս ա թ գ ի ս ե ա ն ց, նշվ. աշխ., էջ 233:

³² Կ. Տ ե թ – Մ կ թ տ չ յ ա ն, նշվ. աշխ., էջ 112:

³³ Ա թ ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ ե թ ո տ ց ի, Պատմություն հայոց, քարգմ. և առաջաբանը.

Վ.Գևորգյանի, Եր., 1971, գլ. ԻԲ-ԻԳ:

³⁴ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1913:

³⁵ Հ. Բ ա թ թ ի կ յ ա ն, Գրիգոր Մագիստրոսի քաղաքական կողմնորոշման հարցի շուրջ, Էջեր հայ ժողովրդի պատմության և բանահյուսության (հոդվածների ժողովածու), Եր., 1971, էջ 66:

³⁶ Հ ն վ հ ա ն Օ ձ ն ե ց ի, Երկեր, Եր., 1999, էջ 8:

³⁷ Աղ. Ե թ ի ց յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 108:

³⁸ Ղ. Ի ն ճ ի ճ ե ա ն, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 82:

հանրապետ Արևմտյան Հայաստանի ու Պարսկահայքի մյուս գավառների բնակչության միակ հենարանն ու պաշտպանը մնում էր Մայր եկեղեցին և Ամենայն հայոց հայրապետը, որն ամեն կերպ փորձում էր համոզել տեղի թուրք և պարսիկ պաշտոնյաներին, պաշտպանել հայերին: Մեր ձեռքի տակ կա ցայժմ շրջանառության մեջ չդրված մի փաստաթուղթ, դա Դուկաս Ա Կարնեցի հայրապետի 1791թ. սեպտեմբեր ամսով քվազովող նամակն է Բայազետի մեծավորներ Մահակ և Մանուկ աղաներին: Դրա բովանդակությունից երևում է, որ Բայազետում և Պարսկաստանի Խոյ քաղաքում բույն էին դրել բողոքական երկու քարոզիչներ, որոնց բնութագրումներից երևում է, որ գործ ունենք չերեցի համախոհների հետ. «Ձի յօգոստոսի ԻԴ /24/-ին գրել թուրքն ձեր առ մեզ, հանդերձ զարշահոտ թղթովն փառակեցի Մահակ խելագարին, զորս ընթերցեալ հասու եղաք վատթար գրութեանց նոցին: Չորոյ օրինակն վեր առաք և զիսկն վերադարձուցաք առ ձեզ ընդ թղթոյս, ըստ խնդրոյ ձերոյ: Եւ զչիք Գաբրիէլ չերեցն Խօյոյ (ընգծումը մերն է-Հովնան արեղա) բանիւ արարեալ, զթուղթն առ ձեզ յղեցաք, եվ դու, սիրելիքդ մեր, ի տեղոյդ հաստարմաւ յղեսչիք առ չիք Գաբրիէլն՝ ամբողջ կնքով: Եւ մինչ զղջացեալ գայցե գտուրք աթոռս, ի հարկէ, ըստ վատթար արարմանցն զպատիժն կրելոց է: Եւ զայն թղթոյ օրինակն, զոր վեր առաք, յղելոց եմք ի մեծն Պօլիս, եւ այն փառակեցի Մահակ գարշելոյն եւս ըստ արժանոյն թուրք գրեալ յղելոց եմք ի Մաղիմ: Եւ դուք, սիրելիքդ մեր, մի գուցէ խղճահարեցիք, ի հարկէ յառնե գարշելոյ հոտ բուրէ:»³⁹ Հիշյալ ուրացողների մասին խոսելուց հետո Դուկաս հայրապետը Բայազետցի մեծավորներին Հովնանեն չերեցին վերաբերվող հարց է ուղղում, որում կարծես զգոնության կոչ կա. «Այլեւ յանցեալն մեր Նահապետն յայդր գրեաց տիրացու Գեորգին Խնուսա չիրիցու փախչիլն առ ի ծանուցանել ձեզ: Ահա այժմ եւս գրեմք սիրելեացդ մերոց, զի պարտիք լաւապէս հասու լինիլ եւ իմանալ, թե արդեօք ուղղեալ է զինքն առ եկեղեցիս մեր, թէ վերստին ի մոլար աղանդն իր կայ: Հարկ լիցի սիրելեաց մերոց հետեւիլ եւ ստոյգն իմանալ, եւ թղթով մեզ ծանուցանել, զի ըստ այսմ հոգս արասցուք, մի գուցէ զանց առնիցեք»: ⁴⁰ Համարյա նույնպիսի նամակ-հարցեր է ուղղում Դուկաս հայրապետը Էրզրումի, Ախալցխայի, Թիֆլիսի և այլ վայրերի առաջնորդներին և մեծավորներին, ինչը խոսում է չերեցի գործունեության աշխարհագրության բավական լայն ընդգրկման մասին: Դուրս է գալիս, որ սույն չերեցը մոտ քսան տարի բավական ազատ գործել է Հայաստանի երկու հատվածներում և նույնիսկ նրա սահմաններից դուրս: Թե ինչու՞ Մուր Էջմիածինը բավական ուշացած քայլեր ձեռնարկեց այս աղանդի դեմ, մեր կարծիքով պայմանավորված էր մի քանի հանգամանքով: Վերը արդեն գրել ենք, որ դեռևս Միմենո Երևանցի հայրապետը 1760-ական թթ. վերջին և 1770-ական թթ. սկզբին լուրջ քայլեր էր ձեռնարկել նորեկ աղանդավորների դեմ և ինչ-որ հաջողության հասել: Բայց իրադրությունը կտրուկ փոխվեց Միմենո հայրապետի մահից հետո (1780թ. հուլիս): Բաղաքական խառը և ծանր պայմանները, որ ստեղծվել էին Պարսկաստանում և ի մասնավորի Երևանի խանությունում, անհրաժեշտություն էին դարձրել հայրապետի մահից հետո ոչ մի կերպ թափուր չթողնել Ամենայն հայոց կաթողիկոսի գահը՝ նույնիսկ շատ կարճ ժամանակով: Հակառակ պարագային, Մայր աթոռին սպասվում էին բազում փորձություններ և անդամնալի կորուստներ: Ուստի հեռատես և շրջահայաց Միմենո հայրապետը վաղօրոք միջոցներ էր ձեռնարկել այս ուղղությամբ: Մահկանացուն կնքելուց երկու օր առաջ Միմենո հայրապետն իր մոտ հրավիրեց սբ. Էջմիածնում գտնվող եպիսկոպոսներին և հայտարարեց, թե Չմյուռնիայից կանչել է Դուկաս Կարնեցուն, որպեսզի «յաջորդարար նա լիցի հայրապետ և կառուարեսցէ գտուրք Աթոռս յասմ վտանգածին և վրդովեալ ժամանակիս»: ⁴¹ Ստիպված խախտելով կաթողիկոսական ընտրության հաստատված կարգը Էջմիածնի միաբանները Միմենոի թաղումից մեկ շաբաթ անց՝ 1780թ. օգոստոսի 2-ին, կաթողիկոս ընտրեցին Դուկաս Ա Կարնեցուն: Բողոքն էլ լավ հասկանում էին, որ սա դժգոհության տեղիք էր տալու գաղութահայության մեջ: Հատկապես դժգոհ պետք է լիներ Պոլսո Չաքարիա պատրիար-

³⁹ Դիվան հայոց պատմության, նոր շարք, զիբք առաջին, Դուկաս Կարնեցի, հատոր Բ. 1786-1792, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Եր., 2003, էջ 645:

⁴⁰ Նույն տեղում, էջ 646:

⁴¹ Նույն տեղում, էջ LXXXI:

քը, որը համարվում էր գահի ամենահավանական թեկնածուն: Վերջինս իրեն սպասել չտվեց. նա կարգադրեց չեղյալ հայտարարել ընտրությունը, չհրապարակել Ղուկաս հայրապետի անունը եկեղեցիներում և արգելք հանդիսացավ ընտրության ճանաչման ամփանական ֆերմանի հրապարակմանը: Փաստորեն, առժամանակ, ստիպված խզվեցին սուրբ Էջմիածնի կապերը Օսմանյան կայսրության տարածքներում գտնվող վիճակների ու թեմերի հետ: Ճիշտ է, Չաքարիա պատրիարքի Բուրսա քաղաքում և հատկապես հայտնի «Թուրք կանոնականի»⁴² հրապարակումից հետո իրադրությունը կայունացավ, բայց ժամանակն աշխատում էր աղանդավորների օգտին, քանի որ Սիմեոն հայրապետի մահից մինչև 18 եպիսկոպոսների, 38 վարդապետների և արեղաների կողմից ստորագրված կանոնական այս փաստաթղթի հրապարակումը անցել էր յոթ տարի (1780թ. հուլիս 24 - 1787թ. հունվարի 11): Օգտվելով այս «քարեպատեհ» առիթից՝ աղանդն իր շոշափուկներն էր տարածել նաև վիրահայոց մեջ՝ ի մասնավորի Թիֆլիսում: Թիֆլիսում աղանդավորական որջի գոյության մասին անուղղակի վկայում է Ղուկաս հայրապետի 1791թ. դեկտեմբեր 31-ով քվազրված նամակը՝ «Թուրք առ Բաղդաստու իշխանանս վասն վայրաբանութեան քիֆիլեցի աղթարմայ չիք Ղուկասին»:⁴³ Հայոց հայրապետին խիստ զայրացրել էր «աղթարմայ»⁴⁴ չիք Ղուկասի» տարածած սուտը՝ կապված իր անձի հետ. «Ձի նարդեմիս (խմբ. այժմ, ներկայումս-Հովնան արեղա) քիֆիլեցի Քափանակենց Աֆթանդիլի որդի Ստեփանն այտի հղեալ էր առ մեզ գործնակ քրքոյ պատմութեան բարբաջանաց ախտարմայ չիք Ղուկաս Առաքելեան, որում եւ դուք վկայեալ էիք, թե վայրադողանցն այն ի հոտեալ բերանոյն արտափսխեալ է, թե կաթողիկոսն զայն ինչ ասաց ինձ:»⁴⁵ Հիշյալ աղանդավորը Թիֆլիսի մեծավորների թախանձանքով ընդունելության էր արժանացել Ղուկաս հայրապետի կողմից, քանզի «Եւ ոչ միայն դա, այլ վիրք եւ հոռօք եւ տանկեք եւ քիւրտք բազմիցս անգամ ըստ դիպմանն զան առ մեզ, յորոց եթե խորեաք, ըստ Առաքելոյն բանի, պարտ էաք եւ յաշխարհէ իսկ ելանել, այլ ըստ հարկի ժամանակիս քաղաքաւորութեամբ անցուցանենք զիրաքանչիւրսն, յորմէ ոչ ինչ ընծայի հաւատոյ: Բայց ի յախտարմայ չիք կարգաւորացն գայթակղեցուցչաց թէ զբանիսն ենք առ ձեռն բերեալ բազում ծախտք եւ պատժեալ ըստ արժանեացն, զայն եւս, ի հարէ, լուեալ եք կամ լսելոց էք»:⁴⁶ Սակայն պարզվում է, որ սույն բախտախնդիրը քիֆիլեցիներին և ապա բաղդադցիներին է մատուցել աղանդավորական իր բարբաջանքը կաթողիկոսի անունից: Այնուհետև Հայոց հայրապետը գրում է. «Չոր ի յընթեռնուլն մեր յիրաւի կարելի էր խոցեցաք ի սիրտ եւ յոզի: Քանզի զայլ կերպ զրաբանութիւնս եւ նախատինս տանելի է՝ յուսով աւետարանական բանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, թէ երանի ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ եւ ասիցեն զամենայն բան չար զձեզ զսուտ եւ այլն: Բայց զամբիծ հաւատոյ եւ զուղիղ դաւանութենէ զրծարութիւնս եւ զքիւրտքիւն զրաբանելն, անտանելի է ուղղափառաց: Ըստ այսմ եւ այդ անիծելոյ ստոյգ չարութեամբ եւ մեղաւորութեամբ արարեալ վայրահաջութիւնն դժուարակրելի ինն է մեզ: Եւ այդպիսի հերձուած անիծեալքն ոչ թողին զպէսպէս չարահնարութիւնս, զորս ոչ գործեցին առ խղճայի ազգ մեր, այժմ զայդ են սկսեալ բամբասանս դնել հոգեւորական գլխոյն ի գայթակղութիւն խորհրդական անդամոցդ, թուի թէ եւ պիղծոյ այդ ի պատմագումար սատանայախորհուրդ Միքայելէն (Միքայել Չամչյանին և նրա եռահատոր Հայոց պատմությունը-Հովնան արեղա) է ուսեալ, որ ի ստալից պատմագրեանսն իւր զբազումս ի յուղղափառ հայրապետացն մերոց եւ յիշխանացն պէսպէս դողանցանօք երկաբնակ ցուցանէ ազգին, զի միամիտ ժողովուրդքն գայթակղեցեցին»:⁴⁷ Հավանաբար հիշյալ չիք Ղուկասը ժողովրդին և մեծավորներին ներկայացրել է իր ինչ-ինչ հնարավոր շնորհներն ու «առաքինությունները»՝ խիստ զայրացնելով Ղուկաս հայրապետին. «Ապա այդ հոտեալ գարշելիդ ո՞վ է եւ զի՞նչ շնորհ ունի, որ համարձակիցէր առաջի մեր խօսիլ զչար աղանդոյն իրեանց եւ կամ

⁴² Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 69:

⁴³ Դիվան հայոց պատմության, էջ 686-687:

⁴⁴ Աղթարմայք կամ ախթարք-բախտագուշակներ, հմայություն կամ մոգություն անողներ, աստղագուշակներ, տես Նոր բառքիքը հայկազեան լեզուի, հ.Ա, Վենետիկ, 1836, էջ 19:

⁴⁵ Դիվան հայոց պատմության, էջ 686:

⁴⁶ Նույն տեղում, էջ 687:

⁴⁷ Նույնը:

զի՞նչ հարկ էր այդպիսով ապականալ ախտաւոր անձին զայն ինչ խօսիլ: Այլ այդ որդիդ կորստեան նենգաւոր մտօք է բարբաճցեալ յայդդ զմէնջ զայն զրաբանութիւն՝ առ ի պղտորեալ զմիտս պարզամիտ ժողովրդեանդ, զոր սուտ է խօսեցեալ եւ իւրոց անտի, եւ հայր դորա սատանայ է, որ եւ նզովեալ եւ անիծեալ եղիցի յամենասուրբ երրորդութենէն՝ ինքն եւ աղնդ իւր, հանդերձ աղանդակցօք իւրովք, որպէս եւ ի նախնեացն մերոց իսկ նզովեալքն են»:⁴⁸ Հայոց հայրապետին զարմանք է պատճառում հայ մեծավորների և Օսմանյան պետության կրավորական կեցվածքը աղանդավորների հանդեպ: «Աստե՛ն եւ զայս գրեմ սիրելեացդ, թէ այդ վայրահաչ անգգամդ, որ զայն դօղանջումն արար զմէնջ, եւ դուք իմացայք, ձեր դայրեթն որպէ՛ս տարաւ որ լռեցիք եւ ոչ պատուհասակո՛ծ առնել ետուք զարժանապատիժ չիքդ զայդ: Մի՞թէ Օսմանցոց տէրութիւնն անտեղե՛ակ է չարութեանց եւ խարդախութեանց դոցա: Բայց թերեւս թեթեւ ինչ իցէ թուացեալ ձեզ այդպիսով ախտամով հերձուածի միոյ զրաբանելն զմէնջ ի յունկս բազմաց: Արդ, դուք չարարիք, մեք պարտական ենք զդորա նենգագործութեան արժանի վարձն հատուցանել, եթե ողջ մնայցենք եւ ինքն յայդ կողմունսդ չսատակեալ դառնայցէ յայսկոյս՝ մեռեալ հուովն: Բաւեսցի խոհեմութեան ձերում...»:⁴⁹ Մակայն, ինչպես վերը նշեցինք, թուրքական փաշաների ծրագրերում ամենեւեմ էլ չկար այս խնդիրը, և նրանք, ստանալով մեծ կաշառքներ արևմտածին քարոզիչներից, մի երրորդ պատուհաս էին բերում ժողովրդի գլխին:

Մատենադարանում պահվող Կաթողիկոսական դիվանի նյութերը և այլ կողմնակի սկզբնաղբյուրներ թույլ են տալիս թեպետ աղոտ, բայց որոշակի պատկերացում կազմել չերեցի քարոզչության աշխարհագրության մասին, որն ընդգրկում էր Արևմուտյան Հայաստանի հյուսիս-արևմտյան և կենտրոնական գավառները, ինչպես նաև Մլըխեթը (Ախալցխան), որը մտնում էր Էրզրումի վիճակի մեջ և ենթարկվում Կարնո առաջնորդին: Ինչպես նշեցինք, Ալաշկերտում և Խնուսում մեծամասն էր կաթողիկ քարոզիչների թիվը, և նրանց ցանցը տարածվում էր հիմնականում բազմամարդ գյուղերում, որոնցում էլ ստեղծվեցին ֆռանկ համայնքներ:⁵⁰ Հետաքրքիրն այն է, որ Հովհաննեսի առաջին ուրացությունը կապված էր նրա կաթողիկոսություն ընդունելու հետ, քանզի Վենետիկի միաբանների հրավերով և ֆռանկ միսիոներների միջոցներով նա մեկնեց Իտալիա: Մենք հավանական չենք համարում, որ այս հագիվ տառաճանաչ մարդը կարող էր օգտված լինել Միսիոնարյանների հարուստ գրադարանից և ծանոթանալ միջնադարում կազմված որևէ ձեռագրի:

Կ. Պոլսում հավանաբար չերեցր բողոքական քարոզիչների ազդեցությամբ գնաց երկրորդ ուրացությանը: Սրա կյանքի պոլսյան փուլը ամենամութն ու քիչ ուսումնասիրվածն է, քանզի մեզնից առաջ բոլոր հետազոտողները հպանցիկ են խոսում դրա մասին՝ վկայակոչելով աղբյուրների սղությունը: Մի քան հստակ է մեզ համար, որ իր բողոքական «մկրտությունը» ստանալով դեռևս Վենետիկում և յուրացնելով սրանց Այբն ու Բենը, սույն չերեցր հասու դարձավ մնացյալ աղանդավորական «գաղափարներին» արդեն Կ. Պոլսում: Բանն այն է, որ օսմանցիների մայրաքաղաքում բույն դրած բողոքականները, ի տարբերություն ֆռանկ միսիոներների, որդեգրել էին միանգամայն այլ մարտավարություն իրենց գաղափարները Արևելյան քրիստոնյաների մեջ տարածելու հարցում: Եթե ֆռանկ քարոզիչները, օգտվելով ֆրանսիական պետության և օսմանցիների աջակցությունից, ուղղակի ժամանում էին Արևմտյան Հայաստան կամ Ասորիք և քարոզում, խոստումներ էին բաժանում տեղաբնիկների շրջանում, ապա բողոքական զանազան աղանդների ներկայացուցիչներն իրենց քայքայիչ գործունեությունը ծավալում էին անուղղակի: Բանն այն է, որ վերջիններս Կ. Պոլսում կամ էլ հայկական գաղթօջախներում վաղօրոք իրենց ճանկն էին գցում մոլորյալ և հիվանդոտ հոգեբանություն ունեցող հայերի, «թրծում» և «կոփում» էին սրանց հիվանդ հոգիները և նոր միայն ուղղորդում էին սրանց դեպի Արևմտյան Հայաստան: Սա էր պատճառը, որ բողոքական աղանդների օտարերկրացի քարոզիչների ուղղակի գոյությունը Արևմտյան Հայաստանում փաստված չէ ԺԸ դարում և ԺԹ դարի սկզբին: Միայն հիշյալ դարի երկրորդ կեսե-

⁴⁸ Դիվան հայոց պատմության, էջ 687:

⁴⁹ Նույնը:

⁵⁰ Ս. Ա. Ա. Ն. Յ. Ա. Ա. նշվ. աշխ., էջ 59:

րից օգտվելով հայ հասարակական և եկեղեցական կյանքում առաջացած ներքին հակասություններից ու խնդրանքներից՝ սրանք ակտիվ գործունեություն ծավալեցին Արևմուտքյան Հայաստանում՝ քողարկվելով մարդասիրական և բարեխնամ գործունեության տակ: Նրանք հիմնում էին հիվանդանոցներ, որբանոցներ և նույնիսկ դպրոցներ, որոնցում իրականացվում էր «ուղեղների լվացման» իրենց ծրագիրը՝ արդեն եվրոպական և ամերիկյան հայախոս քարոզիչների միջոցով:

Վերադառնալով մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին, նշենք, որ բողոքական քարոզիչներն արդեն բավական լավ էին ուսումնասիրել դեռևս միջնադարում Հայաստանում գործած այլազան աղանդների գործունեությունը: Նրանք հավանաբար բյուզանդական և հին ֆրանսիական աղբյուրներից տեղյակ էին Արևելքում ծնունդ առած և իրենց երկրներում տարածված բազմաթիվ աղանդներին և ամեն կերպ մանություններ էին փնտրում սրանց միջև: Կ. Պոլիս եկած բողոքականներին հարկավ ծանոթ էին միջնադարում գործած աղանդապետների նկարագիրը, սրանց պիղծ վարքն ու գործը: Մարդու այդ տեսակը այս հոգեոբսները տեսան չերեցի և նրա մանկների մեջ: Գալով Արևմտյան Հայաստան՝ Հովհաննեսը պիտի անպայման փորձեր ստեղծել համախոհների խմբեր կամ համայնքներ: Այս հարցում իսկապես նա հարազատ մնաց իրենից մի քանի դար առաջ ապրած աղանդապետների վարքագծին: Նա ամեն կերպ պետք է չարախոսեր և վատաբաներ Մայր եկեղեցին տեղի բնակչության շրջանում, պետք է մատուցեր իր «փրկչական ծրագիրը», պետք է փորձեր սովորական սովետառության ու խաբեության ճանապարհով իր կողմը գրավել մուրդյալ հոգիները և այլն: Պատահական չէ, որ նա իր «Կատախիզիստում» ընթերցողին դիմելիս օգտագործում է «նազելի որդեակ իմ» կամ «ահա՛ տեսայք նազելիք կամ սիրելիք մեր» և այլ կեղծավոր արտահայտություններ և այլն: Հատկանշական է, որ նրա հյուսած որոգայթն էին ընկնում գյուղերի փոքրավորներն ու որոշ կարգալույծ արված կամ էլ դրանից առաջ կաթոլիկություն ընդունած հոգևորականները: Հովհաննես չերեցն ու իր համախոհները, հարկավ, աջակցություն էին ստանում նաև տեղական իշխանությունների կողմից, երբ խոսքը վերաբերում էր հայ եկեղեցու դեմ պայքարին: Բայց երբ կեսկեսներից և աղանդավորներից կազմված ավագակախները դուրս էին գալիս իշխանությունների հսկողության տակից, այնժամ վերջիններս դաժան պատժիչ միջոցառումներ էին ձեռնարկում՝ արտրելով կամ տաժանակրության դատապարտելով սրանց: Այս առումով հատկանշական է չերեցի և նրա հովանավորի՝ Խնուսի քուրդ բեկի անփառունակ վախճանը հենց օսմանցիների ձեռամբ:

НЕКОТОРЫЕ ЗАМЕЧАНИЯ ВОКРУГ ЛИЧНОСТИ ГЛАВЫ СЕКТЫ «ТОНДРАКИДОВ» ИЗ АРАХВЛИ

___ *Резюме* ___

___ *Օվան և քրոմոնախ Ակոբյան* ___

В статье делается попытка обсудить вопрос, кто на самом деле был основатель созданной в 18 в. в Хнусе секты псевдотондракидов Ованес. Изучив сведения разных исторических источников, автор находит, что география деятельности Ованеса была гораздо шире, чем предполагали предыдущие исследователи. Новоявленные факты дают право утверждать, что эти сектанты вовлекли в свои сети армянское население разных районов Западной Армении. Эти факты очень обеспокоили католиков всех армян Симеона Ереванци и Гукаса Карнеци, которые приняли решительные меры в деле изолирования главы секты и сектантов.

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1921թթ.

1917թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունը ցնցեց ցարական Ռուսաստանի ողջ տարածքը, այդ թվում՝ նաև Անդրկովկասը: Մարտի 3-ին այդ լուրը հասավ Կովկաս, որով հայտնի դարձավ Ռոմանովների 300-ամյա իշխանության անփառունակ վախճանը: Մարտի 7-ին Կովկասի փոխարքան և ցարական Ռուսաստանի իշխանության բոլոր ներկայացուցիչները հեռացան Թիֆլիսից:

Կովկասն իր պատմության ամենասկզբնական շրջանից հանդիսացել է ազգերի խառնարան և այդ ազգերի հարաբերությունները միշտ չէ, որ եղել են հանգիստ ու բարեկամական: Դրա պատճառը չափազանց խայտաբղետ ազգային կազմն էր, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր նեղ շահերն ու խնդիրները:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի կառավարման համար դեռևս մարտի 9-ին պետական դումայի անդամներից կազմված Օզակումն այդպես էլ չկարողացավ իր իշխանությունը տարածել Անդրկովկասում և երկրամասում ստեղծվեց անիշխանություն: Օզակումը ոչինչ չկարողացավ անել հատկապես ազգային հարցերի կարգավորման ուղղությամբ, որը համարվում էր ամենատար խնդիրներից մեկը:

Այս պայմաններում նոր սրության հասան հայ-ադրբեջանական* հարաբերությունները, դա շատերի համար անսպասելի էր, քանզի այդ հարաբերությունները, սկսած ամենահին շրջանից, երկու ժողովուրդների համար էլ ունեցել են փոխադարձ կենսական նշանակություն: Պատմության քառուղիներում նրանք քայլել են համընթաց, հաճախ բախտակից են եղել, ունեցել են ռազմական համագործակցության բազում օրինակներ, սակայն ցավոք, եղել են նաև առանձին անհամաձայնություններ և դժգոհություններ, իսկ անկախ հանրապետությունների հռչակումից հետո նաև՝ ռազմական բախում: Պատճառն այն էր, որ վրացիները, չբավարարվելով իրենց բուն տարածքներով, հավակնում էին նաև որքան հնարավոր է Հայաստանից տարածք կորզել:

Երբ 1918թ. հոկտեմբերին թուրքական զորքերը հետ քաշվեցին իրենց գրաված տարածքներից, կարծես թե հենց այդ հանգամանքն ազդանշան հանդիսացավ վրաց-հայկական ռազմական ընդհարման համար: Չնայած 1918թ. փոխադարձաբար ճանաչեցին մեկը մյուսի անկախությունը և հաստատեցին դիվանագիտական հարաբերություններ, սակայն համագործակցություն կամ բարեկամական համերաշխություն նրանց միջև այդպես էլ չհաստատվեց: Վրաստանի հանրապետության հետ Հայաստանը ձգտում էր ունենալ բարեկամական հարաբերություններ, որովհետև Թուրքիան և Ադրբեջանը շրջափակել էին նրա ճանապարհները, իսկ այդ շրջանում առավել քան անհրաժեշտ էր կապվել արտաքին աշխարհի հետ: Վրաստանի հետ հարցերի կարգավորմանը խանգարում էր հակառակ կողմից Հայաստանի վզին փաթաթված տարածքային վեճերը. վրացիներն ամեն ինչ անում էին Ախալքալաքի, Լոռու գավառներին տիրելու համար, որոնք համապատասխանաբար ունեին 80 և 60 հազարանոց հայ բնակչություն:

Հայաստանի խորհրդարանի 1918թ. հոկտեմբերի 22-ի նիստում ահա թե ինչ է հայտարարում հանրապետության կառավարության նախագահը. «Երեկ գիշեր ժամը 12-ին մենք ստանում ենք այդ շրջանի մեր զորքերի հրամանատարից հեռագիր, որ Վրաստանն իրեն վերջնագիր է տվել դատարկել Շահալի կայարանը և զրահապատ զնացք՝ կանգնեցրել Ջորեթ կիսակայարանի մոտ»:¹ Խորհրդարանի նիստում նա նաև հայտարարում է, որ այդ տարածքը երբևիցե վրացական չի եղել: Նստաշրջանում հայտարարվում է, որ «Վառավարությունը այդ բոլորը աչքի առաջ ունենալով և Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանելու համար անմիջապես մի հեռագիր է ուղարկել Ժորդանիային՝ ստեղծված դրության վերաբերյալ»:²

* Մինչև 1918թ. ռուսական պաշտոնական շրջանակներն ադրբեջանցիներին անվանում էին Կովկասի թաթարներ, իսկ մենք՝ հայերս նրանց անվանում էինք թուրքեր, որն ավելի ճիշտ էր:

¹ ՀՀ ԱԱ, ֆ 198, գ. 16, թ. 2:

² Նույնը:

1918թ. նոյեմբերի 29-ին Թբիլիսիից ստացվեց տարածքային հարցերի լուծման մասին Վրաստանի կառավարության «նոր» տեսակետը: Վրացական կողմի կարծիքով հայ-վրացական սահմանագիծը պետք է անցներ նախկին Թբիլիսիի նահանգի հարավային սահմանով, այսինքն՝ Լոռին և Ախալքալաքը մտնում էին Վրաստանի կազմի մեջ: Դրան հետևեցին ավելի գործնական խնդիրներ՝ կազմվեց Ախալքալաքի վրացական վարչություն, նշանակվեց նահանգապետ, գործերը բերվեցին մարտական պատրաստվածության:

Ձգալով պահի վճռական լինելը՝ վրաց կառավարող շրջանները դեռ են նետում դիվանագետի դիմակը և, հաղթողի կեցվածք ընդունելով, հայտարարում, - «Վրաստանի կառավարության կողմից Ախալքալաքի գավառի զբաղեցումը ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական և ո՛չ էլ բարոյական տեսանկյունից վիճելի չէ»:³ Ըստ էության, սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Վրաստանի հետ սահմանների որոշման հարցում ՀՀ խորհրդի և կառավարության որդեգրած ռազմավարության ձախողման արձանագրում: Փաստորեն, Հայաստանի զգուշավոր դիվանագիտության պատրանքը, թե հնարավոր կլինե՞ր Բորջալուի հյուսիսային շրջանները միակողմանիորեն Վրաստանին զիջելու ճանապարհով նրան հեռացնել անվիճելիորեն հայկական տարածքներից, հոգս ցնդեց: Ավելին, վրաց իշխանությունը, ոգևորված Ախալքալաքի «հաջող որսով», դարձավ ավելի սանձարձակ, ուստի ուժեղացավ Լոռու գավառի նկատմամբ նրա հավակնությունը:

Իրավիճակը տագնապալից էր, և հայ պատգամավորները ձգտում էին ամեն ինչ անել խաղաղ ճանապարհով բոլոր հարցերը լուծելու և խաղաղություն պահպանելու համար: Հարցը քննարկվում է խորհրդարանի բոլոր խմբակցություններում և, ի վերջո, ընդունվում է դաշնակցական խմբի առաջարկը. «Դաշնակցական ֆրակցիան, հավանություն տալով կառավարության արած քայլերին, առաջարկում է շարունակել նույն ճևղով՝ ամեն ջանք գործադրել՝ խաղաղ ճանապարհով լուծել առաջ եկած կոնֆլիկտը, եթե այդ չօգնի և Վրաստանը ագրեսի (մեջբերումը կատարվում է ըստ բնագրի - Ս.Բ.), քայլեր անի՝ զենքի ուժով պաշտպանել Հայաստանի իրավունքները»:⁴ Հայ-վրացական բախումը դառնում էր անխուսափելի, և դեկտեմբերի 13-ին բռնկվեց հայ-վրացական զինված ընդհարումը: Պատերազմի կանխման բոլոր փորձերն իզուր անցան. «Եվ դեպքերն ընթացան իրենց ճանապարհով. խոսքը մնացել էր զենքին»:⁵

Փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս հարցում իր վճռական դերն ունեցավ Թուրքիան: Թուրք-վրացական գաղտնի համաձայնագրերը հիմնականում ուղղված էին մեր ժողովրդի դեմ:

Հայկական զորքերը Դ.Կանայանի գլխավորությամբ հանդես բերեցին առավել կազմակերպվածություն, մարտական գործողությունների վարման հմտություն և առանց մեծ ջանքերի ու զոհերի մաքրեցին հայկական տարածքները վրացական զորքերից: Հայկական զորքերն ընդհուպ մոտեցան Թբիլիսիին և կարճ ժամանակում վրացիներից ազատագրեցին Լոռին և Ախալքալաք գավառի հարավային մասը: Պատերազմական գործողությունները վերջացան 1918թ. դեկտեմբերի 31-ին՝ անգլիացիների միջամտությամբ: Ո՞վ հաղթեց այս պատերազմում, դժվար է ասել, բայց որ մեր զորքերը կատարեցին իրենց պարտականությունները, դա փաստ էր: Միմոն Վրացյանն ասում է. «Հերթը քաղաքագետներինն էր. պետք էր ամեն ինչին պայմանագրային բնույթ տալ»:⁶ Չինադադարի հաջորդ իսկ օրը մեր պատվիրակությունը մեկնեց Թբիլիսի՝ նոր բանակցությունների: Հայ-վրացական խորհրդածողովը 1919թ. հունվարի կեսին սկսեց իր աշխատանքները և գումարեց իր առաջին միտքը: Այս կոնֆերանսում Հայաստանը լուծելու էր երկու հարց. 1. Լոռին և Ախալքալաքը միացնել մայր հայրենիքին, 2. Ելք դեպի Բաթումի՝ փրկելու սովահար ժողովրդին: Օրակարգի հարցերն էին. 1. փոխադարձ անկախության ճանաչում և դիվանագիտական հարաբերությունների վերականգնում. 2. հաղորդակցության և երթևեկության պայմանների վերականգնում. 3. տրանզիտ. 4. փոստ-հեռագրական համաձայնություն. 5. հայկական կորպուսի գրաված

³ Հայաստանի հանրապետությունը 1918-20թթ., (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 75, փաստաթուղթ 51:

⁴ Նույն տեղում, թ. 4:

⁵ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 229:

⁶ Նույնը:

գույքի վերադարձը. 6. հայկական կառավարությանը պատկանող 13 միլիոն գումարը վերադարձնելու խնդիրը: Այս հարցերի քննարկումը տևեց երեք ամիս: Արդյունքում ընդունվեցին վերոհիշյալ հարցերի կարգավորման վերաբերյալ որոշումներ և մարտ-ապրիլ ամիսներին արդեն վերականգնվեցին հայ-վրացական հարաբերությունները:

Հաշտության կոնֆերանսը կայացավ անգլիացիների նախաձեռնությամբ. այն վարում էր գեղապետ Ստյոպարտը և բացահայտորեն պաշտպանում էր վրացական շահերը: Նրանց պարտադրանքի տակ Լոռին վերածվեց «Չեզոք գոտու», իսկ Ախալքալաքի գավառը, հայ բնակչության համար «որոշակի երաշխիքներով», ժամանակավորապես տրվեց Վրաստանին:

Հայ-վրացական վեճը, սակայն, սրանով չավարտվեց. այն դեռ երկար էր շարունակվելու: «Այս շրջանում, վրաց տիրապետության օրով, - գրում է ժամանակի մասնուր, - սկիզբ առած ավագակությունը ավելի ընդարձակվեց, անհատական թալանը փոխվեց մասսայականի, թալանվում են բոլորը, գյուղերը, բռնաբարման և առևանգման դեպքեր են տեղի ունենում»:⁷

Հայ-վրացական երկրորդ խորհրդածողովը սկսվեց 1919թ. սեպտեմբերին, որի ժամանակ հայերը ցանկություն հայտնեցին հայ-վրացական համագործակցության վերաբերյալ՝ ընդդեմ թուրքերի և բոլշևիկյան շարժման, սակայն վրացիները, դավաճանելով իրենց վաղեմի բարեկամներին, ընտրեցին չեզոքության քաղաքականությունը և հայերին թողեցին մեն-մենակ թշնամու դեմ:

Հայ-վրացական հարաբերություններում նշված տարիներին առանցքային տեղ էր գրավում Լոռու «Չեզոք գոտու» խնդիրը: Լոռու «Չեզոք գոտին» առաջացել էր 1918թ. հայ-վրացական պատերազմի հետևանքով: 1919թ. հունվարի 9-17-ը Թիֆլիսում անգլիացիների ղեկավարությամբ և Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ որոշվում է չեզոք գոտում մտցնել հատուկ կառավարում՝ երկու պետությունների լիազոր ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անգլիական զենեթալ նահանգապետի վերահսկողությամբ: «Չեզոք գոտու» մեջ մտնում էին նախկին Բորչալուի գավառի, Ալավերդու, Ուզունլարի և Վորոնցովկայի շրջանները՝ իրենց 41 գյուղերով: 1920թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ առկա էր թուրքական բանակի Լոռի ներխուժելու վտանգը, Հայաստանի և Վրաստանի միջև նոյեմբերի 13-ին կնքվում համաձայնագիր, ըստ որի՝ վրացական զորքերը պետք է ժամանակավորապես (3 ամսով) զբաղեցնեին «Չեզոք գոտին»:

Հայ-թուրքական պատերազմում Հայաստանի պարտությունից և նրա խորհրդայնացումից հետո վրացական իշխանությունները խախտում են համաձայնագիրը և զորքերը մտցնում նաև «Չեզոք գոտու» սահմաններից դուրս հայկական ութ այլ բնակավայրեր՝ Ջալալօղլի (Մտեփանավան), Շահալի-կայարան, Փամբակ, Քոլագերան և այլն: Լոռում հաստատվում է վրացական զենեթալ-նահանգապետություն, կառավարումից հեռացվում է Հայաստանի լիազոր ներկայացուցիչը: Ինչպես նշվում է Լոռու ռազմահեղափոխական կոմիտեի հաղորդագրության մեջ՝ «այդ գրավված շրջաններում թագավորում էր սանձարձակ վերաբերմունք և ամենախայտառակ կողոպուտ»:⁸

Հայաստանի խորհրդայնացումից հետո, երբ թուրքական զորքերի Լոռի ներխուժման վտանգը վերացել էր, Վրաստանի կառավարությունը ոչ միայն պատրաստակամություն չհայտնեց հեռացնել իր զորքերը, այլև ձգտում էր Լոռին միացնել Վրաստանին, լայն քարոզչություն անցկացնելով տեղի բնակչության մեջ: Հայաստանի «Հեղեղի տեղեկություններով, - նշում էր Բաքվի «Կոմունիստ» թերթը, - Վրաստանի կառավարության անդամ Չխեիձեն Վրաստանի սահմանադիր ժողովի հինգ անդամների հետ «Չեզոք գոտում» ֆիզիկական ուժի ճնշման ներքո բնակչությանը պարտադրում էր ընդունել բանաձևեր՝ ամբողջությամբ Վրաստանին միանալու համար: «Գոտու» խորհրդային վարչության անդամներն ապօրինաբար ձերբակալվում են և ուղարկվում են Քութայիսի բանտ»:⁹ Վրացական իշխանությունների նման գործելակերպը որևէ ար-

⁷ «Չանգ», 1919, 30 ապրիլի, N 36:

⁸ «Կոմունիստ» 1921, 11 փետրվարի, N 53:

⁹ «Комуніст», Баку, 1921, 11 января, N 8.

դյունք չի տալիս, ընդհակառակը, ստիպում է Լոռու բնակչությանը էլ ավելի համախմբվել և ուղիներ որոնել վրացական լծից ազատվելու համար:

Արդեն 1920թ. դեկտեմբերից ինչպես Լոռու, այնպես էլ Հայաստանի այլ շրջանների մի շարք գյուղերում (Պրիվոլնոյե, Գյառգյառ, Վորոնցովկա, Արմանիս, Նովա-Պոկրովկա, Նովա-Միխայլովկա և այլն) հրավիրվում են հասարակայնության ժողովներ, որտեղ բնակչությունը, արտահայտելով իր գայրույթն ու վրդովմունքը վրացական բռնակցության դեմ, դիմումներ է հղում Խորհրդային Ռուսաստանի և Ռուսաստանի իշխանություններին՝ պահանջելով Կարմիր բանակի օգնությամբ դուրս քաշել մենշևիկյան զորքերը Լոռուց և այն միացնել Խորհրդային Հայաստանին:¹⁰

Խորհրդային Հայաստանի Հեղկոմը Երևան հասնելուն պես դեկտեմբերի 7-ին և 1-ին հուլիսից է հղում Վրաստանի կառավարությանը՝ Լոռուց վրացական զորքերը դուրս բերելու և Հայաստանի շրջափակումը վերացնելու պահանջով: Հրաժարվելով բավարարել Հայկեղկոմի պահանջը՝ վրացական իշխանությունները մատնանշում են նոյեմբերի 13-ի համաձայնագրի դրույթների ճշգրիտ կատարումը իրենց կողմից: 1920թ. դեկտեմբերի 24-ին Հայկեղկոմը որոշում է կրկնել պահանջները և վրացական զորքերի դուրսբերումը համարել Հայաստանի և Վրաստանի միջև բանակցություններ սկսելու պայման:

1920թ. դեկտեմբերի 29-ին ՀԽՍՀ արտգործօժովն Ա.Բեկզադրյանը, համաձայն հեղկոմի որոշման, հուլիսից է հղում Վրաստանի արտգործնախարարին, պատճենը՝ Վրաստանում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Շեյմանին, Մոսկվա՝ արտգործօժովն Չիչերինին, Բաքու՝ արտգործօժովն Հուսեյնովին, որտեղ նշում է, որ նոյեմբերի 13-ի համաձայնագրի վրա վրացական կողմի պնդումները ճակատան են, որովհետև այն վերացված է վրացական կառավարության գործողություններով: Նշելով, որ Հայաստանի խորհրդայնացումով հայ-վրացական համաձայնագիրը կորցրել է իր նշանակությունը, Բեկզադրյանը հայտնում է որ Հայաստանի իշխանությունները պատրաստ են վիճելի հարցերի խաղաղ լուծմանը և դրանք արագացնելու համար նպատակահարմար են գտնում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությունը:¹¹

Այսպիսով, Հայաստանի իշխանությունները հնարավորություն էին տալիս Ռուսաստանին միջամտել հայ-վրացական հարաբերությունների և վիճելի հարցերի կարգավորմանը: Վրացական իշխանությունները շտապելու պատճառներ իսկապես ունեին. նրանց չէր կարող չանհանգստացնել Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը հայ-վրացական տարաձայնություններում Լոռու «Չեզոք գոտու» հարցի շուրջ:

1921թ. փետրվարի 7-ին Վարաքիլիսայում կազմակերպվում է Լոռու ռազմա-հեղափոխական կոմիտեի՝ Հովսեփ Լազյանի գլխավորությամբ: Կոմիտեն որոշում է ապստամբությունը «Չեզոք գոտում» սկսել փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը: Ապստամբության շտաբը դիմում է մաս 11-րդ Կարմիր բանակի օգնությանը: Գ.Օրջոնիկիձեի կարգադրությամբ 11-րդ բանակի զորամասերը անցնում են «Չեզոք գոտու» սահմանը և օգնության հասնում հայ ապստամբներին: Հաջողվում է փրկել մաս Ըահալիի կամուրջը: Ապստամբությունն ավարտվում է հաղթանակով: 11-րդ Կարմիր բանակի ճնշման տակ վրաց մենշևիկյան զորքերը խուճապահար նահանջում են: Ազատագրված Լոռին միավորվում է մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին:

1921թ. փետրվարի 17-ին Հ.Լազյանը հեռագրում է 11-րդ բանակի ռազմա-խորհրդին՝ Երևան և Մոսկվա. «Ապստամբական շարժման ալիքը անկասելի գրոհով Լոռուց անցել է Վրաստանի խորքը, շարժվում է դեպի Թիֆլիս, և Ռուսաստանի Կարմիր բանակը պարտավոր է իր պողպատի ջոկատները միացնել ապստամբների տողաններին», այդ «հույսով դեպի հյուսիս է նայում ապստամբ Վրաստանը»:¹² Ընդառաջելով այս կոչին՝ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը նույն օրը հրաման է արձակում «Վրաստանի դեմ ընդհանուր հարձակման անցնելու մասին»: 1921թ. փետրվարի

¹⁰ Հոկտեմբերյան Մոցիսիստական մեծ հեղափոխությունը և Մովեստական իշխանության հաղթանակը Հայաստանում, Եր., 1960, էջ 428:

¹¹ Հեղափոխական կոմիտեիները Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, (1920թ. նոյեմբեր, 1922թ. հունվար), Եր., 1974:

¹² Հեղկոմները Հայաստանում, էջ 83-89:

16-ին նման կոչով Կարմիր բանակին արդեն դիմել էր Բորչալուի գավառի Շուլավեր գյուղում կազմակերպված Վրաստանի Հեղկոմը, որը Վրաստանը հայտարարել էր խորհրդային հանրապետություն:¹³

Ազատագրելով Լոռին՝ հայկական հատուկ նշանակության ջոկատը և Լոռու պարտիզանական խումբը 11-րդ բանակի զորամասերի հետ միասին 18-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատար Պ.Կուրիչկոյի հրամանատարությամբ Բորչալուի գավառի վրայով մտնում են Վրաստան, և հետապնդելով վրացական զորքերին, հասնում մինչև Թիֆլիս: 1921թ. փետրվարի 25-26-ին Վրաստանը խորհրդայնացվում է:

Խորհրդային Հայաստանը ոչ միայն իրեն վերադարձրեց հայկական տարածքների կարևորագույն մասը, այլ կանխեց նաև դրանց հարող բնակավայրերի հնարավոր կորուստը ևս: Վրաստանի խորհրդայնացումը մեծ նշանակություն ունեցավ Հայաստանի համար. նախ, դեպի Հայաստան տանող հաղորդակցության ուղիների ապաշրջափակման տեսակետից և ամենագլխավորը՝ եթե Վրաստանում իշխանության գլուխ մնային մենշևիկները, ապա բավականին կարվեին հայ-վրացական հարաբերությունները, որոնք Հայաստանի խորհրդայնացումից հետո արդեն իսկ լարված էին:

Նկարագրելով Լոռու ապստամբության օրերին Թիֆլիսում տիրող իրադրությունը՝ անվանի հայագետ Լեոն խոստովանում է, որ «անհնարին չէր այս տեսակ մթնոլորտի մեջ նաև հայկական կոտորածը» և հիացմունքով է նշում, որ այս ամենին վերջ տվեց Վրաստանի խորհրդայնացումը:¹⁴

Եթե Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների համար «Չոզոք գոտու» ապստամբությունը կարևորվում էր Վրաստանի խորհրդայնացման հետևանքով, ապա Լոռու ազատագրման և «խորհրդայնացման գաղափարը նրա բնակչության միահամուռ ցանկությունն է», և, ինչպես նշում է Հ.Լազյանը. «ապստամբության ժամանակամիջոցում նրանք թույլ չեն տվել ոչ մի դավաճանություն, ոչ մի անախորժ դեպք»:¹⁵

Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը Վրաստանի հետ ունեցած սահմանային հարցերի վերաբերյալ կազմեց պաշտոնական փաստաթղթեր: Դրանցից մեկում տարբեր տեսանկյուններից հիմնավորվում էր Ախալքալաքի գավառը Հայաստանին միացնելու հայկական կողմի պաշտոնական տեսակետը:¹⁶ Ինչպես Լոռու «Չոզոք գոտու», այնպես էլ Ախալքալաքի և Խրամի վիճելի շրջանների՝ Խորհրդային Հայաստանին միացնելու հարցերն իրենց իրավաբանական ձևակերպումները ստացան 1921թ. երկրորդ կեսին: Հուլիսի 7-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը Ստալինի, Խորհրդային Հայաստանի և Վրաստանի արտգործժողկոմներ Մոսկվայի և Սվանիձեի մասնակցությամբ որոշում է Լոռու ամբողջ «Չոզոք գոտին» միացնել Խորհրդային Հայաստանին, իսկ Ախալքալաքի և Խրամի շրջանների հարցը փոխանցել Վրաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի քննարկմանը:¹⁷ 1921թ. հուլիսի 16-ին Վրաստանի կոմկուսի Կենտկոմը հաստատում է Կովկասյան բյուրոյի որոշումը Լոռու «Չոզոք գոտու» վերաբերյալ, իսկ ինչ վերաբերում է Ախալքալաքի և Խրամի շրջաններին, ապա, ելնելով Թիֆլիսի հետ այդ շրջանների «ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական կապվածության նկատառումներից», որոշում է մերժել դրանց զիջումը Հայաստանին:¹⁸

1921թ. նոյեմբերի 6-ին Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը և Վրաստանի հեղկոմի նախագահ Պ.Մոլիվանին Թիֆլիսում ստորագրում են Հայաստանի և Վրաստանի միջև սահմանի մասին համաձայնագիր, ըստ որի՝ ամբողջ Լոռին մնում է ՀԽՍՀ-ի, իսկ Ախալքալաքի և Խրամի շրջանները՝ Վրաստանի կազմում:¹⁹

¹³ *Борьба за победу Советской власти в Грузии, документы и материалы 1917-1921, Тбилиси, 1958, стр. 659.*

¹⁴ *Լ և ռ, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 461:*

¹⁵ *Հեղկոմները Հայաստանում, էջ 103:*

¹⁶ *ՀՀ ԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 75, ք. 2, գ. 42, ք. 55:*

¹⁷ *ՀՀ ԱԱ, Հավաքածու 1, գ. 7, ք. 45:*

¹⁸ *С. Х а р м а н д а р я н, Ленин и становление Закавказской Федерации (1921-1923), Ер., 1969, стр. 110.*

¹⁹ *Նույն տեղում, էջ 111:*

Հայաստանը փորձեց արդարացի լուծման հասնել զոնե ներքին մանր սահմանային հարցերում կամ Վրաստանին մնացած տարածքներում հայության համար ապահովել ինքնավարություն: 1922թ. մի խումբ հայ գործիչներ նախագիծ ներկայացրին Ախալքալաքի գավառից և Բորչալուի հայաբնակ գյուղերից Վրաստանի ՄԽՀ կազմում մի հայկական ինքնավար միավոր ստեղծելու մասին: Սակայն վրաց պետական շրջանակները, մտավորականության շատ ներկայացուցիչներ սվիններով ընդունեցին այդ նախագիծ-առաջարկը՝ այն դիտելով իբրև Վրաստանն անդամահատելու քայլ և 1923թ. հասան նրա մերժմանը:

Ջավախքում տիրող մերօրյա սրված իրավիճակը այս բոլորի հետևանքն է: Անհրաժեշտ է գտնել մի կենսաձև, որն ապահովի տեղի բնակչության խաղաղ գոյակցությունը:

АРМЯНО-ГРУЗИНСКИЕ ОТНОШЕНИЯ В ПЕРИОД с 1916 по 1921г.г.

___ Резюме ___

___ С. Карян ___

После приобретения независимости армяно-грузинские отношения формировались во многом под воздействием противоречивых политических процессов. Взаимоотношения двух народов установились сразу же после обретения этими народами независимости.

Важнейшими факторами, воздействовавшими на развитие армяно-грузинских взаимоотношений, были: наличие в Грузии многочисленной армянской диаспоры, многообразные экономические и военно-политические отношения между двумя республиками. К этим обстоятельствам добавились территориальные споры, которые привели к вооруженным столкновениям (с 13-ого по 31-ое декабря 1918 года).

В целом, несмотря на определенные противоречия во взаимоотношениях Армении и Грузии, удалось избежать дальнейшего развития конфликта и восстановить нормальные межгосударственные отношения.

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԳԱՎԱՌՈՒՄ 1918-1920թթ.

1918 թվականի դեկտեմբերին թուրքերի հեռանալուց հետո Ալեքսանդրապոլի գավառի իշխանությունները ձեռնամուխ են լինում կրթական գործի կազմակերպմանը: Առաջնային նշանակություն է տրվում հատկապես դպրոցին: ՀՀ Խորհրդարանը դպրոցական գործը վերականգնելու և դպրոցը քաղաքականությունից հեռու պահելու նպատակով 1918թ. սեպտեմբերի 11-ին օրենք էր ընդունել, որի հիմքում ընկած էր դպրոցի կառավարման հասարակական սկզբունքը: Այդ օրենքով դպրոցը ՀՀ պետության մենաշնորհը չէր համարվում և ընդունվում էր ազատ դպրոցական համակարգը: Պետական գանձարանից նպաստ ստացող դպրոցները հանձնվում էին հանրային կրթության նախարարին, տեղական ինքնավար մարմիններին, դպրոցական շրջանային տեսուչներին, դպրոցների մանկավարժական խորհուրդներին, ավագ ուսուցիչներին և հոգաբարձուներին:¹ Փաստորեն հանրապետության տարածքում գործող նախկին պետական, եկեղեցական-ծխական և այլ տիպի դպրոցները հնարավորություն էին ստանում ազատ գործելու: Միաժամանակ օրենքը լուրջ ֆինանսական դժվարությունների առաջ էր կանգնեցնում դպրոցներին դպրոցաշինության, գրեմական պիտույքների ու դասագրքերի հայթայթման և ուսուցիչների աշխատավարձերի վճարման հարցերում:

Ալեքսանդրապոլում 1918 թվականի հոկտեմբերից գործում էին ս. Փրկչի վիճակային, Արդուքյան օրիորդաց և ս. Լուսավորչի «Խրիմյան» դպրոցները: Ալեքսանդրապոլի թեմակալ առաջնորդ Արտակ վարդապետի Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսին ուղղված զեկուցագրում նշվում է, որ ս. Լուսավորչի Խրիմյան դպրոցի հոգաբարձությունն աղքատ է և առանց պետական նպաստի ուսուցիչներին աշխատավարձ տալ չի կարող: Հայտնելով այս մասին, Արտակ վարդապետը խնդրում է Խորեն եպիսկոպոսին՝ այս դպրոցները ևս հաշվի առնել պետությունից նպաստ խնդրելու դեպքում:² Ինչ վերաբերում է Արդուքյան օրիորդաց դպրոցին, ապա 1918թ. հունվարի 23-ին Գևորգ Ե կաթողիկոսին ուղղված դպրոցի հոգաբարձության խնդրագրում հայտնվում է, որ խնդրել են Ալեքսանդրապոլի Քաղաքային վարչությունից՝ քաղաքապատկան ազատ հողամասերից մեկը ձրիաբար հատկացնել դպրոցի կառուցվելիք շենքի համար: «Ի պատասխան հոգաբարձութան այս դիմումի,- ասվում է խնդրագրում,- քաղաքային վարչությունը իր դեկտեմբերի 16-ի N 314 գրութեամբ յայտնում է, որ Քաղաքային խորհուրդը՝ նոյեմբերի 23-ին կայացած իր նիստում որոշել է՝ Երևանեան փողոցի վերայ, քաղաքի Կենտրոնում, Սուրբ Աստուածածին եկեղեցուն մօտիկ գտնւած ազատ հողամասը (669,4 քառ. սժ.) յատկացնել Արդուքեան դպրոցի նոր շէնքին այն պայմանով, որ դպրոցիս հոգաբարձութիւնը շէնքի կառուցումը ձեռնարկէ հինգ տարւայ ընթացքում և աւարտէ այն՝ հողամասը նւիրաբերելու օրից հաշւած՝ իօթը տարւում: Կառուցւած շէնքը ընդմիշտ յատկացւելու է վերոյիշեալ դպրոցին, հակառակ դէպքում, ինչպէս և նշանակւած ժամանակամիջոցում շէնքի կառուցումը չձեռնարկելու կամ չաւարտելու դէպքում, քաղաքը իրաւունք կունենայ հողամասը յետ գրաւելու»:³ Հայտնելով այս մասին՝ հոգաբարձությունը խնդրում է կաթողիկոսի օժանդակությունը այդ մեծ գործը սկսելու համար:⁴ 1918թ. փետրվարի 5-ին Ալեքսանդրապոլի Արդուքյան Օրիորդաց դպրոցի հոգաբարձությանը գրած պատասխանում կաթողիկոսի դիվանն հայտնում է, որ. «Մ. Աթոռի ներկայ անձուկ վիճակը ոչ մի հնարատրութիւն չի տալիս որևէ օգնութիւն հասցնել դպրոցի շինութեան գործին. այդ մասին պետք է հասարակական լայն հանգանակութեան դիմել Ալեքսանդրապոլի վիճակում»:⁵

¹ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.86, ք.4:

² Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք 9, Ե. 1997, ք. 158-159:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց.2, գ. 1135, ք.1:

⁴ Նույնը:

⁵ Նույն տեղում, ք. 2:

Դպրոցների իրավասությանն էր հանձնվում նաև դասագրքերի ձեռք բերման գործը: 1919 թ. հուլիսի 9-ին Արդության դպրոցին ուղարկված շրջաբերականով հանրային կրթության և արվեստի նախարարը դպրոցի վարչությանը խնդրելով տեղեկացնել, թե ինչ դասագրքերի կարիք է զգում դպրոցը և ինչ քանակով, միաժամանակ նշում է. «Մինիստրությունս սակայն անհրաժեշտ է համարում բացատրել, որ Մինիստրութեան հոգատարութիւնը դպրանոցի վարչութեանը չի ազատում անհրաժեշտ դասագրքեր և այլ պիտոյքները Ձեր սեփական միջոցներով հայթայթելու պարտականութիւնից»:⁶

1919թ. օգոստոսին Հայաստանի Հանրապետության նորընտիր կառավարությունը Ա. Խատիսյանի գլխավորությամբ ձեռնամուխ է լինում կրթության բնագավառում արմատական բարեփոխումների իրականացմանը: Մասնավորապես նախատեսվում է սկզբնական կրթությունը դարձնել ընդհանուր, պարտադիր ու ձրի, զարկ տալ հատկապես պոռֆեսիոնալ կրթությանը, պետականացնել եկեղեցական-ծխական դպրոցները, մտցնել դպրոցների հաջորդականություն և միասնականություն, ամեն կերպ քաջալերել դպրոցների և այլ հաստատությունների բացման գործում մասնավոր նախաձեռնությունը: Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը և մասնավոր քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը մեծ աշխատանք են կատարում կառավարության կրթական քաղաքականության իրականացման համար: Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության՝ 1919թ. հոկտեմբերի 27-ի քաղաքային խորհրդին ուղղված դպրոցական գործը կազմակերպելու վերաբերյալ զեկուցման մեջ պաշտպանվում են պրակտիկ, տարրական պարտադիր և երկսեռ, արտադպրոցական տարիքի երեխաների և որ կարևոր է՝ շարունակական կրթության գաղափարները: «Ներկայ դեմոկրատիկ ինքնավարութեան պարտականութիւններից մեկն էլ հանդիսանում է,- մասնավորապես ասված է այդ զեկուցման մեջ, - դպրոցական գործը ուղիղ հիմքերի վրայ դնելը: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որի մեջ մանուկ սերունդը հնարավորութիւն ունենայ բարգավաճել և պատրաստել առողջ մտքով այնպէս, որ գործնականի հետ ծանօթանալով, պատրաստի պրակտիկ կեանքի համար»:⁷ Ձեկույցում առաջ է քաշվում նաև տարրական պարտադիր կրթության գաղափարը: Չափազանց անհրաժեշտ է համարվում հատուկ ուշադրություն դարձնել նաև արտադպրոցական տարիքի երեխաների ուսումնառությանը: Այդ նպատակով առաջարկվում է ստեղծել առանձին դպրոցներ՝ «մանկական պարտեզներ» երկու սեռի երեխաների համար: Այս հանգամանքը կարևորում էր նրանով, որ սա հիմք կարող էր հանդիսանալ հետագայում երկսեռ տարրական դպրոցներ բացելու համար: Բացի այդ՝ ապահովվում էր կրթության հաջորդականությունը: Կարևորում էր հատկապես մանկական պարտեզների բացման դաստիարակչական և սոցիալական նշանակությունը: Համարվում էր, որ դրանց բացմամբ երեխաները կկտրվեն փողոցից, և կդրվի նրանց առողջ դաստիարակության հիմքերը, իսկ ծնողներն երեխաներին տեղավորելով մանկապարտեզներում կկարողանան աշխատանքի անցնել և բարելավել իրենց նյութական վիճակը: Հետաքրքիր էր նաև մանկապարտեզների առաջարկվող ծրագիրը, որը ներառում էր ձեռարկեստ (նկարչություն), երգեցողություն, երաժշտություն (նվագակցություն և պարեր), մարմնամարզություն, նախապատրաստական գրույց-դասեր, խոսակցություն և լեզվի զարգացում, ծանոթություն բնության հետ, մանկական պատմվածքների ընթերցանություն, զբոսանք և խաղեր ու նախնական թվաբանություն:

Քաղաքային վարչությունը ենթադրում էր բաց անել սկզբում չորս մանկական պարտեզներ, որոնց ծախսը կլիներ տարեկան մոտավորապես 22000 ռուբլի: Հաճախող մանուկների համար առաջարկվում էր ամսական 100 ռուբլի վարձ, աշակերտության 50%-ին ընդունել ձրի, այնպես, ինչպես որոշված էր քաղաքային դպրոցների համար: Ուսումնավարձից ստացած փողով վարչությունը նախատեսում էր մանուկների համար կազմակերպել այդ տարիքի երեխաների համար շատ անհրաժեշտ նախաճաշ: Մույն զեկույցը ներկայացնելով քաղաքային խորհրդի բարեհաճությանը՝ վարչությունը ենթադրում էր, որ խորհուրդը կընդունի այն իր բոլոր մասերով հաստատող որոշում, ինչպես նաև կմիջոցորդի հանրային կրթության մինիստրի առաջ քաղաքային ինքնա-

⁶ ՀԱՍ ֆ. 18, ց. 1, գ. 9, թ. 10:

⁷ ՀԱՍ ֆ. 105, ց. 1, գ. 2776, թ. 4-5:

վարությանը տրամադրելու 200000 ռուբլի և չսպասելով մինչև հիշյալ գումարի ստանալը, կառաջարկի վարչությանը անմիջապես անցնել մանկական պարտեզների բացմանը:⁸ Քաղաքային Խորհրդի 1919 թ. հոկտեմբերի 29-ի նիստը որոշում է հաստատել քաղաքում 4 մանկապարտեզ բացելու վերաբերյալ վարչության որոշումը և հանձնարարել վերջինիս միջնորդել կառավարության առաջ 22 հազար ռուբլի փոխանցելու համար և առանց սպասելու այդ գումարը ստանալուն, բացել մանկապարտեզները:⁹

Կրթական գործին աջակցում էին նաև Ալեքսանդրապոլի հասարակական կազմակերպություններն ու ընկերությունները: Այսպես՝ «Արտադարձակական զարգացման ընկերությունը» 1919թ. նոյեմբերին Քաղաքային Խորհրդին ուղղված նամակում առաջարկում է կազմակերպել մանկական ակումբներ, ստեղծելով «անհատապես բազմակողմանի զարգացած առողջ քաղաքացի՝ խոր հասարակական հայացքներով»:¹⁰ Ընկերությունը, մանուկների դաստիարակությունը համարելով հասարակական զարգացման անհրաժեշտ գործոն, նշում է. - «Դաստիարակութեան նպատակն է ստեղծել հարմար միջավայր զարգացնելու երեխայի նորմալ տվյալները, ձգտել ոչ այնքան տալ գիտութեան փաստեր, որքան ստեղծել ընդունակութիւններ, այսինքն զարգացնել հոգեբանութիւնը իրա բազմակողմանի մասերով, չը բաարարելով լոկ ուսումնական տեսակներով, զարգացնել երեխեքի մեջ գիտակցութեան ընդունակութիւն, մտքի տոկունութիւն, որ նա կարողանա անմիջապէս պարզաբանել իրա շրջապատը, ինքնագործունէութիւն և հասարակականութիւն, գեղարուեստական և բարոյական նորմալ տվյալները, տալ ընդհանուր հասկանալի գիտելիքներ զանազան մասնագիտութիւններից իբրև նիւթ երեխայի ինքնուրույն կեանքի, զարգացնել մարմինը»:¹¹

Ընդառաջ գնալով Հանրային կրթության նախարարի առաջարկությանը և նկատի ունենալով ժողովրդական համալսարանների, կիրակնօրյա դպրոցների ու հայոց լեզվի դասընթացների և ընդհանրապես արտադարձակական կրթության տարածմանը կոչված հիմնարկությունների կարիքը, տարրական դպրոցների Ալեքսանդրապոլի շրջանային տեսուչը հրավիրում է զանազան դպրոցների և քաղաքային ինքնավարության ներկայացուցիչների ընդհանուր ժողով: Զննելով արտադարձակական կրթության խնդիրը, ժողովը որոշում է կազմել 11 հոգուց բաղկացած հատուկ հանձնաժողով, որի մեջ ի պաշտոնե մտնում էին նաև շրջանային տեսուչն ու քաղաքի ներկայացուցիչը: Հանձնաժողովը նպատակահարմար է գտնում արտադարձակական կրթության և դաստիարակման գործը բաժանել երեք մասերի՝ ժողովրդական համալսարան, գրաճանաչության դպրոց մեծերի և պատանիների համար և հայոց լեզվի դասընթացներ: Միաժամանակ հարց է բարձրացվում ճշտել այդ գործում հանրային կրթության նախարարության և քաղաքային ինքնավարության փոխհարաբերությունը: Ըստ Քաղաքային ինքնավարության վարչության՝ այդ գործի ուղղակի հսկողությունն ու ղեկավարությունը պետք է լինի իր ձեռքում, և դրա հիմնական պատճառաբանություններն էին.

«ա) Քաղաքային ինքնավարութիւնը ներկայ պայմաններում ներկայացնում է իրենից անելի դեմոկրատական սկզբունքներով ընտրւած մի հիմնարկութիւն, թէ իր կազմով, թէ այն խնդիրներով, որոնք դրուած են ինքնավարութեան առաջ, անելի մօտիկ կանգնած լինելով տեղական կարիքներին, անհամեմատ անելի լավ ձևով կարող է տանել այդ նորաստեղծ գործը:

բ) Քաղաքային ինքնավարութիւնների բազմաթիվ պարտականութիւնների մեջ ամենաառաջնակարգ տեղն է բռնում ժողովրդի կրթութեան գործը, իսկ Ալեքսանդրապոլի ներկայ Քաղաքային վարչութեան գործունէութեան մեջ կրթական գործը ամենակենտրոնական դերն է բռնում, որի համար կրթական գործի բաժինը յանձնւած է Վարչութեան անդամներից մեկին անելի օգտավետ և գեղեցիկ տանելու համար, իսկ Քաղաքային Խորհուրդը որպէս օգնական տուել է Վարչութեան անդամին իր կողմից ընտրւած մասնագետներից յատուկ դպրոցական յանձնաժողով:

⁸ ՀԱՍ ֆ. 105, գ. 1, գ. 2776, թ. 4-5:

⁹ Նույնը:

¹⁰ Նուն տեղում, գ. 2777, թ. 1:

¹¹ Նույնը:

զ) Քաղաքային ինքնավարութիւնը տիրող պայմաններում հանդիսանում է իբրև կենտրոնական իշխանութեան տեղում ավելի հեղինակատր և ազդեցիկ մի օրգան, բնակչութեան բոլոր խավերն էլ դէպի նա վերաբերում են վստահութեամբ և հավատով և նրա բոլոր գործերին ամեն կերպ օգնում են: Քաղաքային ինքնավարութեան շուրջը նման խնդիրներում կարելի է հաւաքել ամեն տեսակի ու հոսանքի մարդկանց, որոնց աշխատանքն ու աջակցութիւնը սոյն և նման գործերում շատ անհրաժեշտ է:

դ) Եւ վերջապէս յանձնելով վերոյիշեալ գործը Քաղաքային ինքնավարութեանը, ավելի նպատակայարմար կերպով կիրականանայ արտադարձական կրթական գործի բոլոր հիմնարկութիւնների հսկողութիւնը: Քաղաքային ինքնավարութիւնը կհանդիսանայ որպէս կանտրոլ այդ գործի թէ ծախսերին և թէ գործունեութեանը և միայն այդպիսի օրգանը, որպիսին է ինքնավարութիւնը կարող է ամբողջովին ունենալ հսկողութիւն թէ կրթական գործի ընթացքի և թէ դասարանների ամբողջ կազմի վրայ»:¹²

Ալեքսանդրապոլի տեղական ինքնավարության մարմինները հատկապէս նախանձախնդիր էին տեղում պետական համալսարանի բացման գործում: Ալեքսանդրապոլի գավառում 1918թ. թուրքերի վարած քաղաքականության հետևանքով ոչ միայն նվազել էր գավառի բնակչության թիվը, այլ փոխվել էր կազմը: Գավառը գրկվել էր երիտասարդ կարող ուժերից: Ալեքսանդրապոլի բնակչության մեծ մասը հեռացել էր քաղաքից, քաղաքում և գավառում հաստատվել էին մեծ թվով գաղթականներ: Առավել ծանր էր տնտեսական վիճակը: Գավառը բառիս բուն իմաստով թալանված էր թուրքերի կողմից: Բնակչության նվազումը, սոցիալ-տնտեսական ծանր վիճակը աղետալի հետևանքներ կարող էին ունենալ Ալեքսանդրապոլի հետագայի համար: Հետևաբար Ալեքսանդրապոլի գավառի տեղական իշխանությունների հիմնական մտահոգությունը գավառի տնտեսական զարգացման և բնակչության քանակի ավելացման խնդիրն էր: Դրա համար կարևոր նշանակություն կարող էր ունենալ մի շարք հիմնարկությունների տեղափոխումը Երևանից Ալեքսանդրապոլ: Այս առումով առանձնահատուկ էր Ալեքսանդրապոլում համալսարանի բացման նշանակությունը: Թեև Հայաստանի կառավարությունը նախատեսում էր համալսարանի բացումը Ալեքսանդրապոլում իրականացնել Երևանում համապատասխան շենքի և բնակարանների ստրկյան պատճառով, այնուամենայնիվ այն կարևոր նշանակություն կարող էր ունենալ Ալեքսանդրապոլի տնտեսական և քաղաքային կյանքի աշխուժացման գործում:

Պատահական չէ, որ երբ 1919 թվականի հոկտեմբերի 16-ին ՀՀ հանրային կրթության նախարարությունը դիմում է Ալեքսանդրապոլի քաղաքագլխին, խնդրելով պարզել, թե հնարավոր է տեղի ուսումնարանների շենքերում ժամանակավորապէս տեղավորել համալսարանը և նպաստավոր պայմաններ ստեղծել համալսարանի գոյության համար,¹³ Ալեքսանդրապոլի իշխանությունները մեծ պատրաստակամությամբ համաձայնվում են համալսարանին հատկացնել առևտրական դպրոցի մի մասը, լուծել դասախոսների բնակարանային խնդիրները և ուսանողական հանրակացարանի հարցը: Ընդ որում, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը, ելնելով վերը նշված հանգամանքներից, 1919թ. հոկտեմբերի 30-ին ՀՀ Նախարարների խորհրդի նախագահին գրում է, որ ոչ միայն հնարավոր է, այլ անհրաժեշտ է համալսարանը բացել Ալեքսանդրապոլում:¹⁴ Ավելին, նա առաջարկում է Ալեքսանդրապոլ տեղափոխել մի շարք այլ հաստատություններ ևս, ինչպէս օրինակ՝ փոստ-հեռագրատունը, երկաթուղային, ջրային և գյուղատնտեսական վարչությունները: «Շնորհիվ բոլոր մինիստրությունների ու դրանց ճիւղերի կենտրոնացման Երևանում,- գրում է քաղաքագլուխը,- որը իրոք չի յարմարեցված այդ բանի համար, ստեղծել է մի վերին աստիճանի ծանր կացութիւն, որը թէ քաղաքացիներին և թէ ծառայողներին հիմք է տալիս դժգոհելու: Բնակչութեան խտացումը Երևանում բացի անյարմարութիւններից քաղաքացիներին սպառնում է վարակիչ հիվանդութիւնների առաջանալու և այն տարածելու վտանգով և ազդում է մթերքների գնի բարձրացման վրայ: Սեզ թվում է, որ այնպիսի հաստատություններ, ինչպիսիք են համալսարանը, երկաթուղին, ջրային, գյուղատնտեսական,

¹² ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2777, ք. 4-5:

¹³ Նույն տեղում, գ. 2798, ք. 1:

¹⁴ Նույն տեղում, ք. 2:

փոստ հեռագրատան վարչությունները, առանց գործին վնասելու կարելի է փոխադրել Ալեքսանդրապոլ, որը աշխարհագրական դիրքով հանդիսանում է Հայաստանի սկիզբը, իսկ առողջապահական և մթերքների էժանութեան տեսակետից ավելի բարեխառն դրուժեան մեջ է գտնում և կարող է տեղադրել վերոյիշեալ բոլոր հիմնարկները: Առաջարկում ենք կազմակերպել համալսարանի աշխատանքները Ալեքսանդրապոլում: Մեր առաջարկի ընդունման դեպքում ա), շնչասպառ Երևանը կթեթևանա և բ), Ալեքսանդրապոլին կտրի առաջ գալու և զարգանալու հնարավորությունը»:¹⁵

1919թ. դեկտեմբերի 5-ին հանրային կրթության նախարարի զեկույցի հիման վրա Նախարարների խորհուրդը որոշում է համալսարանը ժամանակավորապես Ալեքսանդրապոլում բացել և մինչև 1919-20թթ. ուսումնական տարվա վերջը պարապմունքներն այնտեղ անցկացնել:¹⁶ Ալեքսանդրապոլի տեղական իշխանություններին չի հաջողվում կարճ ժամանակում բոլոր պայմանները ստեղծել համալսարանի համար,¹⁷ և 1920թ. հունիսի 21-ին Նախարարների խորհուրդը որոշում է համալսարանը տեղափոխել Երևան:¹⁸ Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը, նրա լիազոր ներկայացուցիչները, հանդես գալով դրա դեմ, հանրային կրթության նախարար Գ. Ղազարյանին ներկայացնում են մի զեկուցագիր, որում համալսարանի տեղափոխումը համարում են վնասակար, գրելով. «Ամբողջ երկրի նյութերը քամել և խտացնել մի կետում, և գավառը արյունաքամ անել, համարում ենք մեծապես վնասակար հայրենիքի համար»: Նույնիսկ առաջարկվում է Ալեքսանդրապոլում գտնվող նախկին ռուսական գորանոցի Պոլիգոնի տարածքը՝ 56 մասնաշենք տրամադրել համալսարանի ֆակուլտետներին, այն դարձնել ուսանողական ավան:¹⁹ Հարկ ենք համարում նշել, որ համալսարանը մի շարք պատճառներով այդպես էլ չվերաբացվեց Երևանում, և միայն Հայաստանի առաջին հանրապետության անկումից և խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այն շարունակեց աշխատել՝ 1920 թվականի դեկտեմբերի 17-ին Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսար Աշոտ Հովհաննիսյանի հրամանով վերակազմվելով և վերակոչվելով Երևանի ժողովրդական համալսարան:²⁰

Չնայած 1918-1920թթ. Ալեքսանդրապոլի գավառի համար ծանր այդ ժամանակահատվածում կրթական համակարգի զարգացման բազմաթիվ խոչընդոտներին, տեղական իշխանության մարմինները այստեղ զգալի աշխատանք կատարեցին Հայաստանի Հանրապետության կառավարության կրթական քաղաքականության իրականացման ուղղությամբ: Այդ քաղաքականության հիմքում ընկած սկզբնական ընդհանուր, պարտադիր երկսեռ, պրակտիկ և արտադպրոցական կրթության, բնակչության անգրագիտության վերացման և կրթության շարունակականության գաղափարները հետագայում ընկան խորհրդային կրթական համակարգի հիմքում և հետագա զարգացում ստացան խորհրդային տարիներին:

ОРГАНИЗАЦИЯ ОБРАЗОВАТЕЛЬНОГО ДЕЛА В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ В 1918-1920 гг.

___ Резюме ___

___ К. Алексанян ___

В сложных для Александропольского уезда условиях 1918-1920 гг. местные органы власти проделали значительную работу по осуществлению образовательной политики правительства РА.

Местные органы власти воплотили в жизнь такие идеи этой политики, как организация начального, общего, обязательного, совместного,

¹⁵ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2798, ք. 3:

¹⁶ Երևանի համալսարան, 1918-1920թթ. (վավեր. ժողովածու), հ. 81, Եր., 1995, էջ 135:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1159, ք. 3:

¹⁸ Երևանի համալսարան, հ. 141, էջ 214:

¹⁹ Նույն տեղում, հ. 138, էջ 209-211:

²⁰ Նույն տեղում, հ. 190, էջ 280:

прикладного, внешкольного и непрерывного образования и ликвидации безграмотности.

Первостепенное значение придавалось организации школьного дела, а также внешкольному образованию и воспитанию детей, посредством организации народных университетов, школ грамотности для пожилых и курсов армянского языка. Городское самоуправление считало себя ответственным за организацию образовательного дела. Особенно последовательными они оказались в вопросе создания в Александрополе государственного университета, считая, что он может иметь существенное влияние как на рост численности населения, так и в решении экономических и политических вопросов.

ԱՍԵԿՈՍԵՆԵՐԻ ՈՒ ԲԱՄԲԱՍԱՆՔԻ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒՄԸ
ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Գյումրեցի նկարիչ Գևորգ Բրուտյանն ունի կենցաղային տեսարաններ պարունակող գրչանկարների «Հին Գյումրի» կոչվող շարք (1937թ): Ծաղրանկարներ համարվող, սակայն իրենց բնույթով ավելի շուտ շարժ հիշեցնող նկարներում հեղինակը ծաղրի է ենթարկում քաղաքի ոչ վաղ անցյալի «հետամնաց» մի շարք սովորույթներ:¹ Կենցաղային ժանրի տեսարանների (ամուսնական, հուղարկավորման արարողություններ, բաղնիքի ծես և այլն) մեջ մեր ուշադրությունը գրավեց բամբասանքի թեմայով գծանկարը: Հայրենի քաղաքի կենցաղին ու բարքերին քաջածանոթ նկարիչը արվեստագետին հատուկ խորաքափանցությամբ և վարպետությամբ կարողացել է բամբաստող կանանց ձեռքերի, աչքերի ու բերանի շարժումների միջոցով տալ բնակչության մեջ լայնորեն տարածված այդ սովորույթի ամբողջ պատկերը: Այս աշխատանքը մեզ հետաքրքրեց նրանով, որ այդ բացասական երևույթը կենցաղային քննարկման մակարդակից սովորաբար դուրս չի եկել՝ բացառությամբ դրա գեղարվեստական նկարագրությունները, որոնցից առավել ուշագրավ է Ավ. Իսահակյանի «Ուստա Կարոյի այցը սանամայրերին» պատմվածքը:² Այս գծանկարը չէր դառնա առանձին վերլուծության առարկա, եթե ձեռքի տակ չունենայինք լեռնահանրայան բամբասանքի մի քանի նմուշներ, որոնք, որպես բանահյուսության ուրույն ժանր կարևորել և հավաքել է Հրաչյա Մկրտչյանը 1977-1980 թվականներին:³



Հատկանշական է, որ բամբասանքին անդրադարձել են հատկապես գյումրեցիները՝ այն համարելով իրենց քաղաքին բնորոշ խիստ բացասական երևույթ, միաժամանակ քննադատաբար վերաբերվելով իրենց կողմից անընդունելի այդ սովորույթին:

Անշուշտ, բամբասանքը զուտ գյումրեցիներին հատուկ հատկանիշ չէ, սակայն, թերևս խորք էլ չէ, եթե գրավել է նկարչի և բանահավաքի ուշադրությունը: Մենք ևս փորձեցինք հարցում անցկացնել գյումրեցիների մեջ երկու նպատակով. մախ՝ լրացնելու ձեռքի տակ եղած նյութերը, և երկրորդ՝ պարզելու արդի հասարակության կարծիքն ու վերաբերմունքը դրա նկատմամբ: Հարցումը, որին մասնակցել են երիտասարդ և միջին տարիքի երկու սեռի ներկայացուցիչներ ցույց տվեց, որ բամբասանքի ու ասեկոսեի մասին տարբեր կարծիքներ կան հասարակության մեջ: Մի մասի կարծիքով բամբասանքը ստի վրա է հիմնված, իսկ մյուսը գտնում է, որ այն իրական հիմք ունեցող չարախոսություն է: Ինչ վերաբերում է ասեկոսեներին, ապա այստեղ ևս տարակարծություններ կան՝ պայմանավորված նախորդ հարցի պատասխանով, քանի որ սովորաբար ասեկոսեն դիտարկվում է որպես բամբասանքին հակառակ երևույթ: Այսպես՝ «Ասեկոսեն տեղեկությունը փոխանցում է, իսկ բամբասանքը՝ չափազանցում», «Ասեկոսեները անհիմն խոսակցություններ են, իսկ բամբասանքը զբաղմունք է», «Բամբա-

¹ Լ. Աթաբեյան, Գյումրեցի նկարիչներ. Գևորգ Բրուտյան, ՇՊՄԺ յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 240-241:
² Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.4, Եր., 1975, էջ 249-279:
³ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվ, Հր. Մկրտչյանի հավաքածու, FFVI: 4094-4833, FFXI: 0001-2048, FFXI: 7253-7830 (հետայսու՝ Հր. Մկրտչյանի նյութեր):

ասանքը կարող է վատ հետևանքներ ունենալ, իսկ ասեկոսեները՝ ոչ», և միայն քչերն են դրանք համարում նույն երևույթը:⁴

Իրականում բամբասանքն ու ասեկոսեն հոմանիշներ են: Ըստ Աճառյանի՝ «բամբաս բառը կազմված է *բամ* (ասում եմ) և *բաս* (ասում է) բայաձևերից, որը բարբառներում հանդիպում է ասեկոսե, կասե-կուսե, ասուաս, ըսի-ըսավ և այլ ձևերով»:⁵ Բամբասանքը բացատրվում է որպես «Մեղադրութիւն, պարսաւ, չարախոսութիւն, տրտունջ, լուտանք, թշնամանք»:⁶ «Անբարյացակամ կամ վարկաբեկիչ տեղեկություն որևէ մեկի մասին, որ տարածվում է անստույգ, ոչ ճիշտ և մտացածին լուրերի վրա»:⁷

Քրիստոնեությունը բամբասանքը համարում է մարդկությանը բնորոշ մոլորություններից մեկը, որը, հակառակվելով ուղիղ բանականությանն ու աստվածային օրենքին, ապականում է մարդուն բարոյապես և ֆիզիկապես, քանի որ արագացնում է մահը: Հայ եկեղեցին գտնում է, որ «Մի բամբասանքից սովորաբար երեք չարիք է ծնվում. առաջին՝ բամբաստող մահու չափ մեղանշում է, երկրորդ՝ լսողը մեղսակից է դառնում, երրորդ՝ բամբասվածն էլ է նույն մեղքով մեղանշում կամ ուրիշ մեղքեր ևս գործում»:⁸

Բամբասանքը դիտվում է նաև որպես ժողովրդական գրուցաբանության որոշակի ժանր, որը կարող է հիմնվել կոնկրետ դիավածի վրա, ունենալ որոշակի սյուժե և դրանից ածանցված սյուժետային գծեր, որոնք տիպորոշվում ու զարգանում են տարաբնույթ մոտիվներով ու կայուն բանաձևային հարակցումներով: Դրանք կարող են լինել նաև չպատճառաբանված հերյուրանքներ, զրպարտություններ կամ անհիմն հայտարարություններ: Ընդգծելով հասարակական կյանքի ու կենցաղի ստվերա կողմերն ու երևույթները, բամբասանքները պատկերավոր արտահայտությունների ու կայուն բանաձևերի մի համաձուլվածք են:⁹ Բամբասանքներում տեղ են գտել.

- *Առած-ասացվածքներ*–«Կընգա խորատեն չի պակսի», «Ջուրը մտնին լողալ գիտեն, քյասարն հելնին դողալ գիտեն», «Մեր հացի մեջ աղ չկա» և այլն:
- *Դարձվածքներ*–«Մե կովեն, տասը ծովեն», «Օրը մեզ է, ծեճը հագար», «Զիչ այիբ ունեյիք, քոթեշ էլ հանեցիք», «Բողորն էլ մե սանդրոյի կտավ են» և այլն:
- *Օրհնանքներ*–«Օդորմի հիրան, լուսը կաթի գերեզմանին», «Ասված քեզի գյանք տա», «Օդորմի քու անցավորներին» և այլն:
- *Անեծքներ*–«Սաբրբի լուսն քոռներ», «Գեդինը մտնիս», «Այ վայր երգրիդ գլխուն», «Ջուլումդ բըլի», «Բալեքդ թաղեն», «Էրթըլներդ էղնի, գալերդդ չէղնի» և այլն:
- *Լուտանքներ*–«Քերմըշներ», «ըզդի», «քյաֆթառ», «խուժըններ», «այլանտագ», «մեյ-մուն», «չիչո» և այլն:

Բամբասանքներում վատ գույներով ներկայացված է նաև գյումրեցուն և շիրակցուն հատուկ զվարճախոսությունն ու սրամտությունը, որը, հատկապես լավ է երևում համեմատություններում, ինչպես օրինակ՝ «Բըղի էրսամ թաղային լիագորի հանգըջեն բըրթով բոնեն, օր ձեռներդ չըկեղդդի», «Պեսուկը էքան քիչ է լըքրե, օր ֆիշենն գունը թոքրե է», «Էշը հինքն է, խողը հուրիշի հառաջը կղեն», «Օտը գիղես թե քիչը մաքրվավ. մե այլանդագը հարձակուրդ գնաց», «սատանի զիզիզ/նկատի ունի դռան զանգը Կ. Բ./, «Բոյին կիշկիմ, սուլերուն...սուլերն ուրանե բոյով ին»:¹⁰

Այն բանում, թե որքան տարածված երևույթ է բամբասանքը, կարելի է դատել *բամբասանք* բառից ածանցված բառերի մեծ բազմությամբ՝ *բամբաս* /բամբասանք, ասեկոս/, *բամբասագիր* /բամբասանք՝ զրպարտություն պարունակող գրություն՝ նամակ՝ դիմում/, *բամբասանդ* /մոլի բամբասասեր/, *բամբասասեր* /բամբասել սիրող/, *բամբասան* /բամբասկոտ/, *բամբասասիրություն* /բամբասասեր լինել, բամբասասերի բնավորություն՝ վարքագիծ/ և այլն:¹¹

⁴ Մոցհարցման արդյունքներ, թղթապանակ 2007թ., ՇՀՀԿ արխիվ:

⁵ Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Արմատական բառարան, հ. 1, Եր., 1971, էջ 385:

⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Եր., 1979, էջ 430:

⁷ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1969, էջ 277:

⁸ Պ ո ղ ո ս պատրիարք Ա դ ռ ի ո ս ե յ ի, Խրատի թանգարան, Ս. Էջմիածին, 2004, էջ 316:

⁹ Ռ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Բամբասանքն իբրև բանահյուսության տեսակ, ՇՊՄԺ հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 51-52:

¹⁰ Հ. Սկրտչյանի հավաքածու:

¹¹ Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ 165:

Ունենալով կիրարկման և կենցաղավարման լայն ոլորտներ՝ բամբասանքներն ընդգրկում են ժողովրդի սոցիալական, կենցաղային, անձնական, հոգեբանական, քաղաքական և այլ բնագավառներ: Արտահայտվելով քաղաքային բանահյուսությանը բնորոշ ժարգոնային բառերով, գոեհկարգություններով, հասարակաբանություններով ու ռուսաբանություններով, դրանք ստեղծում են ազգագրական, սոցիալ-հոգեբանական տիպորոշ միջավայր՝ որոշակի նկարագրություններով, դիպվածներով ու ըմբռումներով: Բամբասանքներում դրսևորվում են ժողովրդի բարոյահոգեբանական առանձնահատկությունները, արժեքային համակարգը, կենցաղամշակութային յուրահատկությունները և այլն:

Մովորաբար բամբասանքի նյութ է դառնում այն երևույթը, անձնական այն հատկանիշը, որը հասարակական կարևորություն է ներկայացնում: Նայած բամբասանքին մասնակցողների սեռատարիքային պատկանելությունից՝ խոսակցության թեման կարող է ընդգրկել անհատական - հասարակական հարաբերությունների լայն շրջանակ և վերաբերել կենցաղային ցանկացած հարցի՝ նայած, թե գրուցակիցների համար ինչն է կարևոր:

Ավանդաբար բամբասանքը համարվել է կանանց բնորոշ զբաղմունք և դա հաստատագրվել է քրիստոնեական հավատամքով այսպես. «Քանի որ կանայք ի բնե շատախոս ու դատարկաբան են, նրանց մոտ սովորական բան է բամբասանքը... Եվ քանի որ կանայք գիտություններից ու գաղափարներից զուրկ են և կարևոր ու օգտակար բաների մասին չգիտեն, սկսում են իրար բամբասել: Ուստի ով էլ լինի՝ դրացի, խնամի, թե ընտանիքի անդամ, գերծ չի մնում նրանց լեզվից, որովհետև բոլոր ասեղնագործություններից ավելի լավ գիտեն ծաղկեցնել բամբասանքը՝ մեկը հազարով բազմապատկելով, փոքրը մեծացնելով, լուր փիղ դարձնելով»: Կամ՝ «Կասկածամիտները, ինչպիսին են կանայք, դյուրամետ են դեպի բամբասանքը և դժվարությամբ են ողջամիտ դառնում ու բամբասելուց դադարում, որովհետև ոչ ոքի չեն հավատում, այլ իրենց չար կարծիքի մեջ հաստատում են մնում»:¹²

Գյումրու ժողովրդական իմաստությունն ասում է. «Բամբասելը և խռովելը կնկա փեշակ է»:¹³ Այդ են վկայում նաև Հ. Սլրտչյանի հավաքած նյութերը, որոնք ներկայացնում են նույն հասակային խմբի կանանց բամբասանքն ու Գ.Բրուտյանի գծանկարը՝ միջին և բարձր տարիքի բամբասող կանանց կերպարներով: Դա հաստատում է նաև Իսահակյանը. «Էնպես դուրս կուգա, որ կնկա համար լսող պետք էր. էնքան, որ ինքը խոսի: Կնկա ականջն էլեր է օդի համար, թե չէ՝ խոսքի, կնկա խոսքն էլ որ կա, իրան մանած թելեն երկեն է»:¹⁴

Մեր կողմից անցկացրած սոցիալոգիաների արդյունքները ցույց տվեցին, որ այսօր այդ կարծրատիպը հիմնականում փոխվել է, քանի որ շատերի կարծիքով բամբասանքն ընդգրկում է սեռատարիքային տարբեր խմբերը (երիտասարդներից մինչև ծերեր, այդ թվում նաև տղամարդիկ¹⁵): Դա պատճառաբանվում է այն հանգամանքով, որ արդի հասարակության մեջ մեծ թիվ են կազմում աշխատանք, որևէ զբաղմունք չունեցողները, ուստի հենց նրանք էլ ազատ ժամանակը լրացնում են բամբասելով: Հատկանշական է, որ հաճախ շեշտվում է բամբասողների կրթական մակարդակը, համարելով, որ դա կիսագրագետ կամ թերուս մարդկանց է հատուկ: Այդ է պատճառը, որ հարցվողների մի մասը գտնում է, թե բամբասանքն ավելի տարածված է գյուղերում, որտեղ, բացի այդ, մարդիկ իրար ավելի լավ են ճանաչում, քան քաղաքում:¹⁶ Այս կարծիքը, անշուշտ, չի համապատասխանում իրականությանը, քանի որ, ինչպես հայտնի է, ավանդաբար քաղաքի բնակչությունն ավելի շատ ազատ ժամանակ ուներ, քան գյուղացին:

Այն, որ բամբասելու համար պարտադիր չէ զբաղմունքի կամ աշխատանքի բացակայությունը, վկայում են հարցման այն պատասխանները, որոնք որպես բամբա-

¹² Պ ռ ղ ո ս պատրիարք Ա դ ը ի ա ն ու պ ո լ ս ե ց ի, նշվ. աշխ., էջ 312, 318:

¹³ Ն. Ն ի կ ո ղ ո ս յ ա ն, Լենինական, ՀՀ ԳԱԱ ՀԱԻՔ բանահյուսության արխիվ, FF II, էջ 7468:

¹⁴ Ավ. Ի ս ա հ ա կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 275:

¹⁵ Տղամարդկանց բամբասանքի խիստ հետաքրքիր օրինակ է Ոստա Կարոյի և բամբասանքչի սամիրիչի (որի մասին համազյուղացիներն ասում էին. «Ձիուդի բողչա է Գալոյի բերանը») գրույցը:

¹⁶ Սոցիալոգիան արդյունքներ:

ասանքի վայր նշում են նաև աշխատատեղը: Մենք դա տեսնում ենք նաև Գ.Բրուտյանի գծանկարում, որտեղ, ի թիվս մասնակից պարսպ կանանց, բամբասանքին մասնակցում է իլիկով թել մանող կին: Սա ցույց է տալիս, որ բամբասանքը ավելի շուտ որոշակի մարդկանց բնորոշ գրադմունք է, նրանց ապրելակերպի ձև, որը որոշակի նպատակներ է հետապնդում՝ չարախոսել, գրպարտել, անպատվել, վատաբանել և այլն: Այս առումով տեղին է վկայակոչել «Երաստի քանգարան»-ը. «Քանզի մոլին բամբասում է, որպեսզի ինքը բարի երևա, պարզամիտը բամբասում է, որովհետև խելացի չէ, ստախոսը բամբասում է, որովհետև դա է իր սեփական պաշտոնը, դատարկակյացը բամբասում է, որպեսզի ժամավաճառ լինի, թշնամին բամբասում է, որպեսզի վրեժ առնի, շահախնդիրը բամբասում է, որպեսզի ինչ-որ բան շահի»:¹⁷

Բոլոր ժամանակներում բամբասանքը քննադատվել է, համարվել է անվայելույց, մերժելի երևույթ, սակայն դա չի խանգարել, որ այն գոյատևի և ընդգրկի կիրարկման լայն ոլորտներ: Գյումրեցի կնոջ բարոյական բարձր վարկանիշի համար, այլ հատկությունների թվում կարևորում էր նաև խոսքի մշակույթը: Գյումրու ժողովուրդը պահանջում էր. «Կնիկը պտի խոսքի ետևն ու առաջը իմացող եղնի, բերանն էկած խոսքը չըսե, լավըն չափե, ձևե, նոր խոսի, փորեն դուս էկող խոսքը բկի քյառթերուն քցե, մնացածը ծանդը ու թեթև էնե, նոր դուս հանե: Կնիկը լողլղչի, խաբարբզան, խաբար տանող ու բերող, ուրիշներուն իրար քցող (գժտեցնող) պտի չեղնի»:¹⁸

Ըստ մեր հավաքած նյութերի, Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի բնակչության մեջ բամբասասեր կամ բամբասանքչի մարդուն տարբեր անուններ և պիտակներ են կայցրել: Դրանց մի մասը բարբառային ձևեր են, ինչպես օրինակ՝ լողլղչի, չիչո, խաբարբզան, խառնակչի, խոսք տանող-բերող, յոթ ծովի մերան (կամ յոթ մածնի մերան), ճալան-ճոթան և այլն: Մյուս խումբը ներկայացնում է ավելի ուշ (խորհրդային տարիներին) գործածության մեջ մտած և համեմատության-զուգահեռի վրա հիմնված նոր մականուններ՝ «Չաստի ռադիո», «Բիբիսի», «Բանվոր թերթ», «Փայլակ», «Լրաբեր», «Թաղի տեղեկատու» և այլն:¹⁹

Մեր ձեռքի տակ եղած բամբասանքի նյութերը, իրենց չափազանցությանը հանդերձ, հետաքրքիր տվյալներ են տալիս Գյումրու առումին կենցաղի, հատկապես կանանց գրադմունքների, նրանց հետաքրքրությունների ու հատկանիշների մասին: Բամբասանքների ժամանակ արծարծված թեմաների միջոցով կարելի է պատկերացում կազմել այն մասին, թե ինչպիսի՞ն պետք է լինեն իսկական կինն ու տղամարդը, երիտասարդն ու ծերը, նրանց արտաքինում, կամ վարքում ի՞նչն է ընդունելի կամ մերժելի, բարոյական ո՞ր հատկանիշներն են համարվում դրական կամ բացասական և այլն: Ամենաշատ քննարկվող թեմաներն են կանանց գործ անելը, արտաքինը, վարքը, պահվածքը, ընտանեկան հարաբերությունները, ամուսնությունն ու աղջկատեսը:

Գյումրեցի կնոջ համար մաքրասիրությունը ամենակարևոր հատկանիշներից մեկն է. «... թող բերանըն էրկուս պակաս խորթա էնե... յիտըկութենը խոն փարովփով չէ, բան ու գործի անունն ինչ է»:²⁰ Այդ է պատճառը, որ շատ հաճախ քննարկվում էին այն գործերը, որոնք տնից դուրս էին կատարվում՝ ի ցույց ամենքին: Այդպիսի գործերից էին վաքք անելն ու բուրդ վալը:

Ազգագրական նյութերը վկայում են, որ քաղաքում XIX դ. վերջին-XXդ. սկզբին մեծ վաքքը տանում էին «Արփաչայը, Չարբզի ձորը կամ Գյումրի չայը»: Արփաչայ վաքքի գնալը մեծ արարողություն էր, տոն՝ որին մասնակցում էին տվյալ ընտանիքի հետ միասին նաև մոտ հարազատները: Փոքր վաքքը արվում էր տանը, ընդ որում գյումրեցի կինը վաքքը յոթ ջուր էր վանում, ամեն կերպ փորձելով օճառ քիչ օգտագործել, սակայն լվալ մաքուր:²¹ Մյուս կարևոր գործը բուրդ վալն էր: Ընդունված կանոն էր տարին մեկ լվալ ներքնակների բրդերը, իսկ երեք տարին մեկ՝ վերմակներինը, այնպես որ ամռանը կանայք ցույց էին տալիս և՛ իրենց հմտությունը և՛ կարողությունը:

¹⁷ Պ ո ղ ո ս պատրիարք Ա դ ը ի ա ն ու պ ո լ ս ե ց ի, նշվ. աշխ., էջ 310:

¹⁸ Հ. Գյումրի և Գյումրի (Ալեքսանդրապոլ, Լենինական), ՀՀ ԳՄԱ ՀԱԻ ազգագրության բաժնի արխիվ, տետր 1, 1976, էջ 60:

¹⁹ Սոցիալական նյութեր:

²⁰ Հ. Գյումրի և Գյումրի, տետր 1, էջ 117:

²¹ Նույն տետրում, էջ 90-94, 118, 128-129:

Բնական է, որ լվացքի մաքրությունը և փռելու ձևը, բուրդը լվալն ու ձաղկելը, անկողինը կարելի էր դրկից-հարկանների, սկեսուրների ու տեգերկիների քննարկման և բամբասանքի թեմա էր դառնում: Բերենք օրինակ. «Բուռուրս լվացի, փռեմ քիչըմ չորնա, չըրդեմ: Ես ըսի՝ լրմգած է, հըմը չէ. էնքան լավ լրվացվավ, արբեշում դարձավ: Տեսնեյր էրեզ էն Օսանն էլ էր բուռտ լրվացե. գուլումըդ բլի. քեզի կընիզ ըսողին ինչ ըսեմ. ճըմտտե, դրեյ էր էն կողմ. կըսեմ՝ ըխչի՞, լավ չես լվացե, կըսե ընձի ձեռ կուդա: Այ վա՛յս խեղամ գըլխուտ. ես հընչի՞ բըղի քեզ պես լոգու հեդ թուլ տամ խոսա՞մ, օր դու էլ քեզի երեվագայես: Գիդե՛ չիդենք վօլ է...»:²²

Գյումրեցի կինը հատուկ էր պատրաստվում ձմռանը կամ «ձմեռվա թաղարուքին», որի մասն էր կազմում մուրաբաների և այլ պահածոների պատրաստումը: Բամբասանքի մյուս թեման այս եփոթափն էր, որը նույնպես կարևորվում էր կնոջը բնութագրելիս: Ինչպես երևում է նյութերից, պարծենալու առիթ էր բազմատեսակ ու մեծաքանակ մուրաբաների ու այլ կերակուրների պատրաստումը, գնված ապրանքի որակն ու քանակը. «...վաափշե, ընձի հըմար գինը նշանակուտուն չունի. լավն էղնի, փարին չեմ աշե. էդ էր պագաս. խո վերելի խուժընները չեմ, կերտան բագրից ապուռ-ժուրուռ կառնին գուկան... հողը աշխըրի գլխուն. ըսենք չտես եմ, ի՞նչ եմ տեսե օր. խո մեզի պես չե՞մ ճոռտե ու պոռտե... Համեն օր հինքը կըտեսներ, թե բագրեմ ինչ տեսագ ֆիշնա, գիլագ, ծորին, տիյա հերեզ էլ մոշ ու էն համտե, ի՞նչ կըսեմ. հա մալինա. թանգ ու էժնին չեմ աշե. ինչ կըսեմ կուդամ ու կառնին: Հընչի՞ չառնին. դուրբանս եմ էղե. մուրաբես, կամպոտս, սոգերս համարյա թամամ է, կըմնա պատիճան, ծիծակ խորոված էնեմ...»:²³ Մեկ այլ բամբասանքում քննարկվում է մուրաբա եփելու հմտությունը. «Մեր աշխաղողներից մեզն էր ֆիշնի մուրաբա էպէ: Ըսի՛ էրտամ շնորքը տեսնին. մուրաբա գուլումը բլի. գուն չկար հերեսը. մուրաբինը գունն է. մուրաբեն օր գունով չեղնի... չըցես վագը կարմրի... հողը քեզի պես կնիզ ըսողի գըլխուն. պեսկը էնքան քիչ է լըցրե, օր ֆիշնեն գունը թոցրեյ է. մե կովեն, տասը ծովեն. ջուր. ի՞նչ մուրաբա:»²⁴ Բերված օրինակները ցույց են տալիս նաև գյումրեցիներին հատուկ մեծախոսությունը կամ, ինչպես ժողովուրդն է ասում «մեծբերնությունը», չափազանցնելու, գլուխ գովելու, ուրիշին չհավանելու, անուն դնելու հատկությունը:

Հարկ է նշել, որ մեր ձեռքի տակ եղած բամբասանքների նմուշներում արտահայտված են նաև գյումրեցի տղամարդու որոշ ընդունելի հատկանիշներ, ինչպես օրինակ՝ «տղեն կնգա գյամը բղի ձեռը պայես», «տղամարդը բղի խըմե», «էն թարֆեն օր գուգար, կըսեյն էրնեզ տիրոջդ. մայլի կընգտիզ այս կենեյն, մե անգամ հետը խոսայն, գիդես էդոնց պես դզի՞զ էր»:²⁵

Բամբասանքների մյուս կարևոր թեման երիտասարդ աղջիկների արտաքինը, պահվածքն ու նրանց ամուսնությունն է: Բամահյուսական և ազգագրական նյութերից երևում է, թե օրինակ 1970-ական թվականներին որքան դժվարությամբ է կենցաղ մուտք գործել նորածնությունը և ինչ հետևանքներ է ունեցել: Հագուստի ազատականացումը իր հետ բերեց արտաքին տեսքի այնպիսի փոփոխություններ, որոնք նախկինում համարվում էին անվայելույշ, կնոջ, աղջկա համար անընդունելի: Ավանդական սովորույթներին հակառակ՝ միայն տղամարդուն հատուկ համարվող տաբատ (շավար) կրելը, անպարկեշտ (անբարոյական) կնոջը հատուկ շպարը, շրթունքները, մազերը ներկելն ու դիմահարդարումը ամենամեծ դժգոհությունն էր առաջացնում միջին և ավագ սերնդի ներկայացուցիչների մեջ, ինչն էլ դառնում էր բուռն քննարկման առարկա: Ինչ անուն ասես, որ չեմ կպցրեյ ավանդույթը խախտած աղջկան. «Ինչ պառողի մարդ որ գուզիս, կա. փաշեքն բաց աղջիկ է գուզիս, գյոգուզներով աղջիկ, ներկուզ քիսփաթ է գուզիս, բոբեջ մազեր, ինչ ֆաստնի ռանգ է գուզիս՝ լիքն է», «Չընկ տեսի՛ աղջիզն շավար հագնի. շավարներու փաշեստանով ճանն է քշին: Շավարը քիչ էր, հըմգա լե թաժա սոլեր ին մողա քցի, անուն լե բլաֆորմ է, ինչ սաղանա է...»:²⁶

²² Հ. Մկրտչյան, *Թրթրայանակ* 1978, էջ 71:

²³ *Նույն տեղում*, էջ 66:

²⁴ *Նույն տեղում*, էջ 67:

²⁵ *Նույն տեղում*, էջ 65, 129, 68:

²⁶ *Նույն տեղում*, էջ 128, 130:

Անշուշտ, նման բամբասանքները բացասական հետևանքներ էին ունենում, երբ տվյալ աղջկան ուզեցին էին գալիս: Գլուխը տվորության համաձայն, տղայի համար աղջիկ ուզելիս՝ ծնողները հարսնացուի վարքի, շնորքի մասին տեղեկություններ էին հավաքում հարևաններից: Հասկանալի է, որ երբեմն չարախոսությունն իր արդյունքը տալիս էր և ամուսնությունը չէր կայանում. «Մըր ախչի՛կըն է, օր տունն է մնացի. հուզրնգաններ գիզան, գավնին, էդ է գուզին նըշան դընին, մեկ լէ տեսար, մեր շընհեր դըրկընցներ բան մի հընարեցին, բանբասին, անուն է կըղնին ախչըկաս, ոտ է գարգին, մարդիկ լն թորգին, կերթան»:²⁷ Այսպիսի դեպքի մասին պատմում է նաև Մկրտիչ Արմենը «Հեղնար աղբյուր» վիպակում. «Մուկալի վիրավորված, Մկրտչի մայրը վերադարձավ տուն՝ արդեն ճանապարհին մտածելով, թե ինչ կերպ վրեժ լուծի ամբարտավաններից: Չանցավ նույնիսկ մի օր, և ամբողջ Չորի Բողազով տարածվեց նորությունը. Մկրտչի մայրը գնացել է Հեղնարին ուզելու իր տղայի համար, բայց նկատել է, որ աղջիկը հիվանդ է... Հեղնարի անունը միանգամից կտորվեց: Հարսնախոսների անընդհատ հոսքը նրանց տուն կտրուկ ընդհատվեց»:²⁸

Հետաքրքիր է, որ այսպիսի բամբասանքը եկեղեցին համարում է ամենամեծ մեղքը. «Եվ հաճախ են պատահում նրանց մեջ այս վերջինները, ովքեր չարախոսում են աղջկանից կամ տղայից, որպեսզի նրանք ուրիշների հետ նշանվեն և իրենք էլ սրանցից կաշառք ստանան կամ մի ուրիշ բան՝ ընծայի անվան տակ: Այսպիսիները դասակից են մեր Տիրոջ մատնիչ Հուդային...»:²⁹

Այսպիսով բամբասանքը, անհիշելի ժամանակներից եղել և շարունակում է մնալ ժողովրդի բանավոր ավանդության անքակտելի մասը: Անկախ նրանից, թե ինչ վերաբերմունք ունեն և ունի հասարակությունը դրա նկատմամբ, որպես խոսք-գրույցի, ժամանցի ձև, այն լրացրել և ամբողջացրել է քաղաքի կենցաղամշակութային համալիրը: Լինելով անձը նշավակող գրուցատեսակ՝ իր քննադատությամբ ու չափազանցությամբ հանդերձ, այն արժեքավոր տվյալներ է պարունակում քաղաքի ազգագրության բազմաթիվ ոլորտների մասին: Ինչպես նշում է բանասացներից մեկը. «Բամբասանքը հանդիսանում է կարևոր միջոց որոշ տեղեկություններ իմանալու համար»:³⁰

Բամբաստելու տվորույթը թեև գալիս է դեռևս նախնական հնդեվրոպական շրջանից, սակայն արդիական է նաև մեր օրերում: Ուստի նպատակահարմար ենք գտնում մեր խոսքն ավարտել Աստվածաշնչյան առակներով. «Արդար շուրթերը լռեցնում են թշնամանքը, իսկ բամբասանք տարածողներն անզգամ են» (Առակ. Ժ 18), «Եղբայրներ, միմյանց մի՛ բամբասեք, ով բամբասում կամ դատում է իր եղբորը, չարախոսում է օրենքի մասին և դատում է օրենքը» (Հակոբ, Գ 11):³¹

СПЛЕТНИ И ПЕРЕСУДЫ В БЫТУ ГЮМРИ

___ Резюме ___

___ К. Базеян ___

Имея широкую среду бытования, сплетни охватывают социальную, психологическую, культурную, политическую и другие сферы жизни людей. В сплетнях выявляются нравственно-психологические, культурно-бытовые особенности и ценностные ориентации народа. В статье рассматриваются собранные в 1970-ых годах, в качестве фольклорных материалов, сплетни Ленинанкана, которые сопоставляются с материалами современных соцопросов. Анализ материалов показал, что сплетни и пересуды могут быть важным источником для изучения повседневного быта города Гюмри. Они дают интересные сведения в особенности об интересах, занятиях, характерных чертах и ценностных отношениях женщин.

²⁷ Հ. Մկրտչի և չի ա ն, քրթապանակ 1976թ.:

²⁸ Մ. Արմեն, Հեղնար աղբյուր, Եր., 1961, էջ 11:

²⁹ Պ. Ն. Ն. և պատրիարք Արքիա մ. ս. լ. և ց. ի, նշվ. աշխ., էջ 314:

³⁰ Սոցիալական գիտություններ, էջ 8:

³¹ Նույն տեղում, էջ 321-322:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
(XIX դարավերջ-XX դարասկիզբ)

Արևելյան Հայաստանի և ի մասնավորի Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության ուսումնասիրությունը կարծես դուրս է մնացել պատմաբանների, ազգագրագետների և տնտեսագիտության պատմությամբ զբաղվող մասնագետների տեսադաշտից: Ավանդաբար քաղաքի տնտեսական կենցաղին անդրադառնալիս թվարկվում են բնակչության զանազան զբաղմունքները (հիմնականում արհեստներ և առևտուր), դրանցով զբաղվողների թիվն ըստ տարբեր տարիների կամերալ ցուցակների և այլ տեղեկատու վիճակագրական աղբյուրների¹ և արխիվային փաստաթղթերի: Արևելյան Հայաստանի քաղաքային տնտեսության համախառն արդյունքի, եկամուտների և հատկապես պետական և քաղաքային բյուջե մտնող հարկերի և զանազան այլ տուրքերին հպանցիկ անդրադարձել են Ս.Եղիազարյանը,² Վ.Աբրահամյանը³ և Երևանի պարագայում Թ.Հակոբյանը:⁴ Եթե Երևանի տնտեսության ուսումնասիրությունը Թ.Հակոբյանի կողմից այս կամ այն չափով իրականացվել է, ապա Գյումրի-Ալեքսանդրապոլի դեպքում լուրջ և համակողմանի քննության կարիքը կա:

Համրահայտ փաստ է, որ համեմատաբար երիտասարդ քաղաք հանդիսացող Ալեքսանդրապոլը, կարճ ժամանակահատվածում տնտեսական աճի աննախընթաց ցուցանիշներ ապահովելով, կարողացավ դառնալ Անդրկովկասի նշանավոր առևտրաարդյունազորական կենտրոններից մեկը: Արդեն 1840-ական թթ. սկզբին «երիտասարդ» քաղաքն իր քաղաքային եկամուտներով Անդրկովկասում գրավում էր 8-րդ տեղը՝ առաջ անցնելով Գորիից, Սղնախից, Նախիջևանից և Բաքվից:⁵ Երկու-երեք տասնամյակ հետո այս ցուցանիշները բարելավվում են, և Ալեքսանդրապոլն իր տնտեսական համախառն արդյունքով և քաղաքային եկամուտներով շրջանցում է նահանգային կենտրոններին (Երևան, Ելիզավետպոլ, Բաքու) և ընդհուպ մոտենում է Թիֆլիսին:⁶

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության արագ զարգացումը պայմանավորված էր մի շարք նպաստավոր գործոններով:

Արևմտյան Հայաստանից (Կարս, Կարին, Բայազետ) ներգաղթած բնակչությունը այքի էր ընկնում իր բացառիկ աշխատասիրությամբ և ձեռներեցությամբ: Ներգաղթածների այս հատկությունները հիացրել են հայ և ռուս հետազոտողներին: 1836թ. Փամբակ-Շորազյալի դիստանցիան ուսումնասիրած ռուսական բանակի սպա Ն.Ֆլորովսկին Գյումրու նորաբնակների մասին գրում էր. «Նրանք բանիմաց են և հակում ունեն դեպի լավ տնտեսությունը, հատկապես Թուրքիայից նոր գաղթածները: Օգտակար նորամուծությունն այնտեղ ամենավաղից դժվարությունների անգամ չի հանդիպում»:⁷ 1838թ. մայիսին Կովկասի կառավարչապետ բարոն Ռոզենի հետ քաղաք այցելած Խաչատուր Աբովյանը ևս հիացնում էր խոստում նորաստեղծ քաղաքի բնակիչների աշխատասիրության, շինարարական տաղանդի և բարձր ճաշակի մասին: Մեծ լուսավորիչը համոզված էր, որ. «...ժամանակի ընթացքում այն (իմա. Գյումրին-Գ.Ա.)

¹ Գ. Ա ղ ա ն յ ա ն, XIXր. և XXր. սկզբի ռուսական տեղեկատու-վիճակագրական ժողովածուները որպես Ալեքսանդրապոլ քաղաքի և նրա բնակչության տնտեսական զբաղմունքների ուսումնասիրության աղբյուր, Հայաստանի բնակչության տնտեսական կենցաղի և նյութական մշակույթի պրոբլեմների ուսումնասիրությունը, գեկուցումների թեզիսներ, Եր., 1985, էջ 6-7:

² С. Е з и а з а р о в, Исследования по истории учреждений Закавказья, ч. II, Городские цехи, Казань, 1891.

³ Վ. Ա բ ռ ա հ ա մ յ ա ն, Հայ հանքարդյունները Անդրկովկասի քաղաքներում (18-20-րդ դ. սկիզբը), Եր., 1971.;

⁴ Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Երևանի պատմությունը (1801-1869թթ.), Եր., 1959:

⁵ Վ. Պ ա ռ ս ա մ յ ա ն, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Եր., 1958, էջ 89:

⁶ С. Е з и а з а р о в, նշվ. աշխ., էջ 60-61:

⁷ Обзорение Российских владений за Кавказом, ч. II, СПб, 1836, стр. 305.

շատ կայծառաման»:⁸ Մինչև XIXդ. կեսերը Արևմտյան Հայաստանի առևտրա-արհեստավորական կենտրոնները՝ Կարին, Կարս, Վան, Երզնկա, Բայազետ և այլք, իրենց զարգացման մակարդակով և քաղաքային տնտեսության համախառն արդյունքով զգալիորեն գերազանցում էին ոչ միայն արևելահայկական քաղաքներին, այլև բուն Օսմանյան տերության և հարևան Պարսկաստանի ու Կովկասի բազմաթիվ քաղաքներին: Արևմտահայ գաղթականներն իրենց հետ բերեցին վերը հիշված կենտրոնների (Կարինի և Կարսի արհեստագործական և Բայազետի առևտրական) բազմադարյան ավանդույթները և նոր բնակավայրերում՝ Ախալցխայում, Ախալքալկում, Նոր Բայազետում և հատկապես Ալեքսանդրապոլում պարարտ հող գտան ու առավել նպաստավոր պայմաններ ստացան դրանք խորացնելու և զարգացնելու համար:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության զարգացման հաջորդ նախադրյալը քաղաքի ռազմատրատեզիական բարենպաստ դիրքն էր: XIXդ. առաջին երեսնամյակին միմյանց հաջորդող ավերիչ պատերազմները ծանր հարված էին հասցրել Ռուսաստանին սահմանամերձ օսմանյան և պարսկական տարածքների տնտեսությանը: Այս պետությունները 1828-1830թթ. հայերի զանգվածային արտագաղթից հետո զրկվեցին ամենաաշխատասեր, բանիմաց և ձեռներեց բնակչությունից: Օսմանյան արևելյան վիլայեթները արդյունագործական ապրանքներ արտահանողից վերածվեցին ներմուծողի, որից առավել օգտվեցին Ախալցխայի և Ալեքսանդրապոլի առևտրա-արհեստավորական խավերը: Ալեքսանդրապոլի արհեստավորներն ու առևտրականներն արագ կողմնորոշվեցին հարևան երկրների շուկայի պահանջարկի խնդրում և շուտով մենաշնորհային դիրք գրավեցին մի շարք ապրանքատեսակների արտադրության և արտահանման ասպարեզում (մետաղամշակության ապրանքներ, փայտամշակություն, շինարարական արհեստներ, կաշվի, հացահատկի և աղի արտահանում և այլն): Նույնիսկ Ալեքսանդրապոլից բավական հեռու գտնվող Կողբի նշանավոր աղահանքերում արդյունահանվող աղը մեծածախ գներով ներմուծվում էր Ալեքսանդրապոլ և այնտեղից միայն արտահանվում հարևան տարածաշրջաններ:⁹ Միջնորդ մեծածախ առևտուր ողջ Արևելյան Հայաստանում և մասամբ նաև Անդրկովկասում և հարևան տարածաշրջաններում դարձել էր ավերպուցի վաճառականների մենաշնորհը և պատահական չէր, որ Անդրկովկասում առաջիններից մեկը՝ 1845թ. այստեղ բացվեց ամենամյա երկշաքաքյա տոնավաճառ¹⁰ (համեմատության համար ասենք, որ Ելիզավետպոլում տոնավաճառ բացվեց 1846թ., Գորիում՝ 1852թ. և այլն):¹¹ Մեծածախ առևտրի զարգացման գործում մեծ նշանակություն ուներ նաև քաղաքի կիրակնօրյա շուկան, որն այժմ էր ընկնում իր մարդաշատությամբ և իրականացվող առևտրական գործարքների մեծ ծավալներով: Ընդարձակ էր նաև ավերպուցի առևտրականների կապերի աշխարհագրությունը, որը չէր սահմանափակվում հարևան երկրներով (Թուրքիա, Պարսկաստան, Վրաստան) այլև տարածվում էր դեպի Ռուսաստան և Ուկրաինա (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Նիժնի Նովգորոդ, Խարկով), Արևելյան և Արևմտյան Եվրոպա (Վարշավա, Լայպցիգ, Մարսել և այլն): Ալեքսանդրապոլի վաճառականներն առևտրական ներկայացուցչություններ ունեին Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում, Մարսելում և բուն Հայաստանից միակն էին, որ մասնակցում էին Նիժնի Նովգորոդի ամենամյա հռչակավոր տոնավաճառին:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության զարգացմանը նպաստեցին նաև մի շարք վարչական և ռազմաքաղաքական գործոններ: Դառնալով համանուն գավառի կենտրոն՝ Ալեքսանդրապոլը ստացավ ադմինիստրատիվ-կառավարչական արտոնություններ: Քանի որ Ալեքսանդրապոլը գավառի միակ քաղաքային բնակավայրն էր, որտեղ և կենտրոնացված էին տնտեսական և վարչական բոլոր լծակները, այստեղ էին գալիս հարևան գյուղերի բնակիչները, և քաղաք այցելող յուրաքանչյուր ոք ինչ որ կերպ կամ ձևով առևտուր կամ փոխանակություն էր կատարում: 1828-29թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ալեքսանդրապոլը և գավառը շուրջ 90տարի՝ մինչև 1918թ.,

⁸ Խ. Ար. Ու. Վ. Մ. և Ն. Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Եր., 1952, էջ 46:

⁹ Պտույտ Ալեքսանդրապոլի շրջակայքում, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1869, № 21:

¹⁰ Кавказский календарь на 1855г., Тифлис, 1854, стр. 198.

¹¹ Վ. Պ. Ու. Վ. Մ. և Ն. Նշվ. աշխ., էջ 89:

գերծ մնաց ավերիչ պատերազմներից, ինչը ևս նպաստեց քաղաքային տնտեսության բնականոն և արագ տեմպերով զարգացմանը: Միևնույն ժամանակ XIXդ. երկրորդ կեսի ռուս-թուրքական երկու պատերազմները (1853-1856թթ., 1877-1878թթ.) էապես նպաստեցին քաղաքի տնտեսության զարգացմանը: Հետագոտողներից շատերը, օրինակ, նշանավոր գրող Ատրպետը, իրավագիտրեն նշում են, որ այս պատերազմների ժամանակ ալեքսպոլի արհեստավորները մեծածավալ ռազմական պատվերներ էին ստանում և սպասարկում էին ռուսական բանակին: Հարկ է նշել, որ Անդրկովկասում հիշյալ ժամանակահատվածում երկաթուղու բացակայությունը դժվարացնում էր կապերը մետրոպոլիայի՝ Ռուսաստանի կենտրոնական արդյունաբերական զարգացած շրջանների հետ, և ռուսական պետությունը և բանակը ստիպված էին շատ դեպքերում սպավիճել տեղական արտադրողներին: Առաջ անցնելով նշենք, որ Առաջին աշխարհամարտի տարիներին պատկերը արմատապես փոխվեց, քանի որ գործող երկաթուղու գոյության պայմաններում ռուսական կապիտալը ամբողջովին վերահսկելի դարձրեց ռազմական մատակարարումները և գորքի սպասարկումը, որը լուրջ հարված հասցրեց տեղական արդյունագործությանը և առևտրին: Վերադառնալով վերը բերվածին՝ նշենք, որ հատկապես շատ պատվերներ ունեին երկաթագործ վարպետները (դարբիններ, պայտագործներ, պայտարներ, մեխագործներ),¹² զինագործները (ալեքսպոլի նշանավոր զինագործ Կարանյանների ընտանիքը պատվեր ուներ վերանորոգելու ռուսական բանակի շարքից դուրս եկած կամ վնասված սառը զենքը և հրազենը),¹³ անվագործները և սալ պատրաստողները (ողջ գրաստային տրանսպորտը անցնում էր Թիֆլիս-Ախալցխա-Ալեքսանդրապոլ-Կարս և Երևան-Ալեքսանդրապոլ-Կարս խճուղիներով), թաղիքագործները, վրանագործները, կաշեգործները և կոշկակարները: Միևնույն ժամանակ ալեքսպոլի վաճառականները հատուկ պատենտ (արտոնագիր) էին ստանում որոշակի ապրանքներ բանակին մատակարարելու համար:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության մեջ բավական էական փոփոխություններ տեղի ունեցան Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուլֆա (1896թ.) և Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղիների շինարարության և շահագործման շնորհիվ: Այս երկաթուղիների կառուցումը մի կողմից նպաստեց տնտեսական կապերի սերտացմանը Կովկասի և Ռուսաստանի քաղաքների հետ, միևնույն ժամանակ խոցելի դարձրեց քաղաքի ավանդական շուկան, քանի որ երկրի եվրոպական մասից ներկրված էժանագին ֆաբրիկա-գործարանային ապրանքների հետ մրցակցությունում տեղական արհեստավորական արտադրանքը զգալիորեն զիջում էր: Այս հանգամանքը պատճառ դարձավ արհեստների որոշ ճյուղերի անկման կամ էլ վերադարձվելուն:¹⁴ Ալեքսանդրապոլը XXդ. սկզբին դարձավ երկաթուղային խոշոր հանգույց և այստեղ կառուցվեց երկաթուղային ամենամեծ դեպոներից մեկը Անդրկովկասում:¹⁵

Քաղաքային տնտեսության զարգացման գործում մեծ նշանակություն ուներ մաքսատան գոյությունը: Դեռևս պարսկական տիրապետության շրջանում մաքսատուն կար Գյումրու մերձակա թուրք-պարսկական սահմանին, իսկ ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո ռուսական խոշոր մաքսատուն հիմնվեց բուն քաղաքում: Մաքսատան եկամուտները տարեցտարի աճում էին և 1870-ական թթ. վերջին առևտրափոխանակության և տարանցիկ առևտրի ծավալների մեծացմանը զուգընթաց բազմապատկվել էին: Սկզբնական շրջանում գործում էր 1821թ. ընդունված մաքսային օրենսդրությունը՝ մշակված հատուկ Անդրկովկասի համար, որը նպաստավոր պայմաններ էր ստեղծում եվրոպական ապրանքների ներմուծման համար: Սակայն 1831թ.

¹² Գ. Ա ղ ա ն յ ա ն, Պայտի հետ կապված արհեստները երկաթագործության համակարգում, Հանրապետական գիտական նստաշրջան 1986-1988թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների արդյունքները, զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1990, էջ 5-7:

¹³ Գ. Ա ղ ա ն յ ա ն, Հայկական զինագործությունը XIXդ.-XXդ. սկզբին (ըստ Կարևո և Ախալցխայի նյութերի), ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. III, Գյումրի, 2000, էջ 136:

¹⁴ Նույնի, Ավանդական արհեստների փոխակերպումները Ալեքսանդրապոլ-Լենինականում (XIXդ. երկրորդ կես-XXդ. առաջին կես), ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IX, Գյումրի, 2006, էջ 48:

¹⁵ Կ. Կ ռ զ մ յ ա ն, Լենինական, Եր., 1957, էջ 28:

ընդունվեց նոր օրենք, որը հովանավորչական (պրոտեկցիոնիստական) բնույթ ուներ և խրախուսում էր տեղական և ռուսաստանյան արտադրողներին: Եվրոպայից ներմուծվող՝ որակյալ և էժանագին ապրանքների վրա դրվեցին բավական մեծ մաքսային տարիֆ 5% և ավելի, որը կիրառելուց հետո միանգամից անեցին քաղաքի մաքսատան եկամուտները: Այսպես, եթե 1832թ. մաքսային եկամուտները կազմում էին 877 արծաթ ռուբլի, ապա 1833 թ. այդ քիվը հասավ 1447 ռուբլու:¹⁶ Հարկ է նշել, որ պրոտեկցիոնիստական այս քաղաքականությունը միևնույն ժամանակ բավական մեծ վնաս էր հասցնում տեղական տարանցիկ առևտրի շուկային, քանի որ Բաթումի և Տրասպոլի գավառի և Երևանի մեծածախ շուկաները, բերվում էին Թավրիզ և Սպահան և տարածվում Սերձավորարևելյան երկրներում: Այս էր պատճառը, որ 1846թ. նոր մաքսային օրենսդրությամբ օտարերկրյա ապրանքների մաքսային տարիֆները փոխվեցին: Այս նորամուծությունը մեծ եկամուտներ չբերեց քաղաքի մաքսատանը, քանի որ ռուս-թուրքական սահմանը Ալեքսանդրապոլից հեռանալուց հետո (1878թ. Կարսի մարզը միացվեց Ռուսաստանին) նրա դերը զգալիորեն նվազեց, իսկ եկամուտները պակասեցին:

Տարանցիկ առևտրի կենտրոն լինելու հանգամանքը թելադրում էր իջևանատների (քարավանատների կամ տեղական բարբառով՝ *խաների*) և ավելի ուշ հյուրանոցների թվի անընդհատ աճ: 1838թ. Ալեքսանդրապոլում կար երկու, 1863-ին՝ յոթ, իսկ 1900-ականների սկզբին շուրջ տասը իջևանատուն:¹⁷ Գրավոր զանազան աղբյուրներում պահպանվել են այդ իջևանատներից մի քանիսի անունները և հասցեները՝ Ալմոյի խան (կամ Արմոյի, որն ամենամեծն ու նշանավորն էր և մինչև այժմ էլ որևէ տեղում մարդկանց բազմությունը, ժխորը կամ աշխույժ ելումուտը ցույց տալու համար ասում են «Դառավ Արմոյի խանը») գտնվում էր 23 փողոցում, Մոլա Ալու խան և Սհատչոնց խան՝ 25 փողոցում, Կարմիր խան, Բաբաևենց խան, Նազարեթ աղայի խան, Օխտնախալաբանց խան, Շիրաջոնց խան, Գինոսենց խան՝ բոլորը 27 փողոցում,¹⁸ ինչպես նաև Դավի (ուղտի) խան՝ Մլաբողկա թաղամասում: 1914թ. Ալեքսանդրապոլում կար հինգ հյուրանոց,¹⁹ որոնց անունները ցավոք չեն հիշատակվել: Իջևանատները գտնվում էին հիմնականում շուկային հարակից փողոցներում, որտեղ էլ տեղակայված էին գրաստային փոխադրամիջոցները սպասարկող արհեստավորների կրպակները: Մառանջիների (սայի անիվ պատրաստողներ) արհեստանոցները գտնվում էին 27 փողոցում, պայտագործների, պայտարների և մյուս երկաթագործների արհեստանոցները 25 փողոցում և այլն:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության երկու հիմնական բաղադրիչները՝ արհեստներն ու առևտուրը, իրենց համախառն արդյունքով, եկամուտների, պետական և քաղաքային բյուջե մուծվող հարկերի և տուրքերի չափերով բավական տարբերություններ ունեին: Առաջ անցնելով նշենք, որ մինչև 1895-96թթ. քաղաքային տնտեսության տարբեր ճյուղերի եկամուտների հաշվարկը արվում էր արծաթ ռուբլով, իսկ սրանից հետո ոսկի ռուբլով: Բանն այն է, որ XIXդ. 90-ական թթ. ֆինանսատնտեսական և դրամական բարեփոխումների շնորհիվ ռուսական ռուբլին դարձավ կոնվերտացվող և մրցունակ արժույթ, և բնականաբար ռուսական վիճակագրական տեղեկատվությունը սկսեց ներկայացվել ոսկե ռուբլու հաշվարկով, որը ավելի թանկ ու գնողունակ էր, քան մինչդեռիցայն չկոնվերտացվող արծաթե ռուբլին:

Առաջին հստակ վիճակագրական տեղեկությունը Ալեքսանդրապոլի արհեստավորների տարեկան եկամտի մասին վերաբերվում է 1863թ-ին: Ըստ այս տեղեկության արհեստավորների ընդհանուր արտադրանքի ծավալը դրամական համարժեքով կազմել է շուրջ 160հազար արծաթ ռուբլի:²⁰ Հարկ է նշել, որ Վ.Աբրահամյանը, հենվելով մեկ այլ փաստաթղթի վրա, առանձնացնում է ըստ արհեստի ճյուղի ստացվող եկամուտները, որոնց հանրագումարը կազմում է մոտավորապես 115հազար արծաթ ռուբ-

¹⁶ *Обозрение ...*, стр. 315.

¹⁷ Վ. Պ ա ղ ա մ յ ա ն, *նշվ. աշխ.*, էջ 89:

¹⁸ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Մնացական Թամրազյանի հուշերը:

¹⁹ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, Ն.Նիկողոսյանի նյութերը, թ. 7378:

²⁰ *Сборник статистических сведений о Кавказе, т. I, отд. III, стр.52.*

լի:²¹ Այստեղ նկատվում է որոշակի անհամապատասխանություն, քանի որ 160 հազար ռուբլի ծավալ ունեցող արհեստավորական արտադրանքը չէր կարող ապահովել 115 հազար ռուբլի եկամուտ: Ամենայն հավանականությամբ հետազոտողը շփոթել է եկամուտ և ծավալ հասկացությունները: Նման տիպի սպորտումները և տարրնթերցումներն ընդհանրապես հատուկ են Վ.Աբրահամյանի աշխատությանը, և որպեսզի մերկապարանոց չհնչի մեր պնդումը, նշենք, որ իր բերած աղյուսակից վերը հղում կատարելով մեկ այլ փաստաթղթի՝ հեղինակը գրում է, թե 1865թ. Ալեքսանդրապոլի արհեստավորների եկամուտը կազմել է 19 հազար ռուբլի:²² Վերջին թիվը առավել մոտ է իրականության և տնտեսագիտորեն առավել հիմնավորված է: Ալեքսանդրապոլի արհեստավորական արտադրանքի ծավալները մինչև 1890-ական թթ. անընդհատ աճում են, չնայած արհեստավորների թիվը որոշակի կրճատման միտում է արձանագրում: Հանրահայտ փաստ է, որ ռուսաստանյան կապիտալի արագ տեմպերով զարգացումը հետոնեֆորմյան շրջանում և կենտրոնական իշխանությունների վարած հովանավորչական քաղաքականությունը ռուսական ֆաբրիկա-գործարանային արտադրության նկատմամբ զգալի վնաս պատճառեցին երկրի գաղութային ծայրագավառների ավանդական արդյունագործությանը: Արհեստների շատ ճյուղեր, ինչպես նշեցինք վերևում, անկում ապրեցին, սակայն ընդհանուր առմամբ Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության հաշվեկշռում արհեստավորական արտադրանքի բաժինը շարունակում էր բավական զգալի մնալ:

Մինչոնեֆորմյան շրջանում Ալեքսանդրապոլի արհեստավորներն ու առևտրականները պարտավոր էին վճարել երկու տեսակի հարկեր՝ *հիմնական* և *լրացուցիչ*: Հիմնական հարկը վճարվում էր որևէ զբաղմունքով (արհեստով, առևտրով և այլն) պարապելու համար թույլտվության հատուկ վկայական (պատենտ) ստանալու ժամանակ: Եթե որևէ մեկը երկու շաբաթվա ընթացքում չէր ստանում վկայականը, ապա քաղաքի կամ գավառի ոստիկանական վարչությունը (1870-ական թթ. ոնեֆորմներից հետո՝ քաղաքային վարչությունը) իրավասու էր գրկել տվյալ արհեստավորին կամ առևտրականին իր զբաղմունքով պարապելու իրավունքից: Հետաքրքիրն այն է, որ քաղաքի կոմունալ-կենցաղային ծառայությունները (կոյուղու սպասարկումը, լուսավորությունն ապահովող, կանաչապատում իրականացնող պետական հիմնարկները և այլն), ինչպես նաև գրադարանները, ընթերցարանները, բարեգործական և բարեխնամ (որբանոցներ, մանկատներ) գործունեությամբ զբաղվող հիմնարկները ազատվում էին հիմնական հարկից, սակայն այս դեպքում անպայման անհրաժեշտ էր ստանալ հատուկ տեղեկանք ոստիկանական կամ քաղաքային վարչությունից: Յուրաքանչյուր արհեստավոր տարին մեկ անգամ պետք է մուծեր հիմնական հարկ և ստանար պատենտ: Ոստիկանական վարչությունը և քաղաքային վարչությունը հսկում էին նաև արտադրանքի որակը և գները:

Հիմնական հարկի չափերի մասին կոնկրետ Ալեքսանդրապոլի պարագայում ձեռքի տակ ունենք տեղեկություն միայն XXդ. սկզբի համար, որը կազմում էր երեք ոսկի ռուբլի 85 կոպեկ տարեկան յուրաքանչյուր արհեստավորից: Առաջին և երկրորդ գիղղիայի առևտրականները վճարում էին համապատասխանաբար՝ 650 և 97ռուբլի 50 կոպեկ:²³ Առաջին գիղղիայի առևտրականները, որոնց շահույթը մեծ գումար էր կազմում, վճարում էին նաև լրացուցիչ հարկ, որի չափերը որոշվում էին վերը հիշված պետական մարմինների կողմից երեք տարին մեկ անգամ վերանայելու պայմանով: Ըստ նույն աղբյուրի, լրացուցիչ մուծումները կազմում էին առաջին գիղղիայի համար՝ 118 ռուբլի, երկրորդի համար՝ 10 ռուբլի 25 կոպեկ:²⁴

1875թ. հիմք ընդունելով ֆինանսների նախարարության շրջաբերականը, Կովկասի փոխարքայի հրամանով տեղի քաղաքների արհեստավորների և առևտրականների համար սահմանվեցին հարկերի և տուրքերի համապատասխան տեսակները և չափերը: Հարկերն ու տուրքերը բաժանվեցին հետևյալ կերպ ա) պետական տուրք,

²¹ Վ. Աբրահամյան, *նշվ. աշխ.*, էջ 57-58:

²² Նույնը:

²³ Ն. Նիկողոսյան, *թ. 7381*:

²⁴ Նույնը:

բ) քաղաքային տուրք, գ) դպրոցներին և բարեգործական հիմնարկներին հատկացվող տուրքեր և դ) պատենտի համար մուծվող տուրք.²⁵ Հարկերի և տուրքերի այս տեսակները աննշան փոփոխություններով կիրարկվեցին մինչև Ռուսական կայսրության փլուզումը:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսության կարևոր բաղկացուցիչներից էր առևտուրը, որով զբաղվողների թիվը անհամեմատ մեծ էր, քան նահանգային կենտրոն Երևանում (այստեղ առևտրականների ամենամեծ թիվը գրանցվել է 1880-ական թթ. և կազմել է շուրջ 562 մարդ²⁶) և Կովկասի մյուս քաղաքներում, զիջելով միայն Թիֆլիսին: Ալեքսպոլի առևտրականների տարեկան դրամական շրջանառության ծավալները երեք անգամ գերազանցում էին արհեստավորական արտադրանքի համապատասխան արդյունքին, չնայած որ առաջինով զբաղվողների թիվը չորս անգամ պակաս էր վերջինից: 1860-ական թթ. տվյալներով Ալեքսանդրապոլում հաշվվում էր շուրջ 670 առևտրական, որոնց թիվը համարյա անփոփոխ է մնում մինչև 1910-ական թթ. (ըստ Նիկողոսյանի՝ 673): Եթե 1860-ական թթ. Ալեքսանդրապոլի վաճառականների առևտրական շրջանառությունը կազմում էր շուրջ 500 հազար արծաթ ռուբլի,²⁷ որը կազմում էր Երևանի նահանգի ողջ առևտրաշրջանառության 1/3-ը, ապա 1910-ական թթ. այդ ցուցանիշը կրկնապատկվում է:

Ինչպես նշեցին վերևում, ալեքսպոլի առևտրականներն աչքի էին ընկնում իրենց ձեռներեցությամբ և կարողացել էին որոշ ապրանքատեսակների ու առևտրի եղանակների խնդրում մենաշնորհային դիրքեր գրավել: Այսպիսի մենաշնորհի փայլուն օրինակ կարող է հանդիսանալ դժնիկ կամ «վլի ծաղիկ» (լատ. *Rhamnus*, տեղի բնակչությունն անվանում էր «ալաջայրա») կոչվող բույսից ստացվող դեղին և կանաչ ներկերի պատրաստման և արտահանման փաստը: Ալեքսանդրապոլի Միրեկան Գորոյանն իր եղբայրների հետ 1850-ական թթ. սկսած կազմակերպում է այս բույսի աճեցման և վերամշակման գործը:²⁸ Մեծ քանակությամբ «վլի ծաղիկ» աճեցվում, հավաքվում, հատուկ աղացներում փոշի էր դարձվում և արտահանվում էր Ռուսաստան և Եվրոպա: Հարկ է նշել, որ այս բույսից ստացվող դեղամիջին այն ժամանակվա բժշկության մեջ օգտագործվում էր որպես լուծողական միջոց: Գորոյանների հիմնած «Արագած» առևտրական ընկերության մասնաճյուղեր բացվեցին Մոսկվայում և Պետերբուրգում: Միրեկան Գորոյանը Կովկասի տնտեսության զարգացման բնագավառում մեծ ներդրում ունենալու համար Ազատ տնտեսական ընկերակցության կողմից պարգևատրվեց արծաթե մեդալով, իսկ նրա մոսկովյան առևտրական լիազոր-ներկայացուցիչներ հայր և որդի Միրզոյանցները արժանացան Մարսելի միջազգային ցուցահանդեսի ոսկե մեդալին:²⁹ «Արագած» ընկերության վարկանիշն այնքան բարձր էր Ռուսաստանում, որ այդ ապրանքանշանի տակ ի հայտ եկան կեղծ ընկերություններ, որոնք դժնիկի փոշու անվան տակ վաճառում էին քիմիական անորակ ներկեր, որոնցով ներկված թելերը շատ շուտ գունաթափվում և խունանում էին:

Ինչ վերաբերվում է ռուսական աղբյուրներում ֆաբրիկա կամ գործարան հորջորջվող ձեռնարկություններին, ապա պետք է նշել, որ դրանք հիմնականում ավելի շատ մանուֆակտուրա կամ որոշակի աշխատանքային բաժանում ունեցող մեծ արհեստանոցներ էին իրենցից ներկայացնում: Ռուսական վիճակագրությունը սրանց տակ հիշատակում է օճառի, ճարպամոմի, կաշվի դարբան, օդու թորման արհեստանոցները և նույնիսկ ձիթահանները, որոնք բնականաբար շատ հեռու են գործարան կոչվելուց: Գործարանային արտադրությանն ավելի մոտ կարելի էր համարել Չիթոյցյաններին և Ծաղիկյաններին պատկանող զարեջրի արտադրությունները և XIX դ. վերջին հիմնված մեխանիկական փոքր արտադրամասը:

Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսությունը չի կարելի պատկերացնել առանց խանութների, կրպակ-արհեստանոցների և հասարակական սննդի օբյեկտների (ճաշարաններ, սրճարաններ, զինետներ, զարեջրի կրպակներ և այլն): 1860-ական թթ.

²⁵ *С. Э с а д з е, Историческая записка об управлении Кавказом, т. II, Тифлис, 1907, стр.. 45.*

²⁶ *Թ. Հ ա կ բ բ յ ա ն, նշվ. աշխ., էջ 472-473:*

²⁷ *Վ. Պ ա բ ս ա մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 92:*

²⁸ *Ա տ բ պ ե տ, Ի՞նչ ժառանգեցինք, անտիպ ձեռագիր, ՀՊՊԹ, արխիվ, գործ 176(ա), էջ 32:*

²⁹ *Վ. Պ ա բ ս ա մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 93:*

սրանց թիվը գերազանցում է հազարը և ավելի է մեծանում 1910-ական թթ.՝ ի հաշիվ սննդի օբյեկտների ավելացման:³⁰ Քաղաքում գործում էին 26 սրճարան (15-ը գինետուն), 13 տրակտիր (ճաշարան), 4 գարեջրի կրպակ և այլն:³¹ Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում «խամուր» հասկացությունն իր մեջ կարող էր ներառել և՛ ցուցափեղկերով մեծ ու ընդարձակ խամուր, և՛ փոքր կամ աննշան կրպակ, այնպես որ դրանց մեծ թիվը չպետք է տարակուսանքի տեղիք տա:

Վերջում մի քանի խոսք քաղաքի եկամուտների հավաքագրման և բյուջեի ձևավորման մասին: Ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո Արևելյան Հայաստանի քաղաքային բնակչությունը և սրանց թվում նաև ալեքսանդրապոլիները հարկադրվում էին որպես պետական գյուղացիներ³² և չէին մտցվում ռուսական դասային կարգացուցակի քաղքենիներ (meuane) դասային ռեեստրի մեջ, որը շերտավորվում էր ըստ գիղիաների: Հետագայում դրությունը շտկվեց, և քաղաքաբնակները դասվեցին քաղքենիների շարքը, որոնք իրենց հերթին ըստ գույքային կամ ունեցվածքային ցեղի, որպես հարկատուներ բաժանվեցին ութ խմբի: Ամենաբարձրը համարվում էին առաջին և երկրորդ գիղիայի վաճառականները (մինչև 1863թ. գիղիական ռեֆորմը կար նաև երրորդ գիղիան, որը վերացվեց), հետո գալիս էին մանր առևտրականները, արհեստավորները, սպասարկման ոլորտի ներկայացուցիչները, կառավարներն ու սայլապանները և այլն: Այս խմբերից յուրաքանչյուրի ներկայացուցիչները, ինչպես վերը նշել ենք, մուծում էին որոշակի հարկեր և տուրքեր, որոնցից էլ ձևավորվում էր քաղաքային բյուջեն: Բերենք մի քանի մասնագիտական և ունեցվածքային խմբերի հարկային պարտավորությունների մասին տվյալներ. օրինակ, օդու և գինու պահեստներից յուրաքանչյուրը պետական գանձարան էր մուծում 211 ռուբլի, քաղաքի բյուջե 36ռուբլի, դպրոցների համար 16 ռուբլի, պատենտի համար 4 ռուբլի (ընդ.՝ 267ռուբլի), քաղաք մտնող ապրանքներից հօգուտ բյուջեից գանձվում էր 8243 ռուբլի, քաղաքի կշեռքի (ստանդարտի կամ չափ ու կշեռքի) կապալը բյուջե էր բերում 5041 ռուբլի և այլն:³³ Ընդհանուր առմամբ Ալեքսանդրապոլ քաղաքի ընդհանուր եկամուտը XXդ. սկզբին կազմում էր շուրջ 120-130 հազար ռուբլի,³⁴ որն իր ժամանակին 30 հազարանոց քաղաքի համար հսկայական գումար էր կազմում (եթե նշված թիվը վերածենք ժամանակակից արժույթի միավորի, ապա կստացվի հսկայական մի գումար, որը հավասար է մոտավորապես 1,5 մլրդ դրամի):

Եվ վերջապես նշենք, որ Ալեքսանդրապոլի տնտեսության ոչ մեծ, բայց բնորոշ և կարևոր հատվածը հանդիսացող գյուղատնտեսական արտադրության ծավալները ցավոք հնարավոր չէ գոնե մոտավոր ճշգրտությամբ ներկայացնել, քանի որ թե՛ ռուսական վիճակագրության մեջ և թե՛ տեղացի հուշագիրների մոտ չկան քիչ թե շատ հավաստի տվյալներ:

Ամփոփելով մեր թռուցիկ ակնարկը՝ կարող ենք փաստել, որ համեմատաբար կարճ ժամանակահատվածում, օգտվելով մի շարք բարենպաստ գործոնների առկայությունից Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսությունը զարգանում էր վերընթաց և չէր զիջում տարածաշրջանի մյուս առավել հին և ոչ պակաս հայտնի քաղաքներին:

³⁰ Համադրելով Վ.Աբրահամյանի բերած աղյուսակի նյութերը ռուսական վիճակագրության մեջ հանդիպող առևտրականների քանակի մասին տեղեկությունների հետ՝ ստացվում է հիշյալ թիվը: Տե՛ս նաև Ն.Նիկողոսյանի նյութերը, թ. 7377-7386:

³¹ Հիշյալ հաստատությունների առատությունը զարմացրել էր XIXդ. վերջին Ալեքսանդրապոլ այցելած մի ռուս ուսումնասիրողի, որը նույնիսկ հաշվել էր, թե քանի բնակչին ինչքան «խմելու հաստատություն» է բաժին ընկնում և զարմանալի է, որ ոչ մի հարբած մարդ չկա (տե՛ս СМОМПК, 66տ. XI, 1891, сmp. 154):

³² Թ. Հ ա կ ո բ յ ա ն, *նշվ աշխ.*, էջ 478: Հարկ է նշել, որ Ալեքսպոլի բնակիչները այս անարդարությունը շտկելու համար նամակ-խնդրագրով դիմել են Նիկոլայ I ցարին և համառություն ցուցաբերելով կարողացել են հատկեցնել իրենց՝ որպես քաղաքաբնակների հարկատուները, որն ասենք նահանգային կենտրոն Երևանում մինչև 1870-1880-ական թթ. դեռևս չէր լուծված:

³³ Ն.Ն ի կ ո ղ ո ս յ ա ն, թ. 7377:

³⁴ Նույն տեղում, թ. 7388:

**ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ГОРОДСКОГО
ХОЗЯЙСТВА АЛЕКСАНДРОПОЛЯ (XIX- НАЧАЛО XX ВВ.)***___ Резюме ___**___ Г. Аганян ___*

Основанный в 30-ые годы XIXв. город Александрополь благодаря нескольким благоприятным условиям, очень скоро стал одним из высокоразвитых торгово-ремесленных городов Закавказья. Городское хозяйство Александрополя в течении короткого исторического срока развивался такими быстрыми темпами, что вскоре обогнал в своем развитии многие “старые” города региона и даже такие губернские центры, как Ереван, Елизаветполь и др. В статье исследованы некоторые аспекты торгово-ремесленного устройства городского хозяйства, фискальной политики государства и местных органов самоуправления, формирование бюджета города и его источники и т.д. В научный оборот внесены так же некоторые архивные данные, касающиеся городского хозяйства Александрополя.

Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ
Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«...Ձեռքս ՀԻՎԱՆԴԻ ԴԵՂ Է»

«Ընտրեալների ձեռքը պիտի հեշտ յաղթի...»
Առակներ 12:24

Ըստ Հր. Աճառյանի՝ *ձեռն* բնիկ հայերեն բառ է, որ փոխաբերաբար ստացել է նաև *միջոց, օգնություն, պաշտպանություն, իշխանություն* և այլ նշանակություններ:¹

Այս արմատի բառաբարդումով ու բառածանցումով հայերենում գործածվում են մի շարք բառային միավորներ, որոնք վկայում են ձեռն//ձեռք բառի ոլորտային կիրառությունների ընդգրկումությունը, գործիական, ձեռնահմա, ձեռագիր, ձեռագրատուն, ձեռագետ, անձեռնմխելի և այլն: Բազմաթիվ նոր բառերից՝ *ձեռաց, ձեռքոնուկ, ձեռնորենք, ձեռքսագ* և այլն, երևում է, թե ինչպես է այս բառը ձևավորվում և դրսևորվում ժողովրդի լեզվամտածողության մեջ:

«Նոր բառգիրք հայկազգեան լեզուի» բառարանում *ձեռն* բառահոդվածում կարդում ենք. «Եզր բազկի ի դաստակէ զծայրս մատանց, թաք ձեռաց, ափ, բուռն, գործարան շօշափելոյ, ըմբռնելոյ և գործելոյ, նմանութեամբ գործի, միջնորդ, զօրութիւն, իշխանութիւն, բաւականութիւն»:²

Գրեթե բոլոր լեզուներում մարդու մարմնի մասերի անվանումներով (լեզու, աչք, սիրտ, ոտք, ձեռք) կազմված դարձվածքային միավորները կամ սոմատիկ դարձվածքները մեծ թիվ են կազմում: Ըստ լեզվական վիճակագրության՝ միայն *ձեռք*-ով հայերենում հայտնի է շուրջ 380 դարձվածք: Թերևս սա բացատրվում է նրանով, որ ընդհանուր լեզվաբանական իրողություն լինելուց զատ՝ կազմախոսական դարձվածքներն ունեն իրական հիմք. հաղորդակցման գործընթացում, ժողովրդախոսակցական տեքստերում անձն առավելապես անդրադառնում է ձեռքի ֆենոմենին:

Ժողովրդի բազմադարյան կյանքի դիտումների և կենսափորձի արդյունք են ձեռքին առնչվող շատ դարձվածքներ: Բոլոր դեպքերում առարկայական մտածողությունից պատկերավորին անցնելով՝ կատարվում է լեզվական վերացարկում: Խորհրդանշային դարձվածքների համար կարևորվում են խոսքային միջավայրը, հաղորդակցման իրավիճակը և խոսքի համատեքստը:

Դարձվածքային միավորների համակարգում *ձեռք*-ը, անվանողական արժեքից բացի, ունի նաև հաղորդակցման արժեք: Տարորոշել ենք *ձեռք* գերադաս բաղադրիչով կազմված հոմանիշ և հականիշ դարձվածքների առավել կենսունակ տարբերակներ, որոնց բաղադրիչները նույն բառի քերականական տարածներն են՝ կա՛մ բարբառային, կա՛մ էլ փոխառյալ համագործերն ու համանշանակները: Այսպես՝

- ձեռքը հանքուրել* - ձեռ ու ոտը պագել (սաստիկ խնդրել)
- ձեռքը ձիգ* - ձեռքը հույս (ժլատ, կծծի)
- ձեռքը մաքուր* (խատակ) – ձեռքից մաքուր (անշահասեր, անխարդախ)
- ձեռքը նայել* – ձեռքին նայել (մեկի օգնությանը կարոտ լինել)
- ձեռքը դատարկ* // դարդակ – ձեռքը պարապ (անփող, չքավոր, դատարկածեռն)
- ձեռքը ծոցը մնալ*–ձեռքը ծոցում մնալ (ձեռնունայն, նյութական վատ վիճակի մեջ լինել):

Որպես կանոն՝ հականշային հարաբերության մեջ մտնող դարձվածքներն ունեն բաղադրիչների նույնական կազմ՝ բացառությամբ մեկական բաղադրիչի. այս դեպքում բաղադրիչ բառերի հականիշ իմաստների շնորհիվ էլ առաջանում է հականշություն, օրինակ, *ձեռքը խնդրել* - ձեռքը *մերժել*, ձեռը *կարճ* (պակաս) - ձեռը *երկար* (երկայն), ձեռքը *թեթև* (խեղճ) - ձեռքը *ծանր*:³

¹ Հր. Աճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Եր., 1977, էջ 149:
² Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, հ. II, Եր., 1981, էջ 151:
³ Ա. Մ ո թ ի ա ս յ ա ն, Ա. Գ ա լ ս ո յ ա ն, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975, էջ 384-386:

Ժողովրդական բանահյուսության տարբեր նմուշներում՝ երգման բանաձևերում, սպառնալիքի խոսքերում, օրհնանքի և անեծքի ժանրերում, վկայակոչվում են *ձեռք* գերադաս բաղադրիչով կազմված կայուն, բանաձևային արտահայտություններ, ինչպիսիք են՝

ձեռքս վկա... ձեռքս (կ)կտրեմ, թե... - (երդում ասածի անպայման ճիշտ լինելու վերաբերյալ)

ձեռը կոտրվի, ձեռ(ք)ը չորանա


ձեռդ դալարի, ձեռդ երկայն լինի

երկար ձեռդ Աստված չկարճըցնե


ձեռքդ պարանին օգես՝ օձ դառնա

ձեռիդ ուժը անպակաս լինի:

Կեռևս խեթական հիերոգլիֆներում *ձեռքն* ուներ ուժի, ուժեղության (նկ. 28), ենթակայության, վերցնելու, բռնելու (նկ. 41) և այլ իմաստներ, որոնք համապատասխանաբար արտահայտվել են ձեռքի մատների որոշակի դիրքով: Ուշագրավ է, որ հիերոգլիֆներից մեկը (նկ. 45) միաժամանակ արտահայտել է *երեխա*, *որդի*, *եղբայր* իմաստները՝ խորհրդանշելով ձեռք-գաղափարագիրն իբրև արյունակից անձ:⁴



Վաղնջական մշակույթներում մարդը բնության մեջ՝ ժայռերի ու քարանձավների պատերին, բողել է ձեռքի հետքեր՝ ուրվագծված և շրջանի մեջ առնված: Մրանով ոչ



միայն իր ներկայությունն է ցանկացել վավերացնել բնության մեջ, այլև փորձել է, համաձայն իր աշխարհընկալման, ձևափոխել այն:⁵ Թերևս սա էլ հանգեցրել է գեղարվեստական ստեղծագործության սկզբին, այսինքն՝ արարված իրականությունը մարդը կրկնարարել է:

Չեռքի մասին երկբնույթ՝ ներհակ պատկերացումները տարբեր մշակույթներում արտահայտվել է երկանդամ հակադրության ձևով՝ չար ու բարի, աջ ու ձախ արքետիպային սկիզբներով: Հրեական միջնադարյան կրոնական պատկերացումների համաձայն՝ գոյություն ունեն երկնային միջնորդներ: Նրանցից մեկը Շեքինան է, որն ըստ էության խորհրդանշում է աստվածության իրական, հավաստի ներկայությունը երկրում: Ըստ մի այլ պատկերացման՝ այն Կենաց ծառի սիմվոլացում է, որի աջ ճյուղը խորհրդանշում է բարեգությունը, իսկ ձախը՝ խստությունը: Երբ մարդը մեղք է գործում, ընկնում է խստությանն առնչվող ուժի ազդեցության տակ, որը կոչվում է արդարադատության ձեռք: Մեղքը քավելով՝ ձեռք է բերում ազատություն և առնչվում է օրինյալ ձեռքին՝ Աջին:

Աջը հնագույն ժամանակներից ընդունվել է հայ եկեղեցու կողմից: Ըստ Մադաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի՝ Աջերն ավելի հին ծագում ունեն, քան մասնատուփերն ու մասունքի պահարանները: Աջը պայմանական հասկացություն է, քանի որ բազկի տեսք ստացած արծաթյա, ոսկյա պահարանի մեջ դրվում են ընդհանրապես սրբի նշխարները: «Կանոն»-ում հիշատակված ամենակարևոր ու մեծագույն հարգանք

⁴ М. Д у н а е в с к а я, Язык кеттских иероглифов, М., 1969, стр. 93.

⁵ Л. Л ю б и м о в, Искусство древнего мира, М., 1980, стр. 23.

վայելողը՝ որպես եկեղեցական սրբություն, Ս. Գրիգոր Լուսավորչի Աջն է: Լուսավորչի Աջով են կաթողիկոս ու եպիսկոպոս օծում: Այս Աջին վերագրվել է համաճարակներից փրկելու հրաշագործ սովորություն: Ավանդական ու ճշմարիտ պատմմաներով հանդիպում ենք սրբի Աջի հիշատակությանը. «Եվ Աջն լուսընկալ եւ շնորհաբաշխ» (Ճառքետիր), «զԱջն բողեալ մեզ ի պահպանս ազգիս հայոց» (Ս. Չամչյան): Այսպիսով՝ Լուսավորչի Աջը նշանակ է Սուրբ Հոգու շնորհաբաշխության. հազարավոր մարդկանց դարձի բերեց ու մկրտեց: Հայոց մեռնող ևս Լուսավորչի Աջով է օծվում:

Վկայաբերենք այն երկնային տեսիլը, ըստ որի՝ հենց ամենաշնորհողն Աստծոն ձեռամբ էլ Մաշտոցին պարզեցվել է հայոց նշանագրերն ստեղծելու շնորհը. «...Միս տեսա՝ ոչ արթնութեան մեջ, եւ ոչ ալ երազի, այլ սրտի գործարանին մեջ աջ ձեռքի մը քաթը՝ որ կը գրէր քարի մը վրայ, անոր վրայ խորապէս դրոշմվելով տառերուն ձեւը՝ իբրեւ թէ մէկը կակուղ ձիւնին վրայ կը ճնշէր»:⁶

Ձեռքի իմաստի նշանասիմվոլային համակարգի քննությունն ուշագրավ է նրանով, որ մարմնի մի մասով բնութագրվում, բացահայտվում է մարդն իր էությանը: Ձեռքը՝ իբրև բուժամիջոց մարմնին դնելը, սիմվոլիկ գործողություն է, կարող է խորհրդանշել հոգևոր օրհնություն կամ իշխանություն, այսինքն՝ այն սոսկ մարդկային սովորական ժեստի շարունակություն կամ հարաբերակական միջոց չէ: Ձեռքը դնելով ինչ-որ մեկի գլխին՝ հրապարակայնորեն վկայվում է ձեռնադրվողի՝ Աստծուն հատուկ ծառայության անցնելու շնորհի մասին:

Անդրադառնանք *ձեռնադրում* բառի ոչ միայն իմաստային, այլև ծիսական նշանակությանը: Այն ինքնօրինակ շնորհաբաշխում է, երբ որևէ անձ որոշակի հոգևոր նպատակով ձեռքը դնում է մեկ ուրիշի գլխին: Այս արարողակարգը սովորաբար ուղեկցվում է աղոթքով կամ կանխասացի խոսքային որևէ բանաձևով: Ձեռնադրման ծիսակարգում նպատակային այս մոտեցումները երբեմն համադրվում են: Հոգևոր իմաստով ձեռնադրել նշանակում է հաղորդել աստվածային պարզ կամ գործություն՝ «տրչութիւն եւ ընդունելութիւն սուրբ աստիճանաց կարգին»:⁷

Ուշագրավ է, որ «քահանայապետին ձեռք դնելն արձակման նոխազին վրայ, որպէս թէ անոր վրայ անցունելու համար ժողովրդեան յանցանքը, կը նշանակէր Քրիստոսի քառութեան գործը, որպէս թէ մեղաւորը չկորսուէր իր չարութեան մեջ»:⁸ Այս առումով հայտնի է, որ Մովսիսական օրենքը պատվիրում է թե՛ քահանաների և թե՛ այլոց համար այլևայլ ծիսական վացումներ, որոնք Փրկչի արյամբ հոգևոր մաքրության նշանակ էին. «Լուսնալ զձեռս էր վկայել անմեղութեան ուրուք»:⁹ Այսպիսով՝ *ձեռքերը լվալ կամ լվանալ* դարձվածքն արտահայտում է պատասխանատվությունն իր վրայից վերցնելու, մի բանի մասնակցելուց հրաժարվելու կամ որևէ բանի չխառնվելու իմաստ: Աստվածաշնչյան դարձվածքներից հիշենք *Պիղատոսյան ձեռնալվան*. Քրիստոսին ամբողջի ձեռքը հանձնելուց առաջ Պիղատոսը լվացել է ձեռքերը և ասել՝ անմասն եմ ես:

Հայտնի է, որ Հիսուս բժշկություններ է կատարել թե՛ անմիջական ձեռքի հպումով և թե՛ առանց հպումի, քանի որ ինքն ուներ տկարին ու հիվանդին բժշկելու աստվածային գործություն: Մինչև իսկ նրա զգեստի քղանցքին հպվելը կամ ձեռքի սովերին հասնելը հավատավորի համար բուժիչ էր (տե՛ս Մատթ. 14:34): Վկայաբերենք երկու կույրերի բժշկումը: «Եւ գթալով՝ Յիսուս դիպաւ նրանց աչքերին, եւ նրանք իսկոյն տեսան ու զնացին նրա յետեւից»/Մատթ. 20:34/: Ձեռքի անմիջական հպումով վկայվում է նաև չար դևի կողմից տասնութ տարի բռնված, կուչ եկած կնոջ բժշկումը: «Յիսուս նրան տեսնելով՝ կանչեց իր մօտ և ասաց. “Ո՛վ կին, բժշկուած ես քո հիւանդութիւնից”»: Եւ ձեռքը դրեց նրա վրայ, ու նոյն ժամին հիւանդը ուղղուեց եւ Աստծուն փառք էր տալիս»/Լուկ. 13:12-13/:

Հիսուսի աշակերտները ևս ունեին ձեռքով բժշկելու գործություն: Այսպես՝ Պետրոսը մահճում պատկած անդամալուծին ասում է. «Տէր Յիսուս Քրիստոսը քեզ բժշկում է, վեր կաց եւ յարդարի՛ր քո անկողինը: Եւ նա իսկոյն վեր կացաւ»/Գործք 9:10, 17-19/:

⁶ Վարդ սրբոց, Պէյրուք, 1975, էջ 490:

⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, II հ., Եր., 1981, էջ 152:

⁸ Բառարան Սուրբ Գրոց, Եր., 1992, էջ 320:

⁹ Նույն տեղում, էջ 240-241:

Նմանօրինակ խոսքեր է ասում նաև Տաբիթա (Այծեննիկ) անունով մահացած մի կնոջ, և նա հառնում է. «Տաբիթա՛, յանուն Տէր Յիսուս Քրիստոսի վեր կաց կանգնի՛ր»/Գործք 9:36/:

Պողոս առաքյալը Տիրոջ անունով բժշկում է ի ծնե կաղ մի մարդու: «Նրան նայելով եւ տեսնելով, թէ փրկութեան հաւատ ունի, բարձրաձայն ասաց.՝Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունով քեզ եմ ասում. կանգնի՛ր քո ոտքերի վրայ ուղիղ՝: Եւ նա վեր ցատկեց ու վազվզում էր»/Գործք 14:7/:

Մաշտոցի ապաշխարության շարականներում ևս ամենագոր Աստված՝ իբրև ձեռք մեկնող, այսինքն՝ ձեռք երկարող և օգնող է. «Աստուած, յօգնել ինձ փութա, քանզի խորք չարեաց ընկղմեն զիս յանդունդս, այլ դու, նաւապետ, լեր եւ ինձ ձեռնտու»:

Բոլոր դեպքերում, ձեռքի գորությանը բուժումը կատարվում է Բարձրյալի անունից: Մարդու ձեռքին տրված գորությունը բխում է Աստծո ձեռքի գորությունից: Ինչպես Ս. Գրքում է ասվում. «Իմ անունից ձեռքերը դրե՛ք հիվանդների վրա, և կապաքինվեն»: Տկարը կարող է ունենալ մոր կենսաօժի գզացողություն կամ հավատի նորովի դրսևորում, հմայական խոսքին հավատալու հնազանդություն. հավատն անհրաժեշտ պայման է բժշկության համար: Եթե մարդը դրական դիրքորոշում ունի այս ամենի հանդեպ, բժշկումն ավելի դյուրին է դառնում: Երբեմն ապաքինումը կատարվում է ակնթարթորեն՝ ձեռքը հիվանդի վրա դնելուն պես: Եթե հավատը դադարում է գործուն լինելուց, ապաքինման գործընթացն ընդհատվում է. հույսն ու ապաքինումը չհամարվելու դեպքում մարդը հայտնվում է զգայական փակուղու մեջ:

Հայ ժողովրդական հավատալիքային կենցաղում առանձնահատուկ բանաձևային նշանակություն է ստացել «...Չեքս հիվանդի դեղ է» արտահայտությունը: Հայտնի է, որ որոշ հիվանդություններ չարական բնույթ ունենի և բուժելի էին միայն ձեռքի գորությամբ (իմա՝ ձեռամբ): Ո՞ւմ ձեռքը կարող էր բուժական գորություն ունենալ. այն մարդու ձեռքը, ով բնության օրինաչափություններին հակառակ և հազվադեպ երևույթ էր տեսել, օրինակ, գորտը՝ օձի բերանին, շունը շան մսից ուտելով, կատուն կամ շունը խոտ արածելով: Նման դեպքերում տեղի է ունենում բնության մեջ եղած ծածկագրի՝ կողի տարրընթերցում կամ տարիմաստի բացահայտում: Այսպես է ըմբռնվում նաև այն դեպքում, երբ գայլի ոտնահետքով գնացող ձին այլևս չի կարող խրխնջալ: Հազվադեպ ու անսովորը տեսնողին, ըստ ժողովրդի, տրվում է շնորհ, որով նա դառնում է տեսանող: Ապաքինումն ուղեկցվում է նաև խոսքի հմայական բանաձևումով: Բուժողը, ձեռքը դնելով հիվանդի մարմնի ցավող մասի վրա, աղոթում է ի ծածուկ.

-Ես տեսա գորտը օձի բերանում,

Իմ ձեռքս դոլինջի (մեջքացավ) դեղ է:

Ըստ ժողովրդական կենսափորձի՝ դոլինջը ոգի է, որը կարելի է բուժել ձեռքի հմայական գորությամբ:

Ժողովրդական հմայական բուժամիջոց է նաև ձեռքի գորությամբ էրեսիկի՝ մաշկաբորբի բժշկումը: Բուժողը ձեռքով «բարևում է» հիվանդությանը՝ երեկոյան ասելով՝ բարի լույս, առավոտյան՝ բարի իրիկում՝ այս կերպ մոլորեցնելով հիվանդությանը:

Հայտնի է նաև աչքացավի բուժում ձեռքի հպումով: Հիվանդին նստեցնում են տան դռան շեմին (շեմի պաշտամունք), ձեռքը դնում են գլխին ու մյուս ձեռքով նրա աչքերից քաշում են ցավը՝ կատարելով նմանողական հմայություն: Առաջին օրը օրինած ջուր են ցողում՝ դանդաղ ասելով աչքահատի հետևյալ աղոթքը.

Մե ծով՛մ կա,

Ծովի վրա հատ՛մ կա,

Քաշե հատը, քից ջուրը:

Երկրորդ օրը նույնն անում են ցորենով, երրորդ օրը՝ աղով: Ամեն անգամ՝ ձեռքը գլխից վերցնելիս, կրկնում են՝ *չքնի հատիկ, ընկնի հատիկ*, և ջուրը, ցորենն ու աղը շարտում են աչքացավ ունեցողի թիկունքից ձախ, այսինքն՝ անցած լինի, ետինս լինի:

Ծննդկանի ցավերը թեթևացնելու համար տատման ունեցող հատուկ բույսի արմատ (քոք), որը կոչվում էր Աստվածածնա թաթիկ: Բույսը գցում էին պղնձե ամանով եռացրած ջրի մեջ, արմատն աստիճանաբար բացվում էր ձեռքի նման՝ ապահովելով Մարիամ Աստվածածնի ձեռքի գորությունը ծննդկանի վրա:

Իգնատիոսի «Մարմնախաղաց»-ում արտահայտված են ձեռքի տարրեր մասերի վերաբերյալ ժողովրդական կարծրատիպային պատկերացումները՝ որպես տպավորում և սիմվոլացում: Այսպես՝ «Ձեռքի թէ աջը խաղայ, մեծից կպատուի, կհարստանայ... Թէ ձախը՝ յոյս չունեցած տեղիցը բարի կգտնէ... Թէ աջ ձեռքի բոլոր մատները խաղան, կտրումի...»:

Կյանքի փորձով պայմանավորված՝ ժողովուրդն իմաստավորել է ձեռքի գործառույթը և ձեռքը (բուռը) քոր գալը մեկնաբանել է եկամտոտ ստանալու իմաստով, ձեռքով անելը՝ ձեռքի շարժումով ողջունելու և այլն: Ձեռքի սիմվոլիկան՝ մատների դիրքով արտահայտված, կարևոր նշանակություն ունի արտալեզվական միջոցների համակարգում: Ջղածիզ բացված ձեռքը դեպի հակառակորդի դեմքն ուղղելը դիմացիմին «մահ ուղարկելու» նշանակ է («գրող՝մ երեսդ»): Եթե «չանչած» ձեռքն ուղղվում է դեպի սեփական դեմքը, ընկալվում է հետևյալ ենթատեքստով. «Գրողն ինձ, որ իմ աչքերը տեսան այս ամենը»: Գետի առաջ ու վեր ուղղված ձեռքերի պատկերն ունի չարխափան նշանակություն, չարը շեմից, գերդաստանից հեռու վանելու իմաստ: Չախը մոգարգել է, գաղտնագրված. ձախը քարսն է, «չկա»-ն, որը չէին արտասանում, այլ ասում էին՝ էլ Աստված տա, Աստված հաջողի: Աջը լիովին փոխարինում է ձեռք բառին: Աջը ճիշտն է, որը ճնշում է և հանգեցնում ձախի գործառույթի ենթագիտակցական սահմանափակմանը: Ժողովրդական հնայությունները և գուշակությունները (նետ դնել, գարի գցել, թիզ չափել, մոմ քափել) սովորաբար սկսում էին աջ ձեռքով, որպեսզի գուշակությունը «չթարսվեր»: Հղի կնոջ ծնվելիք երեխայի սեռը որոշելու համար առաջարկում էին պարզել ձեռքը. եթե կինը ձեռն ավել մեկնել, նշանակում է՝ աղջիկ կունենար, ձեռքի երեսը՝ տղա: Ձեռնափի գծերն ընդհանուր առմամբ մեկնաբանվել են իբրև մարդու ապրած կյանք, ճակատագրի գծեր: Նույն հայեցակետով, երբ մարդը, ձեռքերը բաց, աղոթում է առ Աստված, կարծես բանաձևում է. «Իմ կյանքը բացում եմ քո առաջ, օգնի՛ր ինձ»: Այս իրողությունն արտահայտվում է «ձեռքերը բարեխոս բռնել» դարձվածքով, որը սիմվոլիկ նշանակում է ձեռքերը բարձրացրած աղոթել:

Հայ սովորույթային-մշակութային կենցաղում թաղման ծիսակարգից հետո հուղարկավորման մասնակիցները դրսում՝ դռան շեմից հեռու, անպայման լվանում էին ձեռքերն ու աչքերը՝ կատարելով մաքրման սիմվոլիկ ծես. այն, ինչ տեսան աչքերը, այլևս չտեսնեն, և ինչին մասնակցեցին ձեռքերը, այլևս չկրկնվեն: Հարսանյաց արարողակարգից հետո երիտասարդ ամուլը ձեռքը դնում է չամուսնացածների գլխին՝ որպես բարեբախտության փոխանցման խորհուրդ կամ գիտակցված ընդօրինակման դրսևորում («տարոսը ձեզ»):

Այսպիսով, մարդկային համահաղորդման տարաբնույթ տեքստերում ձեռքը կարող է խորհրդանշել և՛ իշխանության ու օրհնության փոխանցում, և՛ բժշկություն ու ապաքինում, և՛ բարեկամություն ու հանդիպման բերկրանք, և՛ փաղաքշանքի ու գորովի արտահայտություն:

"...РУКА МОЯ – ЛЕКАРСТВО ДЛЯ БОЛЬНОГО."

___ Резюме ___

___ К. Саакян, Р. Оганесян ___

В статье рассматривается феномен руки. В процессе общения и в народно-разговорных текстах рука кроме обозначаемого имеет также коммуникативное значение. Еще в древних культурах рука являлась носителем выражения средства, силы и могущества, выразителем власти. Нашей целью было выявление психологических особенностей символического действия положения руки на тело как лечебного средства. Рука символизирует также духовное благословение.

Рассматривая различные способы лечебного действия руки, можно констатировать, что вера для исцеления является исключительным средством, чтобы личность не оказалась в психологическом тупике.

Հասնիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՍՆԸ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

«Ալեքսպոլում ստեղծվել էր մի ուրույն աշուղական մթնոլորտ իր պականություններով ու սովորություններով և տարբեր ուղղություններով: Ալեքսպոլի աշուղ-երգիչներից ամենակրտսերը և ժամանակով մեզ ամենից մոտիկը աշուղ-երգահան Գրիգորն էր՝ Տայյանը, երաժշտական հին ընտանիքից սերված, ալեքսպոլցիների կողմից շատ ու շատ սիրված ուստա Գոքորը՝ հետագայում ամեն տեղ ծանոթ ու սիրված երգիչ Շերամը»: Ավետիք Իսահակյան¹

Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը XIX դ. երկրորդ կեսին նշանավորվեց աշուղ Շերամի ստեղծագործության ծնունդով և նրա՝ մեծ ժողովրդականություն վայելող գործունեությամբ: Բացառիկ էր աշուղի երգաստեղծության նորարարությունը՝ հիմնված հայ ազգային երաժշտամտածողության վրա: Հայտնի է, որ տիրապետելով աշուղական դասական արվեստի հիմնական օրինաչափություններին, Շերամը ստեղծագործության ինքնահաստատման շրջանում սկզբունքորեն հրաժարվեց աշուղական կադապար-մեղեդիներից և իր յուրաքանչյուր բանաստեղծության համար հորինեց ինքնօրինակ՝ անկրկնելի մեղեդի: Ավելին, նրա հորինվածքներում ակնհայտ է երաժշտական բաղադրիչի ծանրակշիռ դերը: Գ. Լևոնյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Շերամի երգերի տեքստերին, որպես սոսկ ոտանավորների, դժվար է մոտենալ առանձին, որովհետև նրանք, կարելի է ասել, օրգանապես կապված են իրենց եղանակների հետ: Հեղինակը իր երգ-եղանակները հորինել է միասին՝ «թառը դռչին դրած»: Նա խոսքը հարմարեցրել է եղանակին, շատ անգամներ անտես անելով վանկային և հանգային տարրական կանոնները»: ² Այս առումով Շերամին կարելի է կոչել երգահան, որի անգուգակյան մեղեդիները ստեղծման պահից մինչև այսօր հուզում են ունկնդրին՝ իրենց արտահայտչական ու գեղարվեստական ամենաբարձր հատկանիշներով:

Անշուշտ, երաժշտագիտական խորքային ուսումնասիրության նյութ կարող է հանդիսանալ Շերամի երգաստեղծության ծագումնաբանության, երաժշտամտածողության ու, առհասարակ, նրա արվեստի ակունքների լիարժեք բացահայտման խնդիրը: Կարծում ենք, բազմաբևեռ այդ հետազոտության կարևոր բացահայտիչներից մեկն էլ բարերար այն մթնոլորտի նշանակությունն է, որը նպաստել է մեծ աշուղի անկրկնելի տաղանդի անկաշկանդ դրսևորմանը՝ պահանջելով նրանից նորանոր երգեր: Իբրև կարևորագույն փաստ, նշենք 1880թ. Ալ. Մխիթարյանցի կողմից հրատարակված երգարանը, որի մեջ տեղ էր գտել նաև 22-ամյա Գրիգոր Տայյանի «Պարտեզում վարդեր բացված» երգը:

Ներկա հրապարակման մեջ փորձել ենք քննել այն հարցը, թե ի՞նչ է տվել Ալեքսանդրապոլը Շերամին, ինչի՞ շնորհիվ է այդքան սիրվել քաղաքային երաժշտական կյանքում նրա երգարվեստը: Անշուշտ, գոյություն ունեցող փաստերի ընդգրկման շրջանակները և ուսումնասիրության ծավալներն ամբողջությամբ չեն կարող պարփակվել մեկ հոդվածի շրջանակներում: Այդ պատճառով մենք կանդրադառնանք խնդրո առարկային առնչվող կարևոր փաստերի մի մասին՝ ապագային թողնելով դրանց ամբողջական, համակողմանի քննությունը:

Իբրև կարևորագույն աղբյուր, մեր ձեռքի տակ է աշուղի ինքնակենսագրությունը, գրված՝ 1936թ.:³ Համոզված ենք, որ այս փաստաթղթում տեղ են գտել մեզ հետաքրքրող խնդրի ուղղակի կամ ակնհայտորեն ենթադրվող մանրամասներ:

Գրիգոր Տայյանը ծնվել է 1857 թվականին Ալեքսանդրապոլում՝ անվանի այն երաժիշտների ընտանիքում, որոնք բացել էին քաղաքում բազմաթիվ աշուղական մրցություններով հայտնի Տայյանների սրճարանը: Սա այն բեկումնային ժամանա-

¹ Ե եր ա մ, Երգեր, Եր., 1959, էջ 3:

² Նույն տեղում, էջ 6:

³ Ե եր ա մ, Ինքնակենսագրություն (ձեռագիր), Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Շերամի ֆոնդ (այսուհետև՝ ԵՖ), N 1:

կաշրջանն էր, երբ քաղաքում արդեն ձևավորվել էր հայեցի մի մթնոլորտ՝ շաղախված տեղաբնակների, կարսեցիների, կարինցիների, մշեցիների, վանեցիների երաժշտական ավանդույթներից:

Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքի մի ինքնատիպ ոլորտը ժողովրդական երգարվեստն էր: Արտահայտչական ամսահմանափակ հնարավորություններ ունեցող, սակայն ժանրային մի որոշակի համակարգի մեջ զարգացող այս արվեստը ձևավորել էր բարենպաստ ասպարեզ՝ երաժշտականությանը օժտված երիտասարդի համար: Ի սկզբանե նա նախընտրեց թառի նվագը, ինչը հետագայում յուրահատուկ կերպով բացահայտվեց աշուղի երգաստեղծության մեջ որպես մեղեդիակերտման նշանակալի գործոն: Այսպիսով, թառն ի սկզբանե յուրահատուկ միջոց էր, որը խթանելու էր մեծ երգահանի ստեղծագործական խիզախումները՝ անկրկնելիորեն ոճավորվելով հատկապես նրա ծանր ու ծորուն երգերի մեղեդիներում: Քաղաքային կյանքի անբաժան մասն էր կազմել աշուղական, սազանդարական երգ-երաժշտությունը: Վերջինիս հանդեպ անտարբեր չկարողացավ մնալ նաև տակավին պատանի Գրիգոր Տալյանը, որն արդեն 18 տարեկանում սկսեց պատրաստել չոնկուրներ, ապա նաև՝ թառեր:⁴ Թե որչափ էր նա կապված իր նախընտրած նվագարանին, խոսում է նրա՝ այդ տարիներին վերաբերող հետևյալ հուշը. «Մի անգամ մեծերս ինձ դրկեցին խզարչիների հետ անտառ, իբրև խազեին, որ խզարչիք տախտակներ ձեն, տանենք Գյումրի ծախենք, թե բանեցնենք: Ես էլ մի թեթեվ թառ ունեի, ինձ հետ տարա, որպեսզի այնտեղ նվագեն ազատ ժամանակ»:⁵

Ապագա աշուղին ընտանիքում փորձում էին դարձնել ատաղձագործ, սակայն այս շրջանում է, որ ի հայտ է գալիս նրա երգաստեղծության տաղանդը, որն անմիջապես գտնում է իր համակիրներին. «Զահել-զահել ընկերներ հավաքվում էին թյուքյանս, ել դուրգյարություն չեի անում խո կարգին, այնպես սիրահարվեցի մուզիկայի վրա, վոր զիշեր ցերեկ թառը ձեռքիցս վար չեի դնում: Ցերեկը բավական չեք, զիշերը մինչև ժամը 1-ը, 2-ը մայրս բարկանում եր ինձ վերա բողբոլին, ասում եր,- «այ տղա, բավական ե, վեր կաց, քնի», իսկի չեի լսում նրան, շորերս հանում էի, մտնում տեղաշորիս մեջ, թառը կրծքիս եի առնում պառկում, ել անգամ կամաց-կամաց մատներով նվագում»:⁶

Ժողովրդական երգի գերազանց իմացության շնորհիվ Շերամին հաջողվում էր ստեղծել դրանց ոճականորեն համահունչ նմուշներ: Այսպես. նրա թերևս ամենահայտնի՝ «Պարտեզում վարդեր բացված» երգն իր մեջ յուրօրինակ ձևով խտացնում է քաղաքային ժողովրդական քնարական երգերի կառուցվածքային և լեզվատոնական տիպական գծերը: Նույնը կարելի է ասել նաև «Զով զիշեր», «Օլոր մոլոր» և այլ երգերի մասին: Հայ աշուղական արվեստում ժողովրդական երգի ոճավորման կամ ժողովրդականին մանորինակ երգ հորինելու հմտությունն ու գործառույթն ընդունված է եղել: Շերամի կողմից ժողովրդական երգի բացահայտումն ու ոճական իմաստավորումն ընթանում է թառի կատարողական առանձնահատկությունների տիրապետմանը զուգահեռ:

Ի վերջո նա ինքնուրույն որոշում է կայացնում՝ դառնալով նախ թառահարի աշակերտ: Ինքնակենսագրականի համատեքստը հուշում է, որ նրա այդ որոշումը որքան էլ հեշտ ու հանգիստ չի ընդունվել հարազատների կողմից, միևնույն է, նա ապավինել է իր հոգևոր կողմնորոշմանը և չի կասկածել ընտրած ուղու ճշմարտացիությանը. «22 տարեկան հասակիս մեջ արդեն կնիկ ունեի, խանգարեցին միանգամայն: Տեսա դուրգյարությունով չեմ կարող ապրել, բարեբախտաբար Չոնկուր Հակոյի ընկերը բաժանվեց, գնացի Հակոյի հետ ընկեր դառա, վորը յերեվելի ճիանուր* եր ամում, այնպես որ շատ շուտ դարձա Լենինականում հայտնի թառիս Տալյանց Գոգոր»:⁷ Այսպիսով, Շերամի կատարողական առաջին լուրջ քայլերը կապվում են ալեքսպոլցի հայտնի սազանդար Չոնկուր Հակոյի հետ: Վերջինս մեծ ժողովրդականություն էր վայելում քաղաքում և սպասված հյուր էր ամենատարբեր հավաքույթներում: Այստեղ է, որ թրծվում է սպագա մեծ աշուղի բնածին տաղանդը, և նա արդեն այս տարիներին լավատեղյակ

⁴ *Շ, N 1 (բնագիրը ներկայացնում ենք առանց ուղղագրական փոփոխությունների), էջ 3:*

⁵ *Նույնը:*

⁶ *Նույնը:*

* *Քամանչա նվագարանի անվանումներից մեկը:*

⁷ *Շ, N 1, էջ 5:*

էր այն նվազացանկին, որը Ալեքսանդրապոլի հասարակության բոլոր խավերի համար ընդունելի էր: Արդեն 25 տարեկան հասակում նա ելույթներ էր ունեցել բոլոր ակումբներում և նույնիսկ համակրել քաղաքական որոշակի շրջանակների՝ հիմնականում Հնչակյան խմբակների գործունեությանը՝ իր համակրանքն արտահայտելով ոչ միայն կատարողական, այլև հեղինակային ելույթներով. «Գնում էինք դեսուդեն՝ նույնիսկ ակումբները: Հեղափոխական միտքը արդեն հղացել էր իմ մեջս: 25, 26 տարեկան հասակումս կատարյալ գործ էի տեսնում: Շարունակ երեկույթներին պետք էր, որ Գոգորը լիներ նվագողը»:⁸

Սա, անշուշտ, ապագա աշուղի կողմից քաղաքային ժողովրդական երգարվեստի, սագանդարական նվագարանային երաժշտության ժանրային համակարգի, մեղեդիակերտման և ինտոնացիոն բառարանի առանձնահատկությունների տիրապետման ժամանակաշրջանն էր: Ըստ գոյություն ունեցող փաստերի, շատ շուտով սկսվում է Գրիգոր Տայյանի ստեղծագործական պոթելումը, որ Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքի անքակտելի մասն էր դառնալու. «Գրում էի խոսքերը և յեղանակները, հորինում ինքնուրույն, այնպես որ՝ յերգը ինձանից, յեղանակը ինձանից, նվագելը ինձանից, դեն ընթերցո՞ղ, լավ իմացի՞ր, այսպիսի մի մարդ էի, միյեվնույն ժամանակ լավ թառեր էլ ինքս էի շինում: Հետո, քաղաքային ակումբում ասիական յերեկոներ էր լինում, մտիկ քաղաքներից շատերը գալիս էին, վորպեսզի Գոգորին լսեն, թե՛ նվագը, թե՛ յերգը»:⁹

Աշուղի ինքնակենսագրության մեջ կա առավել հետաքրքիր մի փաստ, որն աներկբայորեն վկայում է Ալեքսանդրապոլում նորովի ինքնահաստատված *հայ* երաժշտական արվեստի՝ որպես հասարակական պահանջ ներկայացնող երևույթի մասին. «Բավական ժամանակ երգում էի պարսկերեն, հետո ժողովրդի թելադրությամբ (ընդգծումը մերն է) սկսեցի հայերեն յերգել և բանաստեղծություններ անել»:¹⁰

Սա այն ժամանակաշրջանն էր, երբ Ալեքսանդրապոլում հիմնվում էր աշուղական ազգային դպրոցը, որտեղ Ջիվանու ջանքերով նոր ավանդույթներ էին ձևավորում: Ամենակարևոր միտումը բացառապես հայերեն երգերի հորինումն ու կատարումն էր: Շերամը ևս այդ գործընթացի կարևոր մասնակիցն էր և փորձեց մի նոր աստիճանի հասցնել աշուղական երգի անկրկնելի գեղարվեստական արտահայտչականությունը: Ուշադիր ընթերցելով ինքնակենսագրական դրվագները, հնարավոր ենք համարում աշուղի կողմից մեղեդի-կադապարներից հրաժարվելու և ինքնուրույն մեղեդիներ հորինելու մշտական ձգտումը դիտել որպես ուրույն երաժշտական մտածելակերպ, որը կայացավ Ալեքսանդրապոլի երաժշտական միջավայրում, ժողովրդական երաժշտության անմիջական ազդեցության տակ: Ինչպես նշում են աշուղագետները, Շերամի երգերում բանաստեղծության տաղաչափությունը, կառուցվածքը բխում են մեղեդու հորինվածքից, ինչը դարձյալ վկայում է մեղեդիական նորանոր միջոցներով ցանկալի արտահայտչականության հասնելու նրա մշտական ձգտման մասին: Ավելին, սնվելով ժողովրդական ինտոնացիոն ակումբներից, Շերամը Ալեքսանդրապոլի երաժշտական միջավայր բերեց իր ստեղծագործական պրիզմայով անցկացրած, կատարելիության հասնող և՛ պարզ ու ջինջ և՛ շքեղաշուք երգեր:

Գրիգոր Տայյանի երգարվեստի ժողովրդականությունը 1990-ականներին, թվում է՝ կայացած իրողություն էր: Մակայն, որպեսզի նա համարվեր իսկական վարպետ կամ պրոֆեսիոնալ, ըստ աշուղների համբարության կարևոր պայմաններից մեկի, պետք է լիարժեքորեն տիրապետեր բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ նվագարանային արվեստի դասական նվագացանկին, մասնավորաբար մուղամներին: Ահա այս պայմանն էր, որ նրան շարունակ կատարելագործվելու խթան էր ծառայում: Այդ նպատակով նա նույնիսկ օգտվում է Դարաբաղից եկած և Ալեքսանդրապոլում համերգաշրջան անցկացնող համբավավոր Ջումշուղի խմբում նվագելու հնարավորությունից և այդ խմբի անդամների հետ իր արվեստում նվագարանային մուղամը կատարելագործելու երկարատև մի փորձաշրջան է ասքրում: Ի վերջո նա համբարությունում հանձնում է յուրօրինակ «փնություն» և արժանանում աշուղի կոչման:

⁸ Շ Յ, N 1, էջ 5:

⁹ Նույնը:

¹⁰ Նույնը:

Շերամը կարողացավ իր անկրկնելի արվեստով նվաճել համաքաղաքացիներին՝ հատկապես երիտասարդության անմնացորդ սերը: Նրա երգերը ոչ միայն ճանաչված էին: Ավելին, նրանից անընդհատ սպասում էին նոր հորինումներ, նոր նրբերանգներ ու, իհարկե, անկրկնելի մեղեդիներ, որոնք հետագայում համալրելու էին հայ ազգային երաժշտական գանձարանը: Այն, որ Շերամը շատ արագ հրաժարվեց իր բանաստեղծությունները աշուղական կաղապար մեղեդիներով եղանակավորելուց, թվում է՝ դարձյալ շաղկապված է նրան համակրող երաժշտասեր երիտասարդների համառ պահանջներին ու խնդրանքներին: «Շերամի շատ երգերը, - իրավացիորեն նկատել է Կ.Դուրգարյանը, - մտել են ժողովրդի կենցաղի մեջ և պահպանվում են ամենայն սրբությամբ: Նրա վարած խնջույքները կատարյալ համերգներ են եղել՝ ժամանակակիցների վկայությամբ»:¹¹

Աշուղին սիրով հրավիրել են նաև հարսանիքների, որտեղ էլ ծխականացվել են նրա երգերը: Բանահավաք Ալ.Մխիթարյանցի բնորոշմամբ, Շերամի գործունեության շնորհիվ Ալեքսանդրապոլի հարսանիքներում ավանդական են դառնում լարային ամսամբներին ելույթները: «Ղայդեքը փոխվել են, - գրում է նա, - հիմի դավուլ - գուռնեն վո՞վ լայեղ կենե, թառ ու քյամանչա գուգեն բիրադի, Տալոյենց Գոքորն որ չչալե ու երգե, էլ հարսը դռնեն գելնի՞»:¹²

XIX դարավերջին Շերամի երգերն արդեն հնչում էին քաղաքում հայտնի երաժիշտների ու խմբերի կատարմամբ, նրա արվեստը հետաքրքրում էր պրոֆեսիոնալ երաժիշտներին: Դատելով աշուղի հուշերից՝ նա պատրաստ էր շարունակել երաժշտական կրթությունը և մի նոր հարթության վրա զարգացնել իր կատարողական հմտությունները, եթե կենսապայմաններն ու ընտանեկան հանգամանքներն այլ կերպ դասավորվեին: Այսպես, նա նշում է, որ հորաքրոջ որդին՝ Մուշեղը, շարունակ նոր ու թարմ մտքեր է նրան տվել և հետևողականորեն հսկել է նրա ստեղծագործական աճին. «Այսպես շարունակեցի, ժողովուրդը հակված դեպի իմ կողմը: Մուշեղը ինձանից չէր հեռանում: Այսպես սարքեցին ընթերցանական յերեկոներ. վարժապետներ, վարժուհիներ, ամեն շաբթու մեջ մի որ գնում էինք մեկի տունը կարդում էինք, վիճում էինք, յես էլ թատվս կը լինեի, կընվագեի: Մուշեղը ինձ միշտ բառերի պաշար էր տալիս, ափսո՛ս, վոր իմ բախտից շուտ մեռավ: Յեթե մի տասը տարի կապրեք, այն ժամանակ յես մեծ բան կը դառնայի»:¹³

Շերամի երգերը կատարել և երգեցիկ տարբեր խմբերի համար փոխադրել է Ալեքսանդրապոլում հայտնի պրոֆեսիոնալ երաժիշտ Եփրեմ Գյաղուկյանը, որն ունեցել է երաժշտական կրթություն և սերտորեն համագործակցել է աշուղի հետ: Շերամը երբեմն նույնիսկ սրտնեղել է, որ ոչ բոլորին է հայտնի, որ այդ երգերի հեղինակն ինքն է և ոչ թե Եփրեմը. «Յես այն ժամանակ մի տաք հնչակյան էի: Ամեն շաբաթ երկու կամ յերեք նոր երգ էի հորինում, որպեսզի յերեկույթներին յերգեր յերգեցիկ խումբը, իսկ Յեբրեմ Գյաղուկյանը, վոր նոտա գիտեր, սովորեցնում էր խմբին և յերգում էին, այսպես յերկար ժամանակ, ժողովուրդը չը գիտեր վորտեղից էին այդ յերգերը, ասում էին. «Ես ինչ խապար ե, ես նորա նոր յերգերը յերեկվի Յեբրեմն ե հորինում», այն ինչ, Գոգորինն էր, վորին այժմ աշուղ Շերամ են կանչում»:¹⁴

1902-1915թթ. Ալեքսանդրապոլում հրատարակվում են Շերամի բանաստեղծությունների հինգ ժողովածուներ. «Զնարը» (1902), «Գանգատի շանթեր» (1905), «Սեր և կռիվ» (1907), «Անջուր պարտեզ» (1913), «Անգուստ արշավ» (1915): Մրանցից «Գանգատի շանթեր»-ը նա անվանել է հեղափոխական երգերի ժողովածու և տպագրել «Պետրոգրադ» կեղծ հրատարակչության անվան տակ: Մյուս ժողովածուներում էլ տեղ գտած համաբնույթ երգերը խորհրդահայ երաժշտագիտության մեջ պատշաճ ուշադրության չեն արժանացել, չեն ձայնագրվել, և այսօր դրանց մեծ մասը ժամանակին նոտագրված չլինելու պատճառով մոռացվել է: Ափսոսանքի արժանի այս բացթողումը Շերամի ստեղծագործական ժառանգության լիարժեք ուսումնասիրության մեջ, անշուշտ, թողնելու է իր որոշակի հետքը:

¹¹ Կ. Դուրգարյան, *Շերամ. Գրիգոր Տալյան, (անտիպ հոդված), ՇՖ, N 24, էջ 4:*

¹² *Նույն տեղում, էջ 5:*

¹³ *Շ Ֆ, N 1, էջ 6:*

¹⁴ *Նույն տեղում, էջ 7:*

Որպես պեքայոյան երաժշտական կենսական աղբյուր՝ Շերամի երգերը հետաքրքրել են ժամանակի շատ մեծանուն բանաստեղծների ու երաժիշտների: Նրա երգերը գրառել են Կոմիտասը, Ալ.Մխիթարյանը, Ա.Բրուտյանը, Վ.Տալյանը, Գ.Ղազարյանը, Ա. Քոչարյանը, բարձր են գնահատել Ա.Տիգրանյանը, Ալ.Սպենդիարյանը և այլ կոմպոզիտորներ: Նրանք հատկապես արժեքավոր են համարել Շերամի պեքսանդրայոյան ձեռագիրն ու ոճը, որի երաժշտական ձևակառուցողական, մոնոդիկ մտածողության յուրօրինակ գծերը լավագույնս կարելի է բացահայտել Ալեքսանդրայոյի քաղաքային երաժշտական արվեստի հայտնի նմուշների հետ դրանց բաղդատության մեջ, ինչն առանձին հրապարակման նյութ է:

Ամփոփելով նշենք, որ աշուղ Շերամի երգաստեղծությունը, որն այսօր էլ հայ կատարողական արվեստում պահանջված է և մեծ հետաքրքրություն է առաջացնում իր գեներտիկ անադարտությանը, ոճական անկրկնելի նկարագրով, իր էական առանձնահատկություններով անդրադարձնում է Ալեքսանդրայոյի երաժշտական կյանքի գեղագիտական իրողությունները: Ուղղակիորեն բխելով քաղաքային երաժշտական կյանքի պահանջներից, միևնույն ժամանակ այդ արվեստն ուղղորդվել և թափ է ստացել քաղաքային այն միջավայրում, որն այսօր՝ ավելի քան մեկ հարյուրամյակ անց դարձյալ ձգտում է այդ արվեստին և կրում է այն որպես հայ աշուղական երգարվեստի շափանիչ:

АШУГ ШЕРАМ И МУЗЫКАЛЬНАЯ ЖИЗНЬ АЛЕКСАНДРОПОЛЯ

___ Резюме ___

___ А. Степанян ___

Песнетворчество великого армянского ашуга Шерама, которое до сих пор востребовано в музыкальной жизни города Гюмри, было генетически связано с той уникальной средой александропольского музыкального калейдоскопа, в которой его песни и игра на таре существовали как неотъемлемая часть эстетических реалий, быта и уклада городской среды. Важнейшим источником, доказывающим многие нюансы этого явления, которые рассматриваются в данной публикации, послужили ценные воспоминания и факты, которые находятся в автобиографии ашуга.

Գ. ՄԱՀԱՐՈՒ ԵՐԳԻԾԱՆՔԻ ՅՈՒՐՈՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երգիծանքն աշխարհատեսության կերպ է, որը գեղարվեստական արտացոլման ձևի մեջ դրսևորում է լեզվական որոշակի առանձնահատկություններ: Դարերի ընթացքում կայունացել և ճանաչվել են երգիծանքի արարման որոշ միջոցներ ու հնարներ, որոնց գործադրումն ավել կամ պակաս հաջողությամբ (նայած գրողի օժտվածության և վարպետության) ստեղծում է համապատասխան մթնոլորտ: Դրանց մեջ առանձին նշանակություն ունեն բառային կամ լեզվական միջոցները: Վ. Պրոպյը հայտնի ուսումնասիրության մեջ¹ մանրակրկիտ նկարագրություններով առանձնացնում է այդպիսի մի քանի օրինակներ՝ կալամբուր (բառախաղ), պարադոքս, իրոնիա (հեզնանք), բառապաշար, գեղեցկախոսություն-ճոռոտարանություն, երգիծական անուններ և այլք: Ծիծաղ առաջացնելու արդյունավետության առումով նա կարևորում է նաև հանկարծակիությունը կամ անսպասելիությունը²: Դա դրսևորվում է որպես տեսանելի, մակերևութային թաղանթի տակ թաքնված դատարկության բացահայտման, հայտնագործման ձև: Կերպարակերտման և կենսական հանգամանքների պատկերման ծիծաղահարույց մի շարք դեպքեր և հնարներ է նկարագրում նաև Ա. Բերգսոնը:³

Սակայն պիտի նկատի ունենալ, որ բոլոր այս միջոցներն ու ձևերը վերաբերում են երգիծանքի կայացման տեխնիկային, խոսքային հնարներին: Մինչդեռ շատ ավելի հետաքրքիր է երգիծանքի անսպասելիության, հանկարծակիության խնդրի դիտարկումը երգիծելիի (երգիծվող կենսական նյութի) կտրվածքով: Մարդուն և հասարակությանը բնորոշ բազմաթիվ թերություններ ու արատներ դարեր շարունակ դարձել են երգիծական գրականության նյութ և կրկնվել: Գրողի տաղանդի ինքնատիպության ցուցիչներից մեկն էլ, երգիծելու մեջ հմուտ լինելուց բացի, կարող է համարվել այն, թե որքանով է նրան հաջողվում երգիծելի կենսական նոր նյութ հայթայթել: Այսինքն, երբ խոսվում է երգիծանքի հանկարծակիության մասին, ապա պիտի նկատի ունենալ, որ այն կարող է հավասարապես վերաբերել ինչպես ձևի և բովանդակության անհամապատասխանության բացահայտմանը, այնպես էլ երգիծված նյութի անսովորությանը:

Սովորական դարձած կենսանյութի ու հարցադրումների շրջանակներում երգիծանք ծավալելը բավական անվտանգ գործ է. այդպես շատ ավելի հեշտ է հասնել խոսքի համոզության անհրաժեշտ նվազագույնին, որը կապահովի ակնկալվող համարժեք վերաբերմունքը: Սակայն համոզության առումով շատ ավելի դժվար ու վտանգավոր է ընթերցողի համար անսովոր կենսանյութ երգիծելը: Այդպիսի քայլի կարող է դիմել միայն առանձնահատուկ տաղանդ ունեցող գրողը: Վտանգավորության չափ համարձակ ստեղծագործական մման վարքը բնորոշ է Գ. Մահարուն: Ընդհանուր տպավորությունը նրա արձակից այնպիսին է, որ նա կյանքում լուրջը, նույնիսկ ողբերգականը երգիծելու առանձնահատուկ հակում ունի: Հենց դրանով էլ Գ. Մահարու երգիծանքը հանկարծակի է ու անսպասելի: Կրկնությունից չզուլանալով՝ մի անգամ ևս ճշտենք, որ այստեղ խոսքը երգիծանքի խոսքային հնարանքների վարպետ գործադրման, երգիծելու բնատուր տաղանդի մասին չէ: Դա փաստելու կարիք չկա էլ Գ. Մահարու յուրաքանչյուր էջը շաղախված է վարակիչ երգիծանքով: Առտնին պատկերներով, կենցաղագրությամբ հագեցած նրա արձակի ընթերցումը դառնում է գեղագիտական վայելք հաճախ շնորհիվ հենց խոսքի երգիծական առանձնահատկությունների: Չի եղել Գ. Մահարու գրականության մասին շատ թե քիչ լուրջ ու օբյեկտիվ կարծիք, ուր անտեսված լինի այդ փաստը: «... Դա յուրահատուկ հումոր է՝ նուրբ, անսպասելի, չարամհիության հասնող, որի մեջ զգում ես հեղինակի սուրյեկտիվ ինտոնացիան...»:⁴ Համանման բազմաթիվ հիացական բնորոշումներ կարելի է վկայակոչել Գ. Մահարու ստեղծագործությանը ծավալուն ուսումնասիրությամբ կամ այդ ստեղծագործության

¹ В. П р о п я, Проблемы комизма и смеха, М., 1976.

² Նույն տեղում, էջ 146:

³ А. Б е р г с о н, Смех, 1992.

⁴ Մ. Ա ղ ա ղ ա ն, Գործեր Մահարի, Եր., 1959, էջ 119:

ինչ-որ խնդրին հողվածով անդրադարձած հեղինակներից: Եվ դա անվիճարկելի ճշմարտություն է:

Մեր դիտարկումը վերաբերում է ոչ կենցաղային, իրականության նույնիսկ ակնհայտորեն ողբերգականի մեջ երգիծելին տեսնելու կարողությանը: Դա լացի ու ծիծաղի համադրումն է, որը ստեղծագործական-ոճական առանձնահատկություն լինելուց առաջ աշխարհատեսության կերպ է:

Մակայն նախ փաստենք, որ նրա արձակի ոճական այդ առանձնահատկությունը ևս աննկատ չի մնացել: Ինքնին, իհարկե, հետաքրքիր են այն բնութագրերը, որոնք տրվել են Գ. Մահարու արձակի ոճական այդ առանձնահատկությանը: Մի քանի համապատասխան օրինակներ բերելուց հետո Ս. Աղաբաբյանը գրում է. «...արձակագիրը հաճախ է ընտրում այնպիսի դրություններ և մտցնում հյուսվածքի մեջ, որոնք ծիծաղելի են արտահայտման ձևով և կատարելապես ողբերգական՝ իրենց բովանդակությամբ: Մա Մահարու հումորի էսթետիկական առանձնահատկությունն է և միաժամանակ նրա գաղափարական յուրահատուկ «պոզիցիայի» արտահայտման ձևը»:⁵ Գրականագետը տարբերակում է կենսական փաստի բովանդակությունը, որը ողբերգական է, և «արտահայտման ձևը» լեզվաոճական առանձնահատկությունը, որը ծիծաղելի է: Իսկ թե որն է նրա «գաղափարական յուրահատուկ «պոզիցիան»՝ չի մանրամասնում: Այնուհետև նույն տեղում նշում է այդպիսի «գրելակերպի վրա ... չեխտվյալ տրադիցիայի ազդեցությունը», նաև Գ. Մահարու երգիծական ոճի տարբերությունն իրենց մանկությունը և պատանեկությունը գրականություն բերած Ստ. Չորյանի և Վ. Թոթովենցի հումորից. «Մահարու մոտ ողբերգական երևույթը առաջ է բերում ժպիտ և ծիծաղ, բայց դա կտրված, աղավաղված ժպիտն է ու ակամա ծիծաղը»:⁶

Ս. Աղաբաբյանը մի այլ՝ «Այրվող այգեստաններ» վեպի վերախմբագրված տարբերակի տպագրության առիթով (Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1979) դարձյալ անդրադարձել է Գ. Մահարու արձակի ոճական այդ առանձնահատկությանը՝ մատնանշելով Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի լեզվամտածողության հետ ուղղակի կապը:⁷

Ս. Բողոսյանն ավելի է մանրամասնում խնդրի քննությունը՝ ընդարձակելով գրական համադրելի առնչությունների դաշտը: Նա դիտարկում է Ե. Չարենցի «Երկիր Նաիրի», Ա. Բակունցի «Կյուրես» և Գ. Մահարու «Այրվող այգեստաններ» վեպերը մեզ հետաքրքրող ոճական ընդհանրությունների առումով: Բայց որքան էլ տարօրինակ է, նա թե՛ Գ. Մահարուն նվիրված մենագրության, թե՛ «Ողբերգաերգիծական վեպի ուղղությունը» ուսումնասիրության մեջ խնդրո առարկա գեղարվեստական առանձնահատկությունն անվանում է «երգիծական ողբերգություն»:⁸ Ընդ որում, բառերից ոչ մեկը բնագրում առնված չէ չակերտների մեջ: Այս բնութագիրը տարօրինակ է նրանով, որ «ողբերգություն» իրողությունը բնութագրվում է «երգիծական» բառով: Եթե մի քանի ողբերգություն լինելը մեզ համար վիճելի չէ, ապա այն երգիծական լինել չի կարող: Մինչդեռ միանգամայն այլ է ու համոզիչ կենսափաստի ճանաչողության այն բարդ տարբերակը, որի դեպքում գրողին հաջողվում է նույն իրողության մեջ տեսնել և՛ երգիծելին, և՛ ողբերգականը: Դրա կարևորագույն նախապայմանը թերևս գրողի հայացքի ընդարձակությունն է, որով կյանքն իմաստավորում է ոչ միազիծ սահմանափակությամբ, այլ սև ու սպիտակի համատեղելի տարբերակվածությամբ:

Այսպիսին է նաև Գ. Մահարու ստեղծագործական սկզբունքը կյանքում հնարավոր ողբերգականի և երգիծականի արտացոլման մեջ: Նրա արձակը լի է ողբերգության և երգիծանքի, լաց ու ծիծաղի միատեղումներով: Մակայն այդ առատության մեջ հնարավոր չէ ցույց տալ ըստ նրա ներկայացման ողբերգական որևէ կենսական հանգամանք, որը ձախողվածությամբ երգիծական է, ենթակա է երգիծման:

Ս. Բողոսյանի բնորոշումը թեև կարելի է հասկանալ նաև երգիծանք պարունակող ողբերգության իմաստով, սակայն չի կարելի համարել հաջողված: Այն ճիշտ չի

⁵ Ս. Աղաբաբյան, *նշվ. աշխ.*, 1959, էջ 121:

⁶ Նույն տեղում, էջ 122:

⁷ Ս. Աղաբաբյան, *XX դարի հայ գրականության զուգահեռականներում, գիրք I, Ե., 1983թ., էջ 244:*

⁸ Ս. Բողոսյան, *Գործեր Մահարու, Եր., 1981, էջ 150: Նաև «Ժամանակակից հայ արձակը» (հողվածների ժողովածու), Եր., 1981, էջ 146:*

բնութագրում գեղարվեստական փաստը, որովհետև առաջին հերթին հասկացվում է որպես իր անհամոզությամբ երգիծման ենթակա ողբերգության բնութագիր: Այսինքն՝ ողբերգություն նկարագրելու հեղինակային մտահղացման ձախողված փորձ, որի պատճառով ողբերգությունը դառնում է երգիծական:

Գ. Մահարու տեքստում ողբերգությունը երբեք համոզության պակաս չունի, երբեք չի ներկայանում հեղինակի մտահղացածից պակաս կշռով:

«Էջմիածին:

Շոգ: Փռչի: Կեղտոտություն: Վանքի խունացած սիլուետը: Իսկ պարիսպների տակ իրար վրա թափած գաղթականություն» (2, 87):⁹

Երկրային դժոխք մազապուրծ գաղթականության համար. անհաշիվ մեռելներ, մեռելատար ֆուրգոններ, էջմիածնական ամառ օրվա սպանիչ արև. «հնամյա վանքի պատերի ու օգոստոսյան արևի տակ մեռնում էր մի ամբողջ ժողովուրդ» (2, 89): Հետո նաև մահացածների թաղման նկարագրությունը՝ տասնյակներով մի փոսի մեջ, խառնի-խառն, առանց ծեսի ու պայմանականության, ինչպես կարվեր ամենաանկարևոր, առտնին մի գործ: Նաև Հովի. Թումանյանի այցելությունը... «Հոգեհանգիստ»-ը: Եվ այս ամենը՝ փաստագրողի չոր ու ցամաք ոճով, առանց որևէ էմոցիայի, նման դեպքերի համար ենթադրվող ողբասացության: Բայց միանգամայն ճիշտ ընտրված ոճ՝ պատմական իրողությունը նկարագրելու համար, որովհետև փաստն ինքնին շատ ավելի տպավորիչ է ու իր ողբերգականությամբ համոզիչ, քան կարող է լինել նկարագրողի հուզական ընկալման միջնորդավորվածությամբ:

Մակայն սահմուկեցուցիչ այս նկարագրությունը հանկարծ ճեղք է տալիս պատկերի ողբերգական լրջությանն անհարիր, միանգամայն մահարիական ու անսպասելի մտքից. «...թռչում է հողը, ցամաքում է դիակների երեսներին, ու թվում է, որ ահա, ահա նրանք կարող են փռչտալ» (2, 90): Պատումի տրամադրության այսպիսի ընդմիջարկման հանկարծակիությունը լրջորեն տարբեր է Գ. Մահարու ոճին շատ բնորոշ շարաճճի երգիծանքից, որով հաջողությամբ շարադրվել են հարյուրավոր էջեր: Օրինակ, հենց նույն վիպակից («Պատանեկություն», (1929-30) վերևում բերված դրվագին նախորդող և հաջորդող գլուխներում նկարագրվող դեպքերը՝ կոտորածի սարսափների մեջ իր անունը մոռացած պատանին և փողոցում հայտնված որբերի առօրյան, որը լցված է ուտելիք հայթայթելու ճիգ ու ջանքով: Վերջիններիս ժամանակ գրողը գաղթական որբերի կեցության մեջ ողբերգականի մասին պատումն առաջ է տանում երգիծանքի հետ միաձույլ: Մինչդեռ նախորդի մեջ ծայրեծայր ողբերգությունն անսպասելիորեն միջարկում է հանկարծակի երգիծանքով:

Գ. Մահարու արձակում ողբերգականի և երգիծականի անսպասելի, պարադոքսալ համադրման իրողությունը մասնագիտական գրականության մեջ սովորաբար փաստարկվել է «Պատանեկություն» (1929-30) վիպակից առնված հայտնի և բնորոշ երկու օրինակով: Մեկն «Բզդիրում» գլխից է՝ որբերի նկարվելու, իսկ երկրորդը՝ «Օրեր» գլխից՝ որբանոցում Արտաշի և մոր հանդիպման դրվագները: Մակայն պետք է նկատել, որ նրա արձակում լեզվամտածողության այս կերպը չի սահմանափակվում եզակի դրսևորումներով: Տարբեր տարիների և միանգամայն տարբեր կենսանյութով շարադրված ստեղծագործություններից կարելի է բերել մի շարք այդպիսի պատկերներ:

Ճակատագրական նշանակության ողբերգության մեջ երգիծելին տեսնելը հնարավոր է միայն առանձնահատուկ տաղանդի, ավելի ճիշտ կլինի ասել՝ հենց այդպիսի կարողություն ենթադրող հազվագյուտ տաղանդի առկայությամբ: Գ. Մահարու արձակը լի է մարդկային անչափելի ողբերգության պատկերներով: Բայց հետաքրքիր է, որ դրանց ընթերցումը դժոխային անհուսությամբ չի ճնշում: Պատճառը թերևս այն է, որ գրողին հաջողվում է կյանքի ցանկացած իրավիճակի և մարդու հոգեկանի բազմազան մեկնաբանությամբ իրականացնել ողբերգականի ու կատակերգականի ամենամասնասելի, ամենահանկարծակի համադրումներ: Այս ամենի մեջ զարմանալին Գ. Մահարու տաղանդի ինքնատիպության հետ նաև գրողական վարպետությունն է. լրջագույն ողբերգությունը նրա գրչի տակ շատ սահուն ու աննկատ վերածվում է նույն-

⁹ Այստեղ և հետագայում առաջին թվանիշը Գ. Մահարու Երկերի ժողովածուի հիմնգիտությունների (1966-1989) համապատասխան հատորի, հաջորդը՝ էջերի համարներն են:

քան համոզիչ երգիծանքի: Ստեղծագործելու այս կերպը հետաքրքիր է նաև ընթերցողին առաջադրվող խանդի առումով: Հեղինակը հաղթահարում է ողբերգությունը երգիծանքի վերածելու գեղարվեստական բարդ խնդիրը բավական փոքր տարածության ու ժամանակի մեջ: Դրանից հետո ընթերցողին է մնում իրեն մատուցված պարադոքսալ կենսական հանգամանքը, ավելի ճիշտ՝ կենսական հանգամանքի պարադոքսալ իմաստավորումը մարսելու դժվարությունը: Դրա համար նա պետք է պատրաստ լինի ինչպես հեղինակի հանկարծակի, կտրուկ անցումներին, այնպես էլ ունենա կյանքը ոչ միագիծ-միակողմանի ընկալելու կարողություն՝ հար ու նման իրեն անկեղծ, համարձակ խաղի մեջ քաշած գրողի: Կենսական, մանավանդ հոգեբանական անցումները երկար-բարակ նախապատրաստելով մոռոտոն, դանդաղ շարադրանք նախընտրող ընթերցողի համար մահարիական հաճախ կարճառոտ-դրվագային, անսպասելի անցումների արձակը լուրջ բարդություն է: Նա իր ընթերցողին տանում է գեղագիտական հաճույքի մի ճանապարհով, որը բավական խուրդուրդ է: Ինքը դա գիտի և դրանից չի զգուշանում, անգամ ավելին՝ հաճույք է ստանում: Ահա մի քանի պատկերներ տաժամակրության տարիներին: Պարզվում է, որ «մոտ վաթսուց տարեկան» մարդը քսանհինգ տարվա դատավճիռ ստանալուց հետո կարող է ... վերածնվել: Որովհետև «նա պարտավոր է այդքան էլ ապրել՝ պետությանը պարտք չմնալու համար» (5, 181): Ազնիվ, գիտնական մարդ. ինքը ողբերգության մեջ, բայց երջանկացած է իրեն դատապարտած պետությանը պարտք չմնալու գյուտով: «Մշեցի Առաքելը և ուրիշները» (1965) պատմվածքը ծայրեծայր թանձր ողբերգություն է: Բայց անգամ այդպիսի կենսական մթնոլորտում էլ գրողը գտնում է գեղարվեստական տարածքի ու կառույցի ճիշտ տեղը, ուր ծավալում է իր երգիծանքը: Բայց դա ինքնանպատակ չէ բոլորովին, չի արվում հանուն մի անգամ էլ տաղանդի յուրահատկությունը ցուցադրելու: Խոսքն այստեղ կնոջն Առաքելի գրած նամակի մասին է: Հանգամանքների պարտադրանքով այլաբանական այդ տեքստի գեղարվեստական և գաղափարական գերխնդիրը ոչ թե պատմվածքի ողբերգական մթնոլորտը բեռնաթափելն է, այլ ճիշտ հակառակը՝ երգիծանքով ողբերգությունը խտացնելը: Ահա մի քանի օրինակ:

«Ես շատ և շատ լավ եմ, մենակ կակուղ հացից գահլես գնացել է, մի երկու կիլո չոր սուխարի ուղարկի, ջրով կակոցում, ուտեմ» (5, 248):

«Անթառան ջան, մի տես տաք շորից, չորաբից, ֆայկայից-բանից, ի՞նչ կարաս դրկես, մտքովդ չանցուս, որ մեզ քաղցած ու մերկ կը պահեն, փառք մեր-իշտե էստեղ գրի՝ «գարագոյ» հոր, մենք շատ լավ կապրենք, մենակ ասածներս ուղարկի» (5, 248):

«Մեր մեծ հայրը չի թողնի, որ մենք սիրիլներում կորենք գնանք... և մի օր կարժանանանք իրար տեսության» (5, 249):

Իսկ «մուրքի» և «մուրդիկ» բառերով հմտորեն ձևավորված բառախաղը ամբողջացնում է թե՛ ժամանակի հոգեբանական նկարագիրը, թե՛ երգիծանքի պատկերը:

«Հայկական բրիգադ» (1964) պատմվածքում այլ հարաբերակցությանը են ներկայացվում ողբերգականն ու երգիծականը: Այստեղ գերիշխող համայնապատկերային մթնոլորտը, ուր ծավալվում են իրադարձությունները, երգիծանքն է: Բայց թերևս այսպիսի դեպքերի համար է ասված. թե «Ոչ հազվադեպ երգիծականն ընդամենը քողարկում է լուրջը, դրամատիկականը, հաճախ՝ ողբերգականը կամ էլ բացահայտորեն հյուսվում է նրա հետ»¹⁰: Քսանչորս հոգուց կազմված հայկական բրիգադը պետք է ընտրի բրիգադի և ճաշ բաժանող: Այլ ազգերի բրիգադներում առաջադիր խնդիրը հեշտությանը լուծվում է շնորհիվ իրենց ընդհանրական շահի միասնական ըմբռնման: Մինչդեռ հայերը բաժանվում են երեք խմբի՝ կոմունիստների, դաշնակցականների և չեզոքների: Ըստ այդմ էլ մեջտեղ են բերվում հին ու նոր մեղքեր, մեղադրանքներ... Ծավալվում է կատարյալ զավեշտ: Պատմվածքում երգիծանքը մշտապես առաջին պլանում է, իսկ ողբերգականը ենթատեքստային է՝ հայի նկարագրին բնորոշ մի իրողություն՝ անմիաբանությունը, համագային շահի արհամարհումը: Տեղին է նշելը, որ այս խնդրի առաջադրումը՝ որպես ազգային ողբերգություն, Գ. Մահարու ստեղծագործության մեջ եզակի դեպք չէ: Դրա ամենաընդգծված արտահայտությունը եղավ Վանի օրինակով արևմտահայության ճակատագրի մասին Գ. Մահարու դառը ընդհանրացու-

¹⁰ *Краткая литературная энциклопедия, т. 3, М., 1966, стр. 690.*

մը. երբ թուրքը կտորորում էր հայությանը, բուրբուրովն նշանակություն չէր տալիս ճակատագրական պահին անգամ միջկուսակցական տարածայնություններից մասնատված հայության կուսակցական պատկանելությանը:

Ողբերգականի և երգիծականի այլ ընկալում ունեցող գրողը «Ուրախ գիշեր» (1968) պատմվածքում ներկայացվող խորհրդանշական պատկերը կարող էր առիթ դարձնել հետադարձ հայացքով սրտածնվիկ վերապատումների համար: Գ. Մահարին այդպես չի վարվում: Քաղաքական բանտարկյալների ճամբարային դառը փորձը ստորացուցիչ վախ է ձևավորել «начальник» բառով նշանակվող սարսափի նկատմամբ: Դրանից էլ կայարանապետի աշխատասենյակի մուտքի մոտ ստեղծված վիճակը: Թեկուզ առանց մանրամասնությունների, բայց ամենաէականն այդքանով արդեն ասված է ստալինյան բռնապետության և դրա զոհերի մասին: Գ. Մահարին, սակայն, ողջը պատմում ու նկարագրում է մեղմ ժպիտով՝ առանց ավելի խորացնելու արդեն իսկ ամենախաղեպ ողբերգությունը: Նույնպիսի մի դառը ժպիտով էլ ներկայացվում է տաժանակրության դատապարտվածների հետմահու վիճակը: Նրանց համար բացառված է դազադով թաղվելու կարգը: Տեսարանը հնարամտորեն մտահղացվել է ճամբարի «կոմենդանտի» վրա իջած հանկարծակի, անգամ շփոթեցնող զարմանքի ձևով (5, 275):

Թերևս իմաստ չունի շարունակել օրինակների շարքը՝ ավելորդ անգամ ցույց տալու համար Գ. Մահարու երգիծանքի յուրահատկությունը: Դա արտահայտվում է ողբերգականի ու երգիծականի, լացի ու ծիծաղի համադրությամբ կենսական այնպիսի իրադրություններում, ուր թվում է, թե դրանք անհամադրելի են: Սովորաբար այդ համադրությունն իրականացվում է ողբերգականի մեջ երգիծականի հայտնաբերման միջոցով: Մա կյանքի արտացոլման վտանգավոր ձև է, որովհետև հաճախ հանգում է հասարակականորեն ընդունված տարբուի վերանայմանը, քննելի նյութ դարձնելուն: Այսպես նրա երգիծանքը դառնում է հնարամտությամբ, համարձակությամբ, ինքնատիպությամբ լի, բայց նաև վտանգավոր գաղափարական ու գեղարվեստական խաղ: Գաղափարական, որովհետև ասելիքն է անտվոր, անսպասելի: Գեղարվեստական, որովհետև նա պետք է կարողանա համոզիչ դարձնել պատկերը: Այդ խաղի մեջ աննկատ ներքաշված ընթերցողը հանկարծ իրեն հայտնաբերում է կան Ռուբիկոնի առջև, կան, ավելի հաճախ, Ռուբիկոնն արդեն անցած: Գ. Մահարու հետ կարելի է բանավիճել, նույնիսկ չընդունել նրա տեսակետները: Բայց այդպիսի աշխարհատեսության մեջ մի կարևոր արժեք անժխտելի է. Գ. Մահարին ստիպում է դուրս գալ պատրաստի մատուցվող տեսակետների ու գնահատականների սահմաններից, ստեղծում է գեղարվեստի ընկալման մի մթնոլորտ, որում բացառվում է ընթերցողի մտքի ալարկոտությունը, իսկ ընթերցումը դադարում է պարասյր լցնող զբաղմունք լինելուց:

Այսպիսին է Գ. Մահարու արձակը նաև այն դեպքերում, երբ հերոսը ներկայացվում է անգամ ամենաառտոնին կենսական հանգամանքներում: Բնորոշ օրինակ է «Երիտասարդության սեմին» (1952-1955) վիպակի «Դեպի Վլադիկավկազ» գլխի վերջին տեսարանը.¹¹ Նա գրականության նյութ է դարձրել ... հերոսի բնական պետքի հոգը: Մահարիական թեթև-զվարթ խոսք ու գրույց, կենկատակ-կեսուրջ «փիլիսոփայություն» փաստի առիթով, ու կարծես թե ոչինչ տարօրինակ չկա նրանում, որ նա ի վերջո որոշել է գեղարվեստի նյութ դարձնելով գեղագիտականից հեռու մի բան, որով սակայն «մարդը զբաղվում է ամեն օր»: «Այդ երանելի պահից ես այժմ բաժանվում եմ 35 տարով: Չէ, ես չեմ մոռանա այդ պահը, անգամ չեմ ուզում ժխտել, «որոշ բանաստեղծական էլեմենտի» ամկայությունն այդ ապրումներում, բայց «խոթել» այն գրականության մեջ... Ես վարանում եմ: Երբևիցե պիտի փորձել...» (2, 261):

Եվ փորձել է՝ առանց թողնելու հետագային:

Արվեստում երգիծանքի և ողբերգության փոխհարաբերության հարցերը բավական մանրակրկիտ ուսումնասիրած Ա. Բերգունն ունի այսպիսի նուրբ մի նկատառում. «... պոետ-ողբերգակը ստիպված է ջանադրությամբ խուսափել այն ամենից, ինչը կարող է մեր ուշադրությունը կենտրոնացնել իր հերոսների նյութական կողմի վրա: Հենց որ մարմինն սկսում է ներկայացնել իր իրավունքները, պետք է զգուշանալ, որ

¹¹ Գ. Մահարին այս հատվածն ավելացրել է վիպակը երկերի հինգհատորյակում (1966-1989) տպագրության պատրաստելիս:

ողբերգության մեջ կներթափանցի երգիծանքը»¹² Գ. Մահարին ողբերգակ չէ: Հետևաբար նա իր մտահոլացած ողբերգականը ստեղծագործության սկզբից մինչև վերջ պահելու և թանձրացնելու մտահոգություն չէր ունենալու: Կարծում ենք, որ նրա արձակում ողբերգության և երգիծանքի համադրումներն արդյունք են ստեղծագործական այնպիսի վարքի, որին բնորոշ է Ա. Բերգտոնի նախագաղազացումից չխուսափելը: Այլ կերպ ասած՝ նրա ներկայացրած ողբերգական իրավիճակներում իսկապես առկա է կենցաղայինը, մարդկային մարմնական առօրեականը: Մահարիական ողբերգությունները ոչ թե վերացական կենսական հանգամանքներով ներկայացվող գաղափարների, բացարձակի ոլորտներում են տեղի ունենում, այլ իրական կյանքում: Նրանք այնքան են փաստագրական, որ մարդն իր ամեն ինչով ներկա է կոնկրետ ռեալությունների: Այսինքն, եթե վերադառնալու լինենք Ա. Բերգտոնի մտքին, ապա պիտի արձանագրենք, որ ողբերգության և երգիծանքի մահարիական համադրումները զգալի չափով արդյունք են մարմնի պահանջները չանտեսելու: Մա այսպես է, որովհետև Գ. Մահարին նշված և համանման դեպքերում խուսափել է կյանքը միայն ողբերգականի կամ երգիծականի խստորեն տարբերակված մոտեցումներով իմաստավորելուց: Մահարիագիտությունը փորձել է տալ դրա բացատրությունը, թեև նրա ստեղծագործությանն անդրադարձածները, ընդունելով ոճի այդ առանձնահատկությունը կամ առարկելով, ավելի շատ փաստն են արձանագրել, քան բացատրել: Պետք է նկատել, որ դա հավասարագոր է հեղինակային ստեղծագործական առանձնահատկության, հեղինակի հոգեկերտվածքի մի բնորոշ գծի բացատրությունը գտնելու փորձի: Դա այնքան էլ հեշտ գործ չէ:

Աքսորից Գ. Մահարու վերադարձից հետո նրա ստեղծագործության առաջին լուրջ գնահատողներից մեկը եղավ Լ. Հախվերդյանը («Մահարու գրիչը»): Հոդվածում առկա հետաքրքիր բնորոշումներին անդրադառնալը թողնելով մի այլ առիթի՝ այստեղ առանձնացնենք այն, ինչը վերաբերում է ողբերգականի և կատակերգականի մահարիական համադրման բացատրությունը: Լ. Հախվերդյանը Գ. Մահարու արձակը ևս տեսնում է «վշտի ծիծաղ» հայտնի արտահայտությամբ (Առանձար) բնորոշվող գեղագիտության սահմաններում: Բայց թե ինչու է գրողը նախընտրում այդ տարբերակը, նա բացատրում է այսպես. «Մեծ վշտի այն ան ու սարսափի, արյան ու ավերի մասին, որ Մահարու գրքի նյութն է, առանց ժպիտի գրել՝ նշանակում է գրել այնպես, որ անհնար լինի կարդալ»¹³ Ինչ խոսք, բոլորովին էլ հեշտ չէ կոտորածի, գաղթի ու համազգային տառապանքների մասին ճշմարտապատում գրականությունն ընթերցելը: Բայց նախ՝ դա դեռ չի նշանակում, թե այդպիսի գրականություն, հիշողություններ կամ ականատեսների վկայություններ չկան և չպետք է լինեն, որովհետև ընթերցումը տառապալի գործ կլինի: Ինչ վերաբերում է Գ. Մահարուն, ապա հազիվ թե նա այդ նկատառումով է դիմել «վշտի ծիծաղ»-ի գեղագիտությանը. արհեստական և անհամոզիչ կլիներ ընթերցողին խնայելու համար պատմական ու կենսական ճշմարտությունն այդպիսի «մեղմացման» ենթարկելը: Միաժամանակ ավելորդ չէ նաև նկատի ունենալ, որ այնտեղ, ուր Գ. Մահարին անհրաժեշտ է համարել, շարադրել է կենսական ողբերգությունն իր ողջ ահավորությամբ՝ առանց «մեղմացումների», առանց «վշտի ծիծաղի»: Դրա համար թերևս բավական է միայն հիշել այն խորհրդանիշ պատկերները, որոնք արտացոլում են դարասկզբի հայության և ստալինյան բռնությունների զոհերի ապրած սարսափները¹⁴:

Գ. Մահարու երգիծանքի վերաբերյալ այլ առիթներով դիպուկ ու հետաքրքիր նկատառումներ ունի Ս. Աղաբաբյանը: Մակայն, կարծում ենք, նա վրիպում է, երբ փորձում է խնդրի բացատրությունը գտնել հեղինակի թեմատիկ-գաղափարական նպատակադրման մեջ. «Այն կյանքը, որ նկարագրում է Մահարին, որ դիտել է նա, ինքնին ուրախ չէր, շատ էր տխուր, թախծոտ, բայց նա հատուկ դիտավորությամբ այդ ամենը մատուցում է ծիծաղի միջոցով, ծանր կյանքից սահմանազատելու համար գալիք կյանքի ու ապագա եզերքի թեման»¹⁵: Այստեղ գրականագետի միտքը վերաբերում է Գ. Մահարու ինքնապատումի տեսությունը, որն ընդգրկում է հեղինակի նախաստվետական

¹² А. Б е р г т о н, Смех, стр. 39.

¹³ «Մովեսական գրականության» ամսագիր, 1957թ., հ. 10:

¹⁴ Այս մասին ավելի մանրամասն տես հեղինակի «Խորհրդանիշ պատկերները Գորգեն Մահարու արձակում» հոդվածում (Բանբեր Երևանի համալսարանի, 2006, 1):

¹⁵ Ս. Աղ ա բ ա բ յ ա ն, Գորգեն Մահարի, էջ 123:

կյանքի դրվագները: Երեք վիպակների գրության տարիներին («Մանկություն»-1928թ., «Պատանեկություն»-1929-1930թթ. և «Երիտասարդության սեմին»-1952-1955թթ.), անգամ 1960-ականներին Գ. Մահարու ստեղծագործությունները, որ սովետական կյանքն են արտացոլում («զալիք կյանքի ու ապագա եզերքի թեման»), դարձյալ «անուրախ» են, նույնիսկ ողբերգական, և ամենուր միշտ առկա է այդ պարադոքսալ երգիծանքը:

Ուրեմն Գ. Մահարու ոճի այս խնդիրը լուծելի չէ ենթադրվող թեմատիկ գաղափարական նպատակադրման դաշտում:

Հետագայում ևս, «Այրվող այգեստաններ»-ի վերամշակված տարբերակի առիթով («Վիպասքի նոր տարբերակը») Ս. Աղաբաբյանն անդրադարձավ Գ. Մահարու երգիծանքին: «Ողբասացի փոխարեն» «ծիծաղի տարերքին» տրվելու սկիզբը, ինչպես Ե. Չարենցի դեպքում, նա տեսնում է Վ. Տերյանի «գառնակսկիծ» հարցման մեջ.

Մի՞թե ես պետք է երգեմ քեզ օրոք

Եվ արքայական դնեմ գերեզման...

«Տերյանական այս զգացողությունն է նաև «Այրվող այգեստաններ»-ի ներքին շաղխարը», - գրում է Ս. Աղաբաբյանը: - Իսկ ողբերգական անցքերի մասին Մահարին չէր կարող պատմել ոչ այլ կերպ, եթե ոչ ծիծաղի-հումորի մեծ քանակով, ինչպես վարվել է նաև մանկության ու պատանեկության սթանդեյտի պատումներում»¹⁶: Այսինքն Գ. Մահարին ևս Վ. Տերյանի ահավոր և անպատասխան հարցն էր կրում իր մեջ և որպես պատմական փաստին հակադեցություն՝ չէ՞ր հավատում կամ չէ՞ր ուզում հավատալ դրան: Ու դրանի՞ց է ողբերգական անցքերի մասին պատմել «ծիծաղի-հումորի մեծ քանակով»: Հազիվ թե. մանավանդ որ ուղեմիջ Վ. Տերյանի հարցման մեջ բացակայում է երգիծանքը կամ ծիծաղը՝ որպես ահագնացած ողբերգության հակադեցություն: Թեև Ս. Աղաբաբյանի հոդվածը Գ. Մահարու վեպի հարկադրաբար վերամշակված տարբերակի մասին է, և հեղինակի վերափոխումների վերաբերյալ գնահատականներն այսօր միայն գրապատմական արժեք կարող են ունենալ, սակայն երգիծանքի մասին ասվածը չի կորցնում իր հրատապությունն այնքանով, որքանով վերաբերում է նրա ոճին: Դրա համար էլ թերևս իմաստ ունի նույն հոդվածում գրողի երգիծանքի վերաբերյալ գրականագետի նշած մի այլ պարզաբանման ևս անդրադառնալը: Ցույց տալով «Այրվող այգեստաններ»-ի և Սալտիկով-Շչեդրինի «Մի քաղաքի պատմությունը» վեպերում առկա երգիծանքի տարբերությունը՝ գրում է. «Դա (Գ. Մահարու վեպը – Ս. Ա.) ավելի շուտ բանաստեղծական-հուզախոռով ասք է ողբերգական անցքերի մասին, որոնց ծանր տպավորությունը թեթևացնելու համար Մահարին «ակամա» ... դիմել է երգիծական՝ հեզոնական բնութագրումներին, իր հանրածանոթ հումորի շոյալ աղբյուրներին»¹⁷:

Դժվար չէ նկատել, որ ինչ-ինչ տարբերություններով հանդերձ՝ Գ. Մահարու երգիծանքի վերաբերյալ Լ. Հախվերդյանի և Ս. Աղաբաբյանի բացատրությունները մոտավորապես նույնն են՝ կենսամյութի իրական ողբերգականության մեղմացում՝ պատումի մեջ գիտակցաբար երգիծանք հավելելով:

Ինչպես ասվեց, Ս. Աղաբաբյանը բազմաթիվ անդրադարձներ ունի Գ. Մահարու երգիծանքին: Դրանցից առավել համոզիչ են նրանք, ուր գրականագետը փորձում է գեղարվեստական այդ առանձնահատկությունը պայմանավորել հեղինակի ոչ թե գաղափարական նպատակադրմամբ, այլ իրականության գեղարվեստական արտացոլման գույտ հեղինակային, անհատական առանձնահատկությամբ: Իսկ դա հենց ինքը՝ լացի ու ծիծաղի համադրմամբ դրսևորվող ինքնատիպությունն է: Նա «Պատանեկություն» (1928-1929) վիպակի առանձնահատկություններից մեկն էլ համարում է այն, որ «պատանեկության ծիծաղին խառնված է ողբերգական լացը, ավելի միշտ՝ ծիծաղը վկայակոչվում է որպես լացի ձևերից մեկը»¹⁸: Այսինքն՝ մեկ կենսական հանգամանքում ձևավորված հոգեվիճակ, որի արտաքին դրսևորման կերպերն են միայն տարբեր:

Մահամնային վիճակում հայտնված մարդու հոգեբանական վարքի այդպիսի պարադոքսի մասին է ասված, որ ծիծաղը կարող է դրսևորվել որպես լացի ավելցուկ:

Իսկը Գ. Մահարու և իր հերոսների համար նկատված հոգեվիճակ: Իսկ եթե հաշվի առնենք, որ Գ. Մահարու արձակն առավելապես ինքնապատումային է, ապա

¹⁶ Ս. Աղաբաբյան, *Նշխ. աշխ.*, 1983, էջ 244-245:

¹⁷ Նույն տեղում, էջ 251:

¹⁸ Ս. Աղաբաբյան, *Նշխ. աշխ.*, 1959, էջ 105:

այդ հոգեվիճակն առաջին հերթին վերաբերում է հենց հեղինակին: Հայտնի է, որ Գ. Մահարու կյանքը չարաբաստիկ հասարակական հանգամանքների հաճախակի հարվածի քիրախ է եղել, որից էլ նրա ճակատագրական, անհատուցելի կորուստները: Այս համարյա չընդմիջարկվող, մի կյանքի համար չափազանց ողբերգության մեջ կենսական շատ արժեքներ պետք է որ ակամա վերագնահատվեին, հասնեին արժեզրկման սահմանին: Հոգեբանորեն ամենահեշտը երկի հենց ինքնամատուցվող ողբին ու ողբերգականությանը տրվել էր: Գ. Մահարին ողբերգականը ողջ խորությամբ արտացոլելով էլ՝ անդառնալիորեն չի հանձնվել նրան: Նա իր մեջ ուժ է գտել ամենավերջից պաշտպանական հակազդեցության համար, որը երգիծանքն էր ու ծիծաղը: Դա նրա կենսափրության դրսևորումն էր՝ հակառակ ամենակույ հանգամանքների: Չանտեսենք նաև, որ երգիծանքն էր միջոցը կյանքում անմարդկայինին, անընդունելիին մի քիչ կողքից, փիլիսոփայորեն վերևից նայելու, որով ողբերգականի կործանարար ներգործությունը զգալիորեն նվազում էր: Կյանքը, գոյության իմաստը Գ. Մահարու աչքում երբեք չի արժեզրկվել: Հենց դա էր իր բարեբախտությունն այնքանով, որքանով օգնում էր գոյատևել համարյա անհնարին պայմաններում: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև իր հերոսներին (կտորածից մազապուրծ մանուկներ ու պատանիներ և տաժանակրության մեջ տառապող չափահաս մարդիկ):

Երգիծանքը գյուտ էր՝ անհնարին պայմաններում գոյատևելու, ապրելու կամքը պահպանելու համար: Բայց ինչու՞ հենց երգիծանքը, ծիծաղը՝ ամենաանհավանական թվացող հակազդեցությունը ծովածավալ ողբերգության մեջ: Կարծում ենք՝ այս հարցի պատասխանը Գ. Մահարու մարդկային նկարագրի մեջ պետք է փնտրել: Պ. Սևակի կյանքում և գրականության մեջ երգիծանքի ու ողբերգության դրսևորումները մեկնաբանելիս Լ. Հախավերդյանը եզրակացրել է. «...կասկածից դուրս է, որ առանց փոխակերպման (մորից-Ս.Ա.) որդուն էր անցել ու նրա հուզական աշխարհում բույն էր դրել *աշխարհը ողբերգականորեն վերապրելու* մի հազվագյուտ գործություն»¹⁹:

Կարծում ենք՝ նույնքան անհատական նկարագրի (ոչ թե ինչ-որ գաղափարական կանխադրույթի կամ ըստ նպատակահարմարության՝ նախապես մտածված ինչ-որ ստեղծագործական ծրագրի) ինքնաբոխ դրսևորում է և ողբերգության ու երգիծանքի համադրումը Գ. Մահարու գրականության մեջ: Նրան ի վերուստ տրված էր կյանքը, աշխարհը երգիծականորեն վերապրելու հազվագյուտ էություն: Դա նրա գրականության մեջ արտահայտվել է ինչպես առօրյա, այնպես էլ էքստրեմալ, անգամ ողբերգական իրավիճակների նկարագրություններում:

СВОЕОБРАЗИЕ КОМИЗМА Г. МААРИ

___ Резюме ___

___ С. Агаджанян ___

Одна из особенностей прозы Г.Маари заключается в том, что она пропитана комизмом. Своеобразие его комизма-непредсказуемость, неожиданность. Оно проявляется в склонности к комическому восприятию серьезных, даже трагических, явлений в жизни. В итоге получается парадоксальное сочетание трагического и комического.

В исследованиях, посвященных прозе Г.Маари, эта особенность была замечена. Однако, как это не удивительно, она объяснялась какими-то идейными замыслами, приписываемыми автору. Тогда как в действительности он не "придает" комизма описываемым трагическим ситуациям с целью смягчить впечатление. Объяснение этой стилистической особенности писателя следует искать, в первую очередь, в человеческой и творческой индивидуальности автора. Она, безусловно, в том, что Г.Маари был свыше наделен редким талантом комического восприятия жизни и мира. В его литературных произведениях эта особенность отражена в описаниях как обыденных, так и экстремальных, и даже, порой, трагических ситуаций.

¹⁹ Լ. Հ ա խ ա վ եր դ յ ա ն, Պարույր, Եր., 1987, էջ 32:

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Մույն հոդվածում քննարկման առարկա են հանդիսանալու *ստ* ածանցով կազմված մի քանի բառեր, որոնք կա՛ն այդ ածանցի բազմիմաստությունը նկատի առնված ձևով չեն մեկնաբանվել, կա՛ն որոնց մեկնաբանությունն այս կամ այն առումով ճշգրտման անհրաժեշտություն է զգում:

Ստ ածանցն օժտված է իմաստային տարբեր առումներով, բայց ճանաչվել է որպես մեկիմաստ ձևույթ՝ *կտրել*, *հատել* նշանակությամբ (պոչատ, գունատ, կռնատ և այլն): Միայն վերջերս առաջին անգամ այդ ածանցը ներկայացվեց ոչ թե մեկ, այլ չորս նշանակությամբ՝ *բացասման* (պոչատ, գունատ և այլն), *սաստկական* (հաստատ, ըմփատ, մորատ, բկատ, Արարատ և այլն), *սերման* (կտավատ, փշատ, հավատ), *վերածման* (բացատ, ծվատ և այլն) նշանակություններով:¹ Հետագա պրպտումները ցույց են տալիս, որ *ստ* ածանցով կազմված բառերի հատկապես լրիվ ընդգրկման, դրանց մասին պատկերացումն ավելի ամբողջացնելու ուղղությամբ դեռևս որոշակի անելիքներ կան: Եվ ահա սույն հոդվածով կամենում ենք հնարավորին չափով վերացնել այդ բացը:

Նախքան բուն հարցին անցնելը նշենք, որ *ստ* ածանցի իմաստային առումների ճիշտ ընկալմանը, դրա բառակազմական հնարավորությունների մասին համարժեք պատկերացում ունենալուն վնասել է նաև այն կարծիքը, թե իբր դրա (*ստ* ածանցի) առաջացումն այնքան էլ խոր վաղեմություն չունի, հետագայի, ավելի ուշ ժամանակների իրողություն է: *Ոտ*, *ավոր* ածանցները (հիվանդոտ, ծխոտ, լուսավոր) համարելով «նախագրաբարյան շրջանում ծագած»՝ Մ.Աբեղյանը այժմ մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ հետևյալն է նշում. «Բայց կան ածանցներ, որոնք մեր լեզվի պատմական շրջանում են առաջ եկել ... Այդպիսի մոր ածանցներից մեկն է «ատ», որ շատ գործածական է»:² Դժվար է հավատալ, թե իսկապես *հիվանդոտ* (հիվանդահոտ), *ծխոտ* (ծխահոտ) բառերն ավելի հին ժամանակների բաղադրություն են, քան ասենք *հավատ*-ն ու *բացատ*-ը: Գ.Ջահուկյանն էլ այն կարծիքին է, թե *ստ* ածանցավոր բառերը «ոչ շատ հին կազմություններ» են՝ որպես այդպիսի բառեր նկատի ունենալով այսպիսիները՝ միջատ, ունչատ, պնչատ, գունատ, քլփատ:³ Մենք այն համոզմանն ենք, որ *ստ* ածանցի առաջացման մասին այսպիսի կարծիք չէր կարող լինել, եթե դա ճանաչված լիներ ոչ թե միայն բացասման, այլ վերը նշված նաև մյուս նշանակություններով:

Նախ այն բառերն ուշադրության արժանացնենք, որոնց կազմում *ստ* ածանցը հանդես է գալիս վերածման նշանակությամբ:

ԿՈՃԱՍ, *ԿՃԱՍ*. Պետք է նշել, որ այս բառերը թեև բառարաններում սովորաբար ներկայացվում են որպես առանձին գլխաբառեր, բայց ծագումնաբանորեն մույնն են, իրար հարաբերում են այնպես, ինչպես ասենք, *օրորել* և *օրրել*, *մոլորվել* և *մոլրվել* բառաձևերը: Դրանք առաջացել են *կոճ* արմատից, *կճատ* բառի առաջին բաղադրիչը /*կճ*/ *կոճ* արմատի բունն է, այսինքն՝ դրա հնչյունափոխված ձևը:

Թեև Հր.Աճառյանը *կոճ* արմատը ճանաչում է որպես ընդարձակ զարգացում կրած արմատ, դրանով կազմված բազմաթիվ բառեր է քննարկել, բայց դրանց կազմում տեղ չի տվել *կոճատ* և *կճատ* բառերին, ինչպես նաև դրանք չի դիտել որպես *ստ* ածանցով կազմված:⁴ Մեր լեզվում բավարար քանակությամբ համապատասխան փաստական նյութ կա, որը հիմք է տալիս ասելու, որ *կոճատ*, *կճատ* բառերը կազմված են *կոճ* արմատից և վերածման նշանակությամբ *ստ* ածանցից: Նախ *կոճ* արմատի մասին: Հանրահայտ է, որ դրա առաջնային նշանակություններից մեկն է «հորիզոնա-

¹ Մ. Մ Ե Լ Ք Ո Ն Յ Ա Ն, «Ատ» ածանցի և դրանով կազմված բառերի մեկնություններ, ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1, Գյումրի, 1998, էջ 84-94:

² Մ. Ա Բ Ե Ղ Ե Ա Ն, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 226:

³ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 355:

⁴ Հր. Ա Ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ.2, Եր., 1973, էջ 624-626, հ.3, էջ 50-53:

բար կտրված ծառաբնի՝ արմատի վրա մնացած մասը»։ Ահա այդ բառն իր բացատրությանը Ս.Մալխասյանցի բառարանում. «ԿՈՒՐ. ծառի բունի մի մասը՝ հորիզոնական ուղղությամբ կտրված- կոճղ»։⁵ Կոճ բառի այս նշանակության հետ մնանության գույքորումով չե՞ն առնչվում մեզ հետաքրքրող *կոճատ*, *կճատ* բառերը «կիսայրած մոմ, մոմի վերջին մնացորդ» նշանակությամբ։ Նշենք այդ բառերի գործածություններ. «*Կոճատները* պահեցեք, նորից կհալենք, մոմ կթափենք», «Մոմի *կճատները* դեն մի ձգեք, կարելի է հալել, նոր մոմեր ձուլել նրանցից»։⁶ Կիսով չափ այրված մոմը, մոմի վերջին մնացորդը նման չէ՞ կտրված ծառաբնի արմատի վրա մնացած մասին։ Իսկ դա էլ նշանակում է, որ *կոճատ*, *կճատ* բառերում *ատ* ածանցն օժտված է ոչ թե բացասման, այլ վերածման իմաստով. կոճատ, այսինքն՝ կոճի վերածված, կոճի նման դարձած։

Երբ մտածում ես, թե ինչը կարող էր խանգարած լինել, որ *կոճատ*, *կճատ* բառերն այսպիսի մեկնաբանությամբ չեն ներկայացվել, ուրիշ որևէ պատճառ չես տեսնում, քան այն, որ *ատ* ածանցը ճանաչված չի եղել վերածման նշանակությամբ։

ԱԿՆԱՍ. Մենք այն համոզմանն ենք, որ այս բառն էլ կազմված է վերածման նշանակությամբ *ատ* ածանցով։ Բառիս հիմքը ոչ թե *ակն* բառն է, ինչպես ոմանք կարծում են, այլ՝ *ակնան* բառի հնչյունափոխված ձևը (հմմտ. քաղաք-քաղքենի, ականջ - ակնջիլության տալ)։ Ական բառը հայտնի է *ծակ*, *փոս* նշանակությամբ։⁷ *Ակնատ* բառի նշանակությունն է. «Պատի վրա ներսի կողմից փորված փոս, որ ծառայում է իբրև դարակ, պահարան. *Մրցըր ակնատումն է։ Ակնատումը լիքը ճան*»։⁸ Ուրեմն՝ *ակնան* /*ակն*/ հիմքով և *ատ* ածանցով արտահայտվում է «վոսի վերածված» հասկացությունը։

Մեզ անհիմն է թվում ակնատ բառը նաև «աչքից գուրկ, առանց աչքի, աչագուրկ» նշանակությամբ ներկայացնելը։⁹ Համենայն դեպս, ոչ մի բառարանում չի բերվում և ոչ մի օրինակ, որ վկայի, թե *ակնատ*-ը օժտված է նման նշանակությամբ։ Պարզապես *ակնատ* բառում *ատ* ածանցն ընկալվել է բացասման նշանակությամբ, *ակն* հիմքն էլ *աչք* իմաստով և ենթադրաբար այդ բառին վերագրվել է նման նշանակություն։

ԽՐԱՄԱՍ. Այս բառում էլ ածանցը հանդես է գալիս վերածման նշանակությամբ։ *Խրամ*, *խրամատ* բառերը գործառնական որոշակի ոլորտ ունեն, հիմնականում ռազմական կյանքին են վերաբերում։ *Խրամ* բառի նախնական նշանակությունն է «պատի, պարսպի վրա բացվածք», դա նշանակում է նաև պարսպի շուրջը փորած խոր ու լայն փոս, որ լցնում են ջրով՝ հակառակորդի առաջխաղացումն արգելելու համար։¹⁰ *Խրամատ*ն էլ որոշակի տարածք խրամի, փոսի վերածվածն է, «պատվարով պաշտպանված խոր ու նեղ գետնուղին»։

ԹԵՐԱՍ. Կասկածից դուրս է, որ այս բառը կազմված է *թեր* և *ատ* բաղադրիչներից։ Բայց սրա *ատ* ածանցն էլ հանդես է գալիս ոչ թե բացասման, այլ վերածման նշանակությամբ։ «Շշից զինի ածեց մի բաժակ, շշի թերատը ջրով լցրեց»։¹¹ Այս և նման գործածություններում *թերատ* բառը նշանակում է թերի դարձած, կիսատած։ *Թեր* բաղադրիչը, որ *թերի* բառի արմատն է, հանդես է գալիս «պակաս, կիսատ» նշանակությամբ։

ԽԵՑԱՍ. *Խեց* բառը հայտնի է «կավաճողից պատրաստված աման» նշանակությամբ, որից առաջացած *խեցագործ* բառը նշանակում է *բրուտ*։ *Խեցատ* բառը նշանակում է ոչ թե կավամանից պոկված կտոր, այլ «կոտրված խեցեղեն աման» /«Խեցատի մեջ ջուր ածիր, հավերը խմեն»/։

Ակնհայտ է, որ *խեցատ* բառում *ատ* ածանցը բացասման նշանակությամբ հանդես չի գալիս, չի բացասում հիմք հանդիսացող *խեց*-ի նշանակությունը, չի նշանակում խեց չունեցող, խեցից գուրկ։ Կավամանի կոտրվելուց հետո մնացած օգտագործելի մասը դիտվել է որպես նոր ամանի վերածված իր. խեցը վերածվել է խեցատի։

⁵ Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, էջ 463:

⁶ Նույն տեղում, էջ 464, 448:

⁷ Նոր բառգիրք հայկազենան լեզուի, հ.1,Եր., 1979, էջ 21: Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ.1,էջ 25:

⁸ Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ.1, էջ 30:

⁹ Նույնը: Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 17:

¹⁰ Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ.2, էջ 308:

¹¹ Նույն տեղում, էջ 98:

ԽՈՌԱՍ. Արմատական բառարանում *խոռ* բառը ներկայացված է «ծակ, փոս, ծերպ» նշանակությամբ:¹² Մեր որոշ բարբառներում *խոռ* բառը գործածվել է «լեռան մեջտեղից բացված նեղ անցք» նշանակությամբ, որից առաջացել է *խոռատ* բառը:¹³ Դժվար չէ զգալ, որ *խոռատ* բառն այսպիսի նշանակությամբ որոշակիորեն հուշելու էր, որ *ատ* ածանցը ճանաչվեր վերածման նշանակությամբ: Բայց նման մտտեցում չի ցուցաբերվել այս դեպքում էլ: Եվ տարակուսանքի մեջ ես մնում, թե *ատ*-ի բացասման նշանակությունն ինչպես են համատեղել բառահիմքի, սույն պարագայում «լեռան մեջտեղից բացված նեղ անցք» նշանակության հետ:

Այժմ ուշադրության առարկա դարձնենք այնպիսի բառեր, որոնցում *ատ* ածանցը հանդես է գալիս ոչ թե վերածման, այլ բացասման, սաստկական, սերման նշանակություններով:

ՓԻՆԱՍ. Որքան մեզ հայտնի է, այս բառը ներկայացվում է որպես «կեղտ, կղկղանք» նշանակությամբ *փին* արմատից և բացասման նշանակությամբ *ատ* ածանցից կազմված:¹⁴ Նման մտտեցման դեպքում բնականաբար պիտի շրջանցված լիներ այն հարցին պատասխան տալը, թե այդպիսի նշանակությամբ *փին* բառով և *ատ* ածանցով կազմված բառը ինչպես կարող էր օժտված լինել «աղբատ, խեղճ, ողորմելի, հեզ» նշանակությամբ: Պրպտումների ընթացքում մեր ուշադրությունը գրավեց Ս.Մալխասյանցի բառարանում որպես *կեղտ, կղկղանք* նշանակությամբ *փին* բառից առանձին ներկայացված *փին* նույնանունը՝ օժտված *աքացի* նշանակությամբ:¹⁵ Այսպիսի նշանակությամբ *փին* բառ նկատի առնված չէ Հր.Աճառյանի, Գ.Ջահուկյանի կողմից փինատ բառի մեկնության կապակցությամբ, և ավելացնենք նաև, որ ինքը Մալխասյանցն էլ նկատի չի առել, նա *փինատ* բառը չի ներկայացնում որպես *աքացի* նշանակությամբ *փին* բառից կազմված: Փին բառն *աքացի* նշանակությամբ ներկայացնելիս Մալխասյանցը նկատի է ունեցել նաև «փին զարնել» հարադրությունը՝ դա ներկայացնելով երկու նշանակությամբ՝ «1. Աքացել: 2. Մեկից գերազանցել»:¹⁶

Նկատի ունենալով *փին* բառի մալխասյանական բացատրությունը՝ մենք դա ենք դիտում որպես առաջին բաղադրիչ *փինատ* բառի համար՝ վերջինս ճանաչելով վերը նշված նշանակությամբ՝ «խեղճ, ողորմելի, հեզ, աղբատ»: Իմաստային այնքան էլ դժվար ընկալելի կապ չի դրսևորվում *աքացի, աքացել*, «մեկի հանդեպ գերազանցություն ցուցաբերել» նշանակությունների և բացասման *ատ* ածանցով կազմված *փինատ* բառի վերը նշված նշանակության միջև (աղբատ, խեղճ, հեզ):

ՓԱՐԱՍ. Այս բառը ճանաչվում է որպես ասորերեն փոխառություն (parat – ցրվել, տարածել) և դիտվում է որպես փարատել բայի հիմք:¹⁷ Գ.Ջահուկյանը «քիչ հավանական» է համարում փարատել բայի աղբյուրը ասորերեն նշված բառը համարելը, բայց ինքն էլ որոշակի խոսք չի ասում այդ բայի ստուգաբանության մասին՝ փորձելով դրանում գտնվող *տ*-ի զուգահեռներ տեսնել միդեոլանդերեն sproeten – *սրսկել*, sproetelen – *բխել* բառերի մեջ:¹⁸ Մեր լեզվում կա *փարտել* բառը, որը «բնիկ հայ բառ» է համարվում¹⁹ և օժտված է պարունակել, *պարփակել*, *շուրջը ածել*, *շուրջը պատել*, *շոյել*, *կատչել* իմաստային առումներով:²⁰

Մենք այն համոզմանն ենք, որ *փարատել* բայի հիմքը ոչ թե ասորական փոխառյալ բառն է, այլ *փարտել* բայի *փար* արմատը, որի հետ գործածված է բացասման նշանակությամբ *ատ* ածանցը: *Փարատ* բառն առանձին, ինքնուրույն լայն գոր-

¹² Հր. Աճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 2, էջ 398:

¹³ Նույնը:

¹⁴ Նուն տեղում, հ. 4, էջ 505: Գ. Ջահուկյանը *փին* բառը «աղբ, կղկղանք» նշանակությամբ է ճանաչում, բայց «փինատ» բառում չլուծված է համարում *ատ*-ի հարցը՝ առանց որևէ նոր մեկնություն առաջ քաշելու: Տե՛ս Հայոց լեզվի պատմություն, մալխասգրային ժամանակաշրջան, Եր., 1978, էջ 209, 150:

¹⁵ Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 500:

¹⁶ Նույնը:

¹⁷ Հր. Աճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 4, էջ 486: Ստ. Մ ալ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 490:

¹⁸ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 194:

¹⁹ Հր. Աճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 4, էջ 487:

²⁰ Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 491: Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 1514:

ծածուխում չունի, դրանից կազմված *փարատել* բայն օժտված է այնպիսի նշանակություններով, որոնք *փարել* բառի վերը նշված իմաստներին հարաբերում են այնպես, ինչպես առհասարակ բացասման նշանակությամբ առ ածանցով կազմված բառերն են հարաբերում իրենց հիմքին (գույն-գունատ, պոչ-պոչատ): Այլ ձևով ասած՝ փարատել բառով արտահայտվում է *փարել* բայով արտահայտված իմաստների բացասում: Նշենք նաև փարատել բայի իմաստային առումները՝ հեռացնել, ցրել, ի չիք դարձնել, վերացնել, վանել:²¹ Այս կապակցությամբ կարևոր ենք համարում ուշադրություն հրավիրել այն իրողության վրա, որ Մ.Աբեղյանն *ատ* ածանցով կազմված բառերը թվարկելիս նշում է նաև *փարատ*, *փարատել*՝ վերջինս այսպես մեկնաբանելով. «փարատ (որից՝ փարատել - փարումն կտրել)»:²²

ՊԱՂԱՍ. Բառս առանձին հանդես չի գալիս, այլ *աղաչ - պաղատ*, *աղատ-պաղատ* հարադիրների կազմում: Հր.Աճառյանը պաղ բառից կազմված բաղադրյալ բառերի մեջ չի նշում պաղատ բառը, որ նշանակում է, թե դրանց միջև ծագումնաբանական ընդհանրություն չի տեսնում: Նա պաղատ բառը համեմատել է լազերենի պալակար, օպալակարու բառերի հետ, բայց հետագայում հրաժարվել այդ կարծիքից:²³

Պաղատ-ը պաղատել բայի հիմքն է, որի առաջին բաղադրիչ *պաղ* արմատը նշանակում է *սառույց, ցուրտ, սառն*, փոխաբերական նշանակությամբ՝ ոչ սիրալիք:²⁴ **Պաղատել** բառում *ատ* ածանցը հանդես է գալիս բացասման նշանակությամբ, և այդ բառը կարելի է բառացի այսպես մեկնաբանել՝ «սառնությունը կտրել», այսինքն՝ թախանձել, թախանձագին խնդրել, աղաչել, աղերսել:

ԽՄՈՒՍ. Արմատական բառարանում այս բառը ոչ *խատ* արմատից կազմված բառերի ցանկում է նշված և ոչ էլ որպես առանձին գլխաբառ է ներկայացված: Որպես *խատ*-ից կազմված չդիտվելու պատճառը, կարծում ենք, այն կարող էր լինել, որ Աճառյանը այդ արմատը ճանաչում է միայն *ուղորում, ուղորք* նշանակությամբ:²⁵ Այդ արմատից սերված է համարում *խատատել* բառը և դա ներկայացնում է «ուղորելով՝ քաշկոտելով ծամծամել» նշանակությամբ:²⁶ Կարծում ենք՝ *խատ*-ի մեջ միայն ուղորում, ուղորք նշանակություն տեսնելու պատճառով է, որ Հր.Աճառյանը չի անդրադարձել նաև *խատել* բառին, որի նշանակություններից մեկը «Բառգիրք հայոց»-ում տրված է կտրել բայով:²⁷ **Խատել** բայի մեջ առկա կտրել իմաստը հիմք է տալիս մեզ ասելու, որ *խատ* արմատն օժտված է եղել առհասարակ *կտրել* և ոչ թե միայն *ուղորելով կտրել* իմաստով:

Կտրել նշանակությամբ օժտված *խատ* արմատն ենք տեսնում *խատատ* բառում: Խատատը, այսինքն՝ հյուսնը, որ փայտյա իրերը պատրաստողն է, այլ կերպ ինչպես կարող էր ճանաչվել, եթե ոչ առաջին հերթին հենց իր կտրելու գործողությամբ: Որոշ դժվարություն է հարուցում *խատատ* բառում *ատ* ածանցի նշանակության մեկնաբանումը: Գուցե առհասարակ *ատ* ածանցն օժտված է նաև այնպիսի նշանակությամբ, որ դեռևս ընկալված, ճանաչված չէ: Մինչև վերջերս դժվար լուծելի չէ՞ր համարվում

²¹ Մտ.Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 491: Էդ.Աղայան, նշվ. աշխ., էջ 1514:

²² Մ. Ա բ ե դ յ ա ն, նշվ. աշխ., էջ 249: Կարծում ենք՝ Մ. Աբեղյանի կողմից թվարկված *ատ* ածանցով կազմված բառերի ցանկում վրիպակի հետևանքով է տեղ գտել կատակահատ բառաձևը, որ այդպես «ժամառորեն» անցնում է նրա «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մի հրատարակությունից մյուսները: Մ.Աբեղյանը ի թիվս գունատ, կոնատ, փարատ և այլ բառերի որպես *ատ* ածանցով կազմված է նշում նաև «կտավատ» բառը՝ «... կտավատ /կատվահատ, կտավահատ/»/նույն տեղում/։ Կասկած չունենք, որ Մ.Աբեղյանը սույն պարագայում ցանկացել է «կտավատ» բառի դիմաց, փակագծերի մեջ, նշել, որ դա առաջացել է կտավ և հատ բառերից, որոնք կարող են կապակցվել և՛ առանց ա հոդակապի /կտավհատ/, և՛ հոդակապով /կտավահատ/։ Ուրեմն՝ փակագծերի մեջ պիտի տեղ գտած լիներ ոչ թե «կտավահատ», այլ «կտավհատ» բառը: «Կտավահատ»-ը վրիպակի հետևանքով է առաջ եկել, որ տեղ է գտել նախ «Հայոց լեզվի տեսություն» աշխատության 1931թ. հրատարակությունում /էջ 257/, ապա և՛ 1965թ. հրատարակությունում /էջ 249/, ինչպես նաև հեղինակի Երկերի 2 հատորում /էջ 203/:

²³ Հր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 4, էջ 14:

²⁴ Մտ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 41:

²⁵ Հր. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 2, էջ 335:

²⁶ Նույնը /Ընդգծումը մերն է - Ս.Մ/:

²⁷ Բառգիրք հայոց, Եր., 1975, էջ 140:

հավատ, անքատ, լմնատ, արմատ, հաստատ բառերի *ատ*-ի հարցը.²⁸ *Խառատ* բառում *ատ*-ի նշանակության մեկնաբանմանը կարելի է մոտենալ նաև այդպիսի դիտակետից: Հայտնի է, որ ածանցները կարող են լինել ոչ միայն «խմաստավորական կամ իմաստահավելական» տիպի, որոնք «բառին հաղորդում են իմաստային նոր առում, այլև «գործառական փոխանցական» տիպի, որոնք «փոխում են բառի գործառական արժեքը», մի խոսքի մասը վերածում են այլ խոսքի մասի «առանց գոյաբանական իմաստի փոփոխության», ինչպես՝ *լուրջ – լրջորեն*:²⁹ Կարելի է այնպես մտածել, որ *խառ* արմատում եղած գործողության իմաստային առումը *խառատ* բառում գոյականացված դրսևորումով է հանդես եկել:

ՋՐԱՏ. Էդ. Աղայանն այս բառը ներկայացնում է «Ջուրը կտրած՝ կտրված» նշանակությամբ՝ առանց համապատասխան օրինակով վավերացնելու այդ նշանակությունը:³⁰ Պարզ զգացվում է, որ կողմնորոշվել է ատ ածանցի բացասման նշանակությամբ: Ստ.Մալխասյանցի բառարանում *ջրատ*-ը այսպիսի նշանակությամբ և գործածությամբ է ներկայացված. «ՋՐԱՏ. թույլ, անոյժ (օղիի մասին): Ջրատ արադ է, ինչքան ուզում ես խմի, չի հարբեցնի»:³¹ Չզգացվում է, որ Մալխասյանցը *ջրատ* բառում չի տեսնում *պակասի, կտրվելու* նշանակություն:

Ջրատ բառում ատ ածանցը կարելի է ընկալել և՛ սաստկական, և՛ վերածման նշանակությամբ՝ «ջուր շատ պարունակող», «ջրի վերածված»: Առաջին նշանակությամբ առնչվում է *հաստատ, խորխորատ, քկյատ* և այդպիսի բառերի հետ, իսկ երկրորդ նշանակությամբ՝ *քազատ, ածվատել* և նման բառերի հետ:

ԱՍՏՈՒԹ. *Ատ* ածանցը սաստկական նշանակությամբ ճանաչելը մեզ հնարավորություն է տալիս *աստուած* (աստված) բառը ներկայացնել մորովի մեկնաբանությամբ, հնարավոր ենք համարում դա ճանաչել «աստու» հիմքով և սաստկական նշանակությամբ *ատ* ածանցով կազմված բաղադրություն՝ աստու+ատ (աստուատ):

Աստված բառի մեկնությանն անդրադարձողների կողմից գրեթե անուշադրության մատնված *աստու* բառ գրաբարում գոյություն ունեցել է, թեև հավանաբար քիչ գործածական լինելու պատճառով ոչ բոլոր բառարանագիրների կողմից է պատշաճ ուշադրության արժանացել: Նոր հայկազյան բառարանում մեկ բնագրային օրինակով այդ բառն այսպես է ներկայացված: «ԱՍՏՈՅ, կամ ԱՍՏՈՒ. *Տ. ազդոյ, և աստի՝ իբր հաստատուն, զորատր. Մայն աստու է (կամ ազդու է) ՚ի հարկանիլն ուռամբ*:³² «Հաստատուն, զորավոր» նշանակությամբ *աստու* բառի արմատը *ատ*-ն է՝ «ուժ» նշանակությամբ,³³ որի հետ ծագումնաբանական ընդհանրություն ունեն *աստեալ* «հաստատամիտ, զորավոր», *աստևոր* «զորավոր, ճշմարիտ, հաստատուն» բառերը:³⁴ Ուրեմն՝ *սաստկական* նշանակությամբ *ատ* ածանցով կազմված *աստուատ* բառում ներառված են «ուժ, սաստիկ հաստատուն, շատ զորավոր, ճշմարիտ» իմաստային առումներ: Ի՞նչ պատճառով կարող էր *աստուատ* բառը հետագայում փոխարինված լինել «աստուած» բառաձևով: Այդ հարցում երկու հավանական պատճառ ենք տեսնում: Հնարավոր է, որ որոշակի դեր ունեցած լինի տարնմանումը. *աստուատ* բառի երկու *տ* հնչյուններից առաջինը ազդել է երկրորդի վրա և հեռացրել է իրենից: Արդյո՞ք հավանական չէ նաև այն հնարավորությունը, որ *աստուած* ձևի երևան գալու հարցում դեր ունեցած լինեն հունաբան հեղինակները: Այս կապակցությամբ, նախ, միանգամայն ուշագրավ պիտի համարել այն կարծիքը, որ, *աստուած* բաղադրությունը, իբրև բառային միավոր, համեմատաբար ուշ շրջանում է դիտվել որպես առանձին բառ, սակայն ոչ ավելի ուշ, քան

²⁸ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 237:

²⁹ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 158:

³⁰ Էդ. Աղ ա յ ա ն, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1248:

³¹ Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 150:

³² Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1, Եր., 1979, էջ 320:

³³ Հր. Ա ճ ա ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 277:

³⁴ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, էջ 318: Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 85, 277: Բառգիրք հայոց, Եր., 1975, էջ 34:

V դ. արդեն որպես *որոշակի հասկացության* անվանում հանդիսանալը:³⁵ Հայկական կյանքում V դարում այդ «որոշակի հասկացությունը» հավատի նոր, քրիստոնեական ըմբռնումը չէ՞ր, որ հետևողական և անողոք պայքարի մեջ էր մտել հեթանոսության դեմ: Բնականաբար համապատասխան վերաբերմունք պիտի ցուցաբերված լիներ նաև գերագույն գործության գաղափարն արտահայտող բառի գործածության հարցում: Եթե *դիք* բառը պիտի գործածվեր հեթանոսական աստծու անվանման համար, ապա քրիստոնեական բարձրյալի ճանաչման համար ավելի համար, վայելուչ բառ կա՞ր, քան *աստուատ-ը*: Բայց որոշ նկատառումներով հավանաբար ցանկալի է համարվել այդ բառը փոքր-ինչ փոխված ձևով գործածության մեջ դնել, որի իրականացումն ամենևին էլ դժվար և արտառոց բան չպիտի թվար արհեստական եղանակով ոչ միայն նոր բառեր ու բառաձևեր, այլև նույնիսկ ածանցներ ստեղծելու անհատական հնարամտություններով օժտված հունարան դպրոցի ներկայացուցիչների համար: Այս կապակցությամբ նկատի ունենանք, թե հունարան հեղինակներն ինչպես «հաճախ, հայերեն սովորական ձևերը /իմա՝ բառերը-Ս.Ս./ ձևով կամ նշանակությամբ փոփոխված»³⁶ գործածության մեջ են դրել որպես նոր կազմություններ: Բավարարվենք այդպիսի մի երկու օրինակի մատնանշումով: Ինչպես հայտնի է, հունարան հեղինակները *«համ ծանոթ ձևը դարձրել են հոմ»*,³⁷ որպես քերականական սեռ նշանակող *մակասասար* տերմինն ստեղծել են *հասասար* բառի սկզբի *հ* հնչյունի տրամով,³⁸ կարծում ենք ոչ թե բարբառային արտասանության, այլ անհատական հնարամտության հետևանքով *սպարարց* բառում հայտնի *դարձ* արմատի փոխարեն տեղ են տվել *թարց* հնարովի ձևին,³⁹ «այդ» սովորական բառի փոխարեն գործածել են՝ *հայր, որպես-ի* փոխարեն՝ *որզան, նոցա-ի* փոխարեն՝ *նոջա*, «այդպես և ներ նոջայ, ներ սոջայ»⁴⁰ և այլն:

ЛЕКСИКОЛОГИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ

___ Резюме ___

___ С. Мелконян ___

Данная статья посвящена исследованию таких слов с армянским суффиксом “US” (русск. экв. “без-”), которые, не были трактованы, исходя из многозначности данного суффикса, или же слова, трактовка которых в том или ином аспекте нуждается в проверке и в корректировке. Необходимое внимание уделено вопросу периода формирования армянского суффикса “US”. Если бы этот суффикс до некоторых пор не был бы известен значением только отрицания (սպար-безхвостный), то не было бы абсолютно верным то мнение, что якобы этот суффикс появился в пост-грабарский период, т.е. после V века.

³⁵ Վ. Հ ա մ ր ա ղ ո մ մ յ ա ն, Հայերեն *աստված* բառի ծագումն ու տիպարանությունը, Եր., 2002, էջ 32: Ընդձումները մերն են:

³⁶ Հր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Եր., 1951, էջ 162:

³⁷ Նույնը:

³⁸ Ա. Մ ո ղ ա ղ յ ա ն, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Եր., 1971, էջ 211:

³⁹ Հր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 223-224:

⁴⁰ Հր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 148, 149:

ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻՆ
ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԻ ՓՈՐՉ

Կարնո բարբառը համարվում է հայերենի կենդանի բարբառների մեջ ամենամեծերից մեկը: Բարբառախտաբար, վերջին երկու հարյուրամյակի ընթացքում այս բարբառով խոսող մի ստվար զանգված հանգրվան է գտել Շիրակի դաշտում, զգալի մասն էլ՝ Ջավախքում և այլուր: 1972 թվից ի վեր ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի լեզվաբան-բարբառագետները ձեռնարկել են հատուկ ծրագրով հայերենի բարբառների գրառման աշխատանքները՝ հրնթացս կուտակված նյութերը մեկնաբանելու, բարբառային ամենատարբեր իրողությունները ուսումնասիրության առարկա դարձնելու և հայ բարբառագիտության զարգացմանը նպաստելու միտումով: Տարիների տքնաջան հավաքչական աշխատանքներով կուտակված 500 խոսվածքային միավորների մեջ քիչ չեն մաս Կարնո բարբառին առնչվող գրանցումները: Շիրակի տարածքի գյուղերից մեզ հաջողվել է գրառել Մշո գավառի բազմաթիվ գյուղերից, Խուֆից, Սասունից գաղթածների մայրենի խոսվածքները: Այս տարածաշրջանում ոչ պակաս արդյունավետ եղավ Կարնո բարբառը կրող կարսեցի, բասենցի գաղթականների առաջին, երկրորդ սերնդի ներկայացուցիչների հետ հանդիպումներն ու նրանց մայրենի խոսվածքների գրանցումները: Ներկայումս այդ բարբառը կրող երրորդ, չորրորդ սերնդի ներկայացուցիչները հաղորդակցվում են միանգամայն օրինաչափորեն ձևավորված միջբարբառային խոսվածքով: Եթե դրան հավելենք մաս գրական արևելահայերենի հզոր ազդեցությունը, ապա պարզ կդառնա, թե որքան կարևոր էր վերջին 25 տարիների ընթացքում Շիրակի տարածաշրջանի *Ագատան, Գետք, Մարմաշեն, Ոսկեհասկ, Ախուրիկ, Հայկավան* գյուղերում պարբերաբար ձեռնարկված հավաքչական աշխատանքները:

Հայերենի բարբառների բառապաշարից ընտրված թեմատիկ առանձին խմբի, սովյալ դեպքում՝ ժամանակակից բառերի քննությունը հետաքրքիր շատ իրողություններ է ի հայտ բերում: Կարնո բարբառի տարբեր խոսվածքների գրանցումներից ընտրել ենք *ԱՌ-ԱՎՈՏ* օրապահին վերաբերող բառանվանումները:

ՆՀԲ -ում այս բառի դիմաց գրված է. «*Առաւօտ* - այգ, սկիզբն տունջեան, արևագալ. առ հարոյթ (առյարոյթ), այսինքն՝ «Ժամ յառնելոյ ի քնոյ»:¹

Արմատական բառարանում Հ.Աճառյանը թեև չի ստուգաբանում *առավոտ* բառը, բայց փաստարկներ է բերում *առ* նախդիրից և *աւօտ* արմատից կազմված լինելու օգտին: Ըստ նրա՝ *աւօտ* արմատը «ժամանակ» է նշանակում, և որ այդ բառից են կազմված *շաղաւօտ* (գիշերվա ժամը 4-ը՝ ըստ արևելյան ժամահաշվի) և *կամաւօտ* (գիշերվա ժամը 5-ը) ժամանումները:²

Գ. Ջահուկյանը *առավոտ* (առաւաւտ) համարում է հնդեվրոպական **aus* - լուսավորել (*ausos* - արշալույս) ձևից սերող բառ՝ առ նախածանցով և աւտ վերջածանցով, իսկ արմատը աւ-ն է:³ Նույն կարծիքին է մաս Էդ. Աղայանը. «Մենք արմատն ենք համարում աւ, իսկ առ- և աւտ(օտ)՝ ածանցներ»:⁴

1) *Առավոտ* հասկացության դիմաց Շիրակի տարածքի բոլոր խոսվածքներում առկա է *հ'առավօղ* համապատասխանությունը՝ հիմնականում մակբայական կիրառությամբ: Ասենք՝

Հ'առավօղ էրտանկ բրդի բագար (Գյումրի):
Յէսօր հ'առավօղ շաղ թէգ տեղէս հէլա (Կարսի Փաղղրվան՝ գրանցված Ոսկեհասկ գյուղում):

Օրվա պահերի անվանումները հիմնական բառաֆոնդի ամենագործուն շերտի բառերն են, որոնք տարբեր բարբառներում հանդես են գալիս լեզվամտածողության

¹ Տե՛ս ՆՀԲ, հ. 1, Եր., 1979, էջ 298:
² Հ.Աճառյան, ՀԱԲ, Եր., հ. 1, էջ 256:
³ Գ. Ջահուկյան, ՀԼՊ. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 159:
⁴ Է.Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 24:

նույնությունից բխող կադասայարային ձևերով: Ժամանակը հաշվարկելիս մարդիկ ամենից առաջ հիմք են ընդունել անխախտ հաջորդականությամբ միմյանց հերթագայող երևույթները և հատկապես՝ ցերեկվա և գիշերվա հաջորդականությունը: Համաժողովրդական գործառույթ ունեցող բառաձևերի կողքին հանդես են գալիս ժողովրդի տվյալ հատվածի կենսակերպի յուրահատկությունից բխող եզակի բառանվանումներ, որոնք կարող են այլ տարածքներում չկրկնվել:

Հայերենի բարբառներում *առավոտ* հասկացության բառանվանումները ներկայանում են բազմաթիվ հոմանիշային տարբերակներով: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ այդ օրապահին ընդգրկում է բավական երկար ժամանակահատված՝ գիշերավարտից մինչև կեսօր: Ահա այդ անորոշությունից ձեռքբաղվելու, հնարավորինս ճանաչելի, ընկալելի դարձնելու միտումով օրվա այդ պահին անվանելիս մարդիկ ընտրել են տվյալ ժամանակահատվածին բնորոշ որևէ հատկանիշ և դրել անվանման հիմքում: Առավել ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ դրանք առավոտվա տարբեր պահերն են մատնանշում:

ա) Վաղ առավոտ լինելու հանգամանքն ընդգծվել է *գիշեր* բառով կազմված ձևերում, ինչպես, ասենք, *գիշեր* և հան արմատներն իրար կապելով և դրանով *գիշերավարտի* գաղափարն արտահայտելով *գիշերհանա* բառաբաղադրությամբ:

Հ'առավոտ-գիշերհանա սաղանի պես դեմըս յեյավ (Կարսի Փաղղորվան):

Գիշեր բառի գործիականի քարացած հոլովածևը՝ *գիշերով*, «վաղ առավոտ, գրեթե գիշեր, դեռ լույսը չբացված» նրբինաստներն է ներառում, այլ խոսքով՝ գործողությունը ավելի շուտ գիշերը, քան թե առավոտյան կատարվելու հանգամանքն է մատնանշվում: Այդ *գիշերով* մակբայի գործառության առիթով տեղին է նշել Հր.Աճառյանի հետաքրքիր մեկնաբանությունը հետգրաբարյան շրջանում առաջացած *վա* հոլովման մասին, ինչին նա անդրադարձել է Ն.Նախիջևանի բարբառի քննության առիթով: Նա գտնում է, որ *վա* հոլովման ենթարկվող ժամանակահիշների գործիականը պետք է լիներ առավոտվանով, գիշերվանով, այսինքն՝ գործիականի համար - *վանով* վերջավորությունն է օրինաչափ, սակայն այդ դեպքում *գիշերվանով* բառը կհասկացվի «գիշերվանն էլ միասին հաշվելով»: Ուստի գործիականը կազմվում է պարզ -ով վերջավորությամբ: Իսկ ժամանակահիշներն առհասարակ գործիական չունեն»⁵ Նշենք, որ գործիական հոլովով միջոցի խնդիր է ձևավորվում, իսկ տվյալ դեպքում գործ ունենք ժամանակի պարագայի հետ:

բ) Առավոտ օրապահի անորոշությունը հաղթահարելու, ավելի ստույգ ժամանակահատված ցույց տալու, ասենք, վաղ առավոտ լինելու հանգամանքն ընդգծելու նպատակով են գործառել *հ'առավոտ կանուխ* բառակապակցությունը:

Հ'առավոտ կանուխ ճամպա հընգավ (Մարմաշեն):

2) Ծագումնաբանական մի առանձին խմբում էլ կարելի է առանձնացնել բնիկ հայերեն *լույս* արմատից սերող բառանվանումները: Միանգամայն բնական է, որ *առավոտ* հասկացությունն առնչվում է արևի լույսի տարածվելու գաղափարի հետ: *Մութ* և *լույս* արմատներով ստեղծվել են վերլուծական բաղադրություններ՝ շաղկապական, հարադրական բարդություններ: Օրինակ՝

Մուտուլուս էր, օր խօրօզը կանճեց (Ազատան):

Լույս և դեռ արմատների բաղադրությամբ առաջացած բառաձևերին բնորոշ է վաղ լուսաբաց բառինաստը: Դրանք մատնացույց են անում լույսը բացվելուն նախորդող պահը, ինչպես, ասենք, *լուսուղեն* բառաձևը:

Լուսուղեն քիճըն թօն էգավ (Գետք):

Մրան համարժեք է Արարատյան բարբառի խոսվածքներում առկա *լուսաղենին* բառանվանումը, որն անցել է նաև գրական արևելահայերենին:

Փոխառյալ *թարաֆ* (կողմ) բառով հայաբանության արժեք ունեցող նկարագրական տիպի ժամանակահիշներ են ստեղծվել, որոնք լայնորեն գործառում են Կարենո բարբառի խոսվածքներում, ինչպես՝ *լուսու թարաֆ, հ'առավոտվա թարաֆ* :

Բարբառախոսների հավաստմամբ՝ կիրառելի է նաև *ատամա մուտ* (աղամամութ) համապատասխանությունը, որն, անշուշտ, կապվում է Աղամ նախահոր հետ՝

⁵ Հ. Ա ճ ա ռ յ ա ն, *Ջննություն Նոր Նախիջևանի (Խրիմի) բարբառի, Եր., 1925, էջ 187:*

մատնանշելով աշխարհաստեղծման այն պահը, երբ իրարից անջատվել են խավարն ու լույսը: Նմանատիպ բառերը գուցե և հաճախական չեն, սակայն հասկանալի են բոլոր հավատացյալներին և խոսքում կարող են ունենալ լրացուցիչ գործառնական բաշխում: Ընդ որում՝ բառակապակցության արժեքով (հատկացուցիչ-հատկացյալ կառույց), ինչպես՝ Առանա մուտ, Առանու մըտի հեղ: Այսպես՝

Առանու մըտի հեղ պարբս վողի վըրա էր (Կարսի Ուզունքիլիսա՝ գրանցված Ոսկեհասկ գյուղում):

3) Ծագումնաբանական առանձին խումբ են կազմում *առավոտ* հասկացության դիմաց փոխառյալ *սարահ* ձևի հնչյունափոխված տարբերակները ներկայացնող բառանվանումները: Թուրքերենի միջնորդությամբ պարսկերենից փոխառյալ *սարահ* ժամանականիշը «շուտ, կանուխ, վաղ» նրբինաստներն ունի և խոսքի մեջ ժամանակի պարագա է ձևավորում՝ ընդգծելով գործողության՝ վաղ առավոտյան կատարվելը:

Բացառապես մակբայական գործառույթ դրսևորող *սարահ* փոխառյալ բառից սերող *սարահտան* կամ *սարախտան* ժամանականիշը լայն կիրառություն է ստացել հայերենի հատկապես արևմտյան խմբակցության բարբառներում: Լայնորեն գործառու է նաև Կարճ բարբառի տարբեր խոսվածքներում, ինչպես՝ Գյումրի քաղաքի, Կարսի Փաղղըրվան, Գրգըլխախախ, Ուզունքիլիսա, Աղջաղալա, Բասենի մի շարք գյուղերից գաղթած շիրակցիների խոսքում.

Սարախտան կիսորը քրնդիրը վատեց (Բասեն):

Վաղ առավոտ լինելու հանգամանքն ընդգծելու համար քուրքերենից փոխառյալ *թեզ* (շուտ) ձևի զուգորդությամբ սաստկական արժեք է ձեռք բերել *սարախտան թեզ* բառակապակցությունը: Այսպես՝

Սարախտան թեզ տերդերը մըղավ ժամը (Ազատան):

4) *Առավոտ* հասկացության դիմաց առկա բառանվանումների հոմանիշային տարբերակներից մեկն էլ Շիրակի մարզի Ոսկեհասկ գյուղում մեր կողմից գրանցված՝ Կարսի Գրգըլխախախ գյուղի խոսվածքում առկա *աղջամուղդ* համապատասխանությունն է: ՆՀԲ-ում *աղջամուղդ*-ի համար նշվում է նաև աղտամուղտ, աղտումաղտ հոմանիշները, որոնք գործառու են «մութ, մառախուղ, խավար» իմաստներով:⁶ Նշանավոր հայագետ Ա. Մեյեն աղջամուղջը բառը առանձին քննության առարկա է դարձրել «Հայերեն ստուգաբանություններ» շարքում: Ըստ Մեյեի՝ դա մի կրկնավոր բարդություն է, որ առաջացել է հայերենում կիրառվող երկու ուշագրավ միջոցներով.

1) ա և ու ձայնավորների հերթագայությամբ, ինչպես՝ խառնիխտուն... և 2) մ-ի հավելումով կամ բառակազմի բաղաձայնի փոխարինում մ-ով, ինչպես՝ հացումաց...: Ապա ավելացնում է . «Այս երկրորդ միջոցը բավական հազվադեպ է հին բնագրերում, բայց ազատ կիրառվում է ժամանակակից ժողովրդական լեզվում: Ուստի աղջամուղջ-ի սկզբնական ձևը աղջ է»: ⁷ Իսկ այդ արմատին Մեյեն զուգադրում է հնդեվրոպական այլ լեզուներում առկա ձևեր՝ անձրև նշանակությամբ: ՆՀԲ-ում աղջամուղջ-ի համար նշվում է «մութ, մառախուղ, խավար» իմաստները, և բերվում են վկայություններ աղտամուղտ, աղտումաղտ հոմանիշային տարբերակների մասին:⁸ Այդպիսի փաստի առկայությամբ անառարկելի ենք համարում աղջամուղդ բառաձևի աղերսը հայոց հին օրացուցային համակարգում վկայված գիշերային 2-րդ ժամանվան հետ: Այլ խոսքով՝ Կարսի Գրգըլխախախ գյուղի խոսվածքում առկա աղջամուղդ ժամանականիշը աղջամուղջ ժամանվան մնացուկային ձևն ենք համարում:

5) *Առավոտ* հասկացության դիմաց ինքնատիպ մի ժամանականիշ էլ՝ *աղոթրան*, գործառու է ինչպես Մշո, Վանի, Խոյի բարբառներում, այնպես էլ Կարճ բարբառի մի շարք խոսվածքներում՝

Աղոթրան օր բածվալ, շուղըն շօրերըս հակա, տընէն հէլա (Բասենի Նարման գ.):

Այս աղոթրան (աղոթարան) ածանցավոր բառը կարող էր նշանակել և՛ աղոթելու ժամանակ, և՛ աղոթելու տեղ: Վերջին իմաստն ավելի հավանական է թվում (-արան ածանցին առավել բնորոշ է տեղ ցույց տալը): Կարելի է կարծել, որ դեռ արևապաշտության շրջանում առավոտյան աղոթքն արվել է դեմքով դեպի արևելք՝ «աղոթարան»: Աս-

⁶ Տե՛ս ՆՀԲ, հ. 1, Եր., 1979, էջ 298:

⁷ Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 154:

⁸ Տե՛ս ՆՀԲ, հ. 1, Եր., 1979, էջ 298:

տիճանաբար կատարվել է տեղ-ժամանակ անցում, և արդյունքում առաջացել է *աղօթրան* ժամանակահիշը՝ *արևազայի ժամ* իմաստով: Այդ սովորությունը ծիսապաշտամունքային բնույթի այլ տարրերի հետ ժառանգորդաբար անցել է քրիստոնեությանը, և աղօթրան բառն էլ բարբառներում շարունակել է գործառել ժամանակահիշի արժեքով:

6) *Առավոտ* հասկացության իմաստով Շիրակի տարածքի խոսվածքներում գործառող հոմանիշային տարբերակներ կան հայ ժողովրդական հեքիաթներում: Վաղնջական ժամանակներից ժողովրդի շուրթերին գոյատևող, սերնդեսերունդ փոխանցվող հեքիաթներն անսպառ շտեմարան են բարբառային իրողություններն ուսումնասիրողների համար: Բասենի խոսվածքում առկա «խօրօգխօսումին» ժամանակահիշմակբայը կոպիտ մոտավորությամբ մատնանշում է վաղ լուսաբացը: Այն, հավանաբար, կապվում է հայերենում և այլ լեզուներում ընտանի կենդանիների և թռչունների վարքի միջոցով օրապահը որոշելու սովորության հետ:

Ամփոփելով «առավոտ» հասկացության իմաստով հայերենի բարբառներում և մասնավորապես՝ Շիրակի տարածաշրջանում գործառող Կարնո բարբառի խոսվածքներում առկա բառանվանումների քննությունը՝ գալիս ենք եզրահանգման, որ գիշերավարտից մինչև կեսօր ձգվող այդ օրապահի բառանվանումներին բնորոշ է հոմանիշային բազմազանությունը:

Հայոց լեզվի պատմության, ազգագրության, պատմագիտության, քանազիտության և այլ բնագավառների հետ առնչվող շատ հարցերի պատասխանը կարելի է գտնել բարբառների բառապաշարի ուսումնասիրության շնորհիվ:

К АНАЛИЗУ ГОВОРОВ КАРИНСКОГО ДИАЛЕКТА

___ *Резюме* ___

___ *Д. Барнасян* ___

Одним из живых диалектов армянского языка является каринский, которым ныне пользуется довольно большое число армян, проживающих в Ширакском регионе и Джавахетии. Ныне продолжают работы по изучению особенностей говоров этого диалекта, проводятся систематические собирательские работы. Данная статья посвящена словесным названиям, обозначающим утреннее время суток ("утро"). Сравнительный анализ показывает, что временной промежуток от окончания ночи до полудня в разных говорах этого диалекта обозначается словами, которые характеризуются разнообразием синонимов.

Մուսաննա ՉԱԲԱՐՅԱՆ

ՍԱՐ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԼԵՈՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Տեղանունները նախ և առաջ հատուկ անուններ են, այսինքն՝ նրանց ամենից բնորոշը անվանողական արժեքն է: Մակայն տեղանունները, անվանողական արժեքից զատ, ունեն նաև այլ արժեք: Նրանք սովորաբար ունենում են տեղեկութային խորք, որի բացահայտման համար անհրաժեշտ է դրանք վերլուծել, դասակարգել, գտնել կառուցվածքային ու ծագումնաբանական օրինաչափություններ, պարզել դրանց ներքին ձևի արտալեզվական պայմանավորվածությունները:

Տեղեկութային խորք ասելով՝ նկատի ունենք տվյալներ

- այն լեզվի մասին, որով կազմվել է տեղանունը,
- այն ժողովրդի մասին, որ սովել է այդ անունը,
- այն մշակույթի մասին, որի շրջանակներում տրվել է անունը,
- այն ժամանակի մասին, երբ ծագել է անունը,
- այն տարածքի մասին, որտեղ ծագել և որին վերաբերում է անունը:

Իմաստային խորքից բացի՝ հետաքրքիր են նաև անվան խորհրդանշային արժեքը, տիպաբանական բնութագիրը, գործառական և բառակազմական շառավիղները, համանունները, հոմանիշները, տարբերակները:

Ամեն տեղանուն կարելի է ուսումնասիրել հետևյալ հայեցակետերով.

- տեղանվան բնույթը,
- ծագման ժամանակը և հազամանքները,
- ծագման լեզուն,
- բովանդակությունը և ստուգաբանությունը,
- կառուցվածքը և կազմությունը,
- հետագա տարածումը, փոխակերպումները, ճյուղավորումները, կիրառությունները,
- ուղղագրությունն ու ուղղախոսությունը, տառադարձումն ու հնչադարձումը:

Մույն հոդվածում առանձնացվել է տեղանունների մի համեմատաբար ոչ մեծ խումբ՝ *սար* բաղադրիչով կազմված լեռնանունները, և կատարվել է դրանց կառուցվածքային ու իմաստային քննություն: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում»¹ տեղ է գտել *սար* բաղադրիչով ավելի քան 300 լեռնանուն: Այս թիվը մեծ չէ լեռնային երկրի համար: Բայց պետք է նկատի ունենալ, որ կան հոմանիշ այլ բաղադրիչներ (լեռ, բլուր, դաղ, թափա և այլն), որոնք նույնքան կամ նույնիսկ ավելի արտադրողական են:

«Սար» բաղադրիչով լեռնանուններն ըստ տեսակի լինում են լեռնաշղթա, լեռնաճյուղ, լեռնաբազուկ, լեռնագագաթ, լեռ: Ըստ վերոհիշյալ բառարանի տվյալների՝

- լեռ են *Ամբերդասարը, Այրիսարը, Անդրքասարը, Աջասարը, Ասեղասարը, Արամասարը, Արարոց սարը, Արթունասարը, Արծաթասարը, Արջասարը, Բոխիսարը, Գարուսարը, Գորգիովտու սարը, Գռասարը, Գրասարը, Ելասարը, Եղջերվասարը, Ընձաքիսարը, Թթասարը, Իշխանասարը, Լանջասարը, Խթերու սարը, Խնձորի սարը, Ծաղկասարը, Ծառասարը, Ծխեկու սարը, Կարմիր սարը, Կաքավասարը, Կրակասարը, Կրասարը, Հաշտասարը, Հովասարը, Մանկասարը, Մեծ սարը (Մեծսարը), Մեղրիսարը, Նավասարդի սարը, Նիզասարը, Ոսկեսարը, Չալսարը, Չարագլուսարը, Պելսարը, Պղնձասարը, Պուտուկսարը, Մարակը (Մարակն), Միմսարը, Մմբատասարը, Վանքասարը, Տապանասարը, Տաք ջրի սարը, Ուխտի սարը, Քանասարը, Օձասարը, Օջախսարը* և այլն:
- Լեռնագագաթ են *Աղջկասարը, Ամպիսարը, Այծասարը, Անգեղասարը, Աչքասարը, Առնոսասարը, Բաղաջասարը, Գեղասարը, Գեղարդասարը, Գնդասարը, Գողթանասարը, Գութանասարը, Եզնասարը, Եղնասարը, Երկաթասարը, Զոհասարը, Թռչնասարը*

¹ Թ. Հ ա կ ո բ յ ա ն, Մտ. Մ ե լ ի ք-Բ ա խ շ յ ա ն, Հ. Բ ա բ ե դ յ ա ն, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (երեք հատորով), Եր., 1986-2001:

րը, *Լեռնասարը, Խաչիսարը, Խոտրովասարը, Ծաղկասարը, Ծովասարը, Կալերիսարը, Կարկտասարը, Կրորսարը, Կրասարը, Հարսնասարը, Հովասարը, Գկուքսարը, Մարտիկա սարը, Պահակասարը, Պայտասարը, Ռումբասարը, Սամսարը, Մարիսարը, Մարվարդը, Սեղան սարը, Սեմասարը, Սեւասարը, Սպիտակասարը, Մրբիսարը, Վահագնասարը, Վանքասարը, Վեցկեսարը, Վիշապասարը, Յողասարը, Յորնասարը, Փոցխասարը, Փոքրասարը, Զաջերի սարը* և այլն:

- *Լեռնաշղթա են Դալիսարը, Թեքսարը, Կատարասարը, Կողբասարը, Մթնասարը, Պաղասարը, Սալնասարը, Սարերը, Սեղան սարը, Կատուսարի, Ամուլսարի, Գեղասարի, Սամսարի, Փիրամսարի լեռնաշղթաները, Լեռնակա սարերը, Ուխտյաց սարերը, Օլթիի սարերը* և այլն:
- *Լեռնաճյուղ է Բռնաշենի սարը:*
- *Լեռնաբազուկ է Փելասարը:*

1. Լեռնանունների կառուցվածքային քննություն. Բառակազմական թուղթի վերլուծության արդյունքները հետևյալն են.

Պարզ են *Սար* և *Սարեր* լեռնանունները: Բաղադրյալ են *սար* բաղադրիչով մյուս բոլոր լեռնանունները: Ընդ որում՝ պարզ ածանցավորներ այս ցանկում չկան, բարդ են *Գամասար, Գեղասար, Գարուսար, Գռասար, Գրասար, Եզնասար, Թեքսար, Լանջասար, Թթասար, Չոհասար, Լճասար, Կովասար, Կեռասար, Պահակասար, Կելիդոնյան սար, Չոմագիսար, Չիթահանից սար* և այլն, բարդ ածանցավոր են *Արթունասար, Արտոյունասար, Գեղարքունյաց սար, Իշխանասար, Լուսավորչի սար, Կելիդոնյան սար, Ողմասարիք, Սառցակասար, Վանքասար, Տաղոնաց սար, Տապանասար, Զեխուտի սար, Թռչնասար, Կրորսար, Գկուքսար, Սեմակասար, Պահակասար, Սասնգվույն սայրն, Վեցկեսար* և այլն:

Կան նաև քերականական մասնիկ (հոլովիչ, հոգնակերտ, բայական վերջավորություն և այլն) պարունակող անուններ՝ *Զաջերի սար, Ուխտի սար, Տաշածսար, Ջրով Լորո սար, Չիթահանից սար, Գողթանասար, Բաղացսար, Աղջկասար, Ծխեկու սար, Խթերու սար, Գեղարքունյաց սար, Գեքլվա սար* և այլն:

Բարդ լեռնանունները կարելի է դասակարգել նաև ըստ հարադրական և համադրական ձևերի: Օրինակ՝ հարադրական են *Բերդի սարը, Գարոյի սարը, Գեքլվա սարը, Գորգեովտու սարը, Գեղարքունյաց սարը, Տաք ջրի սարը, Լուսավորչի սարը:* Համադրական են *Գանձասարը, Բոխիսարը, Բաղացսարը, Գեղասարը, Գեղասարը:*

Սար բաղադրիչը հիմնականում հանդես է գալիս եզակի թվով (օրինակ՝ *Եզնասար, Ծաղկասար*), բայց այն կարող է հանդես գալ նաև հոգնակի թվով (օրինակ՝ *Յալիճու սարեր, Սարեր, Օլթիի սարեր*): Բաղադրյալ լեռնանունների մեծ մասում *սար*-ը վերջնաբաղադրիչ է: Օրինակ՝ *Գարոյի սար, Գուքանասար* և այլն: Կա դեպք՝ *Արուսարդաղ (լեռ)*, երբ *սար* բաղադրիչը նախորդում է մեկ այլ վերջնաբաղադրիչի՝ չլինելով բառակազմում, այսինքն՝ միջնաբաղադրիչ է: Այս անվան մեջ փաստորեն երեք անգամ կրկնվում է հիմնաբառը (լրացյալը)՝ տարբեր լեզուներով և հոմանիչ ձևերով:

Մի ոչ մեծ խմբում *սար*-ը սկզբնաբաղադրիչ է: Օրինակ՝ *Սարակ, Սարակն, Սարի աղբյուր, Սարիսուրբ, Սարվարդ, Սարվանդ* և այլն: Կան նաև մի խումբ բառեր, որոնց սկզբնաբաղադրիչը թվում է, թե հայերեն *սար* արմատն է (օրինակ՝ *Սարի դաղ, Սարիթափա, Սարիկայա, Սարգուլ, Սարկում, Սարպուլաք, Սարու (լեռ), Սարիչայ, Սարիբուռուն, Սարուշեն* և այլն): Դրանք հիմնականում թուրքերեն են, և սկզբնաբաղադրիչը հայերեն *սար*-ին համանուն կամ հարանուն թուրքերեն *սարի*-«ղեղին» արմատն է՝ տարբեր աղավաղումներով: Այսինքն՝ *Սարի դաղ* նշանակում է «ղեղին սար», *Սարիթափա*՝ «ղեղին բլուր», *Սարիկայա*՝ «ղեղին ժայռ», *Սարգուլ*՝ «ղեղին վարդ», *Սարկում*՝ «ղեղին ավազ», *Սարպուլաք*՝ «ղեղին աղբյուր», *Սարու (լեռ)*՝ «ղեղին (լեռ)», *Սարիչայ*՝ «ղեղին գետ», *Սարիբուռուն*՝ «ղեղին սուրբ», *Սարուշեն*՝ «ղեղին շեն»:

2. Լեռնանունների իմաստային քննություն. Ըստ անվանման իմաստային հիմունքի դասակարգելիս առաջանում են հետևյալ ենթախմբերը:

ա. Մթագնած անվանումներ, գիտականորեն չստուգաբանվող անվանումներ՝ *Անրքասար, Անոսասար, Մարտիկա սար (Մարաթուկ), Միմսար, Սալնասար, Սամսար (Սամասար), Զանասար,*

բ. ստուգաբանված անվանումներ, որոնց հիմքում կարող է լինել.

- 1) Ռեյիեֆի որևէ հատկանիշ, որը կարող է արտահայտվել ուղղակիորեն կամ փոխաբերաբար՝ որևէ համեմատության հիման վրա, և վերաբերել՝
 - տեղանքի ձևին՝ բարձունք, հարթավայր, իջվածք, ցցվածք, փքվածք և այլն, օրինակ՝ *Ասեղասար, Գնդասար, Թեքսար, Կոթրսար, Կեռասար, Պոլոզսար, Տափասար, Խթեռու սար*, փոխաբերաբար՝ *Աչքասար, Եկոթսար, Նալսար, Պայտասար, Շղասար, Չաթալսար («երկճյուղ սար»), Պոռշի սար, Պուտուկսար, Սեղանասար, Սեղան սար, Մարաջուղ («սարաճյուղ»), Տաշածսար, Տապանասար, Ջանասար, Ուրասար (Ուռասար) («պալարասար»), Քոշասար («գույգ սար»),*
 - տեղանքի թողած տպավորությանը, հիմնականում՝ փոխաբերաբար, օրինակ՝ *Աղուսար Արևմտյան, Գեղասար, Պառավասար, Կոջասար («ծեք սար»), Ոսկեսար, Կզրլ սար («ոսկի սար»), Պելսար (Պելասար) («գիժ սար»), Փելասար («լավ երևացող սար»), Քյուտուսարը (Քյուտուզսար) («խռոված սար»),*
 - տեղանքի գերիշխող գույնին, օրինակ՝ *Կյաժսար, Գարասար (Կարասար, Դարայսար), Կարսիք սար, Չալսար, Սևասար (Սևսար), Սպիտակասար, Մարսար (Մարըսարդաղ) («դեղին սար»),*
 - անվանվող առարկայի չափին, օրինակ՝ *Մեծսար, Փոքրասար*, փոխաբերաբար՝ *Մանկասար, Մթնասար*,
 - անվանվող առարկայի տեղադրությանը և հարևան առարկաների հետ ունեցած տարածական հարաբերությանը, օրինակ՝ *Մենակսար, Մենսար, Տակսար, Աջասար, Լանջասար, Կատարասար*, փոխաբերաբար՝ *Այրիսար, Պահակասար, Սահմանասար*,
 - բուսածածկույթի առկայությանը կամ բացակայությանը, հիմնականում՝ փոխաբերաբար, օրինակ՝ *Քաչալ սար, Քյոսա սար, Անուլսար*,
 - կլիմայական առանձնահատկություններին, օրինակ՝ *Ամպիսար, Կարկտասար, Հովասար, Պաղասար, Սառնասար, Տաք սար, Ցողասար*,
 - լեռան հրաբխային գործունեությանը՝ *Կրակասար, Ռումբասար, Ուռումբա սար*:
- 2) Ջրային որևէ հատկանիշ, որը կարող է լինել՝
 - լիճ, օրինակ՝ *Լճասար, Ծովասար, Յալիճու սարեր*,
 - աղբյուր կամ դրա հետ առնչվող ավազան, օրինակ՝ *Աղբյուրի-սար, Գռասար, Մարակ (Մարակն), Մարբուլախ, Տաք ջրի սար, Սառցակասար, Ջրով Լորո սար*,
- 3) Բուսանուն, որը կարող է լինել՝
 - ծառ կամ թուփ, օրինակ՝ *Բոխիսար, Ծառասար, Քեխուտի սար*,
 - պտուղ, օրինակ՝ *Գարուսար, Թթասար, Խնձորի սար, Ցորնասար*,
 - ծաղիկ, օրինակ՝ *Ծաղկասար, Մարվարդ*,
 - խոտ, կանաչեղեն, օրինակ՝ *Շրեշտասար (Շիրիշի սար)*:
- 4) Կենդանու անվանում, որը կարող է լինել՝
 - թռչուն, օրինակ՝ *Թռչնասար, Կաքավասար, Ջրով Լորո սար*,
 - ընտանի կենդանի, օրինակ՝ *Այծասար, Եզնասար, Կովասար (Կովսար), Ցուլասար*,
 - վայրի գիշատիչ, օրինակ՝ *Առյուծասար, Արջասար, Արջիսարը, Գայլասար*,
 - որսի կենդանի, օրինակ՝ *Լապաստրակասար, Եղնասար, Եղջերասար, Եղջերվասար*,
 - սողուն, օրինակ՝ *Վիշապասար, Օճասար*:
- 5) Արտադրական անվանում, որը կարող է վերաբերել՝
 - ընդերքի հանածոներին, օրինակ՝ *Աղասար, Արծաթասար, Գանձասար, Երկաթասար, Կրասար, Մարմարսար, Պղնձասար*,
 - տվյալ տեղանքում կատարվող աշխատանքային գործունեությանը, օրինակ՝ *Գութանասար, Կալերիսար, Չիթահանից սար*:
- 6) Հասարակական (ընկերային) հատկանիշ, օրինակ՝ *Աղջկասար, Հաշտասար, Հարսնասար, Դուլասար, Իշխանասար, Մեծ Իշխանասար, Քաջերի սար*:
- 7) Մարդանուն, որը կարող է լինել՝
 - թագավորի անուն, օրինակ՝ *Լևոնասար, Խոսրովասար, Սմբատասար*,
 - այլ իշխանավորի կամ հասարակ անձի անուն, օրինակ՝ *Արդյանհասար, Արդուլսար Աբուսարդաղ, Ավագիսար, Արթինասար (Արտթյունասար), Գարոյի սար, Ընձաքիսար, Խաչումասար, Խաջիլուսար, Խաչուիսար, Կյուլխասի սար, Հայտարի սար*,

Մանիզարի սար, Մավասի սար, Մուրադսար, Մանդուխտասար, Մահակասար, Մոնասար, Մուլեյմանասար, Վանեսասար, Վեցկեսար, Ունանիսար:

8) Ցեղանուն կամ տոհմանուն, օրինակ՝ *Անգեղասար, Արամասար, Բեյ-սար (Բելվասար), Նեբրովթ (Նեբրովթի սար, Նամբութա սար), Մեմասար, Մալականի սար, Պետրեցվոց սար, Սասնցվույն սայրն:*

9) Մշակութային հատկանիշ, որը կարող է վերաբերել՝

- կրոնական ըմբռնումներին, սրբերին, օրինակ՝ *Արարոց սար, Չոհասար, Լուսավորչի սար, Խաչիսար, Մեծ Նահատակի սար, Նահատակասար, Սարին Մուրբ Սարգիս, Մուրբ Գևորգի սար, Սարիսուրբ, Սրբիսար, Մուրբ սար, Վահագնասար, Ուխտասար, Ուխտի սար, Ուխտյաց սարեր,*

- մշակույթի հուշարձաններին, շինություններին, օրինակ՝ *Ամբերդասար, Բերդի սար, Գեղարդասար, Վանքասար, Քիլիսա սար,*

- կենցաղային-ազգագրական երևույթներին, օրինակ՝ *Նավասարդի սար, Չարագլուսար, Գրասար, Զոչի սար:*

10) Հարևան այլ տեղանուն, որը կարող է լինել՝

- բնակավայրի անուն, օրինակ՝ *Բալովտու սար, Բոնաշենի սար, Լեռնակա սարեր, Խանդրիսու սար, Ծխեկու սար, Կոտուց սարը (Քեթուզար), Կուրթանասար, Հաղբուքի սար, Մաստարայի սար, Նիջասար, Մելիսի սար, Մալխուսի սար, Տաղոնաց սար, Քաղատակա սար,*

- գավառի անուն, օրինակ՝ *Բաղացսար, Գեղարքունյաց սար, Գողթանսար, Կապրուսար (Կյուպրուսար, Քյափրուսար) (նախկին Կյուպարա մահալի՝ գավառակի անունից), Կողբասար, Մեղրիսար, Նիգասար, Ողմասարիք, Մասնո սար, Օլթիի սարեր,*

- գետահովտի անուն, օրինակ՝ *Գորգհովտու սար, Փշովտի սար:*

Մեզ չհաջողվեց պարզել մի քանի անվանումների ծագումն ու իմաստը՝ *Կասուսար, Կելիդոնյան սար (Քելիտոնյան սար), Հալվաներ-սար, Հաֆդասար, Լույլասար, Մնավասար, Շիպասար, Չիզասար, Փովերու սար, Փիրամսար* և այլն:

Կարելի է կատարել նաև դասակարգում ըստ անվանման իմաստային անմիջականության: Այս հատկանիշով առանձնանում են հետևյալ խմբերը.

- փոխանցված անուններ, այսինքն՝ սկզբնապես իբրև այլ տեղանուն առաջացած, հետո նույնությամբ լեռնանուն դարձած միավորներ: «Սար» բաղադրիչով անունների շարքում այդպիսի օրինակ չկա, քանի որ դրանք բոլորն էլ բնականաբար, ի սկզբանե կազմվել են իբրև լեռնանուններ: Հազվադեպ հանդիպում են «սար» վերջնաբաղադրիչով անուններ, որ միայն ոչ լեռնանուն են (օրինակ՝ *Քանիսար* գյուղ), բայց ակնհայտ է, որ սկզբնապես դրանք եղել են լեռնանուն, հետո փոխանցվել են մեկ այլ առարկայի, իսկ իբրև լեռնանուն կամ վերացել են, կամ պարզապես չեն արձանագրվել բառարանում:

- այլ տեղանունների հիման վրա կազմված լեռնանուններ, օրինակ՝ *Ամբերդասար, Գեղարդասար, Բալովտու սար, Բոնաշենի սար, Լեռնակա սարեր, Խանդրիսու սար, Մեղրիսար, Նիգասար, Ողմասարիք, Մասնո սար, Օլթիի սարեր, Գորգհովտու սար, Փշովտի սար* և այլն:

- զուտ լեռնանուններ: Սրանք իրենց հերթին լինում են՝

ա) հասարակ անունների և ոչ տեղանուն հատուկ անունների հիման վրա կազմված լեռնանուններ, օրինակ՝ *Մեծսար, Թեքսար, Մթնասար, Տաշածսար, Տաք ջրի սար, Խնձորի սար, Եղնասար, Երկաթասար, Գութանասար, Իշխանասար, Հարսնասար, Լեռնասար, Վանեսասար, Անգեղասար, Արամասար, Վահագնասար, Լուսավորչի սար, Բերդի սար, Վանքասար, Ուխտասար, Գրասար, Զոչի սար* և այլն:

բ) պարզ լեռնանուններ, որոնք են՝ *Սար, Սարեր*: Սար բաղադրիչով մի շարք զուտ լեռնանուններ ունեն նաև իրենց պարզ տարրերակը, օրինակ՝ *Անդրքասար - Անդրք, Մնավասար - Մնավ, Մարութկա սար - Մարաթուկ, Միմսար - Միմ* և այլն:

Այս դասակարգումը աշխարհագրական միավորների, տվյալ դեպքում՝ լեռների վերաբերյալ լրացուցիչ հետաքրքիր տեղեկություններ է տալիս, որոնք բացահայտվում են անվան վերլուծության միջոցով և այլ կերպ կարող են հայտնի չլինել: Իհարկե, անունների մի մասն այնքան հասկանալի կառուցվածք ունի, որ տեղեկությունն ինքնուրուից չի բացահայտվում: Օրինակ՝ Շրեշտասար անվանումը հուշում է, որ տվյալ

լեռան լանջերը հարուստ են շրեշտ (շրեշ, շիրիշ) ուտելի բույսով: Այլ դեպքերում անվանումը կարելի է տարբեր կերպ մեկնաբանել, և միայն հավելյալ գիտելիքն է թույլ տալիս իմանալու անվան իսկական իմաստը: Օրինակ՝ Գ-անձասար կոչվել է Արցախի հայտնի լեռը, քանի որ նրա ընդերքում արծաթի հանքեր կան: Որոշ դեպքերում էլ անվան իմաստը առայժմ մնում է անհայտ: Չեն օգնում նաև ժողովրդական ստուգաբանությունները: Մնում է հուսալ, որ գիտական հետազոտությունները աստիճանաբար հիմք կստեղծեն բացահայտելու Անդոք, Առնոս, Միմ, Նիգ, Ողմ (Ողմ), Նիշ (Նիշ) և նման այլ հնագույն անունների ծագումն ու իմաստը:

СТРУКТУРНО-СЕМАНТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ НАИМЕНОВАНИЙ ГОР С КОМПОНЕНТОМ САР (սար)

___ Резюме ___

___ С.Закарян ___

В данной статье рассматривается небольшая группа топонимии с компонентом сар (սար) и дается их структурно - семантический анализ.

Выясняется, что наименования гор, как составные лексические единицы, оформляются на следующих принципах: признак рельефа (форма, цвет, мера); признак воды (озеро, река, источник); имена растений; признак социального общества; имя человека (ономастика); имя племени или клана; признак культуры (религия, исторические памятники, традиции); соседнее топонимическое имя и т.д..

Մաթենիկ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՄԱԿԱՆՎԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Մականունը իր հստակ բառակազմությամբ վաղուց հայտնի ըմբռնում է հայերենում և ունի հետևյալ իմաստային տարբերակները՝ ավել անուն (ավելանուն), ածական անուն, վերադիր անուն, մակդիր, կեղծանուն, փութ /փոթ/ փուտ անուն, իսկ արևմտահայերենում՝ նաև ազգանուն, որոնք արդյունքում հանգում են «անվան վրա դրվող» ընդհանուր իմաստին: Հր. Աճառյանը դրանք կոչում է ածական անուն և գրում. «Երբ համայնքը մեծանում է... սակավաթիվ անունները այլևս բավական չեն, ուստի անուններին պիտի ավելացնեն զանազանիչ մի երկրորդ միջոց: Չարգացման այս առաջին աստիճանը կազմում է ածականը»:¹

Վերջին տասնամյակներում մականունը հայտնվել է նաև անվանագիտական տերմինաբանության ոլորտում և անձնանվանագիտության (մարդանվանագիտության)² կարևոր հասկացություններից է, քանի որ, ինչպես համոզվեցինք, Հր. Աճառյանը մականվան, ըստ նրա՝ ածականի հանդես գալը անձի անվանման բանաձևում համաարում է «զարգացման առաջին աստիճանը»:

Եթե արևմտահայերենում մականունը այսօր ևս հստակ սահմաններ ունի և նույնանում է ազգանվան հետ, ապա արևելահայերենում նշանակում է այն ամենը, ինչ դրվում է անվան վրա, բացի ազգանունից:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, մականունը կամ ածական անունը, ավելանունը, ի սկզբանե անհատի անվանը ուղեկցող միավոր էր: Մեր էպոսը ասվածի լավագույն ասպացույցներն է տալիս՝ Առյուծաձև Սիեր, Չենով Օհան, Յ... Վերգո: Հիշենք նաև հնդկացիական ցեղերի զանազան բնիկների անվանագիտական համակարգերը՝ «Օձ աչք», «Արագոնթաց նետ» և այլն:

Մականվան պատճառաբանվածությունը երբեմն շատ տարօրինակ, անսպասելի դրսևորումներ է ունենում, և հաճախ կապը մականվան բնիմաստի և մականունը կրողի միջև բավականին դժվար է լինում գտնել: Վերջերս առնչվեցինք հետևյալ դեպքին վիրահայերի կյանքից: Միրզոյան ազգանունով մի աշակերտ ստացել է «քիսաչի» մականունը միայն այն պատճառով, որ Թիֆլիսում կա հայտնի «Միրզոյի բաղնիքը», և ահա դրա հետ ոչ մի կապ չունեցող տղայի ազգանունը կապվել է այդ բաղնիքի հետ, և նա որպես մականուն ստացել է բաղնիքին խիստ բնորոշ աշխատողի անունը: Պակաս ուշագրավ չէ Գյումրի քաղաքի բնակչուհի տիկին Մուսանի մականունը՝ «մեռել լողնող»: Այս մականունը նա ստացել է այն պատճառով, որ մանուկ հասկում վախեցել է մահացած տատին տեսնելուց: Բոլոր ժողովուրդների անվանագիտական համակարգում հեռանալով իրենց բնիմաստից, մականունները, բարձրացել են անձի անվան աստիճանի: Օրինակ, հայերենում դրանք ներկայանում են հստակ իմաստային խմբերով՝ ա) Բնություն, բնական երևույթներ՝ Յուլակ, Վարազդատ, Ծաղիկ, Շողիկ, Շողեր, Յողիկ, Ծովիկ, Ծովինար, Փայլակ, Լուսին, Արև, Արեգ, Գարուն, Վարդերես:

բ) Անհատի ներքին և արտաքին հատկանիշներ՝ Խաժակն, Վարդգես, Հրայր, Հրաչյա, Նազան, Կորիկ, Փայխան, Զաղցրիկ, Թանգ(իկ), Պարթև, Միրուն, Պերճ, Խելոք, Խոստիկ, Խումար, Չանազան, Չարդար:

գ) Արտաքին աշխարհի առարկաներ՝ Վեմ, Վահան, Գոհար, Մանյակ, Շաքար, Կորկոտ, Մանուշակ, Մերիկ, Քնար, Չմբուխտ, Սաթուն, Ոսկի, Պարույր:

Անկասկած, մականունների շարքը պետք է դասվեն նաև «արհեստ, զբաղմունք, մասնագիտություն» իմաստային դաշտի միավորները, որոնք հետագայում, հատկապես արևմտահայերի մոտ դարձել են ազգանվանակերտ հիմքեր և այսօր էլ սփյուռքահայության շրջանում ազգանունների հիմնական զանգվածն են կազմում՝ Դոլաբչյան (կահույքագործ), Փինաջյան (կռչիկ վերանորոգող), Բուլգուրջյան (բլրուր պատրաստող և վաճառող), Շարքաբջյան (զինեգործ), Փլավչյան (փլավ պատրաստող), Նենեջյան (դաղձից օշարակ պատրաստող և վաճառող), Բալոչյան (ձկնորս):

¹ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Եր., 1962, էջ 355:

² Հմմտ., Տ. Ավետիսյան, Հայկական ազգանուն, Եր., 1987:

Նույն հիմնավորմամբ՝ տեղանվանական հիմքերով կազմությունները ևս պետք է դասել մականունների շարքը՝ բասենցի (Բասենցյան), ալաճորցի (Ալաճորյան), թոխարցի (Թոխարցյան), բլրցի (Բլրցյան), զեյթունցի (Չեյթունցյան), իզմիրցի (Իզմիրցյան): Այս կարգի ազգանվանական հիմքերը քննված են պրոֆ. Տ. Ավետիսյանի «Հայկական ազգանուն» արդեն նշված աշխատության մեջ: Մեզ հասած հրապարակումների և անձնական շփումների շնորհիվ հայտնի է դարձել, որ Հ. Հարությունյանը ավարտել է տեղանվանական, իսկ Հ. Բարխուդարյանը՝ «արիեստ, զբաղմունք, մասնագիտություն» մականվանական հիմքերով ազգանունների ուսումնասիրությունը:

Մականունները ժողովրդի կենցաղում շատ լայն տարածում ունեցող միավորներ են և պատահական չէ, որ XIX դարի առաջին տասնամյակներում, երբ արևելահայերի համար զանգվածաբար ազգանուններ էին ձևավորվում, պապանուններին, տոհմանուններին, հայրանուններին զուգահեռ ազգանվակերտության երկրորդ աղբյուրը և՛ իր նշանակությամբ, և՛ տեսակարար կշռով մականունն էր: Մականվան նկատմամբ հետաքրքրությունը միայն ավաճում չէ, որ սահմանափակվում է: Մեր օրերում ազգային առանձնահատկությունների նկատելի կորստի և գլոբալացման պայմաններում աստիճանաբար անհետանում են նաև մականուններն ու տոհմանունները: Այս առումով բավական է համեմատել XX դարի սկզբի, կեսերի և մեր օրերի Գյումրին, որը սրամիտ, ինքնատիպ, դիպուկ մականունների շտեմարան էր: Գյումրեցիների հումորի զգացումը հաճախ արտահայտված է հենց նրանց մականուններում: XX դարի սկզբներում գրեթե բոլոր գյումրեցիները մականուններ են ունեցել: Մականունով գյումրեցիներից հատկապես ճանաչված է Պողոս Մուկուչը (Մկրտիչ Դազարոսի Մելքոնյան), որն իր մականունը ստացել է բարձրահասակ լինելու պատճառով: Պողոսի անվան հետ են կապվում շատ առակներ ու սրախոսություններ, և այս առումով նա մեծապես նպաստել է հայ բանավոր երգիծանքի զարգացմանը: Երբ Պողոսին հարցնում են, թե ձեր քաղաքում ինչու՞ են այդքան եկեղեցիներ կառուցել, պատասխանում է.

-Նախ՝ օր Աստված մեզմից գոհ էղնի, և հետո՝ մարդիկ չբեն թե, գյումրեցիք ժլատ են:³

Մականունով ճանաչված գյումրեցիներից են եղել մաշինիստ Մստոն, որ ձեռքերը կողքին թիք-թիք դրած անցնում էր գնացքի տակով, մսի կոմբինատի Միսնոյ Մնացր, որ ութսունից իննսուն կիլոգրամ միս էր կապում իր վրա, Անտառավան քաղամասի Տախոռ, որն ապրել է հարյուր տասնյոթ տարի և քսան որդի է ունեցել, Փափախանի պատշար Իսկյալա Կորյունը, որ առանց իսկյալա կապելու պատը շարում էր մինչև ծածկը, Քիթ Շուն, որի քթի երկարությունը 11 սմ էր:

XX դարի կեսերում մականուններ ունեին բոլոր ճանաչված արիեստավորները՝ Ֆանտազի Արտաշը (նորածև կոստյումներ և վերարկուներ է կարել), Դամսկի Խորենը (հագուստներ է կարել միայն կանանց համար), Շափխջի Գևորը (զվխարկներ է կարել), Շուշունց Վաղոն (ապակի է գցել), Դրագոն Կարոն (հագուստ է կարել քաղաքի զինվորականների համար), Կաֆար Աղասը (թելեր և հագուստներ է ներկել), Մապոժնիկ Մուկուչը (քաղաքի լավագույն կոշկակարն է եղել), Ֆայտոնջիները՝ Վիսյոլի Վարդանը (ուրախ բնավորություն է ունեցել), Ֆայտոն Ալեքը, Կենտ ձի լծող Վանուշը, Ֆայտոնջի Բարիկենց Հայկը, վարորդները՝ Բեգռեմոնտ Խաչոն (մեքենան միշտ անսարք վիճակում է եղել), Լիժնիկ Սոսը (մեքենան արագ է վարել), Թիպի Աշոտը (բռնկուն բնավորություն է ունեցել), Բոստ ջանը (շատ է օգտագործել այդ արտահայտությունը), Ուզուն Գարեգինը (բարձրահասակ լինելու համար), ռաբիսի երաժիշտները՝ Իզվեստնի Արամայիսը (ճանաչված է եղել), Նեգր Վալողը (թխամորթության համար), Դուսքյանը Հրաչը (շատ լավ է երգել «Դուսքյանդի դուրան» երգը) և շատ ու շատ ուրիշներ:

Այս շրջանում տարածված են եղել նաև մականվանական տոհմանունները՝ Տանձիպոչենք (սրանց տոհմին բնորոշ է եղել նիհարությունը), Չախալօղլենք (աչքերի գույնի պատճառով), Քեֆչիները (ուրախ բնավորություն են ունեցել), Եղունգ աշողենք (զուշակությամբ են զբաղվել), Մագմանենք (պարանագործներ են եղել), Չախամախովենք (տոհմահայր Հ. Չախամախյանը հրացան է պատրաստել), Չպլլենք (Վարդան պապը գնացել է գետ լողանալու՝ ընկերները շորերը գողացել են), Դըրմբենք (մեծ գույն են հատկացրել Մուրք Աստվածածին եկեղեցու վերանորոգման համար), Դայֆա-

³ Հր. Ի կ ի լ ի կ յ ա ն, Գյումրին, Պողոս Մուկուչը և երգիծական մանրասպատումներ, Եր., 1989:

ջոնք (սրճարան են ունեցել, որտեղ միայն սև սուրճ են մատուցել), Չոլախովենք (ազգում ուռքից արատավոր մարդիկ են եղել):

Այսօր Գյումրիում, կարելի է ասել, չկան մականվանական տոհմանուններ, բայց տարածված են մականունները, որոնք հիմնականում կապվում են անհատի ներքին ու արտաքին հատկանիշների, զբաղմունքի հետ:

ա) Արտաքինի հետ կապվող մականուններ՝ ճուտ Հենդո (փոքրամարմին է), Ժուլաի Մուկուչ (ղեղնամորթ է), Բռակ Մուրեն (տձև մարմին ունի), Մուկ Լյովա (թխամորթ է), Դոզլուխ Արմեն (մեծ գլուխ ունի), Քոլոզ Հայկ (տարվա բոլոր եղանակներին զլխարկով է ման գալիս), Բիձուկ Արտյոմ (թեև շատ երիտասարդ է, բայց մազերը սպիտակել են), Չալկա Գագո (զլխին սպիտակ մազերի փունջ կա), Գմփո Օնիկ (շատ գեր է), Մատկած Հենդո (նիհար է):

բ) Ներքինի հետ կապվող մականուններ՝ Դուռնոյ Միշա, Դուրին Մաշիկ, Դամբուլ Ավո (հիմար լինելու համար են ստացել այդ մականունները), Նավս Բարսեղ, Թարախ Երվանդ, Աֆերիստ Մարտին (իրենց էությունը խորամանկ մարդիկ են), Բառաղի Աշոտ (ոչ մեկին ոչ մի հարցով չի օգնել), Քեֆչի Աշիկ (ուրախ բնավորության համար), Կոմայրուտր Գագո (շատ խելացի է), Հարգանք Խաչո (շատ հարգված մարդ է), Բեզդուխ Արմեն (զիջող և հարմարվող բնավորություն ունի):

գ) Ջբաղմունքի հետ կապվող մականուններ՝ Ապտեկ Միշա (ղեղագործ), Կուկո Անո (իրենց քաղում կաթ վաճառող), Դեղ Բաֆ (մանուկ հասակում սիրել է պատերը փորել), Կոմ Հայկ (շուկայում բաժակով օղի վաճառող), Դավիենի Մոնա (բուժքույր՝ թաղի բոլոր բնակիչներին առաջին բուժօգնություն ցույց տվող), Ժելե Գագո (վարսավիր):

Մեր խորին համոզմամբ՝ ժամանակն է ուսումնասիրել դրանք և իբրև ազգային արժեքներ պահպանել սերունդների համար: Ասվածից ելնելով՝ մենք ձեռնամուխ ենք լինում Գյումրու, Շիրակի մարզի և հարակից շրջանների, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այլ վայրերի մականվանական համակարգի ուսումնասիրությանը: Այն կկատարվի անվանագիտության մեջ լայնորեն տարածված եղանակով՝ բառակազմական, իմաստային և արեալային վերլուծություններով:

Ասվածից գառ, օգտվելով Տ. Ավետիսյանի «Հայոց ազգանունների բառարանի»⁴ ընձեռնած փաստերից, նպատակ ունենք ուսումնասիրել նաև մականվանական հիմքերով ազգանունների ամբողջությունը: Թեմայի հետ կապվող նյութերի հավաքումն իր հիմնական մասով ավարտված է: Դրանք ընդգրկում են Գյումրին և հարակից գյուղերն ու քաղաքները՝ Ախուրյան, Ագատան, Հովիտ, Ջրառատ, Վահրամաբերդ, Ամասիա, Աշոցք, Թորոս, Մեպասար, Մեծ Քեթի, Փոքր Քեթի, Փոքր Մարիար, Արթիկ, Մարալիկ, Շիրակամուտ, Մեծ Պարնի, Հայկասար, Պեմզաշեն, Շենավան, Մեծավան, Ծաղկաբեր, Արևշող, Սարչապետ: Մեր առջև դրված խնդրի լուծումը մեր կարծիքով կզա իր համեստ լուծման ներդրելու հայկական անվանագիտական համակարգի ուսումնասիրության մեջ:

ВОСПРИЯТИЕ ПСЕВДОНИМОВ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

___ Резюме ___

___ С. Агабабян ___

Псевдоним является основным понятием такой науки о языке как ономастика. Если в восточно-армянском языке псевдоним идентичен фамилии, то в западно-армянском языке обозначает все то, что приписывается к имени, кроме фамилии.

Мы глубоко убеждены в том, что настало время изучить их и сохранить для потомков, как национальную ценность. Из сказанного следует то, что мы взяли за изучение системы псевдонимов в Гюмри, в Ширакском регионе и вне его.

⁴ Տ. Ավետիսյան, Հայոց ազգանունների բառարան, Եր., 2000:

О ВЗАИМООТНОШЕНИЯХ ЗНАЧЕНИЯ СЛОВА И ПОНЯТИЯ

Сопоставление фактов полисемии слова в разных языках дает основание полагать, что в тематических группировках слов прослеживается определенная повторяемость отношений между носителями прямого и переносного значений (ср., например, соотношение разноязычных лексических форм со значением 'часть тела → заболевание этой части тела', 'тип голоса → певец с таким голосом').

Однотипность их семантического варьирования, на наш взгляд, определяется в конечном счете всеобщим характером внутрисловных таксономических отношений, индуцированных логическими связями между выражаемыми понятиями. К сожалению, весь спектр внутрисловных таксономических отношений ('общее - частное', 'класс - подкласс', 'множество - подмножество') продолжает оставаться прерогативой логики и не является предметом глубокого изучения в языкознании.

Между тем в сложившейся лингвистической ситуации, характеризуемой возросшим интересом к связям логики и языкознания, каждый из отмеченных членов таксономических отношений должен быть постулирован не только в качестве факта логоса, но и в качестве факта лексиса. Этого требует парадигматика всякого слова, которая не исчерпывается возможностями синонимических, омонимических и прочих собственно лингвистических связей. Она предполагает и другие виды отношений и прежде всего семантико-сопоставимые (родовые и видовые), модельные для всей теории достоверных рассуждений о слове и их интерпретации.

Нами предлагается характеристика двух типов внутрисловных лексических отношений – таксономических и собственно лингвистических. На основании данных по сопоставительной лексикологии выдвигается тезис о абсолютности первых и реляционности вторых.

Таксономические отношения моделируются логическим восприятием картины мира, примерно одинаковым для всех людей вне зависимости от того, на каком языке они выражают свои мысли. Поэтому они "наднациональны", универсальны. В отличие от них лингвистические отношения предопределяются структурой конкретного языка. Поэтому они национальны, индивидуальны. В диалектическом единстве этих двух типов познания действительности опорной является таксономия, хотя иногда доминирующими оказываются чисто языковые факторы (ср., например, разноименные и одноименные обозначения 'человек' и 'мужчина' в русском и английском).

Существование в слове некоторого таксономического отношения, имеющего логический прообраз, - залог того, что предмет лексикологического анализа должен быть оснащен таксономическими описаниями. Сказанное позволит приблизиться к выявлению скрытых оснований единства двух модусов слова, к пониманию механизма их синкретизма и нейтрализации. Базой для проведения серьезных исследований в области сравнительной лексикологии может и должен быть хороший идеографический словарь.

Наряду с несомненными успехами армянской и русской лексикографии нельзя не видеть и столь же очевидных ее недостатков. Если со стороны качества словари армянского и русского языков вполне сопоставимы с аналогичными словарями таких, например, языков, как английский, французский, немецкий и испанский, то со стороны разнообразия типов этого сказать нельзя. Такое положение трудно признать нор-

мальным. Отсутствие у нас словарей определенных типов и в первую очередь идеографических словарей болезненно ощущается на результатах сопоставительных исследований в области лексикологии.¹

Между тем идеографический тип словаря хорошо разработан за рубежом: П. Роже, Э. Блан, Ф. Дорнзайф, Х. Касарес.² Первым шагом к созданию указанных словарей должно стать критическое осмысление опыта зарубежной лексикографии в этом вопросе.

Опыт создания идеографических словарей за рубежом показывает, что лексикографическая интерпретация отдельных групп лексики изучаемых языков должна основываться на создании единой классификации понятийного содержания лексики.

Несмотря на свою многоликость, многоплановость, реальный мир, опосредованно отражающийся в лексике, един. Все события, предметы, процессы могут рассматриваться как проявления движущейся материи. Их взаимосвязь подчеркивается наличием целого ряда объективных законов движения материи, имеющих универсальный характер. Коррелятом единого мира в познании является единое знание, закрепленное в понятиях.

Одной из форм фиксации понятий является лексика языка. Значит, содержательная, понятийная сторона лексики может быть систематизирована по типу и подобию систематизации событий, предметов и процессов реального мира.

В основе сказанного лежит тезис о неразрывной связи языка и мышления. Мышление отражает динамический процесс познания человеком действительности и формирует знание человека. Знание, следовательно, есть продукт осмысления людьми предметов и явлений действительности, законов природы и общества. Действительность, отражающаяся в понятиях, не есть хаотическое нагромождение разрозненных фактов, а есть строгая структура.

Поскольку наше знание о мире непрерывно развивается, постольку постоянно совершенствуется и лексический организм языка. Новые слова не просто добавляются к уже существующим, а помещаются в ранее сложившуюся в нашем сознании систему. Эта система, естественно, должна быть до определенной степени аналогичной системе действительности. Иными словами, мышление имеет общечеловеческую природу, и поэтому смысловой континуум общ для всех языков. Однако каждый конкретный язык членит его специфично и особенно. Аналитическая сила и уровень развития языка характеризуются степенью вербальной детализации каждого участка этого континуума.

Таким образом, отражение того или иного отрезка смыслового континуума является важной задачей сравнительной лексикологии. В ее успешном решении может и должен оказать помощь идеографический словарь, поскольку он дает в руки исследователя целые группы слов, соотносящихся с определенным языком.

Чтобы соотнести слово одного языка со словом другого языка, надо знать, какое место занимает каждое из них в соответствующих множествах. Накладывая друг на друга тематически организованную лексику

¹ В. Морковкин, *Идеографические словари*, М., 1970.

² P. R o g e t, *Thesaurus of English words and phrases classified so as to acilitate the expression of ideas and assist in literary composition*. Lnd., 1852; E. Blanc. *Dictionnaire universel de la pensne alphabetique, logique et encyclopedique*. Lyon, 1899; F. Dornseiff. *Der deutshe Wortschatz nach Sachgruppen*. Berlin und Leipzig, 1934; J. Casares. *Diccionario ideologico de la lengua Espanola*. Barcelona, 1959.

разных языков, можно увидеть, в какой мере слова отражают уровень представлений разных народов о тех или иных явлениях.

Создание классификации понятий потребует от авторов определенного решения проблемы взаимоотношения значения слова и понятия. По справедливому мнению Р. Халлинга и В. Вартбурга,³ каждое слово имеет общее значение, которое при употреблении слова реализуется в окказиональных значениях. Помимо этого, в процессе функционирования слова как коммуникативной единицы из его значения вычленяется некое ядро, постоянное для всех употреблений. Этим ядром является логическое понятие. Понятия, будучи связанными, но не слитыми со словами, живут относительно самостоятельной жизнью, что обуславливает возможность их отдельной от слов классификации.

Таким образом, можно утверждать, что природа слов-знаков допускает возможность двойной группировки слов: а) по близости звучания; б) по смысловой близости.

Реализация первой возможности приводит к созданию алфавитных словарей. Их сильной стороной является то, что они предоставляют значительное удобство для наведения различного рода справок о любом известном нам по звучанию слове. Это обстоятельство и необычайная легкость азбучных слов привели к доминирующему положению алфавитных словарей. Мы настолько привыкли к алфавитному расположению слов в словарях, что оно кажется нам наиболее удобным и единственно возможным. Между тем это не совсем так. Соображения практического удобства оттесняют на второй план осознание того, что система расположенных по алфавиту слов совершенно не соотносится с системой наших знаний о мире.

Альтернативой алфавитному расположению слов является размещение их по смысловой близости. В этом заключается не только уникальность идеографических словарей, но и крайняя их лингвистическая востребованность. Развитие идеи смысловой классификации лексики связано с проблемой так называемого всемирного языка. Испокон веков люди не могли примириться с тем, что они говорят на разных языках. Древняя тоска людей по всеобщему языку нашла отражение в известной библейской легенде о Вавилонской башне. Одно из направлений в создании всемирного языка исходило из возможности логической классификации того, что может быть предметом общечеловеческого разума.

ԲԱՌԻՍԱՍՏԻ ԵՎ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

___ *Ամփոփում* ___ ___ *Ս. Գրիգորյան, Վ. Սաֆյան, Յ. Սաֆյան* ___

Համեմատելով տարբեր լեզուներում բառի բազմիմաստության դրսևորումները՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ գոյություն ունեն բառի ուղղակի և փոխաբերական իմաստների միջև դրսևորվող հարաբերությունների որոշակի կրկնություններ:

Բառի ներքին տաքսոնոմիկ հարաբերությունների լայն շրջանակը (ընդհանուր –մասնավոր, դաս–ենթադաս) դեռևս մնում է տրամաբանության ուսումնասիրության կենտրոնում և չի հասցրել դառնալ լեզվաբանության համապարփակ ուսումնասիրության առարկան: Հոդվածում նշված տաքսոնոմիկ հարաբերությունների անդամները պետք է դիտվեն և՛ որպես տրամաբանական, և՛ որպես բառագիտական փաստեր: Տաքսոնոմիկ հարաբերությունները ի հայտ են գալիս բացարձակ, իսկ լեզվաբանականները՝ որպես հարաբերական դրսևորումներ:

³ R. H a l i g und W. von Wartburg. *Begriffsystem als Grundlage für die lexicographic. Berlin, 1952.*

К ВОПРОСУ О СИСТЕМНОСТИ КОННОТАЦИИ

Положение о системной организации лексики, о необходимости системного подхода при ее изучении является основополагающим в современном языкознании. “В настоящее время, по-видимому, трудно найти лингвиста, который отстаивал бы необходимость изолированного анализа значений отдельных слов, который не говорил бы о преимуществах системного изучения лексики... Требование системного изучения лексики стало почти аксиомой...”¹

Одним из путей исследования лексической системы языка является выделение и описание отдельных микросистем: лексико-семантических, тематических, лексических, предметно-понятийных и других групп слов.

Из положения о системном характере лексики вытекает необходимость признания различительного характера значений слов.²

Лексическое значение нами рассматривается как единство двух аспектов – денотативно-сигнификативного и коннотативного. Исследования значений слов показали наличие смысловозначительных противопоставлений в лексической системе языка. Включение эмоциональных, оценочных, экспрессивных и стилистических элементов в лексическое значение слова делает правомерным постановку вопроса о существовании в лексической системе языка противопоставлений по элементам, составляющим коннотативный аспект лексического значения слова, т.е. вопроса о существовании системности в коннотации. Выявление и анализ подобных противопоставлений позволит углубить понятие системных отношений в лексике.

Метод компонентного анализа, применяемый при изучении денотативно-сигнификативного аспекта значения слова, может быть применен при анализе его коннотативного аспекта. Идея компонентного анализа базируется на представлении о значении слова как о комплексе “минимальных дискретных элементов”,³ на которые оно может быть разложено. Применение компонентного анализа подразумевает не только вычленение подобных элементов значения слова, но и определение их иерархической организации. А. Кузнецов предлагает различать понятия “признак значения” и “компонент значения” как явления разного уровня абстракции (признак значения рассматривается им как явление более высокого уровня абстракции).⁴

Мы считаем, что не только предметно-понятийное, но и коннотативное содержание слова имеет иерархическое строение и рассматриваем эмоциональность, оценочность, экспрессивность и стилистические характеристики слова как признаки коннотативного аспекта значения, а в качестве компонентов коннотативного аспекта значения выступают разные оценочности, эмоциональности, экспрессивности и указание на привязанность слова к той или иной сфере употребления. В зависимости от того, на каком уровне обобщения коннотативного содержания рассматривается то или иное слово, признаки и компоненты значения могут выступать в качестве интегральных и дифференциальных. “Интегральные признаки и компоненты объединяют отдельные слова по их

¹ Л. Ш м е л е в, *Проблемы семантического анализа лексики (на материале русского языка)*, М., 1973, стр. 7.

² О. С е л и в е р с т о в а, *Семантический анализ слов типа “все”, “all” и типа “кто-нибудь”, “some” в русском и английском языках*, М., 1965, стр. 321.

³ Л. М и х е д о в а, *Опыт компонентного анализа лексики*, *Вестник Московского университета*, М., 1969, N 1, серия 10. Филология, стр. 81.

⁴ А. К у з н е ц о в, *Сопоставительно-типологический анализ терминов кровного родства в английском, датском, французском и испанском языках*, М., 1970, стр. 42.

значениям в определенные группы, дифференциальные – различают близкие по значению слова в пределах той или иной группы”.⁵ Так, например, компонент “отрицательная оценка” является интегральным для дерогативных наименований лица, этот же компонент является дифференциальным для слов, входящих в лексико-семантическую группу наименований лица в целом.

В. Шаховский также утверждает, что коннотативный слой семантики языковых единиц образует свою систему. “Семантические признаки этой системы не просто репродуцируются, но постоянно включаются во все новые и новые семантические связи...”.⁶ Доказательством системности коннотации, по мнению В. Шаховского, является наличие тесной связи денотативного и коннотативного компонентов семантики на всех уровнях языка,⁷ а также тот факт, “что наряду с формальной невыраженностью... коннотация может быть формально выраженной на всех ярусах языка”:

- а) на фонологическом уровне;
- б) на морфологическом уровне;
- в) на лексико-семантическом уровне.⁸

То, что эмоциональные, экспрессивные, оценочные и стилистические компоненты лексического значения нередко сопутствуют друг другу в речи, что границы и переходы между ними часто бывают едва уловимыми, приводит к тому, что их часто рассматривают в единстве (совокупности) как эмоционально-экспрессивную окраску,⁹ экспрессивно-эмоционально-оценочные обертоны¹⁰ и т.д..

Чтобы решить проблему системности коннотации, необходимо ответить на вопрос о соотношении компонентов, составляющих коннотативный аспект лексического значения слова. И хотя этот вопрос не находит однозначного толкования у лингвистов, ясно одно, что существует тесная взаимосвязь и взаимозависимость компонентов, составляющих коннотативный аспект значения лексической единицы. Как отмечает Н. Куликова, “тот факт, что лексема часто располагает более чем одним коннотативным значением, не снимает отдельности каждого. Словарь демонстрирует достаточное количество одновременного наличия у одной лексемы множественных коннотаций и не меньшее число случаев, когда какой-либо тип коннотативного значения является единственным”.¹¹

լեզվի քերականության ուսուցման դպրոցական դասընթացի խոցելի կողմը: Մեր պրակտիկայով էլ համոզվել ենք, որ հաճախ երեխաներն անզգիք, սահուն պատմում են որևէ լեզվական իրողության մասին, անզգիք ասում են սահմանումը, կանոնը, մեջբերում դասագրքի օրինակները, բայց հենց հաջորդ քայլին կամ չեն կարողանում բերել իր ասածը հիմնավորող ինքնուրույն փաստեր, օրինակներ, կամ գրավոր և բանավոր խոսքում թույլ են տալիս իրենց ասած կանոնին հակասող սխալներ, բացթողումներ: Այս երևույթը տարածված է անշուշտ, ոչ միայն տարրական դպրոցում: Մեր հարցազրույցները միջին դպրոցի հայոց լեզվի ուսուցիչների հետ, ինչպես նաև կրթության այդ օղակում կատարած դասալսումները մեզ բերել են այն համոզման, որ ուսուցման այս փուլում ևս առկա են լեզվական նյութի յուրացման մնանատիպ դժվարություններ:

Որո՞նք են այս երևույթը ծնող պատճառները, ինչպես պիտի կազմակերպել քերականության ուսուցումը տարրական դպրոցում, որպեսզի այդ գործընթացը չդառնա ինքնանպատակ, որպեսզի կրտսեր դպրոցականները սիրով յուրացնեն իրենց մայրենի լեզվի քերականությունը և, որն ամենակարևորն է, սիրեն այն, ձեռք բերեն մայրենի լեզվի մեջ հետագայում ևս խորամուխ լինելու կարողություններ, ուսումնական արդյունավետ գործունեություն ծավալելու ունակությունները:

Մինչև այս հիմնախնդրի դիտարկումը կարևորում ենք տարրական դպրոցում հայերենի քերականության ուսուցման գործընթացի համար էական մի քանի սկզբունքի քննարկումը: Այս սկզբունքները վերաբերում են, բնականաբար, ինչպես ձևաբանական և շարահյուսական, այնպես էլ՝ բառակազմական, հնչյունաբանական գիտելիքների ուսուցմանը և համապատասխան լեզվական կարողությունների ձևավորմանը:

Տարրական դպրոցում հայոց լեզվի դասավանդմանը նվիրված մեթոդիկաներում (ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան՝ և՛ ավանդական և՛ ժամանակակից) նշվում է և համոզիչ հիմնավորվում, որ լեզվական, քերականական գիտելիքների ուսուցումն ու այդ ուղղությամբ երեխաների կարողությունների ձևավորումն ընդհանրապես պիտի իրականացնել, ավելի ճիշտ, շահեկան է իրականացնել փուլ առ փուլ՝ սկսած երեխայի ուսումնական գործունեության առաջին օրից: Պրոֆեսորներ Ա. Տեր-Գրիգորյանը² և Ջ. Գյուլամիրյանը³ նշում են քերականության ուսուցման երկու շրջան կամ այդ գործընթացը բաժանում են երկու շրջանների՝

- ա) լեզվական մախազիտելիքների ուսուցում,
- բ) լեզվական տարրական գիտելիքների ուսուցում:

Մենք լեզվական գիտելիքների ուսուցման ողջ գործընթացն առաջարկում ենք բաժանել չորս շրջանի, որոնց ընթացքում տարրական դպրոցի սովորողները ձեռք են բերում ծրագրով մախատեսված լեզվական գիտելիքներն ու կարողությունները:

I ՓՈՒԼ. Նախապատրաստում լեզվական գիտելիքների ընկալման, լեզվական պարզ կարողությունների ձևերում. Գպրոց ընդունված փոքրիկները թեև ունեն պարզ շարահյուսական կառուցվածք ունեցող գրեթե ձևավորված խոսք, այնուամենայնիվ, մինչև լեզվական գիտելիքների ուսումնասիրմանն անցնելը կարևորում ենք 5,5-6 տարեկան երեխաների խոսքի առանձնահատկությունները՝ ինքնուրույն խոսք կառուցելու կարողության որոշակի մակարդակի առկայություն, բառապաշարի որոշակի հարստություն, տրամաբանորեն իրար լրացնող համեմատաբար բարդ շարահյուսական կառույցներով խոսք՝ մտքի պատճառահետևանքային կապերի պահպանմամբ և այլն:

Թեև 5-5,5 տարեկաններով համարված առաջին դասարանները նորություն են տարրական դպրոցում, այնուամենայնիվ, գրեթե երկու տասնամյակի մեր մանկավարժական փորձը մեզ բերել է այն համոզման, որ անկախ առաջին դասարանցիների տարիքից՝ ուսուցման առաջին տարում չափազանց կարևոր են խոսքի մաքրման, հղկման, բառապաշարի գտման և հարստացման, խոսքի շարահյուսական կառույցի զարգացման ուղղությամբ աշխատանքները: Դրանք մենք մասնավորապես կարևորում ենք, որովհետև մեր տարածաշրջանի լեզվական առանձնահատկություններով պայմանավորված (բարբառի, ոչ գրական շեշտի, հայրենի հնչյունաբանության և ուղղախոսքի կանոնների և այլն) մեր աշակերտներն ունեն շատ դժվարություններ, որոնց հաղ-

² Ա. Տ եր - Գ ր ի գ ո թ յ ա ն, Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1980:

³ Ջ. Գ յ ո լ ա մ ի թ յ ա ն, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2006:

թահարման գործընթացը ժամանակատար է և ուսուցիչներից պահանջում է լրացուցիչ աշխատանք: Այս փուլը համընկնում է ուսումնական գործընթացի առաջին շրջանին՝ I դասարանի առաջին կիսամյակին, սակայն այն չի ավարտվում, շարունակվում է ողջ տարրական կրթության ընթացքում՝ անշուշտ, յուրաքանչյուր դասարանում կրթության համապատասխան չափորոշչային պահանջներին համապատասխան: Առաջին փուլի խնդիրների լուծմանը գուգահեռ՝ իրականացվում են նաև այլ բնույթի աշխատանքներ, որոնք լեզվական նախնական գիտելիքների ուսուցման միտում ունեն:

II ՓՈՒԼ. Լեզվական նախնական գիտելիքների ուսուցում. Մինչև այս փուլի բուն խնդիրներին անցնելը՝ կարևորում ենք նշել, որ ինչպես այս փուլում լեզվական նախնական գիտելիքներն ուսուցանելիս, այնպես էլ հաջորդ՝ քերականական տարրական գիտելիքների ուսուցումը չի դիտարկվում իբրև համակարգված գիտական քերականության (գիտության) ուսումնասիրում: Տարրական կրթության բոլոր տարիների ընթացքում քերականության ուսումնասիրումը լեզվի դասընթացի նպատակը չէ: Իր տարվա ուսումնական գործունեության ճանապարհը երեխան անցնում է քերականական գիտելիքների օգնությամբ, սակայն դրանք այնպիսի հնարներ են, այնպիսի միջոցներ, որոնք պիտի նպաստեն, խթանեն հայերեն գրավոր և բանավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը: Այսինքն՝ լեզվական նախնական գիտելիքների և քերականական տարրական գիտելիքների ձեռքբերման գործընթացը երեխայի լեզվամտածողության ձևավորման, գրագետ բանավոր և գրավոր խոսք կառուցելու ունակության զարգացման գործառույթ ունի:

Ուսուցման այս փուլում ևս աշակերտն իրեն ծանոթ և հասկանալի մեթոդներով՝ խոսքի, բնագրի ուսումնասիրման ճանապարհով, ուսուցչի օգնությամբ ծանոթանում է մայրենի լեզվի խոսքային կառույցներին և յուրացնում դրանք գործնականորեն (վարժությունների կատարման ճանապարհով) իմաստավորվում և կիրառում դրանց հիմքում ընկած սկզբունքներն ու կանոնները:

III ՓՈՒԼ. Տարրական գիտելիքների ուսուցման փուլ. Լեզվական տարրական գիտելիքների ձեռքբերման, դրանց՝ կարողությունների և հմտությունների վերածման անհրաժեշտությունը հիմնավորվում է երեխայի խոսքի հարստացման, լեզվի մեջ գոյություն ունեցող այն օրինաչափությունների և նրբությունների ըմբռնմամբ, որոնք կարևոր են և էական քերականական տարրական գիտելիքների ձեռքբերման գործընթացում: Այս փուլի մեջ մենք պայմանականորեն ընդգրկում ենք այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք վերաբերում են բառակազմությանն ու հնչյունաբանությանը:

Ուսումնական գործընթացի այս ժամանակահատվածում առաջնային են դառնում երեխաների հնչյունաբանական և բառակազմական գիտելիքներն ու կատարողությունները, որոնք ձևավորվում են և հմտություններ դառնում տարրական դպրոցի ավարտին: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լեզվագագացողության, լեզվամտածողության ձևավորման ամենաբարենպաստ շրջանը կրտսեր դպրոցական տարիքն է, հետևաբար ուղղախոսական և ուղղագրական կարողությունները հմտությունների պիտի վերածել հենց այս դասարաններում, հակառակ դեպքում միջին դպրոցում հայոց լեզվի քերականության ուսուցման գործընթացում երեխաները հանդիպում են լեզվական խոչընդոտների: Այս խնդիրները ևս, թեև հիմնականում լուծվում են լեզվական գիտելիքների ձեռքբերման երրորդ փուլում, սակայն դրանք շարունակվում են խորանալ և ընդլայնվել նաև չորրորդ՝ քերական տարրական գիտելիքների ձեռքբերման փուլում:

IV ՓՈՒԼ. Քերականական տարրական գիտելիքների ուսուցման փուլ. Այս փուլում կրտսեր դպրոցականներն ուսումնասիրում են շարահյուսությունն ու ձևաբանությունը: Այս բաժինների ուսումնասիրման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այն ճանապարհով, որ անցել են երեխաներն առաջին 3 փուլերի ծրագրային նյութերն ուսումնասիրելիս: Քանի որ խնդրո առարկան շարահյուսական գիտելիքների ձեռքբերման, դրանց՝ կարողությունների վերածման կրտսեր դպրոցականների անցած ճանապարհին է, ուստի առավել հանգամանորեն դիտարկենք այս փուլը շարահյուսական գիտելիքների ձեռքբերման տեսանկյունից:

Արդեն ներկայացրել ենք, թե ինչպիսին է 5,5-6 տարեկան երեխաների խոսքի շարահյուսական կառույցը նախադպրոցական տարիքում և դպրոցական ուսուցման առաջին օրերին կատարած ուսումնասիրությունների արդյունքում: Այս փուլում ուսուց-

չի խնդիրն է ոչ միայն հարստացնել երեխաների բառամթերքը, կապակցված խոսքը, այլև խթանել, որ երեխաներն իրենց ունեցած ակտիվ բառամթերքը ներկայացնեն շարահյուսորեն ճիշտ և համեմատաբար բարդ կառույցներով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դպրոց ընդունված երեխաները առաջին դասարանի սկզբում դեռևս երկար ժամանակ չեն կարողանում շարահյուսական բարդ կառուցվածքներով խոսք կառուցել (անշուշտ, մեր չափանիշները բխում են նրանց տարիքային առանձնահատկություններից), չեն հասկանում ոչ միայն ուրիշի՝ համեմատաբար շարահյուսական բարդ կառուցվածք ունեցող խոսքի իմաստը, այլև որոշակի նպատակներով մշակված հարցադրումներին տրված նրանց պատասխանները հիմնականում կամ ճիշտ կառուցվածք չեն ունենում, կամ արտահայտում են կցկտուր, անավարտ նախադասություններով մտքեր:

Մրանք ուսումնական գործընթացում հաջողություններ ձեռք բերելու մեջ երեխաների առջև ծառայած լուրջ դժվարություններ են, որովհետև լեզուն, խոսքը, լեզվամտածողությունն ընկած են ուսումնական գործունեության հիմքում: Մաթեմատիկական խնդիր լուծելու համար երեխաները ոչ միայն պիտի հասկանան, իմաստավորեն խնդրի բովանդակությունը, այլև կարողանան ինքնուրույն կազմել նոր խնդիրներ, լուծել դրանք, բացատրել իրենց կատարած քայլերը, այսինքն՝ տիրապետել նաև մաթեմատիկական լեզվի նորություններին: Անառարկելի է, որ խոսք կառուցելու կարողության (անշուշտ, խոսքի բոլոր որակական հատկանիշներին բավարարող մակարդակով) անբավարար մակարդակը կիտջնդոտի նաև ուսումնական պլանով նախատեսված մնացած առարկաների յուրացմանը, ինչպես նաև բազմաբնույթ այլ կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Ասվածից հետևում է, որ եթե այս դժվարությունների հաղթահարման ուղղությամբ մեթոդապես համակարգված աշխատանք չի իրականացվում, ապա ոչ միայն շարահյուսական գիտելիքների յուրացման գործընթացն է դառնում ոչ գիտակցական իր բոլոր հետևանքներով (ծրագրով նախատեսված թեմաները փաստորեն չեն յուրացվում, երեխաները ձեռքբերած, ավելի ճիշտ՝ սերտած նյութը գիտակցորեն չեն ըմբռնում, խամրում է աշակերտների հետաքրքրությունը ոչ միայն քերականական տվյալ երևույթի, այլև ընդհանրապես մայրենի լեզվի նկատմամբ), այլև սովորողները դժվարանում են յուրացնել նաև ուսումնական պլանով նախատեսված մյուս առարկաների ծրագրային նյութը: Դրանք մնում են չըմբռնված, չմարսված, չգիտակցված մակարդակում, եթե երեխայի խոսքը հագեցած է լինում սխալներով, նա իր մտքերն արտահայտում է պարզունակ, տրամաբանական կառույցներից զուրկ նախադասություններով: Բնականաբար, այդպիսի խոսքը այդպիսի մտածողության արգասիքն է: Գաղտնիք չէ՝ զարգացնել, հարստացնել երեխայի խոսքը, նշանակում է խթանել նաև մտքի հարըստացմանը, հասունացմանն ու գիտակցականացմանը, նշանակում է ձևավորել վերլուծական մտածողություն և այն հարուստ, խելացի, տրամադրված խոսքով ներկայացնելու՝ արտահայտվելու կարողություն: Ահա թե ինչու մինչև բուն շարահյուսական համակարգված գիտելիքների ուսումնասիրումն ու համապատասխան կարողությունների ձևավորումը մենք կարևորում ենք երեխայի խոսքի զարգացմանը միտված աշխատանքները, ուսումնական գործունեության առաջին իսկ օրից նրա խոսքի կառուցվածքին ուշադրություն դարձնելը՝ հատկապես կարևորելով պատճառահետևանքային կապերով նախադասություններ կազմելու երեխաների կարողության զարգացումը:

Թեև մեր ուսումնասիրությունների առարկան կրտսեր դպրոցականների կողմից շարահյուսական գիտելիքների յուրացման, դրանք կարողությունների վերածելու գործընթացն է (որն էլ հենց կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման արդյունավետությունն ապահովող գործոնն է), սակայն մենք կարևորում ենք նաև ձևաբանությունից երեխաների ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, որովհետև խոսքի մասերը խոսքի «շինանյութն են», առանց դրանց ըստ ամենայնի իմացության, խոսքի շարահյուսական կառույցը տեսականորեն ու գործնականորեն հնարավոր չէ յուրացնել: Եվ այդ բավական է, քանի որ շարահյուսության ուսումնասիրության առարկան նախադասությունն է, իսկ նախադասությունն ամբողջանում է միայն բառերով, այն էլ՝ մտքով իրար հետ կապված բառերով: Իսկ բառը ձևաբանության առարկան է: Ուրեմն՝ նախ պիտի ճանաչել բառը, բառերի կապակցման ձևերը, իմանալ դրանց կապակցման եղա-

նակները նախադասության մեջ, որպեսզի հարկավոր լինի ճանաչել նաև նախադասության անդամները, հասկանալ դրանց էությունը, դրանց փոխհարաբերությունները:

ЭТАПЫ ОБУЧЕНИЯ ГРАММАТИКЕ РОДНОГО ЯЗЫКА В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

___ *Резюме* ___

___ *Մ. Տարսյան* ___

В данной статье обосновывается тот важный факт, что родной язык занимает в школьном образовании особое место, поскольку он является одновременно и предметом исследования, и средством усвоения других предметов. Целенаправленным шагом в начальной школе является правильная постановка родного языка.

Автор предложил совершенно правильное решение для обучения грамматике родного языка-уделить особое внимание практическим работам. Исходя из вышеуказанного, автор статьи предлагает четыре этапа обучения грамматике родного языка.

ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԺՎԱՐ ՏԱՐԻՔ

Մանկավարժական պրակտիկայում և հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններում դեռահասությունը (10-11-ից մինչև 13-14 տարեկան հասակը) դիտարկվում է որպես «դժվար տարիք»: Մանկությունից հասունության անցումը դեռահասության փուլում տեղի ունեցող զարգացման բոլոր՝ ֆիզիկական, հոգևոր, բարոյական և սոցիալական կողմերի հիմնական բովանդակությունն է և էական առանձնահատկությունը: Այս տարիքում օրգանիզմի, ինքնագիտակցության, չափահասների ու ընկերների հետ ունեցած փոխհարաբերությունների, սոցիալական փոխներգործության ձևերի, հետաքրքրությունների, ուսումնական գործունեության, ինչպես նաև վարքը, ողջ գործունեությունն ու հարաբերությունները միջնորդավորող բարոյաքաղաքական դիրքորոշումների բովանդակության վերակառուցման հետևանքով երևան են գալիս հասունության նշաններ՝ դժվարություններ ստեղծելով ուսումնադաստիարակչական աշխատանքում:

Դեռահասության «դժվար տարիքը» կամ «ճգնաժամը» որոշ գիտնականներ (Հոլլ, Ֆրոյդ և ուրիշներ) պայմանավորում են կենսաբանական գործոնով: Ամերիկյան ազգագրագետների (Ռ. Բենեդիկտ, Մ. Միդ և ուրիշներ) հետազոտությունները հերքեցին, այսպես կոչված, բիոգենետիկ տեսությունը, ցույց տվեցին սոցիալական միջավայրի և դաստիարակության որոշիչ դերը դեռահասի անձի ձևավորման գործընթացում՝ ապացուցելով, որ «երեխայի կյանքի կոնկրետ սոցիալական հանգամանքներով են պայմանավորված հետևյալ երևույթները. 1) դեռահասության փուլի տևողությունը, 2) ճգնաժամի, կոնֆլիկտների ու դժվարությունների առկայությունը կամ բացակայությունը, 3) մանկությունից չափահասության անցնելու գործընթացի բնույթը: Այդ հետազոտությունները թույլ են տալիս հանգել ֆրոյդիստական պատկերացումների հետ անհամատեղելի եզրակացության. «Մարդու մեջ բնականը չի կարելի հակադրել սոցիալականին, քանի որ նրանում բնականը սոցիալական բնույթ ունի»:¹

Ուսումը դեռահասի առաջատար գործունեությունն է, ուստի ամենից առաջ տեսնենք՝ ինչպիսի դժվարություններ են առկա դեռահասների ուսումնական գործունեության ընթացքում: «Ուսուցում» հասկացության բովանդակությունը դեռահասության շրջանում ընդլայնվում է, քանի որ գիտելիքների ձեռքբերման գործընթացը հաճախ կատարվում է նաև դպրոցի և ուսումնական ծրագրերի սահմաններից դուրս, դառնում է ինքնուրույն ու նպատակասլաց: Ուսումնասիրությունները միաժամանակ ցույց են տալիս, որ դեռահասները միմյանցից տարբերվում են մի շարք հատկանիշներով: Այդ տարբերությունները նկատելի են՝

- ուսման նկատմամբ դրսևորվող վերաբերմունքում, որը կարող է լինել խիստ պատասխանատու կամ անտարբեր (վերջինս տեղիք է տալիս դժվարության).
- ընդհանուր զարգացման մակարդակներում. Ումանց մոտ այն շատ բարձր է և հիմնըված է դեռահասի համար խիստ լայն գիտելիքների վրա, իսկ ուրիշները ունենում են նեղ մտահորիզոն (հատկապես ուսման մեջ հետ մնացողները).
- ուսումնական նյութի յուրացման եղանակներում. Ումանք ունեն ինքնուրույն մտավոր աշխատանքի և նյութը շուտ ըմբռնելու ունակություն, իսկ ուրիշների մոտ ինքնուրույն մտավոր աշխատանք կատարելու ունակությունները գրեթե բացակայում են (այս թերությունը զուգորդվում է նյութը մեխանիկորեն սերտելու սովորության հետ).
- հետաքրքրություններում. Ումանք ցայտունորեն արտահայտված հետաքրքրություններ են հանդես բերում գիտելիքների տարբեր բնագավառների նկատմամբ, իսկ այլ դեռահասներ համարյա թե զուրկ են իմացական հետաքրքրություններից և այլն:

Դեռահասի՝ ուսման նկատմամբ հետաքրքրությունը ամենից առաջ կապված է ուսուցչի հետ. «Դեռահասները գնահատում են գիտակ ու խիստ, բայց արդարամիտ, տակտով օժտված ուսուցիչներին, որոնք կարողանում են հետաքրքիր ու հասկանալի ձևով բացատրել նյութը, ընտրել աշխատանքի միջտ տեմպ, նրանում ներգրավել աշա-

¹ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977, էջ 135:

կերտներին»:² Միրելով տվյալ ուսուցչին՝ դեռահասները սիրում են նաև նրա դասավանդած առարկան: Դեռահասները (և ոչ միայն նրանք) հիվանդագին են ընդունում լավ ուսուցչի փոփոխությունը. «Ուսուցչի փոխվելու հետևանքով երբեմն փոխվում է ողջ դասարանի վարքագծի ու աշխատանքի բնույթը»:³

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռահաս տարիքում նվազում է ուսման նկատմամբ հետաքրքրությունը: Առանձնակի ուշադրության է արժանի դեռահասների ուսումնական ակտիվության էական անկման հիմնահարցը: Առանձնացվում են այդ երևույթի հետևյալ պատճառները. ուսուցման գործընթացում գիտելիքներ ստանալու պահանջի նվազումը, դպրոցական կրթության միջին աստիճանի ուսումնական նյութերի բարդացումը, ճիշտ ինքնագնահատման կարողության բացակայությունը, դեռահասների նկատմամբ ծնողների հսկողության թուլացումը կամ էլ, ընդհակառակը, չափից դուրս մանրախնդիր վերահսկողությունը, արտադպրոցական միջոցառումներով առավելապես հետաքրքրվելը, սեռական հասունության հետ կապված դժվարությունները և այլն: Դեռահասների մտավոր պասիվության հիմնական պատճառը ուսման մեջ իր ակտիվությունը դրսևորելու անկարողությունն է: Պատճառ կարող են լինել նաև հիվանդությունը կամ հոգնածությունը, որ միշտ վատ են ներգործում երեխայի ֆիզիկական ու մտավոր ուժերի վրա: Դրա համար էլ երեխայի մանկ վիճակը պետք է լրջորեն մտահոգի ծնողներին և ուսուցիչներին:

Փոքրածավալ սույն հոդվածում դիտարկենք հատկապես սեռական հասունացման հետ կապված դժվարությունները: Չափահասության զգացումը փոխում է դեռահասի վարքը՝ տեղիք տալով եսակենտրոն արարքների ու գործողությունների: Սեռական հասունացման հետ կապված ամենատևական և ամենացայտուն ֆիզիոլոգիական կրիզը զգալիորեն խախտում է դեռահասի այն հարաբերական հոգեկան հավասարակշռությունը, որ ստեղծվել էր նրա մեջ նախորդ տարիքային փուլում: Աքսելերացիայի գործընթացն էլ ծանրացնում է ֆիզիոլոգիական կրիզի ընթացքը, ուժեղացնում աններդաշնակությունը, ստեղծում յուրատեսակ տարբերություններ մի կողմից՝ ֆիզիկական ու մտավոր հասունացման, մյուս կողմից՝ տնտեսական կախվածության և սոցիալական անլիարժեքության միջև: Բացի դրանից՝ «չափազանց բարդանում է մեծահասակների ներթափանցումը երեխայի ինտիմ աշխարհը, որովհետև ինքը՝ դեռահասը, միշտ չէ, որ ավագ դաստիարակների առջև բացում է զաղտնիքների վարագույրը»⁴:

Սեռական հասունացման հետ կապված չափահասության զգացումը տարբեր ուժգնությամբ է դրսևորվում տղաների և աղջիկների մեջ: Տղաների սեռական հասունացման հետ կապված ֆիզիոլոգիական վերափոխման արտաքին դրսևորումները ավելի քիչ են արտահայտված: Երբեմն նրանց դեմքին երևում են, այսպես կոչված, դեռահասի պզուկներ, փոխվում է ձայնը: Երազախաբությունը (սերմնահեղուկի ինքնաբերաբար արտահոսումը) քնած ժամանակ հաճախ ուղեկցվում է սեռական բնույթի երազներով: Այս բոլորը, իհարկե, որոշակի ապրումներ են առաջացնում տղաների մեջ, սակայն ոչ այնքան խորը, որքան աղջիկների մեջ՝ նախանշելով տղաների ու աղջիկների հոգեբանական առանձնահատկությունները: Ամսական ցիկլի սկսվելը լուրջ պահ է աղջկա կյանքում: Առաջին ամսականի անսպասելիությունը, սովորաբար, ուղեկցվում է հոգեկան ծանր ապրումներով: Ուստի անհրաժեշտ է, որ ծնողները նախապես իրենց աղջկան զգուշացնեն հնարավոր ամսականի սկսվելու մասին, մատչելի ձևով բացատրեն դրա էությունը, սովորեցնեն՝ ինչպես վարվել տվյալ դեպքում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռահաս աղջկա դաստիարակության գործընթացում դժվարություններ են ստեղծվում հենց ամսականի հետ կապված, քանզի ամսականի սկսվելը սովորաբար հանգեցնում է հոգեբանական դրվածքի արմատական փոփոխման, բարոյական դաստիարակության դժվարության: Ամսականի շրջանում դեռահաս աղջկա մեջ առաջանում է իր անձի ոչ լիարժեքության զգացում: Այդ շրջանում վատանում է աղջիկների ինքնագագացողությունը, նրանց անհանգրստացնում են գլխացավերը, ընդհանուր թուլությունը, վատանում է տրամադրությունը,

² Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, էջ 172:

³ Նույն տեղում, էջ 173:

⁴ Վ. Պ ե տ ր ու ն ե կ, *Լ. Տ ա ր ա ն, Հուզումնային հասակ, Եր., 1975, էջ 20:*

ախորժակը, հաճախակի է դառնում հակվածությունը դեպի նեգատիվիզմը: Սակայն ճիշտ խնամքի ու դաստիարակության ընթացքում ամսականի շրջանն ավարտվում է քարեհաջող: «Դեռահաս աղջիկների ամսականի սկսվելու միջին տարիքը (աքսելերացիայի ուղղումները հաշվի առնելով) 12-13 տարեկանն է: Սակայն անհանգստանալու պատճառներ չկան, եթե ամսականն սկսվի մեկ-երկու տարի ավելի շուտ կամ ուշ»:

Ծնվելով դեռահասի գիտակցության մեջ, իդեալական նպատակները կատարում են էական իմաստակազմավորիչ գործառույթ՝ նախագծելով տվյալ դեռահասի անձի հետագա զարգացման որոշակի ուղիվածությունը: Այդ գործընթացում վճռական դեր են կատարում այն իդեալները, որ դեռահասը ընտրում է ընկերական շրջապատից, ուսուցչական անձնակազմից, գրական երկերից, կինոնկարներից և այլ աղբյուրներից: Եվ դա հասկանալի է. «Դեռահասը ելք է փնտրում մարդկանց (մեծահասակների) սոցիալական փոխներգործության լայն ասպարեզ դուրս գալու համար, բայց գտնվում է առավելապես այն պատկերացումների, երևակայության մեջ, որոնց միջոցով նա ինքն իրեն աշխարհ է մտցնում և աշխարհն իրեն է հարմարեցնում: Այս գործում նրա հիմնական միջնորդը *իդեալն է*:⁵ Ըստ հոգեբան Ա. Տոլստիխի՝ իդեալի բովանդակությունը դեռահասին գործում ուժի զգացում է ներարկում. դեռահասը իրեն երևակայում է ընդունակ և կոչված աշխարհը փոփոխելու: Այն, որ իդեալի բովանդակությունը արդեն զարգացել է և իրականացվել, նա չի տեսնում և չի էլ կարող տեսնել: Այդ պատճառով նրան թվում է, որ իդեալը, ինչպես նաև իր սեփական անձը չեն ընդունվում աշխարհի կողմից: Եվ աշխարհի հետ ներդաշնակության զգացումը, որը նա ուներ երեխա ժամանակ, անհայտանում է, փլվում: Նա արդեն երեխա չէ, որովհետև հասարակական նպատակներ է դնում (հաճախ մաքսիմալիստական և ուտոպիստական), նա դեռ չափահաս չէ, որովհետև նա այդ նպատակները չի կարող իրականացնել:

Ոչ միայն որոշ ծնողներ, ուսուցիչներ, դաստիարակներ, այլև տեսաբան մանկավարժներից ոմանք դեռահասության դժվարությունները կապում են տղաների ու աղջիկների կարծեցյալ սիրահարվածության հետ: Իհարկե, դեռահաս տղաների և աղջիկների մեջ առաջանում են հասունության զգացումներ, բայց այդ ամենը չի կարելի կատարյալ սիրո զգացմունք համարել: Այս հիմնահարցը շատ լավ է մեկնաբանել հոգեբան Վ. Կրուտեցկին՝ գրելով. «Առաջին անգամ ավագ դպրոցական տարիքում է հանդես գալիս հատուկ զգացմունք՝ սերը: Սա բոլորովին նոր հոգեկան վիճակ է դպրոցականի կյանքում, որը չկար դեռահասի մոտ: Դեռահասի վերաբերմամբ ավելի ճիշտ կլինի խոսել անձնական համակրանքի, հրապուրանքի, մտերմության, նույնիսկ առաջին սիրահարվածության զգացմունքի երևան գալու մասին, բայց սերը՝ որպես խոր, ուժեղ, գործուն զգացմունք, առաջանում է միայն վաղ պատանեկության տարիքում: Պատանեկան սերը, որպես կանոն, մաքուր է, առողջ, ողջախոհ, առաքինի, հարուստ բազմազան ապրումներով, ունի նրբություն, երազկոտության, քնարականության և անկեղծության երանգ»:⁶ Այստեղից բխող գործնական հետևությունը թողնում ենք ծնողներին և միջին ու բարձր դասարաններում դասավանդող ուսուցիչներին, դաստիարակներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռահասների վարքի փոփոխման կամ շեղման պատճառ են դառնում նրանց ընկերային վատ հարաբերությունները: Ծնողներին, ուսուցիչներին, դաստիարակներին պետք է հետաքրքրի այն, թե ընկերական ինչ միջավայրում է ընթանում տվյալ դեռահասի գործունեությունը: Ընտանիքը, ընկերական միջավայրը հանդես է գալիս որպես դեռահասի անձի ձևավորման հասարակական միջավայր: Անձի ձևավորման գործընթացում առաջնությունը տալով դաստիարակությանը՝ գիտական մանկավարժությունը չի ժխտում շրջակա միջավայրի դերը: Այս կապակցությամբ վկայակոչենք Մ. Նալբանդյանի ուսանելի դրույթը. «Բազմաթիվ փաստերը դրականապես հաստատում են այն բանը, թե մարդը ծնանալով չունի յուր մեջ առաքինության կամ վատթարության սկիզբն կամ տարրը, և հոգու այդ ունակությունը հետևանք է նորա լավ կամ վատ շրջակայքի ազդեցությունից»:⁷ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «դեռահասների ընկերությունը միջանձնային հաղոր-

⁵ Ա. Տոլստիխ, *Մանկությունից հետո*, Եր., 1985, էջ 64:

⁶ Վ. Կրուտեցկի, *Մանկավարժական հոգեբանության հիմունքները*, Եր., 1975, էջ 225:

⁷ «Հայ մանկավարժներ», Գիրք Ա, Եր., 1958, էջ 267:

դակցման ցայտուն դրսևորումներից մեկն է, որը չի հարաբերակցվում ո՛չ խմբավորումներ ստեղծելու հակադրման, ո՛չ ձանձրության և ո՛չ էլ որևէ այլ՝ ավելի պարզ հարաբերությունների հետ: Ընկերության ձգտումը չի կարելի համարել նաև միայնակությունից խուսափելու այլընտրանքային տարրերակ. կրտսեր տարիքի դեռահասները վախենում են միայնակությունից, իսկ ավագները սկսում են գնահատել մեկությունը՝ տարրերելով այն միայնակությունից: Սենության միջոցով դեռահասը փորձում է բավարարել սեփական անձի հետ ինտիմ շփման պահանջումները»⁸:

Նկատել ենք, որ միջին դասարաններում ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում դժվարություններ են ստեղծվում դեռահասների՝ տարբեր դրդապատճառներով կոնֆլիկտները: Կոնֆլիկտների հենակետ են ծառայում հատկապես դեռահասների եսակենտրոն ցանկությունների չկատարումը, նրանց այնպիսի արարքների ու գործողությունների արգելումը, որոնք հակասում են հասարակական բարոյական նորմերին ու կանոններին: Ուրեմն կոնֆլիկտը վերացնելու համար պետք է փոխել դեռահասի դիրքորոշումը, կոնֆլիկտի հենակետը: Այս կապակցությամբ կուզենայինք վկայակոչել դեռահաս աղջիկների կոնֆլիկտների ուսումնասիրման Ս. Անտոնյանի փորձը, որի արդյունքում նա եզրակացնում է. «Կոնֆլիկտից առաջացած տհաճ իրավիճակից կարելի է խուսափել՝ հրաժարվելով այն ցանկությունից, որը չի համապատասխանում ավելի վաղ մշակված դիրքորոշման հենակետին, ինչպես նաև, ձեռք բերելով նոր գիտելիքներ, որը կնպաստի հենակետի վերագնահատմանը՝ դրանով իսկ հարթելով կոնֆլիկտը (ընդգծումը մերն է՝ Ռ.Պ.): Անձի հոգեկան ճկունությունից է կախված՝ նա կկարողանա՞ փոփոխել իր դիրքորոշումները և վերանայել իրադրության նկատմամբ իր վերաբերմունքը, թե՞ ոչ»⁹:

Դեռահասների (և ոչ միայն նրանց) վարքի որոշ շեղումներ կապված են սքրեսային և աֆեկտիվ հոգեվիճակների հետ, երբ նյարդահոգեկան գերլարվածության պայմաններում թուլանում է գիտակցության վերահսկողությունը, և դեռահասը թույլ է տալիս բարոյական վարքին անհարիր արարքներ: Հոգեբանական ուսումնասիրությունները օրինակ՝ արձանագրում են, որ սքրեսը հաճախ զուգորդվում է ֆրուստրացիայի հետ: Ասենք դեռահասի մեջ ֆրուստրացիոն հոգեվիճակ է առաջանում, երբ նրա նպատակների ձեռք բերման ճանապարհին ծնողները կամ ուսուցիչները դժվար հաղթահարելի արգելքներ (ֆրուստրատորներ) են դնում: Ֆրուստրացիոն հոգեվիճակը ամենից առաջ աչքի է ընկնում տհաճ հույզերով, որոնք էլ տեղիք են տալիս անբավարարվածության, զայրության, հուսահատության և վարքի բացասական այլ հատկությունների: Հոգեբան Ա.Նալչաջյանն այդ մասին գրում է, որ «Ֆրուստրացիոն վիճակում գտնվող մարդիկ հանդես են բերում վարքի հատուկ պաշտպանական ձևեր, որոնց իրագործման համար օգտագործվում են պաշտպանական մեխանիզմներ»: Ցավոք պիտի նշել, որ դեռահասության շրջանում այդ «պաշտպանական մեխանիզմները» լիովին չեն գործում:

Իհարկե, վերոնշյալով բնավ չեն սպառվում դեռահասության շրջանում ի հայտ եկող դժվարությունները, սակայն հաղորդման մեջ ներառված նյութերն էլ կարող են օգնել ծնողներին, ուսուցիչներին, դաստիարակներին՝ խելամոտրեն հաղթահարելու դեռահաս տարիքի հիմնական դժվարությունները:

НЕСОВЕРШЕННОЛЕТИЕ КАК ТРУДНЫЙ ВОЗРАСТ

____ *Резюме* _____

____ *Р. Погосян* _____

В онтогенезе подростковый возраст считается “сложным возрастом”. Трудности проявляются как в учебном процессе, так и на протяжении воспитания. В сообщении представлены причины некоторых трудностей несовершеннолетия, показаны эффективные способы их преодоления, которые могут оказать практическую помощь родителям и преподавателям средних классов общеобразовательных школ.

⁸ Ս. Հ ա ռ թ յ ու ն յ ա ն, *Մարդու հոգեկենդանական զարգացման հիմունքները*, Եր., 2004, էջ 163:

⁹ Ս. Ա ն տ ո ն յ ա ն, *Մեռադեռային վարքի կայացման դինամիկան*, Եր., 2004, էջ 50:

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱԿՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XX դարի 20-30-ական թթ.**

Հայաստանի Հանրապետության վերջին տարիների նվաճումները և բացթողումները տարբեր մակարդակի միջազգային մրցումներում, այլև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ձևավորվող քաղաքականությունն անհրաժեշտաբար պահանջում են ուսումնասիրել խորհրդային շրջանում կուտակված փորձն ու ավանդույթները: Վերջին 20 տարիների մարզական կյանքի թռուցիկ դիտարկումն անգամ թույլ է տալիս եզրակացնել, որ սպորտի զարգացումն ու հաջողություններն ուղղակիորեն կապված են պետական աջակցության հետ: Ըստ որում, այդ աջակցությունը ոչ միայն նյութական ներդրումների (դահլիճներ, մարզահրապարակներ, գույք և այլն), այլ նաև կրթական քաղաքականության, քարոզչության, հասարակական կարծիքի ստեղծման մեջ է: Այս իմաստով ուսանելի է խորհրդային տարիների փորձը:

XX դարի 20-ական թվականներին ՀԽՍՀ իշխանությունները մարզական քաղաքականության շրջանակներում սկսեցին լուրջ միջոցներ ձեռնարկել երկրում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման ուղղությամբ: Նորաստեղծ Խորհրդային Հայաստանի առջև ծառայած կարևոր հիմնախնդիրներից մեկը ազգաբնակչության առողջության պահպանման, առողջ ապրելակերպի արմատավորման հիմնախնդիրն էր: Արդեն 1920-ական թթ. Հայաստանի իշխանությունները ձեռնամուխ եղան ֆիզիկական կրթության և դաստիարակության համակարգի ձևավորմանը: Ֆիզկուլտուրան դիտվեց որպես պետական քաղաքականության բաղկացուցիչ մաս՝ նպատակաուղղված աշխատավորների աշխատունակության բարձրացմանը: Այդ խնդիրը լուծվում էր անչափ ծանր պայմաններում: Երկրում չկար որևէ մարզական կազմակերպություն, բացի Ամերիկյան սկաուտական ջոկատներից և «Բազե» կազմակերպությունից: Հարկավոր էր ստեղծել նոր տիպի մարզական կազմակերպությունների համակարգ՝ նշված խնդիրները լուծելու համար: Դրանցից առաջինը եղավ «Պատանի կոմունարները» կազմակերպությունը՝ իր մարզական ջոկատներով, որոնք լծվեցին ֆիզիկական դաստիարակության գործին: Ֆիզկուլտուրայի խմբակների ստեղծման գործում կարևոր դեր խաղաց Հայկական դիվիզիայի շտաբին կից պարտուսի բաժինը:

1923թ.-ից սկսվում է կենսագործվել ՀԽՍՀ Կենտգործկոմի «Ֆիզկուլտուրայի խորհրդի ստեղծման մասին» որոշումը: Ստեղծվում են ֆիզկուլտուրայի հանրապետական, շրջանային, գավառային և քաղաքային խորհուրդներ: Կարճ ժամանակ անց՝ ստեղծվում է Անդրգործկոմի Ֆիզկուլտուրայի բարձրագույն խորհուրդը: Նշված խորհուրդների առաքելությունը համակողմանի աջակցությունն էր ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը և այդ բնագավառում գիտամեթոդական և մանկավարժական աշխատանքների կազմակերպումը:¹ Հայաստանում Ֆիզկուլտուրայի խորհրդի գործունեության շնորհիվ 1925թ. կազմակերպվեց «Ինամո» կամավոր մարզական ընկերությունը, ձևավորվեցին «Մպարտակ», իսկ 1927թ.՝ «Շինարար» ընկերությունները: Խորհուրդների քարոզչական գործունեությունը իրագործվում էր մարզական փառատոների, շքերթների, ցույցերի անցկացման և մարզական մրցումների կազմակերպմամբ:

Հատկանշական է, որ 1926թ. հունվարին ՀԽՍՀ Ֆիզկուլտուրայի բարձրագույն խորհուրդը ազգային մարզական խաղերի մշակման գործի մեջ ընդգրկում է հանրապետության գիտական միտքը:² Այդ միջոցառման նպատակը ֆիզկուլտուրայի հանրամատչելիացումն էր: Կարևոր դեր ունեցան այդ գործում 1926թ.-ի Առաջին հանրապետական և 1928թ.-ի Առաջին անդրկովկասյան տոները: 1925թ.-ից հանրապետությունում սկսվում են ֆիզկուլտուրային վերաբերվող աշխատանքների հրատարակումները: Դրանցում առանձնանում է «Ֆիզիկական կուլտուրայի գրադարան» խորագրով մատենաշարը: Հայաստանում ֆիզկուլտուրայի տարածման գործում կարևոր դեր խա-

¹ ԳԱՕՐՑ Գրչ.ՑՄՄ, փ. 611, օղ. 1, ժ. 274, լ.1-4; ժ.24, լ.12.

² Նույն տեղում, փ. 15, թ. 31:

դաց «Անդրկովկասի ֆիզկուլտուրնիկ» թերթը, որը 1926թ.-ից լույս էր ընծայում Անդրֆեդերացիայի ֆիզկուլտուրայի խորհուրդը:³ Մեծ էր նաև տեղական մամուլի դերը:

ՀԽՍՀ-ում ֆիզիկական կուլտուրայի կայացմանը նպաստեց նաև Անդրֆեդերացիայի ֆիզկուլտուրայի բարձրագույն խորհրդի գիտամեթոդական կոմիտեի գործունեությունը և ֆիզկուլտուրայի հարցերով Անդրկովկասյան խորհրդակցությունը, որը քննարկում էր իրականացվող աշխատանքների և միջոցառումների, մասնագիտական կադրերի պատրաստման հարցերը:

Ֆիզկուլտուրայի զարգացման հիմնական ուղղություններից մեկն էլ դպրոցներում, տեխնիկումներում և բուհերում մանուկների և պատանիների ֆիզիկական դաստիարակությունն էր: Այդ աշխատանքը Բարձրագույն խորհուրդը իրականացնում էր հանրապետական Լուսժողովուհատի հետ համատեղ և Ժողկրթության նոր համակարգի ստեղծմանը զուգահեռ: Այն կապված էր մեծ դժվարությունների հետ: Հանրապետության ոչ մի կրթօջախ չուներ ֆիզկուլտուրայով զբաղվելու համար նախատեսված հատուկ մասնաշենքեր: Հիմնախնդիր էր նաև մանկավարժների, ծրագրերի և մեթոդիկաների համարյա լրիվ բացակայությունը: 1927թ. որոշում ընդունվեց դպրոցներում ֆիզդաստիարակությունը որպես պարտադիր առարկա մտցնելու մասին, իսկ 1928թ. արդեն 1200 աշակերտներ զբաղվում էին արտադասարանական մարզական պարապմունքներով, և 2000 երեխաներ ֆիզկուլտուրայով զբաղվում էին մանկատներում:

Ֆիզդաստիարակությունն իրականացնում էին ֆիզկուլտուրայի հրահանգիչները, որոնք չունեին մասնագիտական կրթություն: Մինչև 20-ական թթ. վերջը ոչ Անդրկովկասում և ոչ էլ Հայաստանում չկային մարզամանկավարժական կադրեր պատրաստող ուսումնական հաստատություններ: 1928թ. հանրապետությունում աշխատող 35 արհեստավարժ մասնագետներից ոչ մեկը բարձրագույն կրթություն չուներ: Մասնագետների պատրաստման խնդիրը հուզում էր բոլորին, և արդեն 1923թ.-ից Անդրկովկասի ՖԿԲԽ-ն բարձրացրեց ֆիզկուլտուրայի մասնագետներ պատրաստելու նպատակով հատուկ բուհի ստեղծման հարցը:⁴ Գոյություն ունեցող վիճակի շտկման համար 1928թ. հինգ մարդ գործուղվեց Մոսկվայի ֆիզկուլտուրայի ինստիտուտ: Բացի այդ հանրապետությունում կազմակերպվեցին ֆիզկուլտուրայի հրահանգիչների պատրաստման կարճաժամկետ դասընթացներ:

Ֆիզկուլտուրայի կայացման մեջ հատուկ տեղ է զբաղեցնում նյութական բազայի ստեղծումը: 1922-1923թթ. հանրապետության շրջաններում և քաղաքներում սկսեցին կառուցել մարզահրապարակներ՝ թեթև ատլետիկայով և մարզական խաղերով զբաղվելու համար: Բայց դա դեռևս իրադրությունից դուրս գալու ելք չէր: Անդրկովկասի առաջին ֆիզկուլտուրայի տոնին պատրաստվելու ժամանակ մարզական կառույցների ստեղծման հարցը ավելի սուր դրվեց: Որոշում ընդունվեց Երևանում մարզադաշտի կառուցման մասին, որ կունենար ֆուտբոլի դաշտ, բասկետբոլի և վոլեյբոլի մարզահրապարակներ: Մարզադաշտին կից կառուցվելու էր նաև լողավազան: 1928թ. ավարտվեցին համալսարանի ուսանողների և «Խորաժամ» ակումբի աշխատակիցների համար դահլիճի կառուցման աշխատանքները: Ինչ խոսք, վերը նշված միջոցառումները դեռևս անբավարար էին նորմալ մարզական վիճակի և սպորտով զբաղվելու համար:

1920-ական թթ. վերջին մարզական շարժումը Խորհրդային Հայաստանում հասավ որոշակի հաջողությունների: Արդեն 1925թ. հանրապետությունում կար 16 տարեկանից բարձր 2590 մարզիկ, իսկ 1928թ. նրանց թիվը հասնում էր 3200-ի: Մարզիկների ընդհանուր թիվը հասնում էր 6880-ի: Նրանք միավորված էին 125 մարզական խմբակներում և կազմակերպություններում:⁵ Առաջին քայլերն էին արվել նաև սպորտի առանձին ձևերի զարգացման ուղղությամբ: ՖԿԲԽ-ն 1925թ. սկսած պարբերաբար մրցումներ էր անցկացնում հանրապետության քաղաքների և շրջանների միջև մարզական խաղաձևերից (ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ), ըմբշամարտից, ծանր և թեթև ատլետիկայից, շախմատից: 1926թ. անցկացվեց առաջին հանրապետական սպարտա-

³ ГАОРСС Груз.ССР, ф. 611, оп. 1, д.5, л.3, 177; Легкая атлетика. Под ред. М. Шимкевича, Ер., 1925.

⁴ ГАОРСС Груз.ССР, ф. 6, оп.1, д.270, л. 17, 3; д. 96, л. 6-9.

⁵ «Ավանգարդ», 2.12.1928թ.:

կիադան, որը ոչ միայն բացահայտեց մարզական շարժման թույլ կողմերը, այլև վկայեց մարզիկների որոշակի պատրաստվածության մասին: Հայ մարզիկները մասնակցում էին թե՛ անդրկովկասյան և թե՛ միութենական մրցումների: Հայաստանում և մյուս կովկասյան հանրապետություններում ֆիզկուլտուրայի զարգացման արդյունքներն ամփոփեց Անդրկովկասի ֆիզկուլտուրայի առաջին տոնը: Այդ մրցումներում աչքի ընկան հայ մարզիկներ Գ.Իլիկչյանը, Յ.Չարխիֆալակյանը, Թ. Խաղոյանը, Ե. Մարտիրոսյանը, Մ.Մուշեղյանը, Գ.Մեղրակյանը, Ա.Գրիգորյանը, որոնք հետո ձևավորեցին Անդրկովկասի մարմնամարզիկների հավաքականը և մասնակցեցին 1928թ. Մոսկվայի համամիութենական սպարտակիադային: 1928թ. ուղենշային էր ողջ խորհրդային ֆիզկուլտուրայի և սպորտի, այդ թվում նաև Հայաստանում մարզական շարժման համար: Այդ թվականին իշխանությունների կողմից մի շարք կարևոր որոշումներ ընդունվեցին երկրում ֆիզկուլտուրայի հետագա զարգացման խնդիրների մասին: Հատուկ նշանակություն էր տրվում ֆիզկուլտուրայի և սպորտի ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր և հայրենասիրական դաստիարակչական դերին: 1929թ. հուլիսին Լուսժողովմատի կազմակերպած ֆիզկուլտուրայի մասնագետների խորհրդակցությունն արձանագրեց, որ ֆիզկուլտուրայի բնագավառում տարվող անբավարար աշխատանքի պատճառով անհամապատասխանություն է առաջացել երեխաների մտավոր և ֆիզիկական դաստիարակության միջև: Իրադրությունը պարզելու նպատակով առաջարկվեց բուժատուգումներ անցկացնել ուսումնական հաստատություններում:⁶ Ֆիզդաստիարակության ամբաստանյալ հարցը քննարկվեց Անդրկենտգործկոմի 1929թ. նոյեմբերին տեղի ունեցած խորհրդակցությունում, որը որոշեց այդ խնդրի լուծման պատասխանատվությունը դնել Լուսժողովմատի վրա: Ֆիզդաստիարակության հիմնախնդիրների լուծման առումով Լուսժողովմատի անելիքները քննարկվեցին նաև Անդրկովկասյան II համաժողովում (1930թ. հունիս) և բուհերում և տեխնիկումներում ֆիզկուլտուրայի դրվածքի վերաբերյալ Անդրկովկասյան խորհրդաժողովում (1931թ. փետրվար): Այստեղ կոնկրետ միջոցառումներ նախատեսվեցին այդ խնդրի լուծման համար: Հաստատվեցին մարզական պարապմունքների անցկացման ծրագրեր, քննարկվեց բուհերում ֆիզկուլտուրայի և առավոտյան մարմնամարզության մասին հարցը:⁷ Ֆիզկուլտուրային վերաբերող հարցերի շարունակական քննարկումները պետական իշխանության տարբեր մակարդակներում, հասարակական-կրթական կազմակերպություններում, վկայում են խնդրի համաժողովրդական-համապետական նշանակության մասին: 1931-32թթ. էական տեղաշարժեր տեղի ունեցան այդ բնագավառում: Արդեն 1930թ. կային 47 ֆիզմանկավարժներ, որոնցից 5-ը ավարտել էին հատուկ մասնագիտական դպրոցներ, իսկ 1932թ. հանրապետությունում կար 230 մասնագետ:

1930-ական թթ. ծավալվեց զանգվածային մարզական շարժում: Միայն առաջին հնգամյակի տարիներին ֆիզկուլտուրիկների թիվն աճեց 295%-ով և կազմեց 20375 մարդ: 1937թ. հանրապետությունում կար 70000 ֆիզկուլտուրիկ:⁸ Համապատասխանաբար ավելացավ նաև մարզական ընկերությունների թիվը և 1937թ. հանրապետությունում գործում էին թվով 15-ը՝ «Իհնամո», «Սպարտակ», «Շինարար», «Կայծակ», «Բուրեվեստնիկ», «Լուկոմոտիվ» և այլն: 1940թ. արդեն կար 25 մարզական ընկերություն, որոնցում հաշվվում էր 31 հազար ֆիզկուլտուրիկ:⁹ Լուրջ հաջողությունների էին հասել առանձին հայ մարզիկներ: Հասարակական կազմակերպությունները, մամուլը, կրթական հաստատությունները ամեն կերպ քարոզում էին նրանց նվաճումները, դեպի սպորտ գրավելով նորանոր պատանիների ու աղջիկների: Սպորտով զբաղվելը դառնում էր հեղինակավոր ու պահանջված: Հայտնի էին ծանրորդներ Մերզո Համբարձումյանի և Ռ.Մանուկյանի, ըմբիշ Ս.Վարդանյանի, բռնցքամարտիկներ Գ.Իսրայելյանի և Ա.Պապյանի անունները: Հատկանշական էր նաև այն, որ խորհրդային մարզիկների սահմանած 25 համաշխարհային ռեկորդներից 2-ը պատկանում էին Ս.Համբարձումյանին և Ռ.Մանուկյանին:

⁶ ГАОПСС Груз. ССР, Ժ. 153, լ.17-18.

⁷ Նույն տեղում, փ. 154, ք. 167-168:

⁸ Նույն տեղում, փ. 270, ք. 3: «Կոմունիստ», 7.09.1936:

⁹ «Կոմունիստ», 21.06.1937:

Բերված փաստերը և դրանց վերլուծությունը վկայում են, որ տնտեսական ծանր պայմաններում անգամ Հայաստանում անցյալ դարի 20-30-ական թվականներին իրականացվել է համակողմանիորեն կշռադատված մարզական քաղաքականություն, ինչը էապես նպաստել է տնտեսական ծանրագույն հիմնախնդիրների առջև կանգնած երկրում ոչ միայն մեծ սպորտի, այլև զանգվածային ֆիզկուլտուրայի հիմնավոր զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորմանը: Ոչ հեռու անցյալի այսպիսի փորձը համոզիչ ապացույցն է այն աքսիոմատիկ ճշմարտության, որ ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառներում կատարված բոլոր ներդրումները կարճ ժամանակի ընթացքում լիովին հատուցվում են և ծառայում հասարակական նշանակության բազմաթիվ այլ խնդիրների հաջող լուծմանը:


ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ И СПОРТА В АРМЕНИИ В 20-30-е гг. XX ВЕКА

___ *Резюме* ___

___ *А. Матевосян* ___

В статье на основе фактов и официальных документов рассматриваются основные направления и мероприятия нацеленные на повышение массовости, роли и значения физической культуры и спорта в Армении. Подчеркивается значение государственной политики в сфере спортивных достижений, а также роль физической культуры в решении задач экономического, демографического и культурного развития страны. Показано значение достижений рассматриваемого периода для развития современной физической культуры и спорта.

27 հունվարի, 2007թ.




ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունն երի կենտրոնը և Շիրակի երկրագիտական թանգարանը համատեղ կազմակերպել էին հանդիպում Գյումրու մտավորականության և ուսանողության հետ՝ նըվիրված Հայաստանի տարվա շրջանակներում Ֆրանսիայի Սան Ռաֆայել քաղաքում ընթացող «Հայաստանի լեռներում. 500.000 տարվա սրտում» խորագրով հնագիտական ցուցահանդեսին, որի ցուցանմուշների մոտ 90 տոկոսը ներկայացնում էր Շիրակի տարբեր տարիների պեղումների ընտրանին՝ հայտնաբերված շուրջ 30 հնավայրերից: Հանդիպումը բացեց ՇՀ կենտրոնի տնօրեն պրոֆեսոր Ս. Հայրապետյանը, որը, գիտակցությունից, նաև քաղաքական տեսանկյունից արժեքներով ցուցահանդեսը, ըստ արժանվույն գնահատեց նրա գլխավոր կազմակերպիչների՝ կենտրոնի գիտաշխատողներ, Շիրակի երկրագիտական թանգարանի տնօրեն Համազասպ Խաչատրյանի և պ.գ.թ. Լարիսա Եզանյանի ջանքերը: Վերջիններս փոխհիշողի երույթներով հանգամանորեն ներկայացրին ցուցահանդեսի նախապատրաստման ծանր ու դժվարին ընթացքը, նրա հսկայական հաջողությունն ու հիացական արձագանքները եվրոպական երկրներում: Կատարված հսկայածավալ աշխատանքների արդյունքը շքեղ ձևավորում ունեցող 2100 էջանոց այն գիտական կատալոգն է, որ ֆրանսիական կողմը լույս ընծայեց մեր հնագետների ամենագործուն մասնակցությամբ: Գրքի առաջին գլխում մեր ֆրանսիացի գործընկերների տպավորություններն են Շիրակի մի քանի հնավայրերի մասին, որտեղ նրանք աշխատել են գյումրեցի հնագետների կողքին, հաջորդ գլխից նվիրված են Շիրակի բնաշխարհին, նրա հնագիտական հետազոտությունների անցյալին ու ներկային, Շիրակի երկրագիտական թանգարանին: Կատալոգը, հիրավի, անկրկնելի է իր ձևավորման ոճական թարմ լուծումներով, ցուցանմուշների բարձրարվեստ լուսանկարներով ու տեղեկատվական հարուստ հնարավորություններով: «Այս ցուցահանդեսով մենք Եվրոպայում տեսանելիորեն ներկայացրինք մեր այն հարստությունները, որոնք լույս իրենց խոսքերում են հիշում մեր շատ ու շատ դեկավարներ», - նշեց բանախոս Հ.Խաչատրյանը: Հանդիպումն ավարտվեց մտքերի բուռն փոխանակմամբ: Երույթ ունեցողներն ընդգծեցին այն քրտնաջան աշ-

խատանքը, որ կատարել են Շիրակի հնագետները Հայաստանն ու հայկական մշակույթը Եվրոպայում լավագույնս ներկայացնելու ճգնաժամով:

20 մարտի, 2007թ.

ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտություն աշխատություններ» ժողովածուի IX հատորը՝ 14 հրատարակչական մամուլ ծավալով: Հատորում տեղ են գտել 35 գիտական հոդվածներ, հրատարակումներ և հաղորդումներ՝ ԳԱԱ Շիրակի հայագիտական (16), Հնագիտության և ազգագրության (2), Արվեստի (2), Պատմության (2) ինստիտուտների, Գյումրու մանկավարժականի (9) և այլ գիտական ու կրթական հաստատությունների աշխատակիցների հեղինակությամբ: Ժողովածուն ավանդաբար ավարտվում է հատորում տպագրված ամբողջ նյութի համառոտ անգլերեն ամփոփումով, որը տեղադրվում է նաև կենտրոնի համացանցային կայքում:

Հացահատիկ ուրարտական և Արտամեդի հին աստվածություններից մինչև Վահրամաբերդ գյուղի արդի քնարական բանահյուսությունը, Պոնտոսի արքայական և Գուգարքի բղեշխական տոհմերի ազգակցության հարցերից մինչև Ալեքսանդրապոլի գավառի խորհրդայնացման խնդիրները, Հայկաձորի միջնադարյան քարանձավային բնակավայրերի հետազոտությունից մինչև Հայաստանի հյուսիսի (Մեծ Մեպասար) արդի պեղումները, շիրակյան ազգագրական հետաքրքիր նյութից մինչև հոգեկարգավորման արդի գործընթացների վերլուծություն, հին հայոց բանակային նվազարանների ու Անանիա Շիրակացու հիմներգերի մասին հետաքրքիր նյութերից մինչև Ն. Տիգրանյանի ստեղծագործությունը, հաղորդումներ՝ նվիրված էթնոսոցիոլոգիայի, անցումային տնտեսության, լրագրության, գեղարվեստի, լեզվի ու ոճի, գրականության, դասականության մեթոդական-մասնագիտական մի շարք խնդիրներին-այսպիսի լայն և ուշագրավ «աշխարհագրություն» ունեն այս ժողովածուում տպագրված նյութերը: Հատորի շապկի առաջին էջին Մարմաշենի (VII-XI դդ.) հոյակերտ վանական համալիրի պատկերն է՝ արված շնորհալի լուսանկարիչ Ս.Դարբինյանի ձեռքով:



տանի տարվա շրջանակներում Ֆրանսիայի Սան Ռաֆայել քաղաքում ընթացող «Հայաստանի լեռներում. 500.000 տարվա սրտում» խորագրով հնագիտական ցուցահանդեսին, որի ցուցանմուշների մոտ 90 տոկոսը ներկայացնում էր Շիրակի տարբեր տարիների պեղումների ընտրանին՝ հայտնաբերված շուրջ 30 հնավայրերից: Հանդիպումը բացեց ՇՀ կենտրոնի տնօրեն պրոֆեսոր Ս. Հայրապետյանը, որը, գիտակցությունից, նաև քաղաքական տեսանկյունից արժեքներով ցուցահանդեսը, ըստ արժանվույն գնահատեց նրա գլխավոր կազմակերպիչների՝ կենտրոնի գիտաշխատողներ, Շիրակի երկրագիտական թանգարանի տնօրեն Համազասպ Խաչատրյանի և պ.գ.թ. Լարիսա Եզանյանի ջանքերը: Վերջիններս փոխհիշողի երույթներով հանգամանորեն ներկայացրին ցուցահանդեսի նախապատրաստման ծանր ու դժվարին ընթացքը, նրա հսկայական հաջողությունն ու հիացական արձագանքները եվրոպական երկրներում: Կատարված հսկայածավալ աշխատանքների արդյունքը շքեղ ձևավորում ունեցող 2100 էջանոց այն գիտական կատալոգն է, որ ֆրանսիական կողմը լույս ընծայեց մեր հնագետների ամենագործուն մասնակցությամբ: Գրքի առաջին գլխում մեր ֆրանսիացի գործընկերների տպավորություններն են Շիրակի մի քանի հնավայրերի մասին, որտեղ նրանք աշխատել են գյումրեցի հնագետների կողքին, հաջորդ գլխից նվիրված են Շիրակի բնաշխարհին, նրա հնագիտական հետազոտությունների անցյալին ու ներկային, Շիրակի երկրագիտական թանգարանին: Կատալոգը, հիրավի, անկրկնելի է իր ձևավորման ոճական թարմ լուծումներով, ցուցանմուշների բարձրարվեստ լուսանկարներով ու տեղեկատվական հարուստ հնարավորություններով: «Այս ցուցահանդեսով մենք Եվրոպայում տեսանելիորեն ներկայացրինք մեր այն հարստությունները, որոնք լույս իրենց խոսքերում են հիշում մեր շատ ու շատ դեկավարներ», - նշեց բանախոս Հ.Խաչատրյանը: Հանդիպումն ավարտվեց մտքերի բուռն փոխանակմամբ: Երույթ ունեցողներն ընդգծեցին այն քրտնաջան աշ-

խատանքը, որ կատարել են Շիրակի հնագետները Հայաստանն ու հայկական մշակույթը Եվրոպայում լավագույնս ներկայացնելու ճգնաժամով:

19 հոկտեմբերի, 2007թ.

Գյումրում հանդիսավորությամբ նշվեց Գիտությունների ազգային ակադեմիայի Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի հիմնադրման տասնամյա հոբելյանը: Գյումրու «Պրոգրես» համալսարանի հյուրընկալ հարկի տակ հոկտեմբերի 19-ին հավաքված քաղաքի գիտական, կրթական ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ստվարաթիվ ուսանողները ջերմությամբ ու սիրով ծափողջունեցին Հայագիտական հետազոտությունների կենտրոնի 10-ամյակի հանդիսությանը ժամանած ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին, Շիրակի մարզպետ Լ. Նանյանին, ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանին, ակադեմիայի քոթակից-անդամներ Ա. Մելքոնյանին, Ա. Եղիազարյանին, Ս. Հարությունյանին, Ս. Հովհաննիսյանին, Ակադեմիայի հումանիտար մի շարք ինստիտուտների տնօրեններին, հանրապետության տարբեր գիտական հաստատություններից, ինչպես նաև բուհերից ժամանած բազմաթիվ այլ անվանի գիտնականներին:


Կենտրոնի 10 տարիների ձեռքբերումների հանրազոտմարտն էր նրա տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մերզո Հայրապետյանի խոսքը, որում նա նախ կարևորեց Շիրակի պատմաշակութային ժառանգության հիմնախնդիրներին նվիրված առաջին գիտաժողովների (1994, 1996) դերը ոչ միայն Շիրակի հայագիտական հետազոտությունների մակարդակի բացահայտման, այլև տեղի հայագիտական մեծ ներուժի իրական հնարավորությունների հայտածման և դրա հիման վրա՝ Գյումրիում ակադեմիական հումանիտար կառույց ունենալու հարցի առաջադրման և լուծման մեջ (գեկուցումն ամբողջությամբ տես էջ 8-ում): Վերջում Ս. Հայրապետյանը հավաստիացրեց, որ «ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը քնակոխում է իր գոյության երկրորդ տասնամյակը՝ իմաստնացած իր ապրած տարիների փորձով, ձեռքբերումների ու կորուստների, արածի ու չարածի հանրազոտմարտով, գիտական ու մշակութային այլ կազմակերպությունների հետ մեկտեղ Շիրակի նյութական ու հոգևոր ծովածավալ հարստության ուսումնասիրությունը շարունակելու իր երթին հավատարիմ»:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց, որ թեև 10 տարին գիտական հաստատության տարեգրության փոքր ժամանակահատված է, սակայն զարմանալիորեն մեծ ծավալի գործ է կատարվել, և այսօր Շիրակի հայագիտական Հայաստանի գիտությունների ակադեմիայի լավագույն հաստատություններից մեկն է: Ծափերով ընդունվեց Ակադեմիայի նախագահի այն միտքը, որ այսօր, ավելի քան երբևէ հասունացած կարելի է համարել Գյումրիում Գիտու-

թյունների ազգային ակադեմիայի Հյուսիսային բաժանմունքի ստեղծման հարցը, ինչը իրավամբ եղել և մնում է քաղաքի մտավորականության երկար տարիների երազանքը:

